



ՀԵՏԵՎԵ՛Ք ՁԵՐ ԿՅԱՆՔԻ ՀԱՄԱՐ ԱՍՏԾՈ ԾՐԱԳՐԻՆ

Քենեթ Է. Հեգին



ՀԵՏԵՎԵ՛Ք ՁԵՐ
ԿՅԱՆՔԻ ՀԱՄԱՐ
ԱՍՏԾՈ ԾՐԱԳՐԻՆ

ՀԵՏԵՎԵ՛Ք ՁԵՐ
ԿՅԱՆՔԻ ՀԱՄԱՐ
ԱՍՏԾՈ ԾՐԱԳՐԻՆ

Քենեթ Է. Հեգին

Following God's Plan for Your Life, Kenneth E. Hagin, Armenian

Copyright © 2022 Kenneth Hagin Ministries, Inc.,
Post Office Box 50126,

Tulsa, Oklahoma, 74150-0126
www.rhema.org
www.rhema.eu

Հերևեք ձեր կյանքի համար Աստուծո ծրագրին, Քենեթ Է. Հեգին, հայերեն

© 2022, Թարգմանված է անգլերենից:

ԱՄՆ-ում՝
«Kenneth Hagin Ministries»
Փ/Ա 50126,
Թալսա, Օկլահոմա, 74150-0126 1-888-28-FAITH
www.rhema.org
www.rhema.eu

Բոլոր իրավունքները պաշտպանված են:

Միացյալ Նահանգներում կապ հաստատելու համար գրե՛ք.
Քենեթ Հեգինի ծառայություններ, ԲԸ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան.	VII
1. Վազէք ձեր առջև դրված ասպարեզը	1
2. Պահպանէք Հոգով լցված կյանքը	23
3. Նվիրում Աստծո ծրագրին	47
4. Սովորէք հետևել Սուրբ Հոգու առաջնորդությանը	65
5. Սուրբ Հոգու առաջնորդության տարբեր եղանակները	99
6. Աստծուն հնազանդվելը ձեզնից չի խլում, այլ տալիս է ձեզ	131
7. Սիրո ճանապարհը լավագույն ճանապարհն է	155



ՆԱԽԱԲԱՆ

Մենք ապրում ենք այնպիսի օրերում, երբ ժամանակ չունենք եկեղեցի ձևանալու կամ մեր կյանքերում սատանայի հետ խաղեր խաղալու համար: Վերջին օրերը մոտ են: Ամեն բան շուտով վերջանալու է: Մեր առջև վճռական տարիներ են, քանի որ մե՞ծ աշխատանք պիտի արվի, և հոգիների մե՞ծ հունձք պիտի լինի:

Երբևէ այսքան կարևոր չի եղել մեզ անցյալում կապող բոլոր բաներից ազատ լինելը: Երբևէ այսքան կարևոր չի եղել յուրաքանչյուրիս զգայունությունը Սուրբ Հոգու առաջնորդությանը և մեր կյանքերի համար Աստծո ծրագրին հետևելը: Եկել է մեզ կարգի բերելու ժամանակը, ընկերներ: Եկել է Աստծուն ծառայելու հարցում լրջանալու ժամանակը և լինելու այն, ինչ Նա կամենում է, որ լինենք:

Երբ Աստծուն հնազանդության մեջ եք քայլում, ձեր անցյալի ձախողումները և թերացումները, որոնք խոչընդոտել են ձեր ընթացքը Սուրբ Հոգու հետ, այլևս չեն կարողանա խանգարել ձեզ համար Աստծո նախասահմանության իրականացմանը: Եթե դուք ձեր մասն անեք՝ նախապատրաստվելով և հնազանդվելով, ապա մարդկային, մարմնական ոչ մի ծրագիր և ոչ մի դև չի կարողանա խոչընդոտել Նրա ծրագրի իրագործումը: *Ոչինչ* չի կարողանա խլել կամ ի չիք դարձնել այն, ինչ Աստված հոչակել է ձեր կյանքի համար:

«Որովհետև ես գիտեմ այն խորհուրդները,
որ ես խորհում եմ ձեր մասին,
ասում է Տերը, խաղաղության խորհուրդ-
ները և ոչ թե չարության, որ ձեզ պամ
ապագան և հույսը:

Եվ դուք կկանչեք ինձ և
կգնաք ու աղոթք կանեք դեպի ինձ,
և ես կլսեմ ձեզ:

Եվ դուք ինձ կորոնեք և կգտնեք, որով-
հետև ինձ կխնդրեք ձեր բոլոր սրտով»:

– Երեմիա 29.11–13

Օ՛, Տէր, Դու ցոյց տուր ինձ այն,
ինչը ես չեմ տեսնում:

Դու սովորեցրո՛ւ ինձ այն, ինչ
ես չգիտեմ:

Եվ Դու նախապատրաստի՛ր ինձ
նրան, ինչ պատրաստել ես
ինձ համար:



ՎԱՋԵՔ ԶԵՐ ԱՌՋԵՎ ԴՐՎԱԾ ԱՍՊԱՐԵԶԸ

Ուստի մենք էլ, որ ՎԿԱՆԵՐԻ այսքան ԲԱԶՄՈՒԹՅՈՒՆ ունենք ՄԵՋ ՇՐՋԱՊԱՏԱԾ, դեն զցենք ամեն ծանրություն և մեզ դյուրավ պաշարող մեղքը և համբերությամբ ՎԱՋԵՆՔ մեր առաջ դրած ԱՍՊԱՐԵԶԻ ԸՆԹԱՑՔԸ:

– Եբրայեցիս 12.1

Կա որոշակի ասպարեզ, որն Աստված դրել է *ձեր* առջև, որ *դուք* վազեք այն: Դա հոգևոր ասպարեզ է և կապված է այն աստվածային նախասահմանության հետ, որն Աստված ծրագրել է, որ դուք իրագործեք: Եվ Աստվածաշունչն ասում է, որ ոչ միայն պետք է *վազեք*, այլև պետք է *ավարտեք* ձեր ասպարեզը կամ ընթացքը (Բ Տիմ. 4.7): Այլ կերպ ասած՝ պետք է իրագործեք Աստծո ծրագիրը կամ նպատակը անհատապես ձեր կյանքի համար: Չպետք է վազել *ուրիշ մեկի* ասպարեզը կամ ավարտել *ուրիշ մեկի* ընթացքը, քանի որ Աստված տարբեր ընթացքներ է տվել մեզնից յուրաքանչյուրին:

Ինչո՞ւ է այդքան կարևոր հետևել ձեր կյանքի համար Աստծո ծրագրին: Ինչպե՞ս կարող ենք վազել մեր ասպարեզը և ավարտել մեր ընթացքը: Աստվածաշունչը տալիս է այս հարցերի պատասխանները:

ՎԿԱՆԵՐԻ ՄԵԾ ԲԱԶՄՈՒԹՅՈՒՆ

Սակայն նախ և առաջ եկեք ուշադրություն դարձնենք Եբրայեցիս 12.1-ում մի կարևոր բանի: Այստեղ ասվում է, որ մենք չենք վազում մեր ասպարեզը առանց դիտորդների: Ըստ Աստվածաշնչի՝ մենք մեր հոգևոր ասպարեզը վազում ենք՝ «շրջապատված» «վկաների մեծ բազմությամբ»:

Ո՞վ է ներգրավված վկաների այս մեծ բազմության մեջ: Եբրայեցիս թղթի 11-րդ գլուխը պատասխանում է այդ հարցին: Ինչպես գիտեք, Եբրայեցիների թղթի հեղինակը (ով իմ կարծիքով Պողոսն է) Եբրայեցի քրիստոնյաներին ուղղված այդ նամակը չի գրել՝ գլուխների և խոսքերի բաժանած: Ուստի, երբ կարդում ենք Եբրայեցիս 12-րդ գլուխը, պետք է հասկանանք, որ Պողոսը շարունակում է խոսել «հավատքի հերոսներից», որոնց մասին պատմում է Եբրայեցիս 11-րդ գլխում:

Եբրայեցիս 11-րդ գլխում Պողոսը թվարկում է հավատքի հերոսներին, սկսում է Աբելից և շարունակում՝ խոսելով Ենոքի, Նոյի, Աբրահամի և Սառայի, Իսահակի, Հակոբի, Հովսեփի, Մովսեսի և այլոց մասին: Այնուհետև՝ գլխի վերջում, հետևյալն է ասում հավատքի բոլոր հերոսների մասին. «Եվ ՄՐԱՆՔ ԱՄԵՆԸ հավատքով վկայություն առան...» (Եբր. 11.39):

Անմիջապես հաջորդ խոսքում Պողոսն ասում է. «Ուստի մենք էլ, որ ՎԿԱՆԵՐԻ այսպիսի ԲԱԶՄՈՒԹՅՈՒՆ ունենք մեզ շրջապատած...» (Եբր. 12.1): Ուրեմն հավատքի տղամարդիկ և կանայք, որոնց մասին Պողոսը խոսում է Եբրայեցիս 11-ում, վկաների այն բազմության մեջ են, որի մասին նշվում է Եբրայեցիս 12.1-ում:

Ինչ նկատի ունի Պողոսը, երբ ասում է, որ «շրջապատված ենք» վկաների այս բազմությամբ: Աստվածաշնչի «Կենդանի» թարգմանությունը այսպես է ձևակերպում. «Քանի որ տրիբունաներից մեզ է հեղուկում հավատքի տղա-

մարդկանց [և կանանց] մեծ բազմություն... եկեք համբերությամբ վազենք հենց այն ասպարեզը, որն Աստված դրել է մեր առջև»:

Պողոսն օգտագործում է ասպարեզ վազելու օրինակը՝ բնութագրելու, թե ինչպես պետք է հետևենք Աստծո ծրագրին մեր կյանքերի համար մեր քրիստոնեական ընթացքի մեջ: Նա օրինակ է բերում հունական մարզախաղերը, որոնք անցկացվում էին Պողոսի օրերում. դրանք նման էին ժամանակակից Օլիմպիական խաղերին:

Հունական խաղերում վազքի մրցումներին մասնակցողները շրջապատված էին տրիբունաներից իրենց հետևող մարդկանցով, որոնք եկել էին իրենց քաջալերելու: Ուստի Եբրայեցիս 12.1-ում Պողոսի ասածը հետևյալ իմաստն ունի. «Բոլոր այն հերոսները, որոնց ես թվարկեցի, և մյուս բոլոր հավատացյալները, որոնք մահացել են, մեզ են հետևում Երկնքի տրիբունաներից, մինչ մենք վազում ենք մեր հոգևոր ընթացքը»:

Երկնքից մեզ հետևող վկաների այդ մեծ բազմությունը, ինչպես նաև երկրի վրա ապրող ամեն հավատացյալ Աստծո ընտանիքի մասն է. սրա մասին Պողոսը խոսում է Եփեսացիս 3.14-րդ և 15-րդ խոսքերում. «Սրա համար կրնկում եմ իմ ծունկերը մեր Տեր Հիսուս Քրիստոսի Հոր առաջ, որից ամեն նահապետություն (անգելներն թարգմանությունում՝ ընտանիք) երկնքում և երկրումս անուն է առնում»: Թող սա քաջալերի ձեզ. իմացեք, որ Երկնքի տրիբունաներում կանգնած ընտանիք ունեք, որը քաջալերում է ձեզ, մինչ դուք վազում եք ձեր ընթացքը:

Հավատքի տղամարդկանց և կանանց այս մեծ բազմությունը չի հետևում, թե ինչպես եք վազում ձեր *բնական* ընթացքն այս երկրի վրա: Նրանց չեն հետաքրքրում կյանքի բնական բաները:

Օրինակ՝ նրանք չեն հետևում ձեզ, երբ զբաղվում եք առօրյա գործերով: Նրանց չի հետաքրքրում՝ զնել եք նոր հագուստ, նոր մեքենա կամ որքան գումար ունեք բանկում: Նրանք նայում են ձեր քրիստոնեական ընթացքին, թե ինչպես եք վազում ձեր *հոգևոր* ասպարեզը: Նրանց հետաքրքրում է այն, թե արդյոք հետևում եք ձեր կյանքի համար Աստծո ծրագրին:

Տարիներ առաջ ես գերբնական վերապրում ունեցա, ինչն ինձ հայտնություն տվեց և ցույց տվեց Երկնքի տրիբունաներից մեզ հետևող վկաների բազմության իրողությունը:

1968 թվականին քույր Ժաննա Վիլկերսոնը, որ Աստվածաշնչի կայացած ուսուցիչ էր և մարգարետուհի (հիմա նա Տիրոջ մոտ է), սեմինարի ժամանակ մարգարեացավ, որ գալիք աշնանը ես Ենոպի նման վերապրում պիտի ունենայի և պիտի փոխադրվեի Երկինք: Ենոպը մարմնով փոխադրվեց Երկինք, նրա ֆիզիկական մարմինը ևս կտրվեց երկրից (Ծննդ. 5.24, Եբր. 11.5): Սակայն քույր Վիլկերսոնը մարգարեացավ, որ ես Հոգով պիտի փոխադրվեի Երկինք և Աստծուց հայտնություն պիտի ստանայի:

Ես ոչինչ չարեցի, որ իրականություն դարձնեմ այդ մարգարեությունը: Պարզապես շարունակեցի ծառայել Աստծուն: Այդ տարի աշնանը քույրս՝ Օլետան, քառասունհինգ տարեկանում մահացավ քաղցկեղից:

Օլետան նախկինում էլ հիվանդացել էր և գրեթե մահվան շեմին էր: Սակայն ես աղոթել էի նրա համար, և նա բժշկվել էր: Այն ժամանակ նա հոգևոր մանուկ էր Քրիստոսում, ուստի ես կարող էի նրա բժշկությունը ստանալ Խոսքի հանդեպ իմ հավատքով: Սակայն այս անգամ, երբ հիվանդացավ, այլևս հոգևոր մանուկ չէր, և ես չէի կարող իմ հավատքով նրա համար բժշկություն ստանալ: Մենք չենք կարող ուրիշներին մեր հավատքով անընդհատ տանել, քանի

որ Աստված ակնկալում է, որ մեզնից յուրաքանչյուրն աճի հավատքի մեջ:

Այդ տարի աշնանը քույրս մահացավ: Այն երեկո, երբ նա արձակեց իր հոգին, մեր ամբողջ ընտանիքը հավաքված էր նրա անկողնու շուրջը: Հաջորդ գիշեր՝ 1:30-ին մոտ, անկողնումս պառկած մտածում էի, թե ինչ էր զգացել քույրս, երբ հոգին լքել էր մարմինը, և նա բարձրացել էր Երկինք՝ Տիրոջ մոտ:

Մտածում էի այն օրերի մասին, երբ իմ սիրտն էր դադարել զարկելուց 1933 թվականի օգոստոսի 16-ին հիվանդության մահճում: Երբ սիրտս կանգ էր առել, հոգիս լքել էր մարմինս, ես, հետ նայելով, կարողացել էի տեսնել մարմինս անկողնու մեջ: Տեսել էի, թե ինչպես էր մայրս բռնել ձեռքս: Հետո նորից սկսեցի մտածել քրոջս մասին: Նա պիտի որ հետ նայած և տեսած լիներ բոլորիս, որ հավաքվել էինք իր անկողնու շուրջը, պիտի որ տեսած լիներ մեր սերնու հոգատարությունը:

Երբ մտածում էի սրա մասին, հանկարծ առաստաղից մի պայծառ ոսկեգույն լույսի շող Երկնքից թափանցեց իմ սենյակ. այն նման էր վերելակի լիսեռի: Երբ այդ լույսը դիպավ ինձ, հոգիս դուրս եկավ մարմնիցս և այդ լույսի շողի միջով վեր բարձրացավ մինչև Երկինք, ասես վերելակով էի բարձրանում:

Երկնքում տեսա, թե ինչպես էր քույրս խոսում Հիսուսի հետ: Երբ մոտեցա նրանց, Հիսուսը դադարեց քրոջս հետ խոսելուց և նայեց ինձ: Երբ Հիսուսը հայացքը դեպի ինձ ուղղեց, քույրս շրջվեց, որ տեսներ, թե ում էր նայում Հիսուսը, և տեսավ ինձ:

Առաջինը, որ քույրս ասաց ինձ, հետևյալն էր. «Քեն, քեզ այդքան վատ մի՛ զգա, որ չկարողացար հավատքով աղոթել ինձ համար: Կար պատճառ դրա համար» (նա չասաց ինձ, թե որն էր պատճառը):

Երբեմն Աստված չի հայտնում մեզ, թե ինչու որոշ մարդիկ բժշկություն չեն ստանում: Երկրորդ օրինաց 29.29-ում ասվում է. «Ծածուկ բաները մեր Տեր Աստծո համար է»:

Քույրս ասաց նաև, որ արդեն տեսել էր տատիկին և պապիկին՝ մորս ծնողներին, հանդիպել էր իր թոռնիկ Ջեյսոնին, որ մահացել էր երեք տարեկանում: Հետո ավելացրեց. «Քենեթ, Աննային եմ տեսել»: Աննան նրա դուստրն էր, որ մահացել էր ավտովթարի հետևանքով ընդամենը քսանհինգ տարեկանում՝ թողնելով իր երկու փոքր երեխաներին:

Քույրս շարունակեց. «Առաջինը, որ Աննան հարցրեց, այն էր, թե ինչպես են Բիլը և երեխաները (Բիլն Աննայի ամուսինն էր): Ես նրան չասացի, որ Բիլը նորից է ամուսնացել»:

Այնուհետև քույրս մի բան ասաց, որն ինձ համար իսկական հայտնություն դարձավ. «Այստեղ մարդկանց չի հետաքրքրում երկրի վրա ապրողների կյանքի բնական կողմը: Նրանց հոգը չէ, որ մենք նոր զգեստ կամ նոր կոստյում ենք գնում, որքան գումար ունենք բանկում:

Նրանց հետաքրքրում են *հոգևոր* բաները: Նրանք չգիտեն, թե ինչ է տեղի ունենում կյանքիդ բնական տիրույթում, սակայն տեղյակ են ամեն բանից, ինչ անում ես հոգևորում: Նրանք իմանում են, երբ որոշումներ ես կայացնում Քրիստոսի համար»:

Քույրս խոսում էր վկաների այն բազմության մասին, որոնք Երկնքից հետևում են, թե ինչպես ենք մենք վազում մեր հոգևոր ասպարեզը: Դա էր այն հայտնությունը, որ քույր Վիլկերսոնի մարգարեության համաձայն պիտի ստանայի այդ վերապրման ժամանակ: Մինչ Երկինք փոխադրվելու վերապրում ունենալս այդ հայտնության փոքրիկ ծվենն ունեի միայն:

Քույրս նաև հետևյալն ասաց. «Քեն, խնդրում եմ, խոսի՛ր _____ (նա տվեց իր կրտսեր որդու անունը) հետ: Նա կլսի քեզ»:

Քրոջս այդ որդին ճանաչել էր Աստծուն և իր կյանքում Աստծուն ծառայելու կոչում ուներ: Սակայն նա հեռացել էր Աստծուց ու տարիներ շարունակ չէր հաղորդակցվում Նրա հետ:

Քույրս ասաց. «Ասա՛ որդուս, որ ես քեզ ասել եմ, որ նա երբեք երջանիկ չի լինի, և նրա կյանքը երբեք ճիշտ հունով չի ընթանա, քանի դեռ չի հանձնել իր կյանքը Տիրոջը: Ասա՛ նրան, որ երբ նա վերստին նվիրի իր կյանքն Աստծուն, ես կիմանամ դրա մասին: Մենք Երկնքում իմանում ենք այն ամենի մասին, ինչ հոգևորում տեղի է ունենում երկրի վրա»:

Այդ վերապրումից հետո ես խոսեցի քրոջս որդու հետ, ինչպես որ նա խնդրել էր: Եվ թեև այդ ժամանակ նա քայլ արեց դեպի Աստված, սակայն իր կյանքն ամբողջությամբ չհանձնեց Աստծուն: Հենց այդ պատճառով էլ, ինչպես քույրս էր ասել, դրանից հետո տարիներ շարունակ ոչ մի բան ճիշտ հունով չընթացավ նրա կյանքում:

Այնուհետև ճամբարային հավաքույթներից մեկի ընթացքում քրոջս որդին իր կյանքը լիովին հանձնեց Տիրոջը և արձագանքեց ծառայության մեջ մտնելու Նրա կանչին: Փառք Աստծուն, որ նույն վայրկյանին, երբ նրա որդին իր կյանքը վերստին հանձնեց Աստծուն, քույրս Երկնքում իմացավ այդ մասին: Եվ նա ուրախանում է, երբ հիմա իր որդին ջանում է վազել իր ասպարեզը և հետևել իր կյանքի համար Աստծո ծրագրին:

Ի դեպ, երբ քույր Վիլկերսոնը մարգարեացավ և ասաց, որ ես կփոխադրվեմ Երկինք Ենովքի նման և հայտնություն կստանամ, նա նաև ասաց, որ մեկ այլ անձնավորություն ևս նման գերբնական վերապրում կունենա: Այդ անձավո-

րությունն իմ ավագ եղբայրն էր՝ Դաբը: Նույն այդ գիշերը, երբ ես փոխադրվեցի Երկինք, Դաբը ևս նման վերապրում ունեցավ: Նա նույնպես փոխադրվել էր Երկինք և զրուցել մեր քրոջ հետ, ճիշտ այնպես, ինչպես ես՝ նրանից մի փոքր առաջ:

Այն ժամանակ, երբ դա տեղի ունեցավ Դաբի հետ, ոչ ոք չէր կարող մեղադրել նրան հոգևոր լինելու համար: Դաբն առանձնապես զլուխ չէր հանում հոգևոր բաներից, և նրա վերապրածը Երկնքում վախեցրել էր նրան: Հաջորդ օրը նա կանչեց ինձ, որ պատմի տեղի ունեցածի մասին՝ առանց իմանալու, որ նույն գիշեր ես ևս նման վերապրում եմ ունեցել:

Դաբն ասաց ինձ. «Երբ ես բարձրացա Երկինք, տեսա քույրիկին: Նա խոսում էր Հիսուսի հետ. այնքան գեղեցիկ տեսք ուներ: Նա ինձ ասաց, որ խոսեմ ____ (նշել էր ավագ որդու անունը) հետ: Ասաց, որ բացի ինձնից ուրիշ ոչ մեկին չի լսի»: Քրոջս ավագ որդին ևս հեռացել էր Տիրոջից:

Եվ Դաբը խոսեց Օլետայի ավագ որդու հետ: Թեև երիտասարդը որոշում չկայացրեց այն պահին, երբ Դաբը խոսեց նրա հետ, ամեն դեպքում հետո նա վերընձայեց իր կյանքը Տիրոջը և այսօր ծառայում է Նրան:

Երկնքում ունեցածս այս վերապրումը մեջբերեցի, որպեսզի Եբրայեցիս 12.1-ն ավելի իրական դառնա ձեզ համար: Քույրս մեկն է վկաների այն բազմությունից, որ հետևում են մեզ Երկնքի տրիբունաներից: Եվ Պողոս առաքյալն ու Աստվածաշնչում նշված մյուս նախահայրերը ևս մեզ նայող այդ մեծ խմբում են, ինչպես, օրինակ՝ Պետրոսը, Հակոբոսն ու Հովհաննեսը. նրանք հետևում են մեզ: Նրանք բոլորը հետևում են, թե ինչպես ենք մենք վազում մեր հոգևոր ասպարեզը:

Եթե ձեր սիրելիներից որևէ մեկը գնացել է տուն՝ Տիրոջ մոտ, ապա կարող եք վստահ լինել, որ նրանք տեսնում են

ձեզ, նրանք տեսնում են, թե ինչպես եք դուք վազում ձեր ասպարեզը: Նրանք ուրախանում են, երբ հետևում եք ձեր կյանքի համար Աստծո ծրագրին, քանի որ ցանկանում են տեսնել, որ ավարտում եք ձեր ընթացքը:

Հիշում եմ, երբ հետևում էի որդուս թեթև աստվածուհի մրցումներին ավագ դպրոցում: Քենը տրիբունայում էր՝ վազքուղուն մոտ, և երբ վազելով անցավ իմ մոտով, սկսեցի քաջալերել նրան: Մեկ այլ վազորդ հասնում էր Քենին, և ես գոչեցի. «Վազիր, Քեն. նա հասնում է քեզ»: Քենը լսեց քաջալերանքի իմ խոսքերը, և ես տեսա, թե նա ինչպես կարծես ներսից հավաքեց ուժերը, արագացրեց ընթացքն այնքան, որ մյուս բոլոր վազորդներից քսան յարդ առաջ անցավ:

Որդուս թիմը առաջին տեղը գրավեց վազքի այդ մրցույթում: Այն, որ հայրիկը եկել էր նրան քաջալերելու, օգնեց Քենին իրեն լավագույնս դրսևորելու այդ վազքի ժամանակ: Նույն կերպ էլ մենք կարող ենք որոշում կայացնել մեզ լավագույնս դրսևորելու մեր հոգևոր ասպարեզը վազելիս, մինչ մեր ընտանիքը Երկնքի տրիբունաներից քաջալերում է մեզ ավարտին հասցնել այն ընթացքը, որն Աստված դրել է մեր առջև:

ԴԵՆ ԳՑԵՔ ԱՄԵՆ ԾԱՆՐՈՒԹՅՈՒՆ

Իսկ ի՞նչ անենք, որ կարողանանք մեր առջև դրված ասպարեզը վազել այնպես, որ Աստծո ծրագիրը մեր կյանքում իրագործվի, և Երկինքը ցնծա: Նորից ընթերցենք Եբրայեցիս 12.1-ին խոսքը. «Ուստի մենք էլ, որ վկաների այսքան բազմություն ունենք մեզ շրջապատած, ԴԵՆ ԳՑԵՆՔ ԱՄԵՆ ԾԱՆՐՈՒԹՅՈՒՆ և մեզ դյուրավ պաշարող ՄԵՂՔԸ և ՀԱՄԲԵՐՈՒԹՅԱՄԲ ՎԱՋԵՆՔ մեր առաջ դրած ասպարեզի ընթացքը»:

Աստվածաշնչի «Կենդանի» թարգմանությունն ավե-

լի պարզ է ներկայացնում, թե ինչ է նշանակում «դեն գցել ամեն ծանրություն և մեղք»:

ԵՐՐԱՅԵՑԻՍ 12.1 (TLB)

1 Քանզի տրիբունաներից մեզ է հետևում հավատքի մարդկանց այսքան մեծ բազմություն, ուստի ՀԱՆԵՆՔ ՄԵՐ ՎՐԱՅԻՑ ԱՄԵՆ ԲԱՆ, ինչը ԴԱՆԴԱՂԵՑՆՈՒՄ կամ ՀԵՏ Է ՊԱՀՈՒՄ մեզ, և հատկապես այն ՄԵՂՔԵՐԸ, որոնք ԱՄՈՒՐ ՓԱԹԱԹՎՈՒՄ ԵՆ ՄԵՐ ՈՏՔԵՐԻՆ և ՍԱՅԹԱՔԵՑՆՈՒՄ ՄԵՂ, և համբերությամբ վազենք հենց այն ասպարեզը, որն Աստված դրել է մեր առջև»:

Ինչպե՞ս է վազորդը հազնվում Օլիմպիական մրցումների ժամանակ: Չի վազում վերարկուով, այնպես չէ, ոչ էլ փողոցային հագուստով: Ինչո՞ւ: Պատճառն այն է, որ այդ ամենը կղանդաղեցնի նրա ընթացքը: Վազորդը վազքուղու կեսը չի անցնում վերարկուով, հետո նոր միայն հանում այն՝ ասելով, թե վերարկուի պատճառով հետ է ընկնում: Եթե այդպես վարվի, ապա ոչ մի կերպ չի կարողանա հաղթել:

Բնական իրականության մեջ վերարկու հազնելը կղանդաղեցնե՞ր վազորդի ընթացքը և հետ կպահեր նրան հաղթանակից: Նույնը վերաբերում է նաև հոգևոր իրականությանը: Մեղքը կղանդաղեցնի ձեր ընթացքը, այն կսայթաքեցնի ձեզ և կարող է թույլ չտալ, որ վազեք ձեր հոգևոր ասպարեզը:

Ինչպես տեսնում եք, մեղքը ոչ միայն խոչընդոտում է ձեր շփումն Աստծո հետ, այլև թմրեցնում է ձեր հոգին. ի վերջո դուք թույլ եք արձագանքում Սուրբ Հոգու առաջնորդությանը: Հետևաբար այն մեղքի պատճառով, որի հարցերը չեն լուծվում, դուք կապրեք միայն բնական իրականության մեջ և բաց կթողնեք Աստծո լավագույնը ձեր կյանքի համար:

Բացի այդ՝ հեշտ է նաև խճճվել կյանքի *բնականոն* գործերի մեջ՝ բաներ, որոնք ինքնին բարի են, սակայն այն չեն,

ինչը Աստված կանչել է, որ *դուք* անեք: Կյանքում շատ բաներ, որոնք պարտադիր չէ, որ սխալ լինեն, կդանդաղեցնեն ձեզ հենց *ձեր* հոգևոր ասպարեզի մեջ: Դրանք կխոչընդոտեն ձեր հոգևոր աճը և Աստծո նպատակի իրագործումը ձեր կյանքում:

Ահա թե ինչու է Եբրայեցիս 12.1-ում Աստված ասում մեզ, որ հանենք մեր վրայից այն ծանրությունները և մեղքերը, որոնք հոգևորապես սայթաքեցնում և դանդաղեցնում են մեզ: Եվ մենք դրանք պետք է հանենք *հիմա*, որպեսզի չխոչընդոտվի Աստծո ծրագրի իրագործումը մեր կյանքում: Եթե սպասենք, մինչև ծանր քայլերով կհասնենք մեր ասպարեզի կեսին և նոր միայն հանենք դրանք, ապա վտանգում ենք մեր ընթացքը երբևէ ավարտելու և Աստծո ծրագիրը մեր կյանքում իրագործելու հնարավորությունը (Բ Տիմ. 4.7):

Ուշադրություն դարձրեք, որ Եբրայեցիս 12.1-ում ասվում է, որ *դուք* պետք է հանեք ձեր վրայից այն ծանրությունները և մեղքերը, որոնք ձեզ հետ են պահում ձեր քրիստոնեական ընթացքի մեջ: Իհարկե, Աստված կօգնի ձեզ: Սուրբ Հոգին՝ Մխիթարիչը (*անգլերենից թարգմանված՝ Օգնականը*), ով ապրում է ձեր մեջ, ձեզ Աստծուն հնազանդվելու ուժ և կարողություն կտա (Հովհ. 14.26 AMPC): Սակայն Աստված չի պատրաստվում ձեր *փոխարեն* հանելու ձեր «վերարկուն»՝ այն ծանրությունները և մեղքերը, որոնք դանդաղեցնում են ձեր ընթացքը, և մի կողմ դնել դրանք: Դա դուք պետք է անեք:

Ահա թե ինչու են որոշ մարդիկ դժվարանում իրենց հոգևոր ասպարեզի մեջ. նրանք չեն հանում բոլոր այն բաները, որոնք դանդաղեցնում են իրենց ընթացքն ու հետ պահում իրենց, մի կողմ չեն դնում այն մեղքը, որն «ամուր փաթաթվում է իրենց ոտքերին և սայթաքեցնում»:

Մեկ այլ պատճառ, թե ինչու են մարդիկ դժվարանում

իրենց հոգևոր ասպարեզը վազելիս, այն է, որ չեն վազում այն ասպարեզը, որն Աստված է *իրենց* տվել: Նրանք չեն հետևում իրենց կյանքի համար *Նրա* ծրագրին կամ *Նրա* նպատակին: Նման պարագայում նրանց ասպարեզը կարող է դառնալ ծանր և դժվար:

Սակայն Աստված չի ցանկանում, որ այն ասպարեզը, որը Նա մեր առջև դրել է, լինի ծանր ու դժվար:

ՄԱՏԹԵՈՍ 11.28–30

- 28 Ինձ մոտ եկե՛ք, ամեն վաստակածներ և բեռնավորվածներ, և ես հանգիստ կտամ ձեզ:
- 29 Ձեզ վրա առե՛ք Իմ լուծը և Ինձնից սովորե՛ք, որովհետև ես հեզ եմ և սրտով խոնարհ, և ձեր անձերի համար հանգստություն կգտնե՛ք:
- 30 Որովհետև ԻՄ ԼՈՒԾԸ ՔԱՂՅՐ Է, և ԻՄ ԲԵՌԸ՝ ԹԵԹԵՎ:

Հաճախ այն դժվարությունները, որոնց մենք բախվում ենք մեր ասպարեզը վազելիս, *Աստծո* դրած լուծը կամ մեր կյանքերում *Նրա* կամքն իրագործել փորձելու հետևանք չեն: Շատ հաճախ դրանք արդյունք են նրա, որ *մենք* թերացել ենք մեզ խոչընդոտող բոլոր բաները հանելու հարցում:

Սակայն դուք կարող եք հանել ձեր վերարկուն և որոշում կայացնել կտրել ու հեռացնել ամեն սխալ դրդապատճառ, ամեն եսասիրական ձգտում, մարմնական հակում և ցանկություն, որը կխոչընդոտի ձեզ ձեր ընթացքի մեջ:

Մի կրճիմ դրեք ծանրությունները և մեղքերը, ինչպես, օրինակ, հպարտությունը, երկմտությունը, հոգևոր ծուլությունը և վախը: Ձեզնից հեռու նետեք բոլոր այս ծանրություններն ու մեղքերը և հրաժարվե՛ք դրանք նորից վերցնելուց: Եթե ցանկանում եք լավագույնս վազել ձեր հոգևոր ասպարեզը և ուրախությամբ ավարտել ձեր ընթացքը, ապա պետք է անեք դա:

ՀԱՄԲԵՐՈՒԹՅԱՄԲ ՎԱՋԵՆՔ ՄԵՐ ԱՍՊԱՐԵԶԸ

Իսկ հիմա եկե՛ք ուշադրություն դարձնենք Եբրայեցիս 12.1-ի վերջին հատվածին. «*ՀԱՄԲԵՐՈՒԹՅԱՄԲ վազենք մեր առջ դրած ասպարեզի ընթացքը*»: Մենք կարող ենք դժվարացնել մեր ճանապարհն ու խոչընդոտել մեր հոգևոր աճը, եթե *համբերությամբ* չվազենք մեր առջև դրված ասպարեզը: Ասպարեզը համբերությամբ վազելը կարող է դժվար լինել: Այնքան հեշտ է անհամբեր լինել, երբ ցանկանում ենք տեսնել Աստծո ծրագրերի և նպատակների իրագործումը մեր կյանքում:

Օրինակ՝ մարդիկ երբեմն կառչում են ժամանակից: Շատ անգամներ, երբ Տիրոջից ինչ-որ բան ենք լսում մեզ համար Նրա ծրագրի վերաբերյալ, ցանկանում ենք, որ դա *անմիջապես* կատարվի: Սակայն մենք պետք է սովորենք համբերել, երբ վազում ենք մեր հոգևոր ասպարեզը:

Աստված ժամանակի մեջ չի գործում: Աստվածաշունչն ասում է, որ Տիրոջ մոտ մեկ օրը հազար տարվա պես է (Բ Պետր. 3.8): Աստված ժամանակ, ժամ, օր, տարի չի ճանաչում: Այն, ինչը մեզ կարող է երկար թվալ, Աստծո տեսանկյունից կարող է ակնթարթ լինել: Ահա թե ինչու է կարևոր սովորել հանգիստ առնել Աստծո Խոսքում գրված խոստմունքների մեջ՝ առանց ժամանակային սահմանափակումներ դնելու: Երբ սովորում ենք մտնել հավատքի հանգստության մեջ, Տիրոջն Իր ծրագիրը մեր կյանքերում իրագործելու ազատություն ենք տալիս:

Երբեմն, երբ Աստված հավատացյալներին ինչ-որ բան է ասում նրանց կյանքերի վերաբերյալ Իր ծրագրերի մասին, նրանք իրենց ջանքերով փորձում են իրականություն դարձնել դա: Նման կերպ վարվելով՝ նրանք կարող են, այսպես ասած, պղտորել ջուրը: Նկատի ունեմ այն, որ կարող

են խոչընդոտել իրենց վերաբերյալ Աստծո ծրագիրը, ինչի հետևանքով Աստված չի ունենա Իր ցանկացածն անելու ազատություն: Փոխարենը՝ պարզապես պետք է շարունակել հավատալ Աստծո ծրագրին և թույլ տալ, որ *Աստված* իրականացնի այն, ինչ Ինքն ասել է: *Իրենց* մասն անելու համար նրանք պետք է նախապատրաստվեն ըստ Աստծո Խոսքի և Սուրբ Հոգու առաջնորդության:

Երբ երիտասարդ էի Տիրոջ մեջ, մեկ անգամ չէ, որ պղտորել եմ Աստծո ծրագիրն ինձ համար: Երբեմն, երբ Աստված ինչ-որ բան է ասել ինձ իմ ծառայության վերաբերյալ, անմիջապես ցատկել եմ տեղիցս և արել դա: Ամեն անգամ, երբ նման կերպ եմ վարվել, այն, ինչ Տերն ասել էր ինձ, ճիշտ չի գործել:

Գուցե մտածեք. «Դա պարզապես նշանակում է, որ իրականում Տերը չի խոսել Ձեզ հետ»: Սակայն Տերն է խոսել ինձ հետ, ես պարզապես շփոթել եմ ժամանակը և խոչընդոտել Աստծո ծրագիրը:

Մեկ անգամ Հիսուսը տեսիլքով հայտնվեց և ասաց ինձ. «Ինձ համար ավելի նախընտրելի է, որ դանդաղես, քան շտապես Իմ առաջնորդությանը հետևելիս: Երբ Ինձնից հետ ես, գոնե կարող ես տեսնել Ինձ առջևումդ, իսկ երբ չափից արագ ես շարժվում և Ինձնից առաջ ես ցատկում, չես կարողանա տեսնել Ինձ և կշեղվես ուղուց»:

Երբ աճեցի Տիրոջ մեջ, սովորեցի Նրանից առաջ չցատկել, այլ թույլ տալ, որ Նա իրագործի Իր նպատակն ինձ համար, մինչ ես հավատարմաբար նախապատրաստվում եմ դրան: Սովորեցի նաև ոչ միայն ստանալ այն, թե որն է Աստծո ծրագիրը, այլև շարունակել աղոթել, մինչ կստանամ «երբը» և «ինչպեսը»:

Միայն այն, որ Տերն ինչ-որ բան է ասում, չի նշանակում, որ Նա ցանկանում է, որ դուք *անմիջապես* անեք դա: Չի

նշանակում, որ պետք է աներ դա հաջորդ շաբաթ, հաջորդ ամիս կամ նույնիսկ հաջորդ տարի: Սա բացարձակ ճշմարտություն է:

Աստված ծրագիր է մշակել ձեր կյանքի համար, սակայն միշտ չէ, որ դուք պատրաստ եք այդ ծրագրի հաջորդ քայլին: Այնպես որ Աստված կհատկացնի այնքան ժամանակ, որքան անհրաժեշտ է ձեզ զարգացնելու և մարզելու համար, մինչև որ իրականացնի այն, ինչ հայտնել է ձեր սրտին:

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՎԵՔ ՆՐԱ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Նախապատրաստման օրերը երբեք կորսված ժամանակ չեն: Հնարավոր է՝ լինեն կարևոր դասեր կամ ճշմարտություններ, որոնք դուք դեռ պետք է սովորեք, որպեսզի բարեհաջող իրականացնեք Աստծո ծրագիրը ձեզ համար: Իսկ նախապատրաստվելը և Աստծո Խոսքի մեջ հաստատվելը ժամանակ են պահանջում (Բ Տիմ. 2.15):

Սակայն նախապատրաստման ժամանակաշրջանով անցնելը միշտ չէ, որ հեշտ է, քանի որ դրա համար երբեմն հարկավոր է գին վճարել: Ձեզ կարող է դուր չգալ նախապատրաստման համար պահանջվող ժամանակը. գուցե կարիք լինի, որ դուք մահանաք ձեր ցանկությունների և ժամանակային սահմանափակումների համար, մինչ թույլ եք տալիս, որ Աստված նախապատրաստի ձեզ:

Թեև դա կարող է թվալ դժվար ու անհարմար, նախապատրաստումը Աստծուց ձեր առջև դրված ասպարեզը վազելու մաս է: Նախապատրաստման ժամանակաշրջանում հավատարմություն է պահանջվում, նույնիսկ եթե ձեր զոհողությունների անհրաժեշտությունը լինի: Երբ լիովին պատրաստ եք, և Աստված տեսնում է, որ կարող է վստահել ձեզ, ապա Նա կկարողանա բարձրացնել ձեզ ու տա-

նել այն վայրը, որը պատրաստել է ձեզ համար՝ ավելի մեծ պատասխանատվության, օժության և ծառայության վայր:

Սակայն եթե դուք չնախապատրաստվեք դրա համար նախատեսված ժամանակահատվածում, ապա ի վիճակի չեք լինի հաջորդ քայլն անելու ձեզ համար Աստծո ծրագրի մեջ: Եթե անտեսել եք մարզման ժամանակահատվածը և զբաղվել միայն բնականոն գործերով, ապա երբ բացվի Աստծո հնարավորության դուռը, գուցե դուք անգամ չճանաչեք այն: Եվ եթե չեք պատրաստվել, ապա ի վիճակի չեք լինի մտնելու այդ դռնով դեպի Աստծո ծրագրի հաջորդ փուլը ձեզ համար:

Մեր հոգևոր ասպարեզը հաճախ նման է էստաֆետային վազքի: Էստաֆետային վազքի ժամանակ վազորդը վազում է այնքան, մինչև հասնի որոշակի կետի, որտեղ մականը հանձնում է հաջորդ վազորդին:

Նման կերպ քրիստոնեական ընթացքի մեջ էլ կան տարբեր փուլեր, և յուրաքանչյուր նոր փուլից առաջ սովորաբար լինում է նախապատրաստման ժամանակաշրջան: Հաճախ ճանապարհի ամեն քայլափոխին մեր հնազանդությունից և Խոսքի համեմատ նախապատրաստվելու հավատարմությունից է կախված, թե որքան կտևի մեկ փուլից մյուս փուլ անցումը, եթե իհարկե հասնենք հաջորդ փուլ:

Շատ հաճախ մարդիկ Աստծուց լսում են իրենց ասպարեզի հաջորդ փուլին վերաբերող խոսքեր և ենթադրում են, որ պետք է անմիջապես գործի անցնեն՝ ըստ նրա, ինչ Աստված ասել է: Սակայն քանի որ ի վիճակի չեն կամ չեն նախապատրաստվել այնպես, ինչպես պետք էր, երբ քայլ են անում՝ կատարելու այն, ինչ Աստված ասել էր, նրանք ձախողվում են և երեսնիվայր ընկնում են: Ինչպես տեսնում եք, Աստված ունի *ճանապարհ*, բայց ունի նաև *ժամա-*

նակ: Եվ Աստծո ժամանակից դուրս գործելը նույնն է, ինչ Նրա կամքից դուրս գործելը:

Մովսեսն աստվածաշնչյան օրինակ է մի մարդու, ով Աստծո ժամանակից առաջ ցատկեց և պղտորեց Աստծո ծրագրի ջրերը: Այն ժամանակ, երբ Մովսեսն ապրում էր Եգիպտոսում՝ փարավոնի պալատում, Նա զգում էր, որ Իսրայելը ստրկությունից ազատելու կոչում ունի՝ Աստծուց տրված: Սակայն գուցե ազատագրելու Աստծո ծրագիրը երկարաձգվեց, քանի որ Մովսեսը Աստծո ժամանակից առաջ ցատկեց և փորձեց այդ ծրագիրն իր եղանակով և իր ուժերով իրագործել:

Երբ Մովսեսը քառասուն տարեկան էր, նա մի եգիպտացու սպանեց, որը ծեծում էր մի հրեա ստրուկի: Դա Իսրայելն ազատագրելու Աստծո ծրագիրը կամ ճանապարհը *չէր*:

Մովսեսի արածի մասին լուրերն արագ տարածվեցին: Եվ երբ փարավոնը լսեց, թե ինչ էր արել Մովսեսը, սկսեց փնտրել նրան, որ սպաներ: Ուստի կյանքը փրկելու համար Մովսեսը պետք է փախչեր անապատ (Ելից 2.11–15):

Երկար ժամանակ Մովսեսն ապրեց անապատում, որ համբերություն ձեռք բերեր, և Աստված կարողանար օգտագործել նրան Իսրայելի ազատագրման Իր աստվածային ծրագրում: Միայն քառասուն տարի հետո Աստված վերջապես ասաց Մովսեսին, որ իսրայելացիներին եգիպտացիների ձեռքից ազատելու ժամանակն է:

Իմ կյանքից ևս կարող եմ Աստծուց առաջ ընկնելու օրինակ բերել: Մինչև 1940-ականների կեսը Աստված իմ սրտում արդեն դրել էր այն, ինչ ես այսօր անում եմ: Հոգումս գիտեի, որ հովվությունից բացի՝ կա նաև այլ բան, որ Նա ցանկանում է՝ ես անեմ:

Ուստի 1944 թվականին դուրս եկա հովվական ծառայությունից և մտա դաշտային ծառայության մեջ՝ կարծելով,

թե *հենց այդ պահին էր* իմ ծառայության հաջորդ փուլը սկսելու Աստծո ժամանակը: Հետևաբար այդ ամենը ճիշտ չընթացավ:

Սխալ մի՛ հասկացեք. Աստված օրհնեց իմ այդ տարին դաշտային ծառայության մեջ այնքան, որքան կարող էր: Մենք լավ հավաքույթներ անցկացրինք, մարդիկ փրկվեցին և մկրտվեցին Սուրբ Հոգով: Սակայն ես գիտեի, որ ժամանակից շուտ եմ մտել իմ կյանքի համար Աստծո ծրագրի հաջորդ փուլ: Ուստի հետ գնացի դեպի այն կետը, որտեղից դուրս էի եկել՝ վերադարձա հովվությանը:

Թեև Աստված այդ ժամանակ իսկապես խոսել էր ինձ հետ իմ ծառայության մասին, դեռևս ժամանակը չէր, որ դա իրականանար: Օրինակ՝ դաշտային ծառայության մեջ մտնելու մասին խոսքը, որն Աստված դրել էր սրտումս, պետք է իրագործվեր դրանից հինգ տարի հետո (իսկ որոշ այլ բաներ, որ Աստված ինձ ասել էր, իրականացան *շարավելի* ուշ, մի մասը *դեռ* պետք է իրականանա):

Եվս հինգ տարի անց ես արդեն բավականաչափ գիտելիք ունեի՝ ասելու. «Այս անգամ տեղիցս չեմ շարժվի, մինչև հոգումս վկայություն չառնեմ, որ շարժվելու ժամանակն է: Այնպես որ շարունակեցի հովվել իմ վերջին եկեղեցին մինչև 1949 թվականի սկիզբը, երբ Սուրբ Հոգին բորբոքեց իմ հոգին՝ անցնելու դաշտային ծառայության:

Տարիների ընթացքում սովորեցի այդպես վարվել իմ կյանքի բոլոր բնագավառներում: Չեմ շարժվում, մինչև Սուրբ Հոգուց շարժվելու ազդանշան չեմ ստանում: Իսկ երբ ստանում եմ այդ ազդանշանը և վարվում նրա համեմատ, ինչ Աստված ինձ ասել է, Աստծո ծրագիրը միշտ անխափան իրագործվում է:

Օրինակ՝ այսօր իմ ծառայության մեջ ես անում եմ բաներ, որոնք Աստված ասել է ինձ տարիներ առաջ: Սակայն

այն ժամանակ, երբ դրանց մասին լսել էի Աստուծոց, անմիջապես չէի անցել Նրա ասածն իրագործելուն: Եթե նման կերպ վարվեի, Նրա սահմանած ժամանակից դուրս կգայի: Ի վերջո կտուժեի ծառայությունը, և ինձ համար Աստծո ծրագրի այդ մասը մեծապես կխոչընդոտվեր:

Փոխարենը ես սպասեցի, մինչև հոգույն ազդանշան ստացա, թե երբ պետք է վարվեմ Աստծո ծրագրի համեմատ: Այնուհետև արեցի այն, ինչ հոգույն ստացել էի: Եվ քանի որ ես սպասում էի Աստծո ժամանակին, ամեն բան սահուն ընթանում էր, երբ անում էի Նրա ասածները, և դա հիացնում էր ինձ: Դրա պատճառն այն էր, որ ես շարժվում էի Աստծո ծրագրի համեմատ *Նրա ժամանակի մեջ*:

Երկար տարիներ առաջ սովորել եմ, որ չպետք է փորձեմ *իմ բնական հասկացողությամբ* պարզել, թե ինչպես և երբ է իրագործվելու Աստծո ծրագիրը: Օրինակ՝ քառասունականների վերջին՝ հովվությանս վերջին երեք տարիների ընթացքում, աղոթքի մեջ ժամեր և օրեր շարունակ սպասում էի Աստծուն, փնտրում Նրան ու Նրա կամքն իմ կյանքի համար: Եվ երբ սպասում էի Աստծուն, Հոգույն տեսնում էի իմ ծառայության տարբեր ոլորտները, որոնք իրականություն են դարձել միայն վերջին տարիներին:

Եվ սակայն ես չէի տեսնում իմ ծառայության ամբողջական պատկերը՝ բոլոր այն բաները, որ պետք է ներառվեին ծառայությանս մեջ: Եթե իմ հոգևոր զարգացման այդ փուլում իմանայի, թե ինչ էր տեղի ունենալու այսօր իմ ծառայության մեջ, դա կվախեցներ ինձ: Աստված մեզ միանգամից չի հայտնում Իր ամբողջ ծրագիրը: Հաճախ Նա կարող է հայտնել մեզ Իր ծրագրից փոքրիկ հատվածներ միայն, քանի որ մենք ի վիճակի չենք լինի հասկանալու կամ տանելու ավելին, քան մի նշույլն այն ամենի, ինչ Նա պատրաստել է մեզ համար (Հովհ. 16.12):

Ես գաղափար չունեի, թե Աստված ինչպես էր իրագործելու այն, ինչ ցույց էր տվել ինձ իմ ծառայության վերաբերյալ, ուստի ամենը թողել էի Նրա ձեռքերի մեջ: Եվ մինչ ես հավատարմաբար հնազանդվում էի Նրան քայլ առ քայլ, Նա իրականություն դարձրեց այն, ինչ հայտնել էր ինձ ավելի քան քառասուն տարի առաջ:

Հարկավոր է համբերատար լինել և սպասել, որ *Աստված* իրագործի Իր նպատակը մեր կյանքում: Ամեն բանի համար ժամանակ և ժամանակաշրջան կա (Ժող. 3.1), և միշտ չէ, որ ժամանակը *հիմա* է: Այդ պատճառով էլ Աստվածաշունչն ասում է. «*ՀԱՄԲԵՐՈՒԹՅԱՄ ՎԱՁԵՆՔ մեր առաջ դրած ասպարեզի ընթացքը*» (Եբր. 12.1):

Գուցե ասեք. «Արդյո՞ք այս բաները երբևէ կփոխվեն: Գիտեմ, որ Աստված պատրաստում է ինձ, և ես ցանկանում եմ հավատարիմ լինել: Սակայն տպավորություն է, թե ես այնքան երկար ժամանակ եմ նախապատրաստման այս վայրում: Արդյոք երբևէ կփոխվի՞ ինչ-որ բան»:

Պարզապես շարունակե՛ք ձեր ամբողջ սրտով վստահել Տիրոջը և համբերությամբ վազե՛ք ձեր ասպարեզը: Մի փորձե՛ք *պարզել*, թե ինչպես և երբ է Աստված իրագործելու Իր ծրագիրը ձեզ համար: Աղոթե՛ք դրա համար, և երբ դրա կարիքը լինի, Աստված ցույց կտա ձեզ ամեն քայլը, որ պետք է անեք: Պարզապես սովորե՛ք հանգիստ առնել հավատքի մեջ և շարժվել Սուրբ Հոգուն համընթաց:

Բավարարվե՛ք՝ հավատարմություն ցուցաբերելով և վստահելով Աստծուն՝ հավատալով, որ Նա ազդանշան կտա ձեր հոգուն, երբ կարիք լինի հաջորդ քայլն անելու Իր ծրագրի մեջ: Թո՛ւյլ տվեք, որ *Աստված* իրականացնի Իր կամքը ձեր կյանքում: Իսկ հետո, երբ ձեզ համար Նրա ծրագրի հաջորդ փուլ փոխադրվելու ժամանակը կլինի, դուք ոչ թե կխապատրաստ, այլ լիովին պատրաստ կլինեք անելու այն, ինչ Նա կանչել է, որ անեք:

Պետք է գիտակցեք, որ վաղը, հաջորդ շաբաթ կամ հաջորդ ամիս չեք ունենալու ձեզ համար Աստծո պատրաստածի ամբողջ ներուժը: Սակայն եթե հավատարիմ լինեք և պատրաստվեք, սովորեք տեղ տալ Սուրբ Հոգու առաջնորդությանը, ապա մուտք կգործեք այն բանի մեջ, ինչն Աստված ծրագրել է ձեզ համար:

Չեք կարող միանգամից մուտք գործել Աստծո ծրագրի լիության մեջ այնպես, ինչպես դռնից ներս կմտնեիք: Սակայն աստիճանաբար՝ փոքր առ փոքր, մնալով հավատարիմ և հնազանդ, կշարունակեք առաջ շարժվել դեպի Աստծո պատրաստած ճակատագիրը ձեզ համար: Եվ մի օր վերջապես կկանգնեք Աստծո օրհնությունների և ձեր կյանքի համար Նրա նպատակի լիարժեք ձևավորված ուղեծրի մեջ: Երբ հասնեք այդ փուլին, հետ կնայեք դեպի նախապատրաստման ձեր ընթացքը և կասեք. «Փա՛նք Աստծուն նախապատրաստման այդ օրերի համար: Փա՛նք Աստծուն, որ ես հավատարիմ եղա և հնազանդվեցի Նրան»:

Եվ ձեր ասպարեզը համբերությամբ վազելիս հիշեք նաև, որ չպետք է փորձել վազել մեկ ուրիշի ասպարեզը: Մի՛ նայեք շուրջբոլորը՝ տեսնելու, թե իրենց ասպարեզի որ կետում են ուրիշները, և մի՛ փորձեք անցնել նրանց վազքուղի: Թո՛ւյլ տվեք, որ Աստված ասի *ձեզ*, թե ձեր ասպարեզի որ կետում եք դուք:

Գտնեք այն ասպարեզը, որն Աստված է դրել *ձեր* առջև: Հանեք այն ծանրությունները և մեղքերը, որոնք կարող են խոչընդոտել ձեր հնազանդությունն Աստծուն: Այնուհետև վազեք *ձեր* ասպարեզը՝ պահելով ձեր հայացքը նպատակակետին՝ Աստծո վերին կոչման մրցանակին Հիսուս Քրիստոսում (Փիլիպ. 3.14): Որոշում կայացրեք հետևելու Աստծո ծրագրին ձեր կյանքի համար և *ավարտելու* ձեր ընթացքն ուրախությամբ:



ՊԱՀՊԱՆԵՔ ՀՈԳՈՎ ԼՅՎԱԾ ԿՅԱՆՔԸ

Նրա համար մի՛ եղեք անմիտ, ԱՅԼ ԻՄԱՑԵՔ, ԹԵ ԻՆՉ Է ՏԻՐՈՋ ԿԱՄՔԸ [կամ նպատակը]:

Եվ մի՛ արբեք գինով, որ նրանում անառակություն կա, ԱՅԼ ԼՅՎԵՔ ՀՈԳՈՎ,

խոսելով ձեր մեջ սաղմոսներով և օրհնություններով և հոգևոր երգերով, երգեք և սաղմոսեք ձեր սրտերում Տիրոջը:

Ամեն ժամանակ ամեն բանի համար գոհացեք Աստծուց և Հորից՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի անունով:

Իրար հնազանդ եղեք Աստծո վախով:

– Եփեսացիս 5.17–21

Եղբայրասիրությունում իրար վրա գթանձ եղեք. պատիվ տալու մեջ իրարից առանց անցեք:

Ջանքի մեջ թույլ չլինեք. ՀՈԳՈՎ ԶԵՐՄԵՌԱՆԴ ԵՂԵՔ, Տիրոջը ծառայեք:

– Հռոմեացիս 12.10, 11

Շատ քրիստոնյաներ պայքարում են իմանալու, թե որն է Աստծո կամքն իրենց կյանքի համար: Աստված Իր ժողովրդին տալիս է հստակ ուղղորդում՝ կապված նրանց կյանքերի համար Իր ծրագրերի և նպատակների հետ, սակայն նույնիսկ այն ժամանակ, երբ թվում է, թե Աստ-

ված ոչ մի հստակ բան չի ասում, հավատացյալները կարող են իմանալ և կատարել Աստծո կամքն իրենց առօրյայում՝ պարզապես անելով այն, ինչ *խոսքն* է ասում:

Ուշադրությո՛ւն դարձրեք, որ մեջբերված խոսքում ասվում է. «Նրա համար մի՛ եղեք անմիտ, ԱՅԼ ԻՄԱՑԵՔ, ԹԵ ԻՆՉ Է ՏԻՐՈՋ ԿԱՄՔԸ: Եվ մի՛ արբեք գինով, որ նրանում անառակություն կա, ԱՅԼ ԼՅՎԵՔ ՀՈԳՈՎ» (Եփես. 5.17, 18): Այս խոսքերը մեզ ասում են, որ հնարավոր է իմանալ, թե որն է Տիրոջ կամքը մեր կյանքերի համար: Մեկ բան հաստատ է. Աստծո կամքն է, որ հավատացյալները լիովին լցված լինեն Իր Հոգով:

Ինչի՞ց ենք հասկանում, որ մարդը լցված է Սուրբ Հոգով: Մեկ անգամ մի մարդ ասաց. «Ես լցված եմ Սուրբ Հոգով, քանի որ տարիներ առաջ խոսել եմ լեզուներով»:

Սակայն Դ. Լ. Մուդին ասել է. «Անցյալ վերապրումների հիման վրա ապրելը նման է հնացած մանանայով սնվելուն»: Ես համաձայն եմ սրան: Եփեսացիս 5.18-ում ասվում է. «Եվ մի՛ արբեք գինով, որ նրանում անառակություն կա, այլ ԼՅՎԵՔ Հոգով»: Հոգով լցված *լինելը ներկա ժամանակով* է գրված և վերաբերում է *ներկա պահին*: Դա շարունակական, անդադար գործընթաց է, այլ ոչ թե ինչ-որ բան, որն անցյալում տեղի է ունեցել:

Հույն գիտնականներն ասում են, որ Եփեսացիս 5.18-ում «Հոգով լցված լինել» արտահայտությունը հունարենում նշանակում է *շարունակաբար լցվել* Սուրբ Հոգով: Այլ կերպ ասած՝ մենք պետք է Սուրբ Հոգով լցվելու վերապրումը մշտապես պահպանենք: Աստծո կամքը մեր կյանքերի համար այն է, որ մենք լիովին լցված լինենք Սուրբ Հոգով:

Ուշադրությո՛ւն դարձրեք Հռոմեացիս 12.11-ում «Հոգով ջերմեռանդ» արտահայտությանը: Մեկ այլ թարգմանությունում ասվում է. «*Թող ձեր հոգիները բոցավառված լինեն*»

(Weymouth): «Վերանայված սրանդարտ» թարգմանությունում գրված է. «Բոցավառված եղեք Հոգով»:

«Մոֆաթի» թարգմանությունում գրված է. «Պահպանե՛ք կրակը»: Ինձ ամենաշատը այս տարբերակն է դուր գալիս: Սա Տիրոջ կամքն է մեր կյանքերի համար: Այլ կերպ ասած՝ դա այն է, ինչ Նա ցանկանում է, որ մենք անենք՝ պահպանենք Սուրբ Հոգու կրակը: Սուրբ Հոգով լցված լինելը և կրակը պահպանելը Աստծո կամքն է մեզ համար, քանի որ դա գրված է Նրա *Խոսքում*: Իսկ մենք գիտենք, որ Աստծո *Խոսքը* Աստծո կամքն է:

ԵՐՐԱՅԵՑԻՍ 1.1, 2

1 Շատ մասերով և շատ կերպերով Աստված, առաջուց խնայելով մեր հայրերի հետ մարգարեների ձեռով,

2 այս վերջին օրերում ԽՈՍԵՑ ՄԵՁ ՀԵՏ ՈՐԴՈՎ, որին ամեն բանի ժառանգ դրեց, որով աշխարհն էլ արեց:

Աստվածաշունչն Աստված է, որ խոսում է անձնապես մեզ հետ: Եվ Աստվածաշունչն ասում է, որ Աստծո կամքն է մեզ համար «Հոգով ջերմեռանդ լինելը» կամ «Սուրբ Հոգու հուրը պահպանելը» (Հռոմ. 12.11): Հռոմեացիս 12.11-ի մեկ այլ թարգմանությունում ասվում է. «Հոգու կրակով բռնկվեք» (Goodspeed):

Հռոմեացիս 1.7-ում գրված է. «Ձեզ ամենիդ, որ Հռոմում եք՝ Աստծո սիրելիներիդ՝ կանչված սուրբերիդ...»: Պողոս առաքյալը Հռոմեացիս թուղթն ուղղել է Հռոմի եկեղեցուն, սակայն այն վերաբերում է Տեր Հիսուս Քրիստոսի եկեղեցուն պատկանող ամեն մեկիս, որտեղ էլ որ լինենք: Աստված ցանկանում է, որ մեզնից ամեն մեկը պահպանի Հոգով լցված կյանքը և ջերմեռանդ լինի Հոգու մեջ կամ *պահպանի կրակը*:

Հոգով լցված կյանքը պահպանելը նույնքան կարևոր է ձեր կյանքի համար Աստծո ծրագրին հետևելու մեջ, որ-

քան Աստծուց հստակ ուղղորդում ստանալն այն մասին, ինչ Նա ցանկանում է, որ դուք անեք: Օրինակ՝ կարող եք ձեր կյանքի համար Աստծո ծրագրի վերաբերյալ հստակ ուղղորդում ստանալ Նրանից և հնազանդվել Նրան: Սակայն եթե հնազանդվում եք միայն պարտավորված, ապա միևնույնն է, ի վերջո դա չի լինի Աստծո լավագույնը ձեզ համար: Դրանում չի լինի ջերմեռանդություն կամ կրակ, և ընթացքը դժվար կլինի: Դժվար կլինի իրականացնել Աստծո կամքը ձեր կյանքի համար:

Ո՛չ, Աստված կամենում է, որ դուք լիովին լցված լինեք Իր Հոգով և պահպանեք կրակը: Դա է Աստծո կամքը՝ Նրա նպատակը ձեր կյանքի համար, քանի որ Աստված գիտի, որ երբ դուք լցված եք Իր Հոգով, շատ ավելի հեշտ կլինի հաջողությամբ հետևել ձեր կյանքի համար Նրա ծրագրին:

ԿՐԱԿԸ ՊԱՀՊԱՆԵԼԸ ՏԵՍԱՆԵԼԻ Է

Ըստ Եփեսացիս 5.18–21-ի՝ Հոգով լցված լինելը կամ հոգու մեջ ջերմեռանդ լինելը տեսանելի է: Եթե դա տեսանելի չլիներ, ապա չէիք իմանա՝ բոցավառված եք Հոգով, թե ոչ:

Գործք առաքելոց 6.1–3-րդ խոսքերում տեսնում ենք մարդկանց, որոնք կանչված էին Աստծո համար աշխատանք անելու, քանի որ լիովին լցված էին Սուրբ Հոգով: Նրանք բոցավառված էին Հոգով, և դա տեսանելի էր:

ԳՈՐԾՔ 6.1–3

- 1 Եվ այն օրերում, երբ աշակերտները շատացան, հեղինախոսների կողմից տրտունջ եղավ եբրայեցիների դեմ, թե նրանց որբևայրիները ամեն օրվա մատակարարությունների մեջ անտես էին լինում:
- 2 Եվ տասներկուսը կանչեցին աշակերտների բազմությանը և ասացին. «Մեզ վայել չէ, որ Աստծո խոսքը թողած՝ սեղանին ծառայենք»:

3 Հիմա, եղբայրներ, ձեզնից յոթ ՎԿԱՅՎԱԾ մարդիկ ընտրեք, ՍՈՒՐԲ ՀՈԳՈՎ ԵՎ ԻՄԱՍՏՈՒԹՅՈՒՆՆՈՎ ԼՅՎԱԾ, որոնց այս պիտույքի վրա դնենք:

Երուսաղեմի եկեղեցու հիմնադրման շրջանում հավատացյալներն իրար հետ կիսում էին ամեն բան. ամեն բան ընդհանուր էր (Գործք 2.44): Առաքյալները վերահսկում էին եկեղեցին և ունեին թե՛ բնական, թե՛ հոգևոր պարտականություններ: Երբ որոշ մարդիկ զգացին, որ անտեսվում էին սննդի իրենց կարիքները, առաքյալներն աշակերտներին ասացին. *«Մեզ վայել չէ, որ Աստուծո խոսքը թողած՝ սեղանին ծառայենք... ձեզնից յոթ ՎԿԱՅՎԱԾ (անգլերենից բառացի թարգմանված՝ «ազնիվ համբավ ունեցող») մարդիկ ընտրեք»* (Գործք 6.2, 3):

Ամբողջ գումարը հավաքվում էր մեկ գանձանակի մեջ, ուստի առաքյալներին պետք էր, որ ինչ-որ մեկը հոգար գումարի, ինչպես նաև սննդի մատակարարման հարցերը: Առաքյալները ցանկանում էին, որ դրանով զբաղվեին յոթ մարդիկ, որոնք ազնիվ համբավ ունեին: *Իհարկե*, նրանք չէին ցանկանա, որ գումարի հետ գործ ունենային այնպիսի մարդիկ, որոնք ազնիվ համբավ չունեին:

Աշակերտները աշխարհի մեղավորների մեջ չէ, որ պետք է փնտրեին յոթ ազնիվ մարդկանց, այլ *քրիստոնյաների*: Տարօրինակ չէ՞ արդյոք, որ հավատացյալների մասին խոսելիս նրանք պետք է ասեին. «Գտեք նրանց, որոնք ազնիվ են»: Ակնհայտ է, որ եկեղեցում կային այնպիսիք, որոնք ազնիվ համբավ չունեին:

Աշակերտները *փնտրում էին* ազնիվ համբավ ունեցողների: Այլ կերպ ասած՝ մարդու ազնվությունը և անկեղծությունը տեսանելի են: Այդ որակները մարդու կյանքում կարելի է *տեսնել* կամ *ճանաչել*:

Ուշադրություն դարձրեք երկրորդ հատկանիշին, որ

աշակերտները պետք է փնտրեին այն յոթ մարդկանց մեջ, որոնք օգնելու էին իրենց. *«Ձեզնից յոթ... մարդիկ ընտրեք, ՍՈՒՐԲ ՀՈԳՈՎ ԼՅՎԱԾ»* (Գործք 6.3):

Սուրբ Հոգով լցված լինելը տեսանելի է այնպես, ինչպես ազնիվ համբավը: Երբ հավատացյալները լիովին լցված են Սուրբ Հոգով, ապա ջերմեռանդ են հոգու մեջ կամ վառված են Սուրբ Հոգով:

Երրորդ հատկանիշը, որն աշակերտները փնտրում էին, *իմաստությունն* էր (խոսք 3): Նրանց պետք էինք մարդիկ, որոնք կլինեին ազնիվ և Սուրբ Հոգով լցված: Սակայն առանց իմաստության, հատկապես երբ խոսքը գումարին է վերաբերում, մարդիկ կարող էին քառսի վերածել եկեղեցու ֆինանսական գործերը:

Տեսեք, թե ինչպես են փոխկապակցվում Գործք 6-րդ գլուխը և Հռոմեացիս 12.11-ը. *«ԶԱՆՔԻ ՄԵՋ (անգլերենից բառացի թարգմանված՝ «գործի մեջ») ԹՈՒՅԼ ՉԼԻՆԵՔ. հոգով ջերմեռանդ եղեք. Տիրոջը ծառայեք»:* «Գործի մեջ թույլ չլինեք» արտահայտությունը վերաբերում է ֆինանսական հարցերում թույլ չլինելուն:

Սա է պատճառը, թե ինչու շատ քրիստոնյաներ այսօր ֆինանսական խառնաշփոթի մեջ են. նրանք այդ հարցում բացարձակ իմաստություն չունեն: Հավատացյալները կարող են մկրտված լինել Սուրբ Հոգով և սակայն իմաստության պակաս ունենալ, ինչի հետևանքով խառնաշփոթ են ստեղծում:

Իրականում, առանց իմաստության կարող եք հայտնվել հոգևոր, մտավոր, ֆիզիկական և ֆինանսական խնդիրների մեջ: Առանց իմաստության կարող եք խնդիրներ ունենալ ձեր ամուսնության, այլ հարաբերությունների, ծառայության կամ աշխատանքի մեջ:

Առանց իմաստության չեք կարողանա հաջողությամբ

հետևել ձեր կյանքի համար Աստծո ծրագրին և իրագործել այն: Սակայն իմաստության պակասն անլուծելի հարց չէ: Աստվածաշունչն ասում է, որ մենք կարող ենք իմաստություն ստանալ՝ պարզապես հավատքով այն Աստծուց խնդրելով (Հակ. 1.5): Աստված ցանկանում է ձեզ իմաստություն տալ, որպեսզի բարգավաճեք ձեր կյանքի բոլոր բնագավառներում:

Գործք 6.1–3-ում տեսնում ենք, որ ազնվությունը, իմաստությունը և Սուրբ Հոգով լցված լինելը տեսանելի կամ ճանաչելի հատկանիշներ են: Այլ կերպ ասած՝ կարող եք հասկանալ՝ տվյալ անձնավորությունը լցված է Սուրբ Հոգով, թե ոչ, քանի որ Հոգով լցված կյանքն ուղեկցվում է որոշակի հատկանիշներով:

Հոգով լցված կյանքի առաջին հատկանիշը նշված է հետևյալ խոսքում. «*խոսելով ձեր մեջ սաղմոսներով և օրհնություններով և հոգևոր երգերով, երգեք և սաղմոսեք ձեր սրտերում Տիրոջը*» (Եփես. 5.18):

Եթե լցված եք Հոգով, ապա կպահպանեք կրակը, և ձեր սրտում երգ կլինի: Եվ եթե ձեր սրտում երգ կա, ապա չեք կարողանա այն ներսում պահել, այն կհնչի ձեր շուրթերից, քանի որ Աստվածաշունչն ասում է, որ բերանը խոսում է սրտի ավելցուկից (Մատթ.12.34, Ղուկ. 6.45):

Ուշադրություն դարձրեք, որ Եփեսացիս 5.18-ում ասվում է. «*խոսելով Ձեր Մեջ սաղմոսներով և օրհնություններով և հոգևոր երգերով*»: Սուրբ Հոգու օծությամբ սաղմոսներով, օրհներգերով և հոգևոր երգերով խոսելը գալիս է ձեր սրտից՝ դեպի ձեզ և դեպի Աստված:

Սաղմոսը հոգևոր բանաստեղծություն է կամ ներբող: Այն կարող է լինել ինչպես հանգավորված, այնպես էլ չհանգավորված, սակայն դրանում միշտ պոեզիայի տարր կա: Հին Կտակարանում 150 սաղմոս կա, որոնք Աստծո Հոգուց են

բխել: Դրանցից շատերը տրվել են սաղմոսերգու Դավթին մարգարեության պարգևով կամ Սուրբ Հոգու ներշնչմամբ: Եթե ուշադրությամբ կարդաք դրանք, կնկատեք, որ դրանցից շատերը Դավթին տրվել են իր իսկ բարիքի համար՝ քաջալերելու նրան դժվար իրավիճակներում:

Այսօր այդ սաղմոսները նաև մեր բարիքի համար են (Բ Տիմ. 3.16): Եվ ճիշտ այնպես, ինչպես դրանք տրվում էին Դավթին քաջալերելու համար, Սուրբ Հոգին նույնը կանի ձեզ համար: Նա ձեզ սաղմոս կտա՝ քաջալերելու ձեզ փորձությունների և դժվարությունների ժամանակ՝ բարձրացնելու ձեր հոգին, որպեսզի կարողանաք պահպանել կրակը:

Սաղմոսը, օրհներգը կամ հոգևոր երգը կարող է լինել գերբնական արտահայտություն՝ տրված ձեզ Սուրբ Հոգուց: Պարտադիր չէ, որ այն օրհներգերի գրքում գրված սաղմոս, օրհներգ կամ հոգևոր երգ լինի: Իրականում շատ երգեր, որոնք գրված են օրհներգերի գրքերում, Սուրբ Հոգուց տրված չեն: Դրանք ամբողջությամբ հիմնված չեն Սուրբ Գրքի վրա, իսկ որոշ երգերում նույնիսկ անհավատություն կա:

Սակայն սաղմոսները, օրհներգերը և հոգևոր երգերը, որոնք Սուրբ Հոգին է տալիս, դիպչում են ձեր սրտին և բարձրացնում են ձեզ, քանի որ ներշնչված են Սուրբ Հոգուց: Եվ մինչ գլխի կընկնեք, երգում կամ արտաբերում եք այդ խոսքերը:

Ինչպես տեսնում եք, չեք կարող լցված լինել Սուրբ Հոգով առանց *խոսելու, դրա վերբալ արտահայտման*:

ԵՓԵՍԱՑԻՍ 5.18, 19

18 Եվ մի՛ արբեք գինով, որ նրանում անառակություն կա, այլ ԼՅՎԵՔ ՀՈԳՈՎ,

19 ԽՈՍԵԼՈՎ ձեր մեջ սաղմոսներով եւ օրհնություններով և հոգևոր երգերով, երգեք և սաղմոսեք ձեր սրտերում Տիրոջը:

ԳՈՐԾՔ 2.4

4 Եվ ամենքը Սուրբ Հոգով լցվեցին և սկսեցին ուրիշ լեզուներով խոսել, ինչպես որ Հոգին նրանց խոսել էր տալիս:

ԳՈՐԾՔ 10.45, 46

45 Եվ զարմացան Պետրոսի հետ եկող հավատացյալները, որ թլփատությունից էին, որ հեթանոսների մեջ էլ Սուրբ Հոգու պարզևը թափվում էր:

46 Որովհետև լսում էին, որ նրանք լեզուներով խոսում և Աստծուն փառավորում էին:

Այնպես որ շարունակեք լեզուներով խոսել և մեծարել Աստծուն: Եվ շարունակաբար լցվեք Սուրբ Հոգով՝ խոսելով ձեր մեջ սաղմոսներով, օրհներգերով և հոգևոր երգերով: *Սա է Աստծո կամքը ձեզ համար:*

ԿՐԱԿԸ ՊԱՀՊԱՆՆԵԼԸ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՆԵՆԱ ԶԵՐ ՀՈԳՈՒ, ՇՆՉԻ ԵՎ ՄԱՐՄՆԻ ՎՐԱ

Եթե դուք պահպանեք Հոգով լցված կյանքը, ապա դա մեծապես կազդի ձեր կյանքի բոլոր բնագավառների վրա: Բնականաբար, ազդեցություն կունենա ձեզ վրա հոգևորապես, սակայն նաև մտավորապես: Պահպանելով Հոգով լցված կյանքը՝ դուք կունենաք ավելի սուր ու պարզ միտք: Սուրբ Հոգով լիովին լցված լինելը ձեզ վրա կազդի նաև ֆիզիկապես: *Սա է Աստծո կամքը ձեր կյանքի համար՝ շարունակաբար բոցավառված լինել Սուրբ Հոգով:*

Դժվար չէ նկատել, երբ ինչ-որ մեկը ֆիզիկապես և մտավորապես լավ վիճակում է: Օրինակ՝ եթե մարդն իրեն լավ չի զգում, նա իրեն նման չէ. միտքն այնքան սուր չէ, որքան կարող էր լինել: Դեմքի արտահայտությունից կարելի է հաս-

կանալ, որ նա հոգնած է կամ լավ չի զգում իրեն:

Հոգևոր առողջությունը ևս տեսանելի է: Իրականում մարդու հոգևոր առողջությունը նույնքան տեսանելի է, որքան ֆիզիկականը: Հոգեգալստական շարժման պիոներներից մեկը, ով ապրել է Մեծ Բրիտանիայում, այս տեսակետը պատկերավոր ներկայացրել է՝ օրինակ բերելով իր անձնական վերապրումներից:

Երբ դեպքը տեղի է ունեցել, այդ ծառայողը Անգլիայում հովիվ էր: Վերականգնվել էր նրա կապը մի ծառայողի հետ, որ ծառայում էր միսիայի դաշտում և յոթ տարվա մեջ առաջին անգամ տուն էր վերադարձել: Նրա ծառայող ընկերը տուն էր վերադարձել նավով, ուստի այդ հովիվը նրան դիմավորել էր նավահանգստում:

Ողջագուրվելուց հետո, երբ սկսել էին զրուցել, այդ միսիոները նայել էր հովվին ու հարցրել. «Ի՞նչ է քեզ պատահել»:

«Ի՞նչ նկատի ունես,- պատասխանել է հովիվը և սկսել ինքնապաշտպանվել:- Ոչ մի բան էլ չի պատահել»:

«Հոգևորապես լավ վիճակում չես»,- ասել է միսիոները:

Հետո այդ հովիվը մտածել է. «Նա հասկացավ, որ ինձ հետ մի բան այն չէ: Ուրեմն մի բան այն չէ: Ես հոգևորում այնտեղ չեմ, որտեղ պետք է լինեի: Սակայն դրն է խնդիրը»:

Հետո ներսում՝ իր հոգում, ստացել է պատասխանը: Նրա եկեղեցին Ամբողջական Ավետարանի միակ եկեղեցին էր մի քաղաքում, որտեղ մեկ միլիոնից ավելի մարդ էր ապրում: Սակայն հետո եկել էր մի անձնավորություն և մեկ այլ եկեղեցի հիմնել այդ քաղաքում, ինչից ինքը վրդովվել էր:

Իր հարանվանության անդամներից ոմանք սկսել էին հաճախել Ամբողջական Ավետարանի այդ նոր եկեղեցին, քանի որ այն մոտ էր իրենց տներին: Առաջին եկեղեցու հովիվը չարականություն էր պահել սրտում մյուս հովվի նկատմամբ, քանի որ մտածում էր, թե վերջինս ներխուժել է իր տարածք:

Սակայն այդ երբ էր հասցրել մեկ միլիոնից ավելի բնակչություն ունեցող քաղաքը դարձնել *իր* տարածքը: Աստվածաշունչն ասում է, որ երկիրն ու նրա լիությունը Տիրոջն են պատկանում և ոչ թե ինչ-որ ծառայողի: Ծառայողները պետք է *ուրախանան*, երբ մեկ ուրիշը նոր եկեղեցի է հիմնում իրենց քաղաքում. դա նշանակում է, որ ավելի շատ հոգիներ կմտնեն Աստծո Արքայություն:

Սխալ մի՛ հասկացեք ինձ: Ճիշտ չէ, երբ, օրինակ, ինչ-որ ծառայող գնում է մեկ ուրիշի եկեղեցի և «գողանում» վերջինիս գառներին ու փողոցի մյուս անկյունում եկեղեցի հիմնում: Դա սիրով վարվել և մերձավորին առաջնահերթություն տալ չէ: Ծառայողները *պետք է* ունենան էթիկա և սիրով վարվեն միմյանց հետ:

Սակայն կա նաև մյուս կողմը: Օրինակ՝ այդ քաղաքի առաջին եկեղեցու հովիվն իր եկեղեցում ուներ երկու հարյուր հիսուն անդամ, մինչդեռ քաղաքի բնակչությունը մեկ միլիոնից ավելի էր: Իսկ նոր եկեղեցին հիմնվել էր իր եկեղեցուց մղոններ հեռու. այդ ամենով հանդերձ առաջին եկեղեցու հովիվն դա բարկացրել էր, ինչը որոշակի հոգևոր ազդեցություն էր թողել իր վրա

Ձեր հոգին ավելի շատ բան գիտի հոգևոր բաների մասին, քան ձեր գլուխը: Իր սրտում այդ հովիվը գիտեր, թե Աստծո առաջ որտեղ էր բացթողում ունեցել: Եվ երբ գիտակցել էր իր սխալը, գնացել էր նոր եկեղեցու հովվի մոտ և ասել, որ սիրում ու գնահատում է նրան ու նրա ծառայությունը: Հետո այդ հովիվն հրավիրել էր իր եկեղեցական ծառայություններից մեկին: Այդ ամենից հետո նա նորից բռնկվել էր Աստծո կրակով:

Ինչպես տեսնում եք, Հոգով լցված կյանքը պահպանելու համար շատ ավելին է պահանջվում, քան Սուրբ Հոգով ցատկոտելը, ծիծաղելը կամ բղավելը: Իհարկե, այդ ամենն

էլ դրա մասն է կազմում, սակայն դրանից զատ շատ ավելին կա: Օրինակ՝ դուք կարող եք օրինվել մի այնպիսի ծառայության ժամանակ, երբ Աստծո Հոգին զորությամբ դրսևորում է իրեն, սակայն դա չի նշանակում, որ ձեր հոգևոր կյանքում ամեն բան կարգին է:

Կրակը պահպանել նշանակում է պահպանել հոգևոր առողջությունը: Սա ներառում է ձեր ամենօրյա կյանքում Սուրբ Հոգով լիովին լցվելը: Պողոսը դա նկատի ուներ՝ ասելով. «Նրա համար մի՛ եղեք անմիտ, այլ իմացե՛ք, թե ինչ է Տիրոջ կամքը... այլ [շարունակաբար] լցվե՛ք Հոգով» (Եփես. 5.17, 18): Այլ կերպ ասած՝ *պահպանե՛ք կրակը:*

Շատ քրիստոնյաներ փորձում են հստակ ուղղորդում ստանալ, սակայն մոռանում են, որ պետք է Խոսքը կատարող լինեն: Խոսքը կատարելը Աստծո կամքն է նույնքան, որքան Նրանից ստացված հստակ ուղղորդմանը հետևելը:

ՔԱՅԼԵՔ ԱՍՏԾՈՒ ԽՈՍՔԻ ԼՈՒՅՍԻ ՄԵՋ

Օրինակ՝ Աստծո Խոսքն ասում է, որ մենք պետք է սիրով վարվենք միմյանց հետ: Դա նշանակում է, որ սիրով վարվելը Աստծո կամքն է մեր կյանքերի համար: Աստվածաշունչն ասում է, որ եթե սիրով չենք վարվում, լույսի մեջ չենք քայլում (Ա Հովհ. 2.11):

Սակայն քանի-քանի քրիստոնյաներ են թերանում, երբ խոսքը վերաբերում է սիրո մեջ քայլելուն, և ձախողվում Աստծո Խոսքի լույսի՝ *Աստծո կամքի* մեջ քայլելու հարցում: Ինչպե՞ս կարող են ակնկալել, որ Աստծուց հստակ ուղղորդում կստանան և կհետևեն իրենց կյանքերի համար Աստծո ծրագրին, երբ քայլում են հոգևոր խավարի մեջ և նույնիսկ չեն տեսնում, թե ուր են գնում:

Հիշում եմ մի դեպք, որը պատահել է Ֆարմերսվիլի եկեղեցում, որտեղ ես և կինս հովվություն էինք անում ավելի

քան հիսուն տարի առաջ: Կար մի օրհներգ, որ տարածված էր հոգեգալստականների շրջանում. «Արդյոք կամ գետեր, որոնք անանցանելի են թվում: Արդյոք կամ սարեր, որոնք անհաղթահարելի են թվում: Աստված «մասնագետ» է անհնարին թվացող բաներում, և Նա կարող է անել այն, ինչ ոչ մի այլ զորություն չի կարող անել»¹:

Ֆարմերսվիլի եկեղեցու ծառայություններից մեկի ժամանակ սարկավազներից մեկն ասաց՝ «Սա իմ սիրելի օրհներգն է», և բոլորը սկսեցին երգել այն: Երբ երգում էին, այդ սարկավազը բացականչում էր և ուրախությունից ցատկոտում: Նա այնքան ուրախ էր, որ թվում էր՝ նստարանի վրայից կցատկի:

Սակայն ծառայությունից անմիջապես հետո՝ տուն վերադարձի ճանապարհին, կինն ասաց նրան, որ որդին նոր կոշիկի կարիք ուներ: Այդ խոսքերը լսելուն պես սարկավազը պոռթկաց. «Դու կարծում ես՝ ես փո՞ղ եմ տպում: Մի քանի ամիս առաջ ենք նրան կոշիկ գնել»:

Իհարկե, այդ պահին նա չմտածեց, որ երեխաների ոտքերն արագ են մեծանում: Փոխարենը հավասարակշռությունից դուրս եկավ և բղավեց կնոջ վրա:

Ինձ զարմացնում է այն, որ մարդը կարող է ցատկոտել ու երգել «Արդյոք կամ գետեր, որոնք անանցանելի են թվում», իսկ հետո սայթաքել մի զույգ կոշիկի պատճառով:

Ո՞րն էր խնդիրը: Այս սարկավազը սիրո մեջ չէր քայլում և չէր պահպանում կրակը: Աստծո կամքն այն է, որ մենք պահպանենք մեր հաղորդակցությունն Իր հետ *ամեն օր*²՝ մեր մեջ սաղմոսներով, օրհներգերով և հոգևոր երգերով խոսելով և մեր սրտերում Տիրոջը երգ բարձրացնելով (Եփես 5.18): Սա չի վերաբերում միայն այն ժամանակին, երբ մենք եկեղեցում ենք: Սա սրտի վերաբերմունք է, որը պետք է պահպանենք, ուր էլ որ գնանք:

Եթե Հոգով լցված եք, ապա ձեր սրտում երգ կլինի՝ անկախ նրանից՝ եկեղեցում եք, տանը, թե աշխատավայրում, ուր էլ լինեք: Սա Հոգով լցված կյանքի նշան է:

ԵՓԵՍԱՑԻՍ 5.20

20 Ամեն ժամանակ ամեն բանի համար գոհացե՛ք Աստծուց և Հորից՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի անունով:

Հոգով լցված կյանքի նշան է նաև Աստծո հանդեպ գոհունակությամբ լցված սիրտը՝ անկախ ձեզ շրջապատող հանգամանքներից:

Ա ԹԵՍԱԴՈՆԻԿԵՑԻՍ 5.18

18 Ամեն բանի մեջ գոհացե՛ք, որովհետև սա է Աստծո կամքը ձեզ վրա Քրիստոս Հիսուսում:

Երբեմն մարդիկ մտածում են, թե պետք է շնորհակալություն հայտնեն Աստծուն նրա *համար*, որ իրենց հետ ինչոր վատ բան է պատահել: Ո՛չ, չպետք է Աստծուն շնորհակալություն հայտնել նրա համար, ինչը սատանան է արել: Սակայն փորձությունների և դժվարությունների ժամանակ կարող եք շնորհակալություն հայտնել Աստծուն, քանի որ գիտեք, որ Նա կազատի ձեզ ամեն փորձությունից:

Ըստ Աստվածաշնչի՝ Աստծո կամքն է, որ մենք *շնորհակալ* լինենք Իրենից, ոչ թե փնթփնթանք, դժգոհենք և տրտնջանք: Եթե փնթփնթում և դժգոհում եք ձեզ շրջապատող հանգամանքներից, ապա կպարտվեք, քանի որ դա նշանակում է, որ հավատքի մեջ չեք, կյանքի բացասական կողմում եք: Սակայն եթե շնորհակալություն հայտնեք Աստծուն և սկսեք հաշվել ձեր օրհնությունները, ապա կանցնեք կյանքի դրական կողմը, և Աստված կկարողանա գործել ձեր փոխարեն:

ՀԱԿՈՐՈՍ 1.2

- 2 Բոլորովին ՌԻՐԱԽՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՄ, եղբայրներս, երբ կերպ-կերպ փորձանքների [տարբեր տեսակի փորձությունների և դժվարությունների] մեջ ընկնեք:

Ուշադրությո՜ւն դարձրեք, Հակոբոսը չի ասում, թե ուրախալի է, որ մեր կյանքում փորձություններ ու դժվարություններ են պատահում: Նա ասում է, որ դրանք *համարենք* ուրախություն: Եվ եթե փորձությունների և դժվարությունների մեջ ուրախությունն *ընտրեք*, ապա Աստծո հանդեպ շնորհակալ վերաբերմունք կցուցաբերեք և կսկսեք ցնծալ:

Այս խոսքը ուշադրությունս գրավել է, երբ երիտասարդ հոգեգալստական տղա էի: Այդ ժամանակ չգիտեի Սուրբ Հոգով մկրտության մասին, սակայն բժշկություն էի ստացել և վեր կացել մահվան մահճից: Երիտասարդ քարոզիչ էի, նոր էի սկսում ծառայությունս և հավատքիս պատճառով ծանր փորձության միջով էի անցնում:

Գնացել էի պապիկիս իր ագարակում տեսակցելու: Հիշում եմ, որ գնացի ամբար աղոթելու և արեցի ճիշտ այն, ինչ վերոնշյալ խոսքն է ասում՝ «ուրախություն *համարեցի*»: Գիտեի, որ կանգնած եմ ժայռի՝ Աստծո Խոսքի վրա, ուստի նայեցի սատանային և սկսեցի ծիծաղել նրա երեսին:

Գուցե հարցնեք. «Ծիծաղդ *գալիս էր*»: Ո՛չ, ծիծաղս չէր գալիս. իրականում ուզում էի լաց լինել: Սակայն ես սկսեցի հավատքով ծիծաղել, քանի որ սրտումս գիտեի, որ ըստ Խոսքի՝ հաղթանակն իմն էր:

Այդ ժամանակ դեռ չէի տեսել, որ ինչ-որ մեկը բացականչեր կամ ցատկոտեր ու պարեր Սուրբ Հոգով: Սակայն երբ պապիկիս ամբարում Աստծուն էի փառաբանում, այդպես էլ անում էի: Ես գործում էի Հակոբոս 1.2-ի համաձայն: Պահում էի ինձ այնպես, կարծես Աստծո Խոսքն է ճշմարտությունը, քանի որ հենց այդպես էր: Ես ցնծում էի հավատքով և

ուրախությունն էի ընտրում, հաղթանակն իմն էի համարում:

Երբ Աստծուն էի փառաբանում պապիկիս ամբարում, սատանային ասացի. «Դե՛, որքան կարող ես, ճնշում գործադիր: Միևնույնն է, որքան բարդ լինի իրավիճակը, այնքան ավելի եմ գոչելու ու փառաբանելու Աստծուն»: Եվ շարունակեցի փառաբանել Աստծուն այնքան, մինչև բեռը վերցվեց ինձնից, և թշնամու ճնշումը վերացավ:

Կարճ ժամանակ անց իմ իրավիճակը գրեթե միանգամից բարելավվեց: Իսկ եթե ես բացասական կողմում մնայի, նվնվայի և բողոքեի այն դժվարությունից, որի միջով անցնում էի, ապա հաղթականորեն դուրս չէի գա դրանից և Աստծո լավագույնը չէի վերապրի, մասնավորապես այդ իրավիճակում:

Ինչպես տեսնում եք, հեշտ է ծիծաղել, բացականչել, ցատկոտել և պարել եկեղեցական ծառայության ժամանակ, սակայն երբ իսկապես լցված եք Սուրբ Հոգով, ապա միշտ եք հոգու մեջ ջերմեռանդ, Աստծով բոցավառված և Նրանից ոգեշնչված և կարող եք շնորհակալություն հայտնել Նրան ցանկացած իրավիճակում:

Եթե փորձության կամ դժվարության մեջ եք, ապա շնորհակալություն եք հայտնում Աստծուն ոչ թե դրա *համար*, այլ որովհետև դա մեկ այլ հնարավորություն է Աստծո համար՝ դրսևորելու Իր հավատարմությունը և վարժեցնելու ու զարգացնելու ձեր հավատքը: Սա է Աստծո կամքը ձեր կյանքի համար:

ԵՓԵՍՍՑԻՍ 5.18, 21, 22

18 ...այլ լցվե՞ք Հոգով...

21 Իրար ՀՆԱԶԱՆԴ ԵՂԵՔ Աստծո վախով:

22 Կանայք, ՀՆԱԶԱՆԴՎԵՔ ձեր մարդկանց, ինչպես Տիրոջը:

Հոգով լցված լինելու մեկ այլ նշան է խոնարհությունը: Աստված կամենում է, որ մենք կոտրված կամ հեզ լինենք

և ոչ թե խստասիրտ անհատականություն, ինչի հետևանքով մշտապես կցանկանանք մեր ուզածով շարժվել: Կան մարդիկ, որոնք դժվարությամբ են հնազանդվում, բայց երբ բոցավառված եք Սուրբ Հոգով, դա հեշտ է:

Ուշադրություն դարձրեք 22-րդ խոսքին. «Կանայք, հնազանդվե՛ք ձեր մարդկանց, ինչպես Տիրոջը» (Եփես. 5.22): Կանանց և ամուսինների մասին խոսելիս Պողոսն օգտագործում է «հնազանդվել» բառը. նույն այդ բառը նա օգտագործում է 21-րդ խոսքում, երբ խոսում է այն մասին, որ հավատացյալները պետք է հնազանդվեն միմյանց:

Ոմանք Եփեսացիս 5.22-ը կտրում են համատեքստից և փորձում դրան հաղորդել իմաստ, որն այն չունի: Օրինակ՝ մի մարդ մի անգամ ասաց ինձ. «Փանք Աստծուն, որ ես եմ իմ տան գլուխը: Կնոջս ասել եմ, որ պետք է անի ամենը, ինչ իրեն կասեմ. հակառակ դեպքում գլուխը կջարդեն»:

Սրանք հնչում են ինչպես Սուրբ Հոգու լեցունությունն ունեցող մարդու խոսքեր: Ո՛չ, այս խոսքերն այնքանով են Աստծուց, որքանով ես տիեզերագնաց եմ:

Մեկ անգամ մի հովիվ ասաց ինձ. «Ես երբեք ծոմ չեմ պահում, պարզապես չեմ կարողանում: Ճաշի ժամին տուն եմ գնում, որովհետև օրվա մեջ երեք տաք կերակուր պիտի ուտեմ: Եվ եթե հասնեմ տուն, ու կինս կերակուր պատրաստած չլինի, նրան դժոխք է սպասում»:

Մտածեցի. «Այս մարդը փրկության կարիք ունի»: Գուցե այդ հովիվն արձագանքել էր Աստծո կանչին իր կյանքի համար ու գուցե ծառայում էր հենց այնտեղ, որտեղ կանչված էր, բայց նա ամբողջ սրտով չէր հետևում Աստծո ծրագրին իր կյանքի համար, քանի որ հոգով ջերմեռանդ չէր և սիրո մեջ չէր քայլում:

Արդեն ասել եմ, որ Հոգով լցված կյանքը պահպանելը ազդեցություն կունենա ձեր կյանքի բոլոր ոլորտների վրա՝

հոգու, շնչի և մարմնի: Նույն սկզբունքով՝ Հոգով լցված չլինելը բացասաբար կազդի ձեր կյանքի բոլոր բնագավառներին վրա:

Օրինակ՝ այդ հովիվն ինքն իրեն չէր դատում և երիտասարդ տարիքում մահացավ: Սա Աստծո կամքը չէր նրա համար, սակայն նա չէր քայլում Խոսքի լույսի մեջ և ինքն իրեն չէր դատում: Իսկ Աստվածաշունչն ասում է. «Որովհետև եթե մեր անձերը դատեինք, չէինք դատապարտվի» (Ա Կորնթ. 11.31):

Աստվածաշունչն ասում է, որ կանայք պետք է հնազանդվեն ամուսիններին, ինչպես Տիրոջը (Եփես. 5.22): Սակայն նաև ասում է, որ հավատացյալները պետք է հնազանդվեն միմյանց (խոսք 21): Արդյո՞ք սա նշանակում է, որ մենք պետք է ղեկավարենք իրար: Ո՛չ, Եփեսացիս 5.22-ը ևս չի նշանակում, որ ամուսինը պետք է ղեկավարի իր կնոջը և կոպտորեն վարվի նրա հետ:

ԱՍՏՎԱԾ ԿԱՄԵՆՈՒՄ Է, ՈՐ ՄԵՆՔ ՍՈՎՈՐԵԼՈՒ ՈՒՆԱԿ ԼԻՆԵՆՔ

«Հնազանդվել» պարզապես նշանակում է *զիջել միմյանց*: Բնական տեսանկյունից սա անելը երբեմն դժվար է: Սակայն եթե լցված եք Հոգով և պահպանում եք կրակը, ապա հեշտ կլինի, քանի որ ջերմեռանդ հոգին մարդկային բնությունը հոգուն հեշտությամբ է ենթարկում:

Դա Աստծո կամքն է ձեր կյանքի համար: Եվ երբ դուք ձեր մարդկային բնությունը ենթարկում եք ձեր հոգուն, Աստծո հստակ կամքը և ուղղորդումը ձեր կյանքի համար ավելի ու ավելի պարզ են դառնում ձեզ համար:

Որոշ քրիստոնյաներ չեն կարողանում միմյանց հնազանդվել և հեշտությամբ վիրավորվում են: Օրինակ՝ որոշ

հավատացյալներ վիրավորվում են նրանից, ինչ քարոզիչը քարոզում կամ սովորեցնում է Աստծո Խոսքից:

Ոմանք այնպես են վիրավորվում, որ հեռանում են եկեղեցուց: Սակայն մենք պետք է հնազանդ լինենք իրար և հնազանդ լինենք Խոսքին: Պետք է պահպանենք *սովորելու ունակ* վերաբերմունքը:

Խոնարհությունը նշան է Հոգով լցված կյանքի: Եվ առանց խոնարհության ու սովորելու ունակ հոգու դուք հոգևոր առումով կխոչընդոտեք Աստծո ծրագրի իրագործումը ձեր կյանքում:

Ես ավելի քան հիսունհինգ տարի է՝ ծառայում եմ և զարմանում եմ, թե որքան շատ քրիստոնյաներ, որոնք խոսում են լեզուներով, սովորելու ունակ չեն:

Նրանք պարծենում են, որ խոսում են լեզուներով: Եվ ես ուրախ եմ, որ խոսում են լեզուներով, սակայն շատերն, այսպես ասած, կանգնած են մնացել դռան շեմին, մինչդեռ պետք է ներս մտնեին և քայլեին Աստծո հետ:

Գուցե մենք համաձայն չլինենք աստվածաշնչյան փոքր հարցերի շուրջ, սակայն կարող ենք ճիշտ հոգով ճիշտ վերաբերմունք ցուցաբերել և հնազանդվել միմյանց: Իհարկե, եթե մարդիկ ուսմունքից շեղվում ու սխալ ուղղությամբ են գնում, մենք պետք է կանգնենք ճշմարտության համար սիրով լի վերաբերմունքով:

Սակայն չպետք է վիճել մանր հարցերի շուրջ, ինչպես, օրինակ՝ «Արդյոք մե՞ղք է լիմոնադ խմելը»: Գուցե սա ծայրահեղական է հնչում, բայց եղել են մարդիկ, որ նման հարց են տվել: Այդպիսի հարցերը ոչ այլ ինչ են, քան ուսմունքային շեղումներ: Այլ կերպ ասած՝ դրանք գոնե չեն ազդում մարդու փրկության վրա:

Ինչպես ասել եմ, կրակը պահպանել նշանակում է պահպանել ձեր հոգևոր կյանքը: Իսկ Սուրբ Հոգով լցված կյանքն

ամուր պահելու միջոցներից մեկը աղոթքի միջոցով Աստծո հետ սերտ հաղորդակցություն պահպանելն է:

ԳՈՐԾՔ 4.13–17, 23, 24, 29–31

- 13 Եվ Պետրոսի և Հովհաննեսի ՀԱՄԱՐՁԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՍՆԵԼՈՎ [սաղուկեցիները] և գիտենալով, որ առանց ուսմունքի և տգետ մարդիկ են, զարմանում էին. միայն ճանաչում էին նրանց, որ Հիսուսի հետ էին:
- 14 Եվ այն բժշկված մարդուն էլ տեսնելով նրանց հետ կանգնած՝ ոչինչ չունեին պատասխանելու:
- 15 Եվ հրամայեցին նրանց, որ ատյանից դուրս գնան, և իրար հետ խորհուրդ արեցին:
- 16 Եվ ասացին. «Ինչ անենք այս մարդկանց, որ երևելի նշան եղավ սրանց ձեռքով, որ Երուսաղեմի մեջ բոլոր բնակվողներին հայտնի է, և չենք կարող ուրանալ:
- 17 ԱՅԼ ՈՐՊԵՍՁԻ ԱՎԵԼԻ ՉՏԱՐԱԾՎԻ ԺՈՂՈՎՐԴԻ ՄԵՋ, ՍԱՍՏԻԿ ՍՊԱՌՆԱՆՔ ՆՐԱՆՑ, որ այլևս այն անունով չխոսեն մարդկանցից ոչ մեկի հետ»:
- 23 Եվ արձակվելուց հետո եկան իրենցների մոտ և պատմեցին, ինչ որ քահանայապետները և ծերերն ասացին նրանց:
- 24 Եվ նրանք, երբ լսեցին, միաբանությամբ իրենց ձայները բարձրացրին դեպի Աստված և ասացին. «Տէր, Դու ես Աստված, որ արիւր երկինքը և երկիրը՝ ծովը և նրանց միջի բոլոր բաները:
- 29 Եվ հիմա, Տէր, նայիր նրանց սպառնալիքին և ՏՈՒՐ ՔՈ ՇԱՌԱՆԵՐԻՆ ԲՈԼՈՐ ՀԱՄԱՐՁԱԿՈՒԹՅՈՒՆՈՎ ՔՈ խոսքը խոսել,
- 30 որ Քո ձեռքը մեկնես, որ բժշկություն և նշաններ և հրաշքներ լինեն Քո սուրբ Որդի Հիսուսի անունով»:
- 31 Եվ ՆՐԱՆՑ ԱՂՈԹՔ ԱՆԵԼԻՍ շարժվեց այն տեղը, ուր որ ժողովված էին, և ԱՄԵՆՔԸ ՍՈՒՐԲ ՀՈԳՈՎ ԼՅՎԵՑԻՆ, և ԱՍՏԾՈՒ ԽՈՍՔԸ ԽՈՍՈՒՄ ԷԻՆ ՀԱՄԱՐՁԱԿՈՒԹՅԱՄԲ:

Սուրբգրային այս հատվածը խոսում է նույն այն մարդկանց խմբի մասին, որոնք Գործք 2-րդ գլխում ստացել էին

Սուրբ Հոգու պարգևը և սկսել էին խոսել լեզուներով, ինչպես որ Հոգին նրանց խոսել էր տալիս (Գործք 2.4):

Սակայն ուշադրություն դարձրեք Գործք 4.31-ին. «Եվ նրանց աղոթք անելիս շարժվեց այն տեղը, ուր որ ժողոված էին, և ամենքը ՍՈՒՐԲ ՀՈԳՈՎ ԼՅՎԵՑԻՆ, և Աստծո խոսքը խոսում էին համարձակությամբ»: Այս մարդիկ արդեն լցվել էին Սուրբ Հոգով Գործք 2-րդ գլխում, սակայն Աստված ցանկանում էր, որ նրանք շարունակաբար լցվեին:

Տեսեք, թե ինչ տեղի ունեցավ Գործք 4-րդ գլխում, երբ այդ վայրը ցնցվեց, և նրանք լցվեցին Սուրբ Հոգով: Գրված է. «Աստծո խոսքը խոսում էին ՀԱՄԱՐՁԱԿՈՒԹՅԱՄԲ» (խոսք 31):

Եթե ցանկանում եք պահպանել Հոգով լցված կյանքը, ապա աղոթքի միջոցով պահպանեք համարձակության հոգին: Այնուհետև պահպանեք բացարձակ հնազանդություն Աստծո խոսքին և Նրա ծրագրին ձեր կյանքի համար, այն բանին, ինչ Նա դրել է ձեր սրտում, որ անեք:

ԱՍՏԾՈՒ ԿԱՄՔՆ ԻՐԱԳՈՐԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ՀՆԱԶԱՆԴՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՎԻՐՈՒՄ

Չեք կարող միանգամից իրագործել Աստծո ամբողջ ծրագիրը ձեր կյանքի համար: Դա հնազանդության և հավատարմության քայլ առ քայլ ճանապարհ է՝ ամեն օր անելու այն, ինչ դուք գիտեք, որ Նա կամենում է՝ անեք: Հնազանդությունն Աստծուն և Նրա խոսքին ամեն օր՝ նույնիսկ փոքր բաներում, կօզնի ձեզ պահպանելու Հոգով լցված կյանքը:

Եթե ցանկանում եք պահպանել Հոգով լցված կյանքը, պետք է նաև պահպանեք Աստծուն նվիրված վերաբերմունքը:

Եթե կա մի բան, որ պակասում է խարիզմատիկ շրջա-

նակներում այսօր, ապա դա նվիրման և սրբագործման մասին ուսմունքն է: Աստծո կամքը կատարելու համար նվիրում ցուցաբերելը և սրբագործվելը շարունակական գործընթաց է: Այլ կերպ ասած՝ այնպես չէ, որ մեկ անգամ նվիրվում եք Աստծո կամքն անելուն և այլևս երբեք դրա մասին չեք մտածում:

Հնարավոր է՝ ոչ միշտ մանրամասնությամբ իմանաք, թե Տերն ինչ է կամենում, որ անեք: Սակայն միշտ պետք է *պատրաստակամ* լինեք անելու ցանկացած բան, որ Նա կկամենա, որ անեք, և գնալու ցանկացած վայր, ուր նա կկամենա, որ գնաք: Չեք կարողանա հետևել ձեր կյանքի համար Աստծո ծրագրին, եթե *պատրաստակամ* չեք անելու այն ամենը, ինչ Նա կխնդրի, որ անեք:

1941 թվականին ես և կինս վաղաժամ թողեցինք հովվությունը Ֆարմերսվիլի եկեղեցում: Այլ կերպ ասած՝ դուրս եկանք Աստծո կամքից:

Երկու տարի ես այստեղից այնտեղ գնացի դաշտային ծառայության մեջ, և հետո Աստված հետ ուղարկեց մեզ Ֆարմերսվիլ՝ ավարտելու այն հոգևոր աշխատանքը, որը տվել էր՝ անեինք այնտեղ:

Երկրորդ անգամ այնտեղ մենք ավարտեցինք այն աշխատանքը, որ պետք է անեինք առաջին անգամ այնտեղ լինելու ժամանակ: Ի վերջո եկավ ժամանակը, երբ Աստված ասաց մեզ, որ թողնենք հովվությունը և անցնենք դաշտային ծառայության:

Իմ ծառայության մեջ ավելի ուշ եղավ մի ժամանակահատված, երբ պայքարում էի Ֆարմերսվիլի եկեղեցի վերադառնալու մտքի դեմ: Երբեմն՝ նույնիսկ խոր ձմռանը, առավոտյան ժամը երեքին կամ չորսին վեր էի կենում անկողնուցս և աղոթում: Այնպիսի զգացողություն ունեի, որ Աստված ցանկանում էր երրորդ անգամ վերադարձնել ինձ այդ եկեղեցի:

«Ո՛չ, Աստված,- ընդդիմանում էի ես,- ես չեմ ցանկանում վերադառնալ այնտեղ երրորդ անգամ. բացի այդ՝ դա հեշտից էլ հեշտ է»:

Սովորաբար գիշերը, երբ պառկում եմ քնելու, գլուխս բարձին դնելուց մեկ րոպե անց քուն եմ մտնում: Սակայն շաբաթներ շարունակ պայքարում էի Ֆարմերսվիլ վերադառնալու մտքի դեմ, ինչի պատճառով կորցրել էի քունս:

Ի վերջո տեղի տվեցի և ասացի. «Լավ, Տե՛ր: Եթե Դու ցանկանում ես, որ ես վերադառնամ Ֆարմերսվիլ, ապա կանեմ դա»: Երբ ասացի դա, լսեցի, թե ինչպես Տերը պարզ ծայնով, այնպես, ինչպես կխոսեր սենյակում ֆիզիկապես ներկա մեկը, ասաց. «Ես չեմ ցանկանում, որ դու վերադառնաս Ֆարմերսվիլ. պարզապես ցանկանում եմ, որ *պատրաստակամ* լինես գնալու այնտեղ»:

Մտածեցի. «Տե՛ր Աստված, ինչո՞ւ այսքան երկար պայքարեցի, այդքան ժամեր աղոթեցի՝ ասելով, թե չեմ ցանկանում հովվել այդ եկեղեցին: Որքա՞ն կխնայեի նյարդերս, եթե պարզապես պատրաստակամ լինեի նախ և առաջ հնազանդվելու Աստծուն»:

Հետո Տերն ինձ մեկ ուրիշ բան ասաց, ինչն ինձ ապշեցրեց և ձեզ նույնպես կապշեցնի, եթե ուշադիր կարդաք: Նա ասաց. «Որդի՛ս, եթե դու պատրաստակամ չլինես վերադառնալու այդ եկեղեցի, Ես չեմ կարողանա օգտագործել քեզ այլ ոլորտներում, որտեղ ուզում եմ օգտագործել»:

Եթե ես պատրաստակամ չլինեի գնալու Ֆարմերսվիլի եկեղեցի, ապա Աստված չէր կարողանա օգտագործել ինձ այնպես, ինչպես այսօր օգտագործում է: Ինչպես տեսնում եք, հարկավոր է պատրաստակամ լինել անելու ցանկացած բան, ինչ Աստված կկամենա, այլապես Նա առհասարակ չի կարողանա օգտագործել ձեզ:

Երբեմն ձեր կյանքի համար Աստծո ծրագրին հետևելիս հարկ կլինի, որ անեք բաներ, որոնք չէիք ցանկանա անել: Սակայն եթե հնազանդվեք Աստծուն՝ ամեն օր քայլ առ քայլ գնալով Նրա Խոսքի լույսի մեջ, աղոթելով, հնազանդվելով և նվիրվելով, ապա կմնաք Նրա Հոգով բոցավառված և ի վերջո, կկատարեք Աստծո ծրագիրը ձեր կյանքի համար:



ՆՎԻՐՈՒՄ ԱՍՏԾՈ ԾՐԱԳՐԻՆ

Այն ժամանակ Հիսուսը նրանց հետ մի տեղ եկավ՝ անունը Գեթսեմանի, և ասաց աշակերտներին. «Այդտեղ նստեք, մինչև որ ես գնամ, աղոթք անեմ այնտեղ»:

Եվ Պետրոսին և Ջեբեդեայի երկու որդիներին իր հետ առավ, սկսեց տրտմել և վշտանալ:

Այն ժամանակ նրանց ասաց. «Հոգիս մեռնելու չափ տրտմած է. այստեղ մնացեք և ինձ հետ արթուն կացեք»:

Եվ մի քիչ առաջ գնալով իր երեսի վրա ընկավ, աղոթք էր անում և ասում. «Իմ Հայր, եթե կարելի է, թող այս բաժակն ինձնից անցնի, սակայն ՈՉ ԹԵ ԻՆՉՊԵՍ ԵՍ ԵՄ ԿԱՄԵՆՈՒՄ, ԱՅԼ ԻՆՉՊԵՍ ԴՈՒ»:

Եվ աշակերտների մոտ է գալիս և նրանց քնի մեջ է գտնում և ասում է Պետրոսին. «Այդպես՝ մեկ ժամ էլ չկարողացաք ինձ հետ արթուն կենալ:

Արթուն կացեք և աղոթք արեք, որ փորձության մեջ չմտնեք. հոգին հոժար է, բայց մարմինը՝ տկար»:

Դարձյալ երկրորդ անգամ Հիսուսը գնաց, աղոթք արեց և ասաց. «Իմ Հայր, եթե կարելի չէ, որ այս բաժակն ինձնից անցնի առանց իմ նրան խմելու, ՔՈ ԿԱՄԲԸ ԼԻՆԻ»:

– Մատթեոս 26.36–42

Մատթեոս 26-րդ գլխի այս հատվածում տեսնում ենք Տեր Հիսուս Քրիստոսի աղոթքի կյանքը՝ Նրա նվիրման աղոթքը: Այս խոսքերում ներկայացված է Հիսուսի նվիրման օրինա-

կր. Նա նվիրեց Իրեն Հոր կամքը կատարելուն: Ինչի՞ մասին էր խոսում Հիսուսը Գեթսեմանի պարտեզում՝ ասելով՝ *«Եթե կարելի է, թող այս բաժակն Ինձնից անցնի»* (Մատթ. 26.39):

Հիսուսը գիտեր, որ Իրեն խաչն է սպասում: Նա գիտեր, որ մեր փոխարեն պետք է զոհաբերվեր մեղքի պատճառով (Եբր. 9.26):

Պատկերացրե՛ք բոլոր այն մեղքերը, որոնք մարդկությունը գործել է դարեր շարունակ՝ ամեն անբարոյականություն, անառակություն, սպանություն ու ատելություն: Աստվածաշունչն ասում է, որ Հիսուսը մեզ համար մեղք դարձավ, որպեսզի մենք Նրանով Աստծո արդարությունը դառնանք (Բ Կորնթ. 5.21): Սակայն Գեթսեմանի պարտեզում, իմանալով, որ գնում է խաչի մահվան, Աստծո անբիծ, մաքուր Որդին մի պահ հետ քաշվեց ամբողջ մարդկության մեղքը կրելու և Աստծուց բաժանվելու վերապրումն ունենալու հեռանկարից:

Իհարկե, երբ մոտենում էին վերջին ժամերը, Հիսուսը տրտմած ու ծանրացած էր (Մատթ. 26.38, Մարկ. 14.34): Թեև Հիսուսը գիտեր, որ Իր աշխարհ գալու պատճառը մարդկության փոխարեն մահանալն էր, երբ աղոթում էր Աստծուն ու ասում՝ *«Եթե կարելի է, թող այս բաժակն անցնի Ինձնից»*, Նա պայքարում էր դրանից հետ քաշվելու գայթակղության դեմ:

Երբ Հիսուսն աղոթում էր Գեթսեմանի պարտեզում և խաչից հետ քաշվելու գայթակղության դեմ պայքարում, Աստվածաշունչն ասում է, որ Նրա քրտինքը թափվում էր արյան մեծ կաթիլների նման (Ղուկ. 22.44): Հիսուսի համար հեշտ չէր իրագործել Հոր ծրագիրն Իր համար: Իրականում դեպի խաչը գնալը և աշխարհի մեղքերի համար խաչվելը դառը բաժակ էր:

Սակայն Հիսուսը գիտեր, որ փրկագնման արդյունքը լինելու էր մարդկության փրկությունը. այնպես որ Նա հանձն-

վեց Հոր կամքին այն ուրախության համար, որ Նրան սպասում էր (Եբր. 12.2): Հիսուսն աղոթեց նվիրման Իր աղոթքը՝ ասելով. «*Իմ Հայր, եթե կարելի չէ, որ այս բաժակն Ինձնից անցնի առանց Իմ նրան խմելու, ՔՈ՛ ԿԱՄՔԸ ԼԻՆԻ*» (Մատթ. 26.42):

Աստված փնտրում է հավատացյալների, որոնք ամբողջությամբ կնվիրվեն իրենց կյանքի համար Նրա ծրագիրը կատարելուն, այնպես, ինչպես Հիսուսն արեց Գեթսեմանի պարտեզում և Իր ողջ երկրային ծառայության ընթացքում:

Տիրոջ աչքերը դիտում են ամբողջ երկիրը, որպեսզի գտնի նրանց, որոնց սրտերը նվիրված են Իրեն (Բ Մնաց. 16.9, NIV): Աստված փնտրում է հավատացյալների, որոնք կասեն այն, ինչ Հիսուսն ասաց՝ «Ոչ թե իմ, այլ Քո կամքը լինի»:

Բացի այդ՝ ուշադրություն դարձրեք նաև, որ Նա մեկ անգամ չէ, որ աղոթեց այդ աղոթքը: Ըստ էության՝ Նա նույն աղոթքն արեց երեք անգամ (Մատթ. 26.39, 42, 44):

Ինչպես տեսնում եք, նվիրման աղոթքը մեկանգամյա աղոթք չէ, ճիշտ այնպես, ինչպես հավատքի աղոթքը: Այն պետք է աղոթել ամբողջ կյանքի ընթացքում: Դուք կկարողանաք հետևել Աստծո ծրագրին ձեզ համար, միայն եթե մշտապես պահպանեք Տիրոջ կամքին նվիրվելու և Նրան հանձնվելու վերաբերմունքը, ինչպիսին էլ որ այդ կամքը լինի:

ՆՎԻՐՄԱՆ ՊԱԿԱՍԸ ՀԱՎԱՏԱՑՅԱԼՆԵՐԻ ՄԵՋ

Այսօր քրիստոնյաների շրջանում կարծես Աստծո կամքն անելու խոր նվիրման պակաս կա: Վերջերս մտածում էի հիսուն տարի առաջ և հիմա Ամբողջական Ավետարանի շրջանակներում ունեցած իմ վերապրումների տարբերության մա-

սին: Երբ համեմատում եմ Ամբողջական Ավետարանի այն ժամանակվա և ներկայիս հավատացյալներին, գիտակցում եմ, որ հիսուն տարի առաջ Հոգով լցված քրիստոնյաների շրջանում չկար այնքան հիվանդություն, որքան այսօր կա:

Հիշում եմ Սուրբ Հոգու այն մեծ դրսևորումները, որ մենք վերապրում էինք մեր հավաքույթների ժամանակ: Այն ժամանակ Սուրբ Հոգու շարժը շատ ավելի մեծ էր, իսկ դրսևորումները՝ շատ ավելի հաստատուն, քան այսօր: Երբ մտածում էի սրա մասին, Աստծո Հոգին ասաց ինձ. «Այո՛, ինչպես նաև ավելի մեծ էր Իմ ժողովրդի նվիրումը»:

Թո՛ղյլ տվեք, որ այս խոսքերը թափանցեն ձեր ներսը: Այն, թե արդյոք մենք կընտրենք Աստծուն հնազանդվելուն նվիրվելը, ազդեցություն է ունենալու մեր կյանքի բոլոր բնագավառների վրա:

Ես լիովին համոզված եմ Տիրոջ ասածի ճշմարտացիության մեջ: Հիսուն տարի առաջ հավատացյալների նվիրումը շատ ավելի խորն էր, քան այսօր է: Ինչպես նաև հավատացյալներն ավելի խոր գնահատանքով և ակնածանքով էին վերաբերվում Աստծուն վերաբերող բաներին և Սուրբ Հոգու շարժին: Արդյունքն այն էր, որ Աստված գնահատում էր նվիրման և ակնածանքի այդ խորությունը՝ Իր ժողովրդին Սուրբ Հոգու ավելի մեծ դրսևորումներ տալով:

Այսօր հավատացյալներն ունեն Աստծուն ավելի մեծ նվիրման կարիք: 1940-ականներին իմ հովված եկեղեցիներում գրեթե ամեն հավաքույթի վերջում մարդիկ հավաքվում էին խորանի մոտ և աղոթում: Հաճախ երգում էինք այն հին օրհներգը՝ «Արդյոք քո ամենն ես դրել խորանի գոհասեղանին»¹: Այլևս նման օրհներգեր չենք երգում, սակայն շատերն այսօր պետք է ականջ դնեն այն հին սուրբգրային օրհներգերի ուղերձներին:

1 “Is Your All on the Altar of Sacrifice Laid?” by Elisha Hoffman.

Թվում է, թե շատ հավատացյալներ պատրաստ են որոշ բաներ դնելու զոհասեղանին, սակայն ո՛չ *ամենքը*: Սակայն այդպես խոչընդոտվում է Աստծո կամքը նրանց կյանքերի համար, և Նրա շատ օրհնություններ հետ են պահվում, քանի որ մարդիկ ամբողջությամբ չեն նվիրվել իրենց կամքի փոխարեն Աստծո կամքն անելուն:

Ծառայողները պետք է նվիրման մասին սովորեցնեն մարդկանց, որպեսզի վերջիններիս սրտերը բորբոքվեն՝ ամեն բան հանձնելու Աստծուն և ամբողջությամբ նվիրվելու իրենց կյանքերի համար Աստծո ծրագրին հետևելուն:

Խորհե՛ք Տիրոջը ձեր նվիրման մասին: Խորհե՛ք այն մասին, թե արդյոք կարող եք սրտանց ասել. «Տէր, կանեմ ամենը, ինչ ասես: Կգնամ, ուր կամենաս: Կմնամ այնտեղ, որտեղ կամ, եթե ասես, որ մնամ: Որտեղ էլ առաջնորդես ինձ, ես կտանեմ Հիսուս Քրիստոսի բարի լուրն ուրիշներին»:

Դուք պետք է պատրաստակամ լինեք անելու *ցանկացած* բան, ինչ Աստված կամենա, որ անեք: Պետք է ընծայեք ձեզ Աստծուն հնազանդվելուն և մինչև ձեր կյանքի վերջը ամեն օր կատարեք Նրա կամքը:

Տասնվեց տարեկանում վերստին ծննդիցս ի վեր հասկացել եմ Տիրոջն ամբողջովին նվիրվելու կարևորությունը: Կես դարից ավելի է, ինչ քրիստոնյա եմ և դեռ անում եմ նվիրման նույն աղոթքը, որն արել եմ ավելի քան հիսուն տարի առաջ: Դեռևս աղոթում եմ. «Տէր, կգնամ, ուր կամենաս: Եթե կամենաս, որ գնամ Աֆրիկա, կգնամ: Եթե կամենաս, որ մնամ այնտեղ, որտեղ հիմա եմ, կմնամ: Կանեմ, ինչ էլ որ կամենաս»:

ԵՐԲԵՔ ՄԻ ԱՍԵՔ «ԵՐԲԵՔ»

Դա չի նշանակում, որ երբևէ չեմ թերացել Աստծո կամքին ամբողջովին նվիրվելու մեջ: Հիշում եմ՝ մի անգամ, երբ

երիտասարդ հովիվ էի և գնացել էի աստվածաշնչյան համաժողովի, մի քանի հովիվների հետ զրուցելիս մի եկեղեցու մասին հետևյալն ասացի. «*Երբեք* չեմ հովվի այդ եկեղեցին»:

Կռահեք, թե ինչ էի անում դրանից երկու տարի չանցած: Հովիվ էի հենց այն եկեղեցում, որի մասին ասել էի, թե երբեք այնտեղ հովվություն չեմ անի:

Այդ փորձառությունից ես լավ դաս քաղեցի: Սովորեցի, որ այն, ինչը ես չեմ ցանկանում անել, կարող է լինել հենց այն, ինչն Աստված Իր իմաստությամբ կամենում է, որ անեմ:

Աստծո մտքերը վեր են մեր մտքերից (Ես. 55:9): Նրա ճանապարհները մեր ճանապարհներից բարձր են. Նա տեսնում է ամբողջական պատկերը: Ուրեմն հարցն Աստծուն վստահելն է՝ հավատալով, որ Նա գիտի, թե որն է լավագույնը մեզ համար:

Դրանից հետո որոշեցի այլևս երբեք չասել. «Տե՛ր, ինչ կամենում ես, կանեմ՝ բացի այդ մի բանից: Դա *երբեք* չեմ անի»: Եվ ջանացել եմ սիրտս Աստծուն նվիրված պահել:

Հիշում եմ «Ռեմա» աստվածաշնչյան դպրոցի շրջանավարտներից մեկին, որը նույն դասն առավ: Մինչ ավարտելը նա ասել էր, թե երբեք հովիվ չի դառնա: Եվ «Ռեմայում» անցկացրած ամբողջ ուսումնական տարվա ընթացքում համոզված էր, որ Աստված կանչել է իրեն ավետարանիչ լինելու:

Սակայն աստվածաշնչյան դպրոցի ավարտական հանդիսությանը, երբ ձեռնադրում էի «Ռեմայի» ուսանողներին, նրա համար Տիրոջից խոսք ստացա: Հոգու մեջ ծիծաղեցի՝ «Դու ասում էիր, որ երբեք հովիվ չես լինի, մինչդեռ կլինես»:

Հետո ձեռնադրեցի նրա կնոջն ու նորից սկսեցի Հոգու մեջ ծիծաղել: Սուրբ Հոգուց առաջնորդված՝ ասացի նրան. «Իսկ դու ասել ես, թե երբեք հովվի կին չես լինի, սակայն կլինես և դրա համար շատ գոհ և ուրախ կլինես»:

Ավարտելուց կարճ ժամանակ անց այդ մարդը մեքենայով գնում էր և աղոթում, որ Տերը ցույց տա, թե որն է լինելու իր հաջորդ քայլը: Եվ Աստծո Հոգին ասել է նրան. «Հիմա գնա՛ տուն: Երեսուն թուղթից քեզ մի մարդ կգանգահարի և կխնդրի, որ հովվես Օկլահոմայում գտնվող մի փոքրիկ եկեղեցի: Ես կամենում եմ, որ դու ստանձնես այդ հովվությունը»:

Այդ մարդն անմիջապես վարել է դեպի տուն: Տուն հասնելուց կարճ ժամանակ անց հեռախոսը զանգել է: Ճիշտ այնպես, ինչպես Տերն էր ասել, զանգահարողը խնդրել է «Ռեմայի» այս շրջանավարտին հովվություն ստանձնել այդ փոքր քաղաքի եկեղեցում: «Ռեմայի» շրջանավարտը հնազանդվել է Աստծուն և ընդունել այդ առաջարկը: Նա և նրա կինը հովվություն են ստանձնել և օրինվել են իրենց հնազանդության համար: Աստծուն հնազանդվելու մեջ գտել են գոհություն և լիարժեք ուրախություն, թեև դա նշանակում էր անել մի բան, ինչն ասել էին, թե երբեք չեն անի:

ՊԱՏՐԱՍՏԱԿԱ՛Մ ԵՂԵՔ ԱՍՏԾՈՒ ՀԱՄԱՐ ՑԱՆԿԱՑԱԾ ԲԱՆ ԱՆԵԼՈՒ

Այնքան կարևոր է, որ պատրաստակամ լինեք անելու ցանկացած բան, ինչ Աստված կասի ձեզ: Աստծուն հնազանդվել չցանկանալը կարող է խոչընդոտել կամ հետաձգել Նրա ծրագրի իրականացումը ձեր կյանքում: Այս խոսքերի ճշմարտացիության մեջ կարելի է համոզվել մի վկայության շնորհիվ, որ մի անգամ լսել եմ Ամբողջական Ավետարանի մի ավետարանչի մասին, որ հայտնի է ամբողջ երկրում:

Այս ավետարանիչը պատմում է, որ վերստին ծնվել և Սուրբ Հոգով լցվել է տասներեք տարեկանում: Այդ ժամանակ էլ իր կյանքի վրա ծառայության կանչ է զգացել: Եվ սակայն, ինչպես ինքն է բացատրում, որպես նորադարձ

քրիստոնյա՝ վախենում էր, որ եթե արձագանքեր Աստծո կանչին, Աստված կասեր, որ գնա Չինաստան: Իսկ իր մտքում նա որոշել էր, որ Չինաստանն այն վայրն է, ուր չի ցանկանում գնալ:

Շատ տարիներ այդ երիտասարդը պայքարում էր այն ենթադրության դեմ, որ Աստված կարող է իրեն Չինաստան ուղարկել: Նա խուսափում էր Աստծուն մոտենալուց, որովհետև չէր ցանկանում լսել այն, ինչ Աստված հնարավոր է ասեր իրեն: Նա հետ էր պահում իրեն հոգևոր զարգանալուց և տարիներ շարունակ հետընթաց և Աստծո կամքից դուրս պտույտներ էր գործում, քանի որ մի բան կար, որն ինքը պատրաստակամ չէր անելու, և դա որպես միսիոներ Չինաստան գնալն էր:

Փախուստի այդ տարիներին այդ երիտասարդը մի քանի անգամ գնացել էր եկեղեցի և մոտեցել խորանին՝ աղոթելու և կրկին ժամանակավորապես Աստծուն հանձնվելու:

Ինչպես տեսնում եք, մարդը կարող է ժամանակավորապես հանձնվել Աստծուն: Հնարավոր է սրտանց աղոթել, սակայն իրական փորձությունը գալիս է այն ժամանակ, երբ մարդը հեռանում է խորանից, և գալիս է Աստծուն հնազանդվելու ժամանակը և անելու այն, ինչ ինքը չէր ցանկանա անել: Եթե նա առերևույթ է Տիրոջը հանձնվել, ապա հետ կքաշվի իր ընծայումից և կշարունակի անել այն, ինչ *ինքն* է ցանկանում:

Երբ այդ երիտասարդը երեսուն տարեկան էր, մի երեկո՝ արթնության ծառայության ժամանակ, մոտենում է խորանին՝ իր կյանքն Աստծուն վերընծայելու: Այս անգամ նա լուրջ էր տրամադրված Աստծուն ծառայելու հարցին, ինչ զոհողություն էլ դա պահանջեր:

Եվ ահա թե ինչ է պատմում այդ ավետարանիչը. «Անմիջապես այն բանից հետո, երբ վերադարձա Աստծո հետ

հաղորդակցությանը, մեկ անգամ ևս առերեսվեցի այն հարցին, թե արդյոք կարձագանքեմ ծառայության մեջ մտնելու Աստծո կանչին»:

Ինչպես տեսնում եք, այդ աստվածային կոչումը նրա կյանքի վրա է եղել բոլոր այդ տարիներին, երբ նա փախել է Աստծուց, քանի որ Աստծո շնորհքն ու կոչումը զղջալ չունեն (*Հռոմ. 11.29*): Աստված պարզապես սպասում էր, որ նա ամբողջովին հանձնի կյանքն Իրեն:

«Այդ անգամ մեկնեցի ձեռքերս և գոչեցի. «Լավ, Տէր. ես հանձնվում եմ: Կգնամ Չինաստան, եթե դա այն է, ինչ Դու կամենում ես: Երբ էլ կամենաս, կգնամ: Ոչ թե իմ, այլ *Քո* կամքը լինի»,- շարունակում է այդ ավետարանիչը:

«Միանգամից լսեցի Տիրոջ ձայնը՝ այնքան բարձր, որ կարծեցի, թե սրահում բոլորը պիտի որ լսած լինեին այն. «Ես չեմ կամենում, որ դու գնաս Չինաստան, պարզապես կամենում եմ, որ *պատրաստակամ* լինես»:

Երբ այս մարդը լիովին հանձնվեց Աստծուն, նա դարձավ այս ազգության առաջատար ավետարանիչներից մեկը: Սակայն, ինչպես տեսնում եք, նա չէր կարողանա լինել այն ավետարանիչը, որ Աստված կանչել էր նրան լինելու Միացյալ Նահանգներում, եթե պատրաստակամ չլիներ գնալու *ցանկացած վայր*, ուր Աստված կառաջնորդեր նրան, նույնիսկ Չինաստան»:

Նույնը վերաբերում է մեզնից յուրաքանչյուրին: Մենք կկարողանանք վերապրել Աստծո ծրագրի, Նրա օծության և օրհնության լիությունը մեր կյանքերում, եթե միայն պատրաստակամ լինենք հնազանդվելու Նրան մեր կյանքի բոլոր բնագավառներում:

Աստված ցանկանում է, որ մենք *ամբողջովին* հանձնվենք Իրեն: Նա գիտի, որ եթե պատրաստակամ չլինենք հնազանդվելու Իրեն մեր կյանքի որևէ բնագավառում, ապա

այդ անպատրաստակամությունը կտանենք մյուս բնագավառներ ևս, և սա կխանգարի մեզ վազելու այն ասպարեզը, որ Նա դրել է մեր առջև:

Իմ մարդկային միտքը չի ցանկացել անել գրեթե ոչ մի բան, ինչ ես այսօր անում եմ, երբ Աստված առաջին անգամ ասել է դրանց մասին: Կար ժամանակ, որ նույնիսկ չէի ցանկանում քարոզել:

Մինչ փրկվելս, երբ երիտասարդ տղա էի, երազում էի իրավաբան դառնալ: Եվ եթե նկատել եք, իմ քարոզների և ուսուցումների մեջ հաճախ «դեպքը պաշտպանում եմ փաստարկներով», ինչպես կաներ իրավաբանը, միայն թե ապացույցներ բերում եմ Սուրբ Գրքից: Ես չեմ ջանում այդպես խոսել, պարզապես այդպիսին եմ:

Երբ ինը տարեկան էի, հաճախ էի գնում քաղաքային դատարան, որովհետև սիրում էի նստել պատշգամբում և լսել, թե ինչպես են իրավաբանները «պաշտպանում իրենց դեպքերը»: Լսում էի նրանց ու վստահաբար մտածում, որ շատ ավելի լավ կաշխատեմ, քան նրանցից շատերը:

Սակայն հետո՝ 1933 թվականի ապրիլի 22-ին՝ ութից քսան պակաս, Տեխասի նահանգի Մքթիննի քաղաքի Նորթ Քոլիջ փողոցի համար 405 հարավային ննջասենյակում վերստին ծնվեցի, երբ կաթվածահար պառկած էի մահվան մահճում արյան անբուժելի հիվանդությամբ և սրտի արատով: Եվ առաջինը, որ ասացի, հետևյալն էր. «Տեր, հանիր ինձ այս հիվանդության մահճից, և ես կգնամ ու կքարոզեմ»:

Դա «ոչ թե իմ, այլ Քո կամքը լինի» արտահայտության մեկ այլ ձև էր: Այդպես ես՝ որպես պատանի, արեցի հանձնման և նվիրման իմ աղոթքը: Տասնվեց ամիս անց, երբ հավատքով աղոթեցի, Տերը գերբնական ձևով ոտքի կանգնեցրեց ինձ: Այդ պահից ի վեր քարոզում եմ:

Այդ պահից ի վեր անթիվ անգամներ աղոթել եմ նվիր-

ման աղոթքը: Օրինակ, երբ հովվում էի իմ վերջին եկեղեցին Վանում՝ Տեխասի նահանգում, Տերը խոսեց ինձ հետ այն փոփոխության մասին, որը հանելու էր ինձ հովվական ծառայությունից և տեղափոխելու էր դաշտային ծառայություն:

Մի քանի տարի հոգումս զգում էի, որ այդ փոփոխությունը լինելու էր: Աստված նախապատրաստում էր ինձ իմ ծառայության հաջորդ փուլին:

Մեր կյանքի այդ փուլում ես և ընտանիքս ավելի հարմարավետ էինք ապրում, քան երբևէ ապրել էինք նախորդ տարիների իմ ծառայության ընթացքում: Ես ավելի շատ գումար էի աշխատում, քան երբևէ աշխատել էի: Ապրում էինք ամենալավ հովվական կացարանում, որ երբևէ ունեցել էինք: Ես վարում էի ամենալավ մեքենան, որ երբևէ վարել էի, և մենք հագնում էին լավագույն հագուստը, որ երբևէ հագել էինք իմ ծառայության սկզբից ի վեր:

Եվ ոչ միայն դա, եկեղեցու անդամները սիրում էին ինձ՝ որպես հովվի: Խորհրդի անդամները մի անգամ ասացին. «Եղբայր Հեգին, մենք ուրախ կլինենք, եթե դու մնաս այստեղ և միշտ հովվություն անես»:

Ինձ համար հաճելի կլիներ, եթե Աստված ասեր, որ ես պետք է անհայտ ժամանակով շարունակեմ այդտեղ հովվություն անել: Ոչ մի լուրջ խնդիր չունեի եկեղեցում, հարանվանությունն աճում էր, ժամանակ կար հանգստանալու և ընտանիքիս ու ընկերներիս հաղորդակցությունը վայելելու:

Սակայն Աստված սկսեց աշխատել ինձ հետ դաշտային ծառայության անցնելու համար: Դա մի բաժակ էր, որ ես չէի ցանկանում խմել: Ես կին ու երկու երեխա ունեի, որոնց մասին պետք է հոգ տանեի, ուստի չէի ցանկանում թողնել հովվության ապահովությունը. որպես հովիվ ծառայել եմ իմ ծառայության տասնհինգ տարիներից տասներկուսը: Եվ

ինձ համար դաշտային ծառայության մեջ մտնելը հավատքի մեծ քայլ էր դեպի անհայտություն:

Յանկանում եմ՝ իմանաք, որ մեկ անգամ չէ, որ աղոթել եմ՝ խնդրելով Տիրոջը անցկացնել այդ բաժակն ինձնից: Երկու տարի աղոթել եմ դրա համար: Ամեն օր խոսում էի Աստծո հետ դրա մասին:

Պատահել է, երբ ամբողջ գիշեր եմ աղոթել: Արևը հորիզոնից բարձրանում էր, իսկ ես դեռ վեր ու վար քայլում էի խորանի անցուղիներով և Աստծո հետ խոսում դաշտային ծառայության փոխարեն հովվություն անելու մասին:

Աստծուն ասում էի. «Տէր, բոլորը գոհ են ինձնից՝ որպես հովվի: Ես և ընտանիքս վայելում ենք մեր կյանքն այստեղ. ամեն բան լավ է: Հազար ու մի բառերով ասում էի Աստծուն. «Տէր, ինչո՞ւ այստեղ ինձ հանգիստ չես թողնում: Մի՛ խաթարիր հարմարավետ կյանքս այստեղ»:

Սակայն այդպես էլ չկարողացա համոզել Աստծուն փոխելու Իր միտքը: Աստվածաշնչում գրված է՝ «շնորհքը և կոչումը գղջալ չունի» (Հռոմ. 11.29): Ուստի ես ի վերջո հանձնվեցի Աստծո կամքին ու ասացի Նրան. «Ոչ թե իմ, այլ Քո կամքը լինի, Հայր»: 1949 թվականին հավատքի մեծ քայլ արեցի և մտա դաշտային ծառայության մեջ:

Երբ նոր էի մտել դաշտային ծառայության մեջ, դեռ չգիտեի, թե որքան լավն են լինելու հնազանդության այդ բաժակը խմելու արդյունքները: Այո՛, եղան բարդ տեղեր, որոնց պետք էր համբերել. որոշ ժամանակ դժվար էր: Սակայն տարիների ընթացքում Աստված օրհնեց մեզ ավելիով, քան մենք կարող էինք պատկերացնել, քանի որ հնազանդ գտնվեցինք *Նրա* ծրագրին և ոչ թե մեր ցանկություններին:

Բոլորս էլ կյանքում ստիպված ենք եղել խմել բաժակներ, որոնք կցանկանայինք շրջանցել: Սակայն եթե գիտենք, որ այդ բաժակը Տիրոջ կամքն է մեզ համար, ապա կարող ենք

հանգիստ լինել, որ արդյունքը բարի է լինելու մեզ համար և փառավորելու է Աստծուն: Այս պատճառով էլ հարկավոր է բաց մնալ Աստծո կամքի համար և աղոթել այնպես, ինչպես Հիսուսն աղոթեց. «Ոչ թե իմ, այլ Քո կամքը լինի, Հայր»:

Շատ քրիստոնյաներ երբևիցե ամենը չեն հանձնել Տիրոջը: Նրանք պատրաստակամ են Հիսուսին իրենց կյանքի մի մասի Տերը դարձնելու, սակայն կան բնագավառներ, որոնց վերահսկողությունից չեն ցանկանում հրաժարվել, քանի որ դրանք թանկ են իրենց մարմնական բնության համար: Որոշ հավատացյալներ ասում են, որ ամեն բան դրել են զոհասեղանին, սակայն իրականում իրենց մի մասը պահել են Տիրոջից:

Այնքան կարևոր է մեկընդմիջտ կայացնել հստակ որոշում և լիովին հանձնվել Աստծուն ու հետևել Նրա ծրագրին ձեր կյանքի համար: Այդ որոշումը կլինի ձեր անձի խարիսխը, որը կպահի ձեզ Աստծո կատարյալ կամքի մեջ, երբ սատանան կփորձի բերել ամենամեծ գայթակղությունները՝ ձեզ Աստծո ծրագրից շեղելու և հետ պահելու համար:

Սատանան բարձր գին կառաջարկի ձեզ համար. նա կօգտագործի իր *լավագույն* գայթակղությունները, որպեսզի հետ պահի ձեզ Աստծուն հնազանդվելուց: Եթե դուք ամեն բան լիովին չեք հանձնել Տիրոջը, ապա կանգնած եք սատանայի գայթակղություններով համոզվելու, ձեր կամքին, մարմնական հակումներին ու ցանկություններին հետևելու և ձեզ համար Աստծո լավագույնը բաց թողնելու վտանգի առջև:

ՈՐՈՇՄԱՆ ԽԱՉՄԵՐՈՒԿԸ

Շատ քրիստոնյաներ հենց հիմա իրենց կյանքի խաչմերուկում են: Այլ կերպ ասած՝ պիտի կայացնեն որոշումներ, որոնք ազդեցություն կունենան իրենց կյանքերի վրա: Մի խաչմերուկում են, որտեղ պետք է որոշեն, թե արդյոք ամբողջովին նվիրվելու են Աստծո կամքին՝ անկախ այն բանից, թե Նա ինչ կասի, որ անեն:

Այն հավատացյալները, որոնք կանգնած են խաչմերուկում, ունեն սեփական ծրագրերին ու ցանկություններին հետևելու ընտրություն: Այդ արահետը գուցե լայն, պայծառ և ուղիղ է թվում, այնքանով, որքանով նրանց աչքերը կարող են տեսնել, սակայն եթե շարունակեն հենվել սեփական հասկացողության վրա և չհնազանդվեն Աստծուն, ապա այդ ուղիղ ու լայն ճանապարհն ի վերջո կտանի նրանց դեպի խավար: Այլ կերպ ասած՝ այն հավատացյալները, որոնք չեն ընտրում Աստծո կատարյալ կամքը, կհանդիպեն այնպիսի փորձությունների, որոնք Աստված երբեք չէր նախատեսել նրանց համար:

Մյուս կողմից, հնազանդ հավատացյալների համար Աստծո պատրաստած արահետը գուցե լինի նեղ, անցնի սարերով և խոր ձորերով: Այն գուցե ունենա թեքություններ և ոլորաններ, որոնք երբեմն աղոտացնում են տեսարանը:

Այն հավատացյալները, որոնք գնում են Աստծո ճանապարհով, միշտ չէ, որ կկարողանան տեսնել արահետի վերջը, քանի որ Աստծուն հետևելը հավատքի և հնազանդության քայլ առ քայլ ընթացք է: Սակայն ի հեճուկս այն դժվարությունների, որոնք կան հնազանդության արահետին, Տիրոջ մեջ այնպիսի մեծ ապագա է սպասում նրանց, ովքեր ընտրել են գնալ Աստծո ճանապարհներով:

Գուցե ասեք. «Չեմ կարծում, թե ուզում եմ գնալ նեղ ու ոլորուն արահետով՝ առանց տեսնելու, թե ինչ կա առջևումս:

Չգիտեմ, թե այն ուր է տանում: Իսկ մյուս արահետը լայն և ուղիղ փոված է իմ առջև: Եթե գնամ Աստծո ընտրած նեղ ճանապարհով, չեմ տեսնի, թե սարերից այն կողմ ինչ կա: Հնազանդության այդ ճանապարհը խորդուբորդ և դժվար է երևում»:

Սակայն եթե ցանկանում եք հետևել ձեզ համար Աստծո ծրագրին, ապա պետք է ընտրեք հնազանդության ճանապարհը: Եվ եթե ընտրեք Նրան հնազանդվելը, ապա Նա կտա ձեզ ուժ ու կարողություն՝ մագլցելու այն սարերը, որոնք հենց հիմա ձեր առջևն են, ինչպես նաև այն սարերը, որոնք դուք դեռևս չեք տեսնում»:

Ձեր արահետն ավելի ու ավելի կլուսավորվի, և ձեր հնազանդությունը ազդեցություն կթողնի շատերի վրա՝ ուղղելով նրանց դեպի Հիսուսը: Հնազանդության ճանապարհին Աստված հայտնում է Իր փառքը, և ձեր ուժն օրեցօր նորոգվում է: Իսկ երբ ավարտեք ձեր ընթացքն ու երես առ երես հանդիպեք Հիսուսին, այնքան ուրախ կլինեք, որ հնազանդվել եք Աստծուն:

Մեզնից յուրաքանչյուրը կյանքում շատ խաչմերուկների կհանդիպի. որոշ խաչմերուկներ ավելի վճռորոշ կլինեն, քան մյուսները: Եվ յուրաքանչյուր խաչմերուկում մենք պետք է նորոգենք մեր նվիրումը՝ կատարելու Աստծո կամքը և ոչ թե մերը:

Ահա թե ինչու է անհրաժեշտ նորից ու նորից անել նվիրման աղոթքը Տիրոջ հետ մեր ընթացքի մեջ և նվիրվել Աստծուն ու Նրա Խոսքին ամբողջական հնազանդությանը:

Ամբողջությամբ նվիրվեք Տիրոջը: Հակառակ նրան, որ ձեր մարդկային միտքը ցանկանում է հետևել սեփական ծրագրերին ու ցանկություններին՝ ձեզ մեռած համարեք մարմնական հակումների համար:

Եվ թեև ձեր ցանկությանն ու ծրագրերին «ոչ» ասելը եր-

բեմն կարող է դժվար թվալ, հնազանդության վերջնական արդյունքից ձեր հոգին կցնծա: Դուք հաջողակ կլինեք Ձեր ճանապարհին և ավելի մեծ բավականություն կստանաք, քան ձեր մարդկային միտքը կարող է պատկերացնել: Մարդկային բնությամբ առաջնորդված և Աստծո կատարյալ ծրագրի համաձայն ապրած կյանքերի միջև համեմատության եզր անգամ չկա:

Սրտանց աղոթեք Աստծուն նվիրման այս աղոթքը.

Տէր, գալիս եմ Քո առջև: Թող Քո կամքը լինի իմ կյանքում: Թող որ ես երբեք չմոռանամ, որ ամբողջ էությունս Քեզ եմ հանձնել:

Ես ընծայվում եմ՝ լինելու այն մեկը, որին Դու կարող ես օգտագործել՝ նվիրված և զատված Քո նպատակների համար: Ես կվճարեմ իմ մարմնական բնությունը մերժելու գինը: Եթե Դու ինձ գիշերը կանչես, ես ծնկի կգամ ու կաղոթեմ: Եթե երբևիցե նկատված չլինեմ մարդկանց կողմից և միշտ աշխատեմ ետնաբեմում, միևնույնն է, հավատարիմ կմնամ:

Մի կողմ եմ դնում բոլոր անձնական հավակնություններս. ես կլինեմ մեկը, ով կքայլի Հոգու և Քո կատարյալ կամքի մեջ: Հիսուսի անունով թող Քո կամքը դաջված լինի իմ սրտի, կյանքի ու ծառայության մեջ:

Հեշտ է ասել այս բառերը և կյանքդ նվիրել Տիրոջը, երբ ուրիշ հավատացյալների հետ Սուրբ Հոգու շոշափելի ներկայության մեջ երկրպագում ես Տիրոջը:

Սակայն անհրաժեշտ է ամուր բռնվել այդ նվիրումից դժվարության և փորձության ժամանակ, երբ հանգամանքները ձեզ այս ու այն կողմ են նետում: Հարկավոր է պահպանել մտքի, կամքի և նպատակի նույն հաստատակամությունը և վստահաբար ասել. «Ես կքայլեմ Տիրոջ հետ և

թույլ կտամ, որ Նա իրականացնի Իր նպատակն իմ կյանքի համար»:

Դժվարության մեջ նվիրումը պահելով՝ դուք կառնեք հնազանդության, նվիրման և հավատքի մեծ դասը: Ամեն օր շարունակելով հնազանդվել Աստծուն և վազելով այն ասպարեզը, որ Նա դրել է ձեր առջև՝ շատերի համար օրհնություն կլինեք: Եվ Աստված կառաջնորդի ձեզ լայն ու բաց տարածք՝ տարածք, որտեղ առատություն կա ձեր կյանքի բոլոր բնագավառների համար:



ՍՈՎՈՐԵՔ ՀԵՏԵՎԵԼ ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅԱՆԸ

*Որովհետքն որոնք որ Աստծո Հոգով են վարվում,
նրանք Աստծո որդիներ են:*

– Հռոմեացիս 8.14

Աստծո յուրաքանչյուր զավակ կարող է սովորել ինչպես առաջնորդվել Սուրբ Հոգով: Աստծո ամենաառատ օրհնությունները սպասում են նրանց, ովքեր հետևում են Նրա Հոգուն՝ միայն իրենց զգայարաններով և հանգամանքներով առաջնորդվելու փոխարեն: Սակայն Հոգով առաջնորդվող լինելու համար սեփական ծրագրին հետևելու փոխարեն դուք պետք է նվիրվեք ձեր կյանքի համար Աստծո ծրագրին:

Սուրբ Հոգով առաջնորդվել սովորելը առաջնային կարևորություն ունի, եթե ցանկանում եք հնազանդվել Աստծուն: Եթե չկարողանաք տարբերել, թե ինչ է Տերն ասում ձեր հոգուն, ձեզ համար դժվար կլինի հետևել ձեր կյանքի համար Նրա ծրագրին և նպատակին: Ահա այդքան պարզ է ամենը:

ԱՍՏՎԱԾ ԱՌԱՋՆՈՐԴՈՒՄ Է ՁԵՁ ՁԵՐ ՀՈԳՈՒ ՄԻՋՈՑՈՎ

Ինչպես կարող ենք տարբերել Տիրոջ առաջնորդությունը ու սովորել համագործակցել Նրա հետ, որպեսզի կարողա-

նանք հետևել Նրա ծրագրին մեր կյանքերի համար¹: Նախ և առաջ պետք է հասկանանք, որ Աստված մեզ հետ հաղորդակցվում ու աշխատում է մեր *հոգու* միջոցով:

Աստված ֆիզիկական անձ *չէ*, այնպես որ Նա չի պատասխանում մեր *մարմնական բնության* կանչին: Ոչ էլ միտք է, հետևաբար չի պատասխանում մեր *ինտելեկտին* կամ *հույզերին*:

Այս հարցում շատերը սխալվում են. փորձում են Աստծուն հասնել իրենց մտքի և զգացմունքների միջոցով, հաճախ ասում են. «Եթե միայն աղոթելիս կարողանայի *զգալ* Աստծո ներկայությունը»:

Մինչդեռ իրականում պետք է խաչը բարձրացնեն իրենց մարմինը, նորոգեն իրենց միտքն Աստծո Խոսքով և Տիրոջն աղոթքով փնտրելիս պահպանեն ներքին հանդարտությունը (Գաղ. 5.24, Հռոմ. 12.2): Այդ ժամանակ Սուրբ Հոգին կպատասխանի նրանց *հոգու* կանչին:

Աստված Հոգի է. Նա աստվածային Անձնավորություն է (Հովհ. 4.24): Մարդը ևս հոգևոր էակ է: Մարդը հոգի է, ունի շունչ (որը ներառում է միտքը, կամքը և հույզերը) և ապրում է մարմնում (տե՛ս Ծննդ. 1.26, 27, Բ Կորնթ. 5.1–4, Ա Թես. 5.23, Եբր. 4.12):

Հոգին կամ ներսի մարդն է մեր հավիտենական բաղկացուցիչը, որը գույներ ու անհատականություն է տալիս արտաքին մարդուն: Եվ հավատացյալի ներսի մարդը՝ նրա հոգին է, որ լսում է, թե ինչ է ասում Աստծո Հոգին:

Աստվածաշունչն ասում է. «*ՄԱՐԴՈՒՍ ՀՈԳԻՆ Տիրոջ ճրագն է. նա քննում է սրտի բոլոր ներսերը*» (Առ. 20.27): Աստվածաշունչը նաև ասում է, որ Սուրբ Հոգին վկայություն է տալիս մեր *հոգուն* (Հռոմ. 8.16):

1 Սուրբ Հոգով առաջնորդվելու թեման ավելի խորությամբ ուսումնասիրելու համար կարող եք ծանոթանալ վերապատվելի Քենեթ Է. Հեգինի «Ինչպես առաջնորդվել Աստծո Հոգով» գրքին:

Այլ կերպ ասած՝ Սուրբ Հոգին օգտագործում է մեր հոգին, որպեսզի ուղղորդի և լուսավորի մեզ, թե որն է Աստծո կամքը մեր կյանքերի համար: Նա անմիջականորեն մեր *մտքի* կամ *մարմնի* հետ չի հաղորդակցվում, քանի որ ապրում է մեր *հոգու* մեջ: Հետևաբար Նա մեզ հետ հաղորդակցվում է մեր հոգու միջոցով:

Մենք կարող ենք Սուրբ Հոգուց սպասել, որ Նա առաջնորդի և ուղղորդի մեզ, որպեսզի կարողանանք իրագործել Աստծո ծրագիրն ու նպատակը մեր կյանքերի համար: Աստվածաշունչն ասում է. «Որոնք որ Աստծո Հոգով են վարվում, նրանք Աստծո որդիներ են» (Հռոմ. 8.14): Ուշադրություն դարձրեք, որ *չի* ասվում. «Որոնք որ *մտքով* կամ *մարմնով* են առաջնորդվում, Աստծո որդիներ են»:

Ինչպես նաև չի ասվում. «Որոնք որ *մարգարեների* կամ *այլ անձանց* կողմից են առաջնորդվում, *ովքեր ասում են իրենց, թե ինչ անեն*, Աստծո որդիներ են»: Թեև երբեմն լավ է խորհուրդ հարցնելը մեկից, ում կարծիքը հոգևոր հարցերում հարգում եք, չպետք է մարդուց սպասել ձեզ համար Աստծո ուղղորդումը. նման մոտեցումը սուրբգրային չէ:

Որպես քրիստոնյաներ՝ մենք բոլորս ունենք Աստծո Հոգին, և մեզնից յուրաքանչյուրը պատասխանատու է՝ ճանաչելու Տիրոջ առաջնորդությունն իր համար: Մենք պետք է առաջնորդվենք Սուրբ Հոգով՝ համաձայն Աստծո Խոսքի և ո՛չ այլ մարդկանց ուղղորդման կամ կարծիքների:

Իսկ ինչպե՞ս է Սուրբ Հոգին առաջնորդում մեզ: Ամենաառաջին եղանակը, որով Աստված առաջնորդում է Իր զավակներին, *ներքին վկայությունն է*: Հռոմեացիս 8.16-ում խոսվում է ներքին վկայության մասին. «Նույն Ինքը Հոգին ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ Է ՏԱԼԻՍ ՄԵՐ ՀՈԳՈՒ ՀԵՏ, որ մենք Աստծո որդիներ ենք»:

Երբ վերստին ծնվում եք, Սուրբ Հոգին հայտնում է ձեզ,

որ Աստծո զավակ եք՝ *վկայություն տրալով ձեր հոգուն:*

Դուք գիտեք, որ Աստծո զավակ եք ոչ թե այն բանից, որ ինչ-որ մեկը մարգարեանում և ասում է ձեզ, որ փրկված եք, և ոչ էլ երբ ինչ-որ մեկն ասում է՝ «Կարծում եմ՝ դու քրիստոնյա ես», այլ որովհետև Աստծո Հոգին է վկայություն տվել ձեր հոգուն, որ դուք վերստին ծնված եք: Գուցե ուրիշին չկարողանաք բացատրել, թե ինչպես գիտեք, որ փրկված եք, սակայն ձեր ներսում դուք գիտեք դա: Գիտեք, որ Քրիստոսի մեջ նոր արարած եք (Հռոմ. 10.9, 10, Բ Կորնթ. 5.17):

Ներքին վկայությունն այն եղանակն է, որով Սուրբ Հոգին ուղղորդում է ձեզ դեպի ամենակարևոր բանը, որ կարող է ձեզ հետ պատահել՝ Աստծո զավակ դառնալը: Ուստի տրամաբանական է, որ ներքին վկայությունն է այն առաջնային եղանակը, որով Սուրբ Հոգին կշարունակի ուղղորդել ձեզ ձեր քրիստոնեական ընթացքի մեջ:

Իմ կյանքում ու ծառայության մեջ ես գրեթե միշտ առաջնորդվում եմ ներքին վկայությամբ: Այո, եղել են դեպքեր, երբ տպավորիչ ուղղորդումներ եմ ստացել, օրինակ՝ տեսիլքներ, սակայն մեծ մասամբ ուղղորդվել եմ ներքին վկայությամբ: Դա է այն առաջին եղանակը, որով Աստված առաջնորդում է Իր զավակներին:

Մինչ դուք փորձում եք հետևել Աստծո ծրագրին ձեր կյանքի համար, կլինեն դեպքեր, երբ ձեր հոգին ներքին վկայությամբ կիմանա բաներ, որ ձեր գլուխը չգիտի. ձեր հոգին այդ տեղեկությունը ստանում է ձեր ներսում բնակվող Աստծո Հոգուց:

Երբեմն գուցե դժվար լինի մեկ ուրիշին տրամաբանորեն բացատրել, թե ինչպես եք Սուրբ Հոգու ներքին վկայությամբ ինչ-որ բան իմանում: Պարզապես ներքուստ գիտեք դա: Դա ֆիզիկական զգացողություն չէ, այլ *հոգևոր զգացում* կամ *ընկալում*:

Տեսնք, թե ինչ է ասել Պողոսը Հռոմի ճանապարհին՝ նավի մեջ բանտարկված. «Ո՛վ մարդիկ, ՏԵՄԼՈՒՄ ԵՄ, որ այս նավարկությունը նեղությունով և շար փսասով է լինելու, ոչ թե միայն բեռին և նավին, այլ մեր անձերին էլ» (Գործք 27.10):

Պողոսը չի ասում՝ «Սուրբ Հոգին ասաց ինձ» կամ «տեսիլք տեսա»: Նա ասում է. «Տեսնում եմ, որ այս նավարկությունը նեղությունով և շատ փսասով է լինելու»: Ակնհայտ է, որ Պողոսն այդ նավարկության վերաբերյալ ներքին վկայություն կամ հոգևոր ներընկալում էր ստացել: Նրա հոգին տեղեկություն էր ստացել Սուրբ Հոգուց, Ով ապրում էր իր ներսում:

Երկրորդ եղանակը, որով Սուրբ Հոգին առաջնորդում է մեզ, *ներքին ծայնն* է, որը նաև անվանում ենք *հանդարտ, մեղմ ծայն*: Արդյոք գիտե՞իք, որ ձեր ներսի մարդը ծայն ունի, ճիշտ այնպես, ինչպես արտաքին մարդը: Ձեր հոգու ծայնը կոչվում է *խղճմտանք*:

Չեք կարող ֆիզիկական ականջներով լսել Ձեր ներքին ծայնը՝ ներսի մարդու ծայնն այնպես, ինչպես լսում եք արտաքին մարդու ծայնը: Ներսի մարդու ծայնը լսելի է ձեր հոգուն: Ձեր հոգին կխոսի ձեզ հետ խղճմտանքի մեղմ, հանդարտ ծայնով և ձեզ կփոխանցի այն տեղեկությունը, որը ստանում է ձեր ներսում բնակվող Սուրբ Հոգուց:

Երրորդ եղանակը, որով Սուրբ Հոգին առաջնորդում է մեզ, *Սուրբ Հոգու ազդեցիկ ծայնն* է: Սուրբ Հոգին կարող է ընտրել հավատացյալի հետ խոսել Իր ազդեցիկ ծայնով, սակայն մենք չպետք է ձգտենք ծայներ լսելու: Այս բաները տեղի են ունենում, երբ Սուրբ Հոգին է կամենում (Ա Կորնթ. 12.11):

Հստակ տարբերություն կա ձեր հոգու ներքին ծայնի և Սուրբ Հոգու լսելի ծայնի միջև: Երբ Սուրբ Հոգին է ձեզ հետ խոսում, դա ավելի ազդեցիկ է հնչում:

Սուրբ Հոգու ազդեցիկ ծայնը կարող եք լսել ձեր ներսից՝ ներսի մարդու մեջ: Գուցե նաև բարձրաձայն լսեք այն, ասես

ինչ-որ անձնավորություն բարձրաձայն խոսում է ձեզ հետ:

Երբ Սուրբ Հոգին է ձեզ հետ խոսում, Նրա ձայնը կարող է լսելի թվալ ձեր ֆիզիկական ականջներին, սակայն շուրջը լինողների համար այն լսելի չէ:

Դրա պատճառն այն է, որ Սուրբ Հոգին չի խոսում *զգայարանների տիրույթում*, քանի որ չունի ֆիզիկական մարմին: Նա Հոգի է, աստվածային Անձնավորություն և խոսում է *հոգու տիրույթում*:

Դուք ևս հոգևոր էակ եք: Ուստի երբ լսում եք Սուրբ Հոգու ձայնը, դա տեղի է ունենում ձեր հոգում: Եվ Նրա ձայնը լսելի է հոգու տիրույթում:

Հոգևոր բաները նույնքան իրական են, որքան նյութական բաները: Իրականում հոգևոր տիրույթը նույնիսկ ավելի իրական է, քան բնական տիրույթը, քանի որ Աստված, Ով Հոգի է, *սրտեղծել է* նյութն ու բնական տիրույթը: Ուստի, եթե պատրաստվում եք հաջողությամբ հետևելու Աստծո ծրագրին ձեր կյանքի համար, ապա պետք է ավելի զգայուն լինեք Հոգուն, քան մտքին ու մարմնին:

Բազմաթիվ քրիստոնյաներ իրենց ամբողջ կյանքն անցկացնում են՝ առաջնորդվելով միայն բնական զգայարաններով: Առաջնորդվում են զգայարաններով և ղեկավարվում մարմնով. այդ պատճառով էլ հաճախ խլանում են հոգևորում:

Նրանց հոգևոր ականջներն, այսպես ասած, խցանվում են, քանի որ ուշադրություն չեն դարձնում իրենց ներսում ապրող Սուրբ Հոգուն, իսկ սիրտը բեռնվում է բնական հոգսերով:

Կան քրիստոնյաներ, որոնք Աստծուն երբեք չեն լսում, քանի որ *իրենք* են անընդհատ խոսում: Նրանք ամեն ժամանակ խոսում են և ժամանակ չեն հատկացնում լսելուն, թե ինչ է Տերը փորձում ասել իրենց հոգուն:

Որոշ քրիստոնյաներ նույնիսկ չգիտեն, որ *ուենն* հոգևոր ականջներ և *ինչ-որ բան* պիտի լսեն Սուրբ Հոգուց:

ԶԱՐԳԱՑՐԵՔ ԶԵՐ ՀՈԳԻՆ, ՈՐ ՃԱՆԱԶԵՔ ԱՍՏԾՈՆ ԿԱՄՔԸ

Շատ հաճախ մեր կյանքերի համար Աստծո ծրագրին հետևելիս մեր խնդիրն այն է, որ թերանում ենք մեր հոգին մարզելու մեջ. մեր կյանքի մեծ մասն անցկացրել ենք մտավոր և ֆիզիկական տիրույթներում՝ սրտի փոխարեն մեր ինտելեկտը զարգացնելով:

Երբ անտեսում ենք հոգու զարգացումը, ապա մեր կյանքի գահին բարձրանում է ինտելեկտը: Արդյունքն այն է լինում, որ մեր հոգին՝ այն բաղկացուցիչը, որը պետք է ղեկավարի և ուղղորդի մեր միտքն ու մարմինը, այսպես ասած, մնում է բանտարկված՝ զրկված գործելու իրավունքից:

Սակայն Սուրբ Հոգին ներքին վկայությամբ միշտ փորձում է ուղղորդել մեր միտքը, եթե միայն ժամանակ հատկացնենք մեր հոգին զարգացնելուն և ականջն դնենք նրան:

Ահա կարևոր մի բան, որը պետք է մտապահել, եթե ցանկանում եք զարգացնել ձեր հոգին. պետք է որոշում կայացնեք *միշտ զգայուն պահել ձեր խղճմտանքը*:

Մի ոտնահարեք ձեր խղճմտանքը: Փոխարենը վարժվեք ձեր հոգուն միանգամից հնազանդվելու հարցում: Հիշեք, որ խղճմտանքը ձեր հոգու ծայնն է. այն ձեր մտքին է հաղորդում ամենն, ինչ Սուրբ Հոգին ասում է ձեր սրտին:

Եթե համառորեն ոտնահարեք ձեր խղճմտանքը, ապա այն կկարծրանա Սուրբ Հոգու հուշումների նկատմամբ, հոգևոր բաներն անորոշ կդառնան ձեզ համար, և ձեր խղճմտանքն այլևս չի լինի անվտանգ խորհրդատու: Եթե ձեր խղճմտանքը բթանա, դուք կդժվարանաք տարբերել

Տիրոջ առաջնորդությունը և հետևել Նրա ծրագրին:

Երբ փորձում եք զարգացնել Ձեր հոգին, *համոզվեք, որ չեք առաջնորդվում մարմնով*: Այստեղ շատ քրիստոնյաներ սայթաքում են. որոշումներ են կայացնում՝ առաջնորդվելով իրենց մարմնական բնությամբ, ցանկություններով ու հակումներով:

Եվ քանի որ նրանց հոգիներն իրենց ներսում ապրող Սուրբ Հոգու հետ համահունչ չեն, նրանք բաց են թողնում Հոգու բաները, որոնք Աստված պատրաստել է իրենց համար իրենց հոգևոր ասպարեզում:

Հոգու զարգացմանը կխանգարի նաև *շնչով՝ ձեր զգացմունքներով, բնական մտածողությամբ և հույզերով առաջնորդվելը*:

Սա մեկ այլ ոլորտ է, որտեղ քրիստոնյաները սխալվում են: Հուզականորեն մշակում են իրենց ծրագրերն ու ցանկությունները, իսկ հետո իրենք իրենց համոզում, թե Տերն է իրենց առաջնորդողը: Իրականում նրանք առաջնորդվում են զգացմունքներով և ոչ թե հոգով. իսկ զգացմունքները շեղում են ճանապարհից:

Հոգին զարգացնելիս կարևոր է նաև *չառաջնորդվել արտաքին հանգամանքներով*:

Երբ երիտասարդ հովիվ էի, ճանաչում էի հովիվների, որոնք առաջնորդվում էին հանգամանքներով: Եկեղեցում խնդիրների բախվելիս ասում էին նման բաներ. «Եթե երբևէ կիրակնօրյա դպրոցի հաճախելիությունը բարձրացնեմ այնքան, որքան նախկինում էր, ապա կթողնեմ հովվությունը»:

Կամ՝ «Հենց որ եկեղեցու ֆինանսական վիճակը բարելավվի, մեկ այլ տեղ հովվություն կստանձնեմ»: Ինչպես տեսնում եք, այս հովիվներն առաջնորդվում էին բնական հանգամանքներով և ոչ Սուրբ Հոգով:

Որպես հովիվ՝ երբեք թույլ չեմ տվել, որ հանգամանքներն առաջնորդեն ինձ: Ինձ երբևիցե չի անհանգստացրել կիրակ-

նօրյա դպրոցի հաճախելիության կամ ընծաների պակասելու փաստը: Երբեք թույլ չեմ տվել ինձ մոտիվացվել մարդկանց քանակով, գումարով կամ այլ բնական հանգամանքով:

Երբ իմ հովված եկեղեցիներում խնդիրների էի բախվում, պարզապես ասում էի ինքս ինձ. «Աստծո կամքի հաստատությունն ինձ համար ոչ թե արտաքին հանգամանքներն են, այլ այն, թե ինչ է Նա ասում իմ հոգուն: Աստված ասել է ինձ, որ հովվեմ այս եկեղեցին, և ես չեմ պատրաստվում հարցականի տակ դնելու Նրա դատողությունը: Չեմ պատրաստվում մտածելու, թե արդյոք հաջորդ շաբաթ կամ ամիս կասի, որ հեռանամ այստեղից: Դա իմ գործը չէ. դա *Նրա* գործն է: Ես կմնամ այստեղ, մինչև Նա չասի, որ հեռանամ:

Եթե Աստված ցանկանա, որ ես մեկ այլ տեղ գնամ, Նա գիտի որ պետք է ասի ինձ դրա մասին: Նա խելամիտ Անձնավորություն է, ես՝ նույնպես: Ես կհասկանամ, թե ինչ է Նա ինձ ասում: Ես հաղորդակցվում եմ Աստծո հետ և բաց եմ Նրա առաջնորդության համար: Նա ինձ ազդանշան կտա, երբ ցանկանա, որ շարժվեմ առաջ, և ես ներսումս կիմանամ դրա մասին ներսի մարդու վկայությամբ»:

Ահա թե ինչպես եմ ես գործել գրեթե վաթսուն տարիների իմ ծառայության ընթացքում՝ հետևելով Աստծո ծրագրին իմ կյանքի համար: Ես առաջնորդվում եմ նրանով, ինչ Տերը *չի ասում* այնքան, որքան նրանով, ինչ Նա *ասում է*:

Այլ կերպ ասած՝ ապրում եմ Աստծո Խոսքի սկզբունքներով և ըստ նրա, թե ինչպես է Սուրբ Հոգին առաջնորդում իմ հոգուն: Պարզապես շարունակում եմ շարժվել այն ուղղությամբ, որը Տերն արդեն տվել է ինձ, այնքան ժամանակ, մինչև Նա անհրաժեշտ կհամարի նոր ուղղություն տալ իմ կյանքին և ծառայությանն Իր ծրագրում: Ես չեմ փորձում ինքս նոր ուղղություններ գտնել:

Ձեր հոգին զարգացնելու և ձեր կյանքի համար Աստ-

ծո տված ուղղության մեջ համոզվելու հարցում օգտակար կլինի նաև *ձգարել միաբանության և համաձայնության ձեր շրջապատող մարդկանց հետ, որոնք հոգևոր առումով հասուն են*: Զգույշ եղեք որևէ քայլ անելուց, երբ ձեր մտերիմները, որոնց հանդեպ դուք հոգևոր տեսանկյունից հարգանք եք տաձում, համաձայն չեն, որ դա Տիրոջ առաջնորդությունն է:

Օրինակ՝ Առաջին եկեղեցին որոշումներ կայացնելիս, հատկապես, երբ դրանք ծառայությանն էին վերաբերում, կիրառում էր միաբանության և համաձայնության հոգևոր սկզբունքները: Դրա օրինակն ենք տեսնում Գործք 13-րդ գլխում, երբ Պողոսն ու Բառնաբասն ընտրվում են ծառայության համար:

ԳՈՐԾՔ 13.1–3

- 1 Եվ Անտիոքում՝ այն տեղի եկեղեցու մեջ, կային ՄԻ ՔԱՆԻ ՄԱՐԳԱՐԵՆԵՐ ԵՎ ՎԱՐԴԱՊԵՏՆԵՐ՝ Բառնաբասը և Նյուգեր ասված Շմավոնը և Ղուկիոս Կյուրենացին և Հերովդես չորրորդապետի սննդակից Մանայենը և Սողոսը:
- 2 ՍՐԱՆՔ երբ որ Տիրոջը պաշտոն էին մատուցում և ծոմ էին պահում, Սուրբ Հոգին ասաց. «Ինձ համար որոշեք Բառնաբասին և Սողոսին այն գործի համար, որ Ես դրանց կանչել եմ»:
- 3 Այն ժամանակ [ՆՐԱՆՔ] ծոմ պահեցին և աղոթք արեցին, նրանց վրա ձեռք դրեցին՝ [ՆՐԱՆՑ] արձակեցին:

Աստվածաշունչը չի ասում, թե *ինչպես* է Սուրբ Հոգին խոսել նրանց հետ: Գուցե մարգարեներից մեկը մարգարեացել է՝ Սուրբ Հոգուց դրդված: Կամ գուցե ինչ-որ մեկը լսել է Սուրբ Հոգու ազդեցիկ ձայնը:

Սակայն իրականում նշանակություն չունի, թե ինչպես է Սուրբ Հոգին խոսել: Հարցն այն է, որ Անտիոքի այդ հանդիպմանը ներկա բոլոր հինգ ծառայողները համաձայն էին, որ Պողոսին ու Բառնաբասին ծառայության համար

առանձնացնելը Սուրբ Հոգու առաջնորդությունն է:

Իհարկե, երբ հետևում եք ձեր կյանքի համար Աստծո ծրագրին, ստիպված կլինեք ինքնուրույն որոշումներ կայացնել: Չպետք է միշտ ձեր շուրջը գտնվող մարդկանցից հարցնել, թե ինչ են մտածում ձեր որոշման մասին: Գուցե Աստված ուրիշներին չասի այն, ինչ Նա ցանկանում է, որ դուք անեք տվյալ իրավիճակում:

Բազմաթիվ քրիստոնյաներ թույլ են տալիս, որ ուրիշներն իրենց ասեն ինչ անել, քանի որ չեն ուզում Աստծուց ուղղորդում ստանալու պատասխանատվություն վերցնել: Մինչդեռ ամեն հավատացյալ Տիրոջից իր կյանքի համար ուղղորդում ստանալու պատասխանատվություն ունի:

Մյուս կողմից Գործք 13-րդ գլխում կարդում ենք, որ բոլոր ներկաները համաձայնության եկան այն հարցում, թե որն էր Աստծո առաջնորդությունը, ինչից հետո գործեցին դրա համաձայն:

Ուստի վստահաբար սուրբգրային հիմք ունի այն, որ նրանք, որոնց դուք վստահում եք, ձեզ հետ համաձայն լինեն, երբ պետք է կայացնեք լուրջ որոշում, որը մեծապես ազդելու է ձեր կյանքի վրա: Սակայն դա չի նշանակում, որ պետք է թույլ տաք՝ ուրիշները վերցնեն ձեր կյանքի համար ուղղորդում ստանալու պատասխանատվությունը:

Այնուամենայնիվ, շատ անգամ իմաստություն է հաշվի առնելը նրանց խորհուրդը, որոնք ճանաչում են Տիրոջը և հոգում են ձեր մասին: Իմ կյանքում կան մարդիկ, որոնց հոգևոր ընթացքի վրա առավելագույն վստահություն ունեմ: Եվ լինում են ժամանակներ, երբ խոսում եմ նրանց հետ այն որոշումների մասին, որ պետք է կայացնեմ: Աստվածաշունչն ասում է. *«Առաջնորդություն չլինելիս ժողովուրդը կընկնի, բայց խորհրդապրուների շարությունով փրկություն կլինի»* (Առ. 11.14):

Կարևոր է նաև, որ նրանք, որոնց կյանքերի վրա անդրադառնալու է ձեր որոշումը, համաձայն լինեն, որ Տերն է առաջնորդում ձեզ այդ ուղղությամբ: Օրինակ՝ 1940-ականների սկզբին Տերը սկսեց աշխատել ինձ հետ Ֆարմերսվիլ վերադառնալու և այնտեղի եկեղեցում հովվություն ստանձնելու մասին (ավելի վաղ թողել էի եկեղեցին՝ դուրս գալով Աստծո կամքից), և ցանկանում էի, որ կինս հաստատեր այդ որոշումս:

Այդ ժամանակ հովիվ էի մեկ այլ եկեղեցում և մոտ մեկ ամիս պայքարում էի Ֆարմերսվիլի եկեղեցի վերադառնալու մտքի դեմ:

Երբեմն՝ խորանում աղոթելիս, Ֆարմերսվիլի եկեղեցու բեռը այնպիսի ծանրությամբ էի զգում, որ վեր էի կենում և շենքից փախչում. փորձում էի այդ բեռից փախչել: Անընդհատ ասում էի Տիրոջը. «Չեմ ուզում վերադառնալ այնտեղ ու հովվություն անել»:

Գիտեք, երբեմն մարդկային բնությունդ և միտքդ ըմբուստանում են նրա դեմ, ինչ Տերն է ասում, որ անես: Եվ ամեն բան իրար կխառնեք, եթե ականջ դնեք ձեր ֆիզիկական զգայարաններին, մտքին և հոգուն:

Ի վերջո արեցի այս աղոթքը. «Տեր, եթե կամենում ես, որ վերադառնանք Ֆարմերսվիլ, ապա իմ կնոջն էլ վկայություն տուր դրա մասին»:

Դրանից կարճ ժամանակ անց Օրեթան և ես միասին սպասքն էինք վճանում, երբ հարցրի նրան. «Սիրելիս, Տերը քեզ հետ խոսե՞լ է ինչ-որ բանի մասին»:

«Ո՛չ, համենայն դեպս իմ մեջ չի տպավորվել», - պատասխանեց նա:

«Լավ, տեղյակ պահիր ինձ, եթե Նա քեզ ինչ-որ բան ասի», - ասացի ես:

Սպասեցի մոտ երեսուն օր, և մի առավոտ, երբ նորից

ափսեներն էինք լվանում, հարցրի նրան. «Տիրոջից ինչ-որ բան ստացել ես»:

Օրեթան ասաց. «Ո՛հ, չեմ ստացել»: Որոշ մարդիկ լսում են Տիրոջից, սակայն չեն հասկանում, որ դա Տիրոջ առաջնորդությունն է:

Ուստի ես հարցրի նրան. «Առաջնորդություն զգում ես թողնելու այս եկեղեցին և մեկ այլ եկեղեցի հովվելու»:

«Ո՛հ», - ասաց նա:

«Սրտումդ ինչ-որ բան ունեն Ֆարմերսվիլի եկեղեցու վերաբերյալ», - հարցրի ես:

«Օ՛, - ասաց նա, - կարծում էի՝ դրանք իմ մտքերն են»: Տեսնում եք. նա Տիրոջից ստացել էր, սակայն չէր հասկացել, որ դա Տերն է:

«Այդ դեպքում թո՛ւյլ տուր քեզ մի բան հարցնել, - ասացի: - Կցանկանամ՝ վերադառնանք Ֆարմերսվիլ՝ այնտեղ հովվություն անելու»:

«Օ՛, ո՛չ, - բացականչեց նա, - հազար անգամ ո՛չ»:

«Այդ դեպքում այն, ինչ ստացել ես, քեզնից չէ, ճի՛շտ է. *դու ինքդ* չես ցանկանում վերադառնալ այնտեղ», - ասացի ես:

«Կարծում եմ՝ ճի՛շտ ես», - պատասխանեց նա:

Բնական տիրույթում մեզնից ոչ մեկը չէր ցանկանում վերադառնալ այդ եկեղեցի: Սակայն երկուսս էլ հնազանդվեցինք Աստծուն և գնացինք այնտեղ: Արդյունքը եղավ այն, որ այդ եկեղեցին հովվելիս ավելի երջանիկ էինք, քան մեր կյանքում երբևէ եղել էինք:

Քանի որ առաջին անգամ վաղաժամ էինք թողել այդ եկեղեցին, Աստված չէր կարողացել ավարտին հասցնել այն, ինչ ցանկանում էր: Սակայն քանի որ հնազանդվեցինք և վերադարձանք, Աստված այնտեղ կարողացավ սովորեցնել մեզ, թե ինչպես է պետք հոգևորապես զարգացնել հարանվա-

նությունը՝ ավելի, քան որևէ այլ եկեղեցում, որ հովվել ենք:

Մենք այնտեղ արժեքավոր դասեր քաղեցինք: Աստծո ճանապարհը միշտ լավագույնն է:

Այս պատմությամբ ցանկանում եմ ցույց տալ, որ Տերը երկուսիս հետ էլ ներքին վկայությամբ խոսել էր Ֆարմերս-վիլի եկեղեցի վերադառնալու մասին:

Ես և Օրեթան համաձայնության էինք եկել այն հարցում, որ Տերն էր առաջնորդում մեզ այդ ուղղությամբ: Հնարավորության դեպքում հենց այդպես էլ պետք է լինի, եթե որոշումն անդրադառնալու է մեկից ավելի անձանց վրա:

Կարող է նաև այնպես պատահել, որ մյուսները համաձայն չլինեն, որ գնաք այն ուղղությամբ, որով դուք զգում եք, որ Տերը տանում է ձեզ: Ի վերջո դուք պետք է հետևեք Տիրոջ առաջնորդությանը ձեր հնարավորությունների առավելագույնի սահմաններում: Սակայն երբ ձեր շուրջը լինողները ձեզ հետ համաձայն չեն, զգրյշ եղեք և հավաստիացեք, որ դա իսկապես Տիրոջ առաջնորդությունն է:

ՄԻՆՉ ԳՈՐԾԻ ԿԱՆՑՆԵՔ, ԶԵՐ ՀՈԳՈՒՄ ՀՍՏԱԿ ՍՏԱՅԵՔ ԱՍՏԾՈՒ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ

Այնքան կարևոր է չշտապել կյանքի համար վճռորոշ որոշումներ կայացնելիս: Հիշեք, թե ինչ էր Հիսուսն ինձ ասել. «Ինձ համար ավելի նախընտրելի է, որ դանդաղես, քան չափից արագ շարժվես»:

Հետևաբար, եթե ցանկանում եք զարգացնել ձեր հոգին, որպեսզի կարողանաք տարբերել Աստծո ծրագիրը ձեր կյանքի համար, ապա պետք է *բավականաչափ ժամանակ հատկացնեք աղոթելուն, մինչև որ Տիրոջ հստակ առաջնորդությունը սրանաք ձեր հոգում:*

Որոշ քրիստոնյաների խնդիրն այն է, որ երբ նրանք իրենց կյանքերի համար Աստծո ծրագրի վերաբերյալ ուղղորդում են ստանում, այդ հայտնությունը շփոթում են սեփական ցանկությունների և մտքերի հետ: Հետևում են սեփական մարդկային մտքերին և լիովին բաց են թողնում Աստծո մտքերն այդ ամենի վերաբերյալ: Ծրագիրը ճիշտ չի գործում, և նրանք շփոթվում են՝ կասկածի տակ առնելով այն, ինչ լսել են Աստծուց:

Սրանից խուսափելու միակ ճանապարհը Աստծո ներկայության մեջ մնալն է այնքան ժամանակ, մինչև կմաղեք ձեր մարդկային հույզերն ու մտքերը և դրանք զոհասեղանին կդնեք: Այնուհետև աղոթեք և ուսումնասիրեք Խոսքն այնքան, մինչև ձեր հոգում Տիրոջից լսեք և ներքուստ իմանաք, թե ինչ է պետք անել:

Հարկավոր է գիտակցել, որ Աստծո մտքերը մեր մտքերից շատ վեր են (Ես. 55.9): Իսկ Աստծո մտքերին կարելի է ծանոթանալ Նրա Խոսքում: Ահա թե ինչու անընդհատ Աստծո Խոսքի շուրջ մտածելը և դրանով սնվելը նորոգում են ձեր միտքը, և ձեր միտքը համաձայնության է գալիս ձեր հոգու հետ:

Այն ձայնը, որը խոսում է ձեզ հետ Խոսքը կարդալիս, նույն ձայնն է, որն առաջնորդում է ձեզ ձեր հոգու միջոցով: Այնպես որ, Խոսքի մեջ լինելը սրում է ձեր հոգևոր ընկալունակությունը և ձեր հոգում Աստծո ձայնը լսելու կարողությունը:

Հետևաբար աղոթքի և Խոսքի մեջ Տիրոջը սպասելը կենսական կարևորություն ունի, եթե ցանկանում եք քայլել Աստծո ճանապարհներով՝ Նրա մտքերին համընթաց և ոչ թե ձեր մարդկային տրամաբանությամբ:

Երբ դեռ երիտասարդ էի քրիստոնեական ընթացքիս մեջ, սովորեցի ժամանակ հատկացնել աղոթքի և Խոսքի

մեջ Տիրոջը սպասելուն այնքան, մինչև հոգումս հստակ իմանայի, թե Նա ինչ էր ուզում, որ անեի: Երբեմն օրեր շարունակ աղոթքի մեջ փնտրել եմ Աստծուն՝ Նրա ուղղորդումը: Եղել է նաև, որ ամիսներ շարունակ աղոթել եմ մինչև ծառայությանս մեջ լուրջ որոշումներ կայացնելը:

Նկատի չունեմ այն, որ անընդհատ ծնկներիս իջած աղոթում էի: Զբաղվում էի նաև իմ առօրյա գործերով, սակայն երբ կարողանում էի, աղոթում էի, երբեմն նույնիսկ ամբողջ գիշեր: Մեծ մասամբ աղոթում էի լեզուներով:

Իրականում այն մեծ առավելություններից մեկը, որն Աստված տվել է հավատացյալներին՝ իրենց կյանքերում Աստծո ծրագիրը փնտրելու համար, Սուրբ Հոգով մկրտությունն է, որի ապացույցն էլ լեզուներով աղոթքն է (Գործք 2.2-4)²:

Աստվածաշունչն ասում է, որ երբ աղոթում եք օտար լեզուներով, ձեր *հոգին* է աղոթում (Ա Կորնթ. 14.14): Երբ աղոթում եք լեզուներով, ինչպես Հոգին աղոթել է տալիս, Ձեր հոգին ակտիվ հաղորդակցության մեջ է մտնում Աստծո հետ: Սա մեծ օժանդակություն է աղոթքի մեջ, քանի որ հոգու միջոցով է Աստված ձեզ ուղղորդում:

Առաջին Կորնթացիս 14.2-ում ասվում է, որ երբ աղոթում եք լեզուներով, Աստծո հետ խորհուրդներ եք խոսում: Ուստի, երբ փնտրում եք Տիրոջ առաջնորդությունը և ուղղորդումը, Սուրբ Հոգին օտար լեզուներով աղոթքի միջոցով օգնում է ձեզ աղոթելու Աստծո ծրագիրն ու խորհուրդները ձեր կյանքի համար:

Իմ քրիստոնեական փորձառությունից հասկացել եմ, որ օտար լեզուներով աղոթելը մարմինս հանդարտեցնելու և միտքս չեզոք վիճակի բերելու ամենալավ միջոցներից է, որպեսզի կարողանամ լսել, թե ինչ է ասում *հոգիս*: Ինչպես

2 Սուրբ Հոգու մկրտության թեման ավելի խորությամբ ուսումնասիրելու համար կարող եք ծանոթանալ վերապատվելի Քենեթ Է. Հեգինի «Սուրբ Հոգին և Նրա պարզները» գրքին:

տեսնում եք, միտքը ևս կարող է այնպիսի աղմուկ բարձրացնել, ինչպես ձեռքերն ու ոտքերը: Եվ եթե ձեր միտքը բղավում է ձեզ վրա՝ շարունակաբար ոմբակոծելով ձեզ շնչավոր մտքերով կամ սատանայի ստերով, ապա չեք կարողանա լսել, թե ինչ է Սուրբ Հոգին ասում ձեր հոգուն:

Տարիների հետ ինձ համար ավելի հեշտ է դարձել աղոթքի միջոցով միտքս և մարմինս հանդարտեցնելը: Նախկինում նվազագույնը մեկ ու կես ժամ պետք է աղոթելի լեզուներով, որ շունչս և մարմինս հանդարտվեին, իսկ հիմա ընդամենը մի քանի րոպեն էլ բավական է:

Ինչպես տեսնում եք, հոգևոր բաներում պետք է վարժվել այնպես, ինչպես բնական բաներում: Օրինակ՝ բեյսբոլով զբաղվողները մարզվում են գարնանը, որ պատրաստ լինեն բեյսբոլի գալիք սեզոնին: Նմանապես, որքան ավելի եք սպասում Տիրոջն ու աղոթում լեզուներով, այնքան ավելի հեշտ է դառնում հանդարտվելն ու ձեր սրտին լսելը:

Իհարկե, մարմնի համար հեշտ չէ: Մարմինը միշտ չէ, որ ցանկանում է աղոթել: Շատ ավելի հեշտ է հեռուստացույց դիտելը, ժամանցային հաղորդումներով ինքդ քեզ զբաղեցնելը, քան աղոթելը, այնպես չէ: Սակայն եթե ցանկանում եք Աստծուց իմաստություն և ուղղորդում ստանալ ձեր կյանքի համար, ապա պետք է մարմինը ենթարկեք հոգուն և ջանասիրաբար տրվեք աղոթքին (Ա Կորնթ. 9.27, Ա Պետր. 4.7):

Երբ ես Աստծո առաջնորդությունն էի փնտրում տարբեր որոշումներ կայացնելիս, երբեմն մի քանի շաբաթ շարունակ ամեն գիշեր աղոթում էի, կանգ չէի առնում, մինչև հոգունս հստակ չէի հասկանում, թե Տերն ինչ էր կամենում, որ անեի:

Աղոթքի ամբողջ ընթացքում միացած էի պահում «հոգևոր պլեհավաքներս»: Հասկանում եք՝ ինչ նկատի ունեմ. հոգիս անընդհատ արթուն էր՝ լսելու, թե Աստված ինչ կասեր ինձ:

Դուք նույնպես կարող եք միացնել ձեր հոգևոր պլեհա-

վաքները հավատքի պարզ քայլով: Ձեր ներսում հոգով ձգվեք դեպի Աստված: Այդպես կապ կհաստատեք Հայր Աստծո հետ, Ով Հոգի է, և Նա կպատասխանի ձեր հոգուն:

Այդ երկարատև աղոթքների ժամանակ ներսումս խորքից վեր էր բարձրանում հասկացողությունն այն բանի, թե ինչ էր Աստված կամենում, որ անեի: Տիրոջ իմաստությունն ու առաջնորդությունը ձև ու տեսք էին ստանում իմ ներսում, և որպես արդյունք, ներքուստ ճշգրիտ իմանում էի, թե որ ուղղությամբ պետք է գնամ: Երբ հոգումս հստակություն էի ստանում, ոչ ոք չէր կարող ինձնից դուրս կորզել Աստծո ծրագրի մասին տեղեկությունը. այն արդեն իմն էր:

Ձեր հոգում Աստծուց հստակ ուղղություն ստանալը փորձությունների ժամանակ կտանի ձեզ դեպի հաղթանակ: Եթե հստակ չգիտեք, թե որն է Աստծո կամքը ձեզ համար որոշակի հարցում, ապա կարող եք հեշտությամբ երերալ անբարենպաստ ու հակադիր իրավիճակներից: Եթե Աստծուց հստակ ուղղորդում չեք ստացել ձեր հոգում, սակայն ամեն դեպքում որոշում եք կայացնում, ապա կարող եք շատ ժամանակ վատնել՝ վախի մեջ հետ ու առաջ գնալով և մտածելով, որ գուցե բաց եք թողել Աստծուն:

Առանց Աստծո կամքը ձեր հոգում հստակ իմանալու՝ դուք, այսպես ասած, կլողաք հանգամանքների ալիքների վրա մի օր՝ վերև, մյուս օրը՝ ներքև: Եվ ի վերջո գուցե շեղվեք ճանապարհից, քանի որ առաջնորդվել եք բնական հանգամանքներով և ոչ թե ձեր հոգում Սուրբ Հոգու առաջնորդությամբ: Ձեր հոգում Աստծո կամքն իմանալը կլինի խարիսխ, որը կպահի ձեզ ճիշտ ճանապարհի վրա, ինչ էլ որ ձեր դեմ դուրս գա:

ՁԵՐԲԱԶԱՏԵՔ ՁԵՐ ՍԻՐՏԸ ԲՈԼՈՐ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԻՑ

Ձեր կյանքի նպատակը դարձրե՛ք ձեր հոգին զարգացնելը և ամեն քայլ անելուց առաջ ձեր հոգում Աստծո հստակ առաջնորդությունը եւ ուղղորդումը ստանալը: Այդուհանդերձ, հիշե՛ք, որ չեք կարողանա այդ նպատակն իրագործել, եթե *չձերբազատվեք ձեր սրտում տեղ գտած բաներից, որոնք կարող են խոչընդոտել ձեր աղոթքի կյանքը*: Եթե ձեր սիրտը չմաքրեք այդ խոչընդոտներից, ապա ժամանակի մեծ մասը կանցկացնեք ապարդյուն աղոթելով:

Իսկ ի՞նչը կարող է խոչընդոտել աղոթքի կյանքը: Հիսուսն այդ խոչընդոտներից մեկի մասին խոսում է Մարկոս 11.25-ում: Մարկոս 11.24-ում հավատքով աղոթքի մասին խոսելուց հետո Հիսուսն ասում է, որ չներումը խոչընդոտում է աղոթքի պատասխանները:

ՄԱՐԿՈՍ 11.24–26

24 Սրա համար ասում եմ ձեզ, թե ամեն ինչ, որ աղոթք անելով խնդրեք, հավատացե՛ք, թե կառնեք, և կլինի ձեզ:

25 Եվ որ ժամանակ որ կանգնեք, աղոթք անեք, ներեցե՛ք, եթե մեկի դեմ բան ունենաք, որպեսզի ձեր Հայրն էլ, որ երկնքում է, ձեր հանցանքը թողնի ձեզ:

Երբ աղոթում եք, ներե՛ք: Ինչո՞ւ Հիսուսն ասաց դա: Ասաց, որովհետև գիտեր, որ մեր աղոթքներն ապարդյուն կլինեն, եթե մեր սրտերում որևէ մեկի հանդեպ չներում ունենանք:

Եթե չվարժվեք Աստծո սիրով վարվելու մեջ և արագ չլինեք ներելու մեջ, մեծապես կխոչընդոտեք ձեր հոգու զարգացումը և Տիրոջից առաջնորդություն և ուղղորդում ստանալու ձեր կարողությունը, *քանի որ Աստված ձեզ առաջնորդում է ձեր սրտի կամ հոգու միջոցով*:

Պետրոսի առաջին թղթում նշվում է հավատացյալի աղոթքի կյանքը խոչընդոտող մեկ այլ հանգամանք:

Ա ՊԵՏՐՈՍ 3.7-9

7 Նմանապես, մարդիկ, իմաստությունով բնակվեք նրանց հետ, ինչպես տկար անոթի՝ կանանց պատիվ տալով, իբրև կյանքի շնորհքի ժառանգակիցներ, ՈՐ ԶԵՐ ԱՂՈԹՔԸ ԶԻՆԱՓԱՆՎԻ:

8 Եվ վերջապես ամենդ համամիտ, կարեկից, եղբայրասեր, բարեսիրտ, քաղցրաբարո՛ եղեք:

9 Չարի փոխարեն չար չհատուցեք կամ բամբասանքի փոխարեն՝ բամբասանք, այլ ընդհակառակը, օրհնեք՝ գիտենալով, որ իսկ սրա մեջ կանչվեցիք, որ օրհնությունը ժառանգեք:

Յոթերորդ խոսքում ասվում է, որ ամուսինները կարող են խոչընդոտել իրենց աղոթքները, եթե չպատվեն իրենց կանանց՝ որպես շնորհքի կյանքի ժառանգակիցների: Իրականում թե՛ ամուսինները և թե՛ կանայք կարող են խոչընդոտել իրենց աղոթքի կյանքն ու հոգևոր զարգացումը, եթե միմյանց հետ սիրով չվարվեն: Սա բացարձակ ճշմարտություն է:

Սուրբգրային այս սկզբունքը գործում է յուրաքանչյուր հավատացյալի դեպքում: Այլ կերպ ասած՝ եթե չձերբազատեք ձեր սիրտը թշնամանքի, չարակամության կամ չնեբանան ամեն նշույլից, ապա *կխափանեք* ձեր և Աստծո հաղորդակցությունը:

Այս ամենը խոչընդոտում է ոչ միայն աղոթքի կյանքը, այլև հոգու զարգացումը, ինչն անհրաժեշտ է Աստծուն հաջողությամբ հետևելու համար:

Ձեր աղոթքի կյանքը կխոչընդոտվի, եթե չհանեք և մի կողմ չնետեք ամեն բան, ինչն անձամբ ձեզ համար կապանք է՝ ամեն ծանրություն ու մեղք, որ փորձում են ձեզ հետ պահել ձեր հոգևոր ասպարեզը լավագույնս վազելուց (Եբր. 12.1):

Մի պատնեշեք Աստծո օրհնությունների, փառքի և ուղղորդման հեղեղի ալիքը: Մի կառչեք այն ծանրություններից ու մեղքերից, որոնք փակում են Նրա Հոգու հոսքը ձեր կյանքում: Հանեք այդ ամենը ձեր մտքից ու սրտից. ապաշխարեք դրանց համար և դրեք դրանք Հիսուսի արյան տակ:

Մինչ կսկսեք փնտրել Աստծո ուղղորդումը որևէ հարցի շուրջ, լուծե՛ք ձեր աղոթքի կյանքի բոլոր խոչընդոտների հարցերը: Հավաստիացե՛ք, որ ձեր սիրտը մաքուր է և բեռնված չէ, որ կարողանաք լսել, թե ինչ է Սուրբ Հոգին ասում ձեզ:

ԹՈՒՒՅԼ ՏՎԵՔ, ՈՐ ԱՍՏՎԱԾ ՀԵՌԱՑՆԻ ՁԵՐ ԿՅԱՆՔԻՑ ԱՐԳԵԼՔՆԵՐԸ

Երբ արդեն ունեք Աստծո առաջնորդությունը որևէ հարցի շուրջ, ապա մի՛ անհանգստացեք Նրա ծրագրին հետևելու ձեր ճանապարհին կանգնած անհաղթահարելի թվացող արգելքների համար: Եթե շարունակեք փնտրել Տիրոջը, որպեսզի իմաստություն ստանաք և հնազանդվեք Նրան ձեր ամեն քայլափոխին, ապա Նա կհեռացնի այդ արգելքներն այնպես, որ դուք կգարմանաք:

Օրինակ՝ հիշում եմ՝ մի անգամ Աստված սկսեց խոսել ինձ հետ այն մասին, որ այդ պահից երկու տարի անց պետք է հովվություն ստանձնեի մի եկեղեցում: Իմ հոգում այդ եկեղեցին սկսեց ավելի որոշակի դառնալ, և ես հարցրի Տիրոջը. «Արդյոք մյս եկեղեցին նկատի ունես»:

Շարունակելով աղոթել այդ հարցի շուրջ՝ համոզվեցի, որ Տերը հենց այդ եկեղեցու մասին էր խոսում:

Այնուհետև ասացի Տիրոջը. «Տեր, ես խոշոր արգելքներ եմ տեսնում, որոնք փակում են այդ եկեղեցին երբևէ հովվելու հնարավորությունն ինձ համար: Բնականի տեսանկյունից այդ արգելքները նման են անհաղթահարելի սարերի: Այնպես որ, եթե կամենում ես, որ *կարողանամ* այնտեղ

հովվություն անել, ապա Դու պետք է լուծես այդ հարցերը»:

Այդ եկեղեցու որոշ առաջնորդներ դեմ էին իմ ծառայությանը հավատքի և բժշկության այն ուղերձի պատճառով, որ ես քարոզում էի: Նրանք անցյալում փորձել էին հակառակվել ինձ՝ ցանկանալով վիճաբանել ինձ հետ և համոզել նրանում, ինչին *իրենք* էին հավատում: Սակայն ես լուռ էի մնացել և թույլ տվել, որ *իրենք* վիճաբանեն (վաղուց որոշում եմ կայացրել, որ սիրով եմ վարվելու մարդկանց հետ՝ անկախ նրանից՝ նրանք նույնն անում են, թե ոչ):

Ուստի ասացի Տիրոջը. «Ես ինքս չեմ փորձի իրականություն դարձնել այն խոսքը, որը Դու ես ինձ տվել այդ եկեղեցին հովվելու մասին: Ոչ մեկին ոչ մի բառ չեմ ասի, պարզապես կշարունակեմ նվիրված մնալ այն եկեղեցուն, որը հիմա հովվում եմ, և կհետևեմ, թե ինչպես ես *Դու* գործը կարգի գցում»:

Աստված այդպես էլ արեց: Ի զարմանս ինձ՝ երկու տարի անց այդ առաջնորդները, որոնք համառորեն չէին ընդունում ինձ, խնդրեցին, որ գնամ և հովվեմ իրենց եկեղեցին: Աստված հոգաց ամեն արգելքի հարց, մինչ ես աղոթում էի և իրավիճակը Նրան վստահում:

Ես կարող էի Աստծուն վստահել՝ հավատալով, որ Նա իրավիճակը կարգի կգցի, քանի որ նախ և առաջ աղոթքով փնտրել էի Նրան այնքան, մինչև հոգումս հստակ ստացել էի, որ *այդ* եկեղեցին հովվելն Աստծո կամքն էր ինձ համար:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ, ԹԵ ԻՆՉՊԵՍ ԱՂՈԹԵԼ ԱՍՏԾՈՒ ԽՈՐՀՐԴԱՎՈՐ ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱՐ

Այնքան կարևոր է սպասել Տիրոջը և աղոթք բարձրացնել Աստծո խորհրդավոր ծրագրի համար մեր կյանքերում:

Դա անելու միջոցներից մեկը լեզուներով աղոթելն է:

Աստվածաշնչում ասվում է, որ երբ աղոթում ենք լեզուներով, Աստծո *խորհուրդներն* ենք աղոթում. «Որովհետև լեզուներով խոսողը մարդկանց հետ չի խոսում, այլ Աստծո հետ, որովհետև ոչ ոք չի լսում, բայց հոգով խորհուրդներ է խոսում» (Ա Կորնթ. 14.2): «Մոֆաթի» թարգմանությունում ասվում է, որ «մենք հոգով աստվածային գաղտնիքներ» ենք աղոթում:

Բացասական շատ բաներ, որոնք մեզ հետ պատահում են, կամ այն դրական բաները, որոնք պետք է պատահեն, սակայն չեն պատահում, արդյունքն են նրա, որ անցյալում չենք աղոթել Աստծո ծրագրի համար: Աստված ապագայում մեզ համար շատ բաներ է ծրագրել, և երբ մենք Հոգով աղոթում ենք, աղոթում ենք կանխավ (Հոգով կարող ենք աղոթել թե՛ լեզուներով և թե՛ մեր մայրենի լեզվով):

Իրականում այն, ինչ կատարվում է ձեր կյանքում ներկա պահին՝ լավ, թե վատ, արդյունքն է նրա, ինչ դուք աղոթել կամ չեք աղոթել անցյալում: Եվ այն, ինչ տեղի կունենա ձեր կյանքում ապագայում, արդյունքը կլինի ձեր *ներկայիս* աղոթքի կյանքի:

Կլինեն ժամանակներ, երբ Սուրբ Հոգին կորդի ձեզ աղոթելու ձեր կյանքի համար Իր ծրագրին վերաբերող որոշ բաների շուրջ: Դուք Սուրբ Հոգու օժտությունը կունենաք աղոթելու համար, սակայն եթե անտեսեք Սուրբ Հոգու հուշումները և զբաղեցնեք ձեզ բնական բաներով, ապա օժտությունը կհեռանա, և դուք կասկածի տակ կառնեք, որ երբևէ զգացել եք դա: Եթե շարունակեք անտեսել Սուրբ Հոգու հուշումները, ապա կտրտմեցնեք Սուրբ Հոգուն, և Նա այլևս չի խոսի ձեզ հետ այդ հարցի շուրջ:

Այնպես որ, որոշում կայացրեք միշտ զգայուն լինել Սուրբ Հոգու մեղմ հուշումներին: Ժամանակ հատկացրեք աղոթ-

քի և Խոսքի մեջ Տիրոջը սպասելուն՝ բացահայտելու Նրա առաջնորդությունն ու ուղղորդումը ձեր կյանքի համար: Այնքան սպասեք Նրան, մինչև ձեր միտքը կհանդարտվի և այլևս ակտիվ չի լինի: Աղոթքի մեջ սպասեք, մինչև ձեր բոլոր ֆիզիկական զգացումներն ու հույզերը գերի կբռնվեն ու այլևս չեն ղեկավարի ձեզ: Այս ամենն անելով՝ կկարողանաք լսել ձեր հոգուն:

Աստծո ներկայության մեջ անցկացրած ժամանակը՝ փառաբանությամբ և երկրպագությամբ Տիրոջը պաշտելը ևս կհանդարտեցնի ձեր միտքն ու կզորացնի ձեր հոգին: Ահա թե ինչու աստվածապաշտության մեջ անցկացրած ժամանակն օգնում է զարգացնելու հոգին:

Ինչ է նշանակում պաշտել Տիրոջը: Նշանակում է մնալ Նրա ներկայության մեջ, սիրել և երկրպագել Նրան՝ Նրա էության և այն ամենի համար, որ Նա արել է ձեզ համար, նշանակում է խմել Նրա փառքն ու զորությունը և թույլ տալ, որ Նա թափանցի ձեր էության ամեն մասնիկի մեջ:

Տիրոջը ծառայելը կօգնի մեզ լսելու Նրանից: Օրինակ՝ Գործք 13.2-ում ասվում է. «ՄՐԱՆՔ [Անտիոքում գտնվող մարգարեներ և ուսուցիչներ] ԵՐԲ ՏԻՐՈՋԸ ՊԱՇՏՈՆ ԷԻՆ ՄԱՏՈՒՑՈՒՄ և ծոմ էին պահում, ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ԱՍԱՑ» (Գործք 13.2): Երբ երկրպագում եք Տիրոջը, ստեղծում եք այնպիսի միջավայր, որում Սուրբ Հոգին կարող է խոսել ձեր սրտերի հետ:

Երբ ժամանակ եք հատկացնում պարզապես Տիրոջը սիրելուն և երկրպագելուն, շատ ավելի հեշտ է դառնում միտքն ու հույզերը հանդարտեցնելը և Հիսուսի վրա կենտրոնանալը:

Այնպես որ եթե ցանկանում եք մտերիմ հարաբերություն ունենալ Տիրոջ հետ, ապա ականջ դրեք, թե ինչ է Նա ձեզ ասում, և շարժ ժամանակ անցկացրեք՝ Նրան պաշտելով:

Գուցե միտքն ու մարմինը հանդարտեցնելու համար որո-

շակի ժամանակ պահանջվի: Այդ պատճառով էլ Խոսքն ասում է. «Դադարե՛ք և ճանաչե՛ք, որ Ես եմ Աստված» (Սաղմ. 46.10):

Ժամանակ հատկացրեք ձեր մարմինը հանդարտեցնելուն: Թույլ տվեք, որ ձեր միտքը հանգստանա, հույզերի ալիքն իջնի այնքան, որ ձեր մտքերը բորբոքող զգացմունքներ այլևս չմնան: Երբ միտքն ու մարմինը հանդարտվեն, լսողությունն ուղղե՛ք դեպի ձեր ներսի խորքերը՝ հասկանալու, թե ինչ է Սուրբ Հոգին ասում ձեզ: Գուցե երբեմն այնպիսի տպավորություն լինի, թե ձեր միտքը մշուշված է, սակայն Տերը կլուսավորի ձեր հոգին և կտա ձեզ այն ուղղորդումը, որի կարիքն ունեք:

Ինքներդ ձեզ թույլ մի՛ տվեք հոգևորապես ծուլանալ և բաց թողնել այն, ինչ Տերն ասում է ձեր հոգուն: Եթե հոգևորապես թմրեք, կարող եք հետևել ձեր շնչի ցանկություններին՝ կարծելով, թե հետևում եք ձեզ համար Տիրոջ ծրագրին:

Հարկավոր է սովորել տարբերել շնչավոր մտքերն ու ցանկությունները Տիրոջ առաջնորդությունից, որ ձեր հոգում է: Դա անելու համար հարկավոր է արմատանալ Խոսքի մեջ. Խոսքն այն միակ բանն է, որը կարող է զատել շունչը հոգուց (Եբր. 4.12):

Խոսքի մեջ հաստատվելը կօգնի նաև ճանաչելու սատանայի ձայնը: Սատանան կփորձի խաբել ձեզ՝ փոքրիկ ստեր բերելով ձեր *մտքին* (Հովհ. 8.44, Հայտն. 12.9):

Սակայն հիշե՛ք, որ Աստված խոսում է *հոգու* հետ, և այն, ինչ Նա ձեզ ասում է, միշտ համապատասխանում է Իր Խոսքին: Այնպես որ միշտ Աստվածաշնչով քննե՛ք այն առաջնորդությունը, որ ստացել եք: Աստված երբեք չի առաջնորդի ձեզ անելու որևէ քայլ, որը դուրս է Իր Խոսքի սկզբունքներից:

Նաև քննե՛ք ձեր քայլերի դրդապատճառները: Ինքներդ ձեզ հարցրե՛ք. «Ինչո՞ւ եմ ցանկանում անել սա: Արդյոք ցան-

կանում եմ իմ Եսասիրական օգուտի համար, թե՛ որովհետև մեկ ուրիշն է անում դա: Արդյոք սա այն է, ինչ իմ շննչն է ցանկանում, թե՛ մի բան, որ Աստված է կամենում»:

Երբեմն այս բոլոր հարցերի պատասխանները գտնելու համար հարկավոր է երկար ժամանակ անցկացնել Աստծո ներկայության մեջ: Միշտ չէ, որ այդ բոլոր հարցերը լուծվում են մեկ աղոթքով:

Երբեմն հարկ է լինում երկար սպասել Տիրոջը աղոթքի մեջ, որպեսզի մաքրվեն ձեր դրդապատճառները, կարգի բերվեն ձեր առաջնահերթություններն՝ ըստ Խոսքի, և կարողանաք տարբերել շնչի աղմուկը հոգու ձայնից:

Երբ ներքուստ հանդարտվեք և Աստծո Խոսքի շուրջ խորհեք, Հոգով աղոթե՛ք այնքան, որքան անհրաժեշտ է, ապա ավելի խորը կգնաք Հոգու մեջ և կկարողանաք շունչը տարբերել հոգուց: Կկարողանաք տարբերել *ձեր* ցանկությունները նրանից, ինչ *Աստված* է ձեզ համար կամենում:

Այնուհետև ձեր ներսից ուղղորդում և առաջնորդություն կբարձրանա, և կկարողանաք վստահաբար ասել. «Հիմա ես գիտեմ, թե ինչ է պետք անել: Սա է Տիրոջ ընտրությունը: Նախկինում մոլորության մեջ էի իմ զգացմունքների և անհատականության պատճառով, սակայն հիմա հոգումս Տիրոջից եմ լսել: Եվ եթե նույնիսկ ամբողջ աշխարհը հակառակ կանգնի ու ասի, թե դա այդպես չէ, ես գիտեմ, թե ինչ է Աստված կամենում, որ անեմ»:

Երբ հնազանդվեք Աստծո կամքին և հետևեք Նրա ծրագրին, կվայելեք այն օրհնությունները, որ Նա նախատեսել է ձեզ համար:

Ճշմարտությունն այն է, որ ձեր հոգու մասին հոգ տանելը՝ այն մշտապես Աստծո Խոսքով սնելով և Տիրոջ հետ հաղորդակցվելով, ամենակարևոր բանն է, որ կարող եք անել, որ զարգացնեք ձեր հոգին և կարողանաք հավաստիանալ

ձեր կյանքի համար Աստծո կամքի մեջ: Միայն այդ դեպքում կկարողանաք ապրել այն առատության մեջ, որն Աստված նախատեսել է ձեզ համար:

Շատ քրիստոնյաներ բաց են թողնում սա՛ մնալով մտավոր և ֆիզիկական տիրույթներում: Մոռանալով, որ հոգևոր տիրույթն է այն հիմքը, ցողունը և հողը, որից մնացած ամեն բան աճում է, նրանք բորբոքվում են իրենց մտքով և զգացմունքներով և այս ու այն կողմ վազում՝ փնտրելով մեկին, ով մտային, բնական խորհրդատվություն կտրամադրի իրենց:

Սակայն եթե միայն կանգ առնեին, ներքուստ հանդարտվեին և հաղորդակցվեին Տիրոջ հետ, ապա կսկսեին լսել, թե ինչ է Նա խոսում իրենց սրտերի հետ: Նրանց հոգուց դեպի միտքն ու զգացմունքները կհորդեր խաղաղություն, բավարարվածություն և գոհունակություն: Բոլոր հարցերը կմարեին և կվերանային, և նույնիսկ նրանց մարմինները կարձագանքեին ուրախությամբ և առողջությամբ:

Գուցե ինչ-որ մեկն ասի. «Երկար ժամանակ է, ինչ աղոթում եմ, սակայն ոչինչ չեմ ստացել»: Այդ դեպքում քայլ մի՛ արեք, մինչև չստանաք: Շարունակեք փնտրել Տիրոջը Խոսքի և աղոթքի մեջ:

Մեկ ուրիշն էլ գուցե ասի. «Ես Աստծուն միայն այսքան ժամանակ կտամ, որ պատասխանի ինձ: Եվ եթե չպատասխանի, ապա կվարվեմ այնպես, ինչպես ճիշտ եմ համարում»: Ո՛չ, այդ տարբերակը չի գործում: Դուք չեք կարող Աստծո առջև դնել *ձեր* վերջնաժամկետը: Եթե փորձեք նման բան անել, ապա անշուշտ սխալ ուղղությամբ կգնաք: Հարկավոր է հավատքով սպասել Տիրոջը՝ վստահ, որ Նա կպատասխանի ձեզ *իր* ժամանակին և *իր* եղանակով:

Եթե ցանկանում եք Սուրբ Հոգով առաջնորդվել, ապա մշտապես պատրաստակամ եղեք արձագանքելու Նրա առաջնորդությանը, նույնիսկ եթե այն չի համապատասխա-

նում ձեր մարդկային տրամաբանությանը, ակնկալիքներին կամ ցանկություններին: Մի՛ խոչընդոտեք Նրա առաջնորդությունը ճանաչելու ձեր կարողությունը սխալ մտածելակերպի կամ եսասիրական հավակնությունների պատճառով: Սովորելու ունակ և բաց մնացեք ցանկացած բանի համար, որ Տերը կարող է ասել ձեզ: Եթե այդպես վարվեք, ապա Նա կսովորեցնի ձեզ Իր ճանապարհները և կուղղորդի ձեզ ձեր կյանքի համար Իր ծրագրի մեջ:

Ես ինքս երկար ժամանակ առաջ որոշում եմ կայացրել միանգամից արձագանքել Սուրբ Հոգու առաջնորդությանը: Եվ տարիների ընթացքում ամեն անգամ, երբ ժամանակ եմ վերցրել Տիրոջ առաջնորդությունը փնտրելու՝ Խոսքի և աղոթքի մեջ լինելով, Աստված միշտ պատասխանել է ինձ: Սուրբ Հոգին վկայություն է տվել իմ հոգուն Աստծո ծրագրի մասին, և ես ներսումս *իմացել եմ*, որ տվյալ հարցի շուրջ Աստծո ուղղորդումն եմ ստացել. ավելի վստահ եմ եղել դրանում, քան նրանում, որ անունս Քենեթ է:

Դուք ևս կարող եք նույն հաջողությունը վայելել Սուրբ Հոգուց ուղղորդում ստանալու հարցում: Սակայն ուզում եմ շեշտել այն փաստը, որ Աստծո կամքն իմանալը և *դրանում* քայլելը կախված են ձեր աղոթքի կյանքից և Խոսքի մեջ հաստատ լինելուց:

Որքան շատ ժամանակ անցկացնեք՝ Խոսքի և աղոթքի մեջ Տիրոջը սպասելով, այնքան ավելի վստահ կլինեք, թե որը պետք է լինի ձեր հաջորդ քայլը: Աստծո ներկայության մեջ ձեր կյանքից աստիճանաբար կհեռանա այն, ինչն Աստծուց չէ:

Այդպես դուք կհասնեք մի կետի, երբ այլևս չեն լինի այն ծանրություններն ու մեղքերը, որոնք ձեզ նախկինում սայթաքեցրել են, և կտեսնեք, որ կարողանում եք քայլել ձեր կյանքի համար Հոր հստակ սահմանած կամքի մեջ:

Երբ վարժվեք ձեր կյանքի համար Աստծո ծրագրի խոր-

հուրդների շուրջ աղոթելու մեջ՝ ըստ Աստծո Խոսքի, ապա Տերը կմտցնի ձեզ աղոթքի ավելի խոր տիրույթ, քան նախկինում երբևէ եղել եք:

Խոսքս չի վերաբերում ինչ-որ առեղծվածային տիրույթի, որտեղ դուք ամպի նման լողալու եք երկնքում կամ չափից դուրս հոգևոր եք լինելու երկրային բարիքների համար: Նկատի ունեմ Տիրոջ հետ առավել սերտ մտերմություն վայելելը, երբ Աստծո Հոգու բաները ձեզ համար ավելի իրական են դառնում, քան ձեզ շրջապատող բնական աշխարհը:

Այսպես պետք է լինի յուրաքանչյուր հավատացյալի կյանքում: Հոգու մեջ քայլելը պետք է նորմալ լինի Աստծո զավակների համար: Սուրբ Հոգով առաջնորդվելը և հավատքով քայլելը պետք է այնքան բնական լինեն հավատացյալի համար, որքան ձկան համար ջրում լողալը, իսկ թռչնի համար՝ երկնքում թռչելը:

Ինչպես տեսնում եք, հնարավոր է այնքան համահունչ լինել ձեր ներսում բնակվող Սուրբ Հոգու հետ, որ ցանկացած իրավիճակում, երբ փնտրեք Նրա առաջնորդությունն ու ուղղորդումը, հստակ իմանաք, թե ինչ է Նա ձեզ ասում: Այդպես Դուք գործուն հարաբերություններ կձևավորեք Աստծո հետ:

Ինչ նկատի ունեմ՝ *գործուն հարաբերություն* ասելով: Նկատի ունեմ, որ այնքան մտերիմ կդառնաք Երկնային Հոր հետ, որ ձեզ համար բնական կլինի ամեն բանի մասին Նրա հետ խոսելն այնպես, ինչպես երեխան է խոսում իր երկրային հոր հետ: Որևէ լուրջ որոշում չեք կայացնի՝ առանց նախ և առաջ Նրանից հարցնելու, իսկ Նա ձեզ վերաբերող ոչ մի բան չի անի՝ առանց նախ և առաջ ձեզ ասելու:

Ես ինքս իմ քրիստոնեական ընթացքի մեջ զարգացրել եմ նման մտերիմ և գործուն հարաբերություն Տիրոջ հետ: Ինքս ինձ կենտրոնացած եմ պահել Աստծո կամքի վրա,

ինչպիսին էլ որ այն լիներ: Սակայն միշտ ազատ խոսել եմ Նրա հետ, այնպես, ինչպես որդին կխոսի հոր հետ:

Օրինակ՝ որոշ դեպքերում, երբ հարցը խիստ վճռորոշ չի եղել, հարցրել եմ Տիրոջը. «Եթե դեմ չես, կարող եմ այսպես անել»: Եվ Տերն ասել է ինձ. «Ինձ համար խնդիր չէ. Ես մտքումս այլ բան ունեի, բայց եթե այդպես ես ուզում, այդպես արա»:

Եղել են նաև դեպքեր, երբ Տերն ասել է ինձ. «Ո՛չ, մի՛ խնդրիր Ինձնից դա անել: Դա լավագույնը չէ»: Իսկ ես վստահել եմ Նրա իմաստությանը և հնազանդվել եմ Նրան:

Կարող եք մտերիմ հարաբերություններ ունենալ Տիրոջ հետ, եթե շարունակաբար մնաք Խոսքի ու աղոթքի մեջ և հանձնված լինեք Սուրբ Հոգու առաջնորդությանը: Աստված ցանկանում է, որ զարգացնեք ձեր հոգին, որպեսզի կարողանաք վայելել Իր հետ հաղորդակցությունը: Եվ եթե աղոթքով սպասեք Նրա ներկայության մեջ՝ քաղցր հաղորդակցության այդ սուրբ վայրում, երբեմն Նա ձեզ ցույց կտա գալիք բաները, և դուք կտեսնեք ձեզ համար Նրա ծրագրի նշույլները (Հովհ. 16.13):

ԹՈՒՅԼ ՄԻ՛ ՏՎԵՔ, ՈՐ ՍԱՏԱՆԱՆ ԽԱՓԱՆԻ ԱՍՏԾՈՒ ԾՐԱԳՐԻՆ ԶԵՐ ԿՅԱՆՔԻ ՀԱՄԱՐ

Երբ ժամանակ եք անցկացնում Տիրոջ ներկայության մեջ, ոչ միայն մուտք եք գործում Նրա հետ հաղորդակցության նոր հարթություն, այլև ավելի խորությամբ եք հասկանում Հիսուսի անվան իշխանությունը և հեղինակությունը՝ կանգնեցնելու սատանայի ռազմավարությունը ձեր կյանքում³: Սա խիստ կարևոր է, քանի որ սատանան կփորձի

3 Հավատացյալի իշխանության թեման ավելի խորությամբ ուսումնասիրելու համար կարող եք ծանոթանալ վերապատվելի Քենեթ Է. Հեգհինի «Հավատացյալի իշխանությունը» գրքին:

ամեն բան անել ձեր կյանքում Աստծո նպատակի իրագործումը խափանելու համար:

Արդյոք Աստված խոսել է ձեզ հետ Իր Խոսքի և Իր Հոգու միջոցով այն ծրագրի մասին, որ Նա ունի ձեզ համար: Գուցե դուք սպասել ու սպասել եք, որ իրականանա այն, ինչ Նա խոսել է ձեր սրտի հետ, սակայն ոչինչ տեղի չի ունեցել: Այդ դեպքում պետք է փնտրեք Տիրոջը և հասկանաք, թե արդյոք ձեր արդյունքների բացակայությունը ձեր դեմ ունեցած սատանայի ռազամավարության պատճառով է: Եթե դա այդպես է, ապա խոսեք ձեր սարին. ինչ խնդիր և իրավիճակ էլ որ սատանան օգտագործում է ձեր դեմ, հրամայեք, որ այն հեռանա Հիսուսի զորավոր անունով (Մարկ. 11.23):

Կան հոգևոր պատերազմներ, որ մենք պետք է վարենք մեր աղոթքներում՝ հենվելով Խոսքի վրա և կանգնելով թշնամու դեմ, որը ցանկանում է խանգարել Աստծո ծրագրի իրականացմանը մեր կյանքերում: Ես չեմ խոսում մտավոր կամ ֆիզիկական ճակատամարտի մասին: Խոսքս խավարի հոգևոր ուժերի դեմ Հիսուսի անունով կանգնելու և Աստծո Խոսքով հավատքի բարի պատերազմը պատերազմելու մասին է (Եփես. 6.12, Ա Տիմ. 6.12):

Երբ մենք գործի ենք դնում Աստծուց մեզ տրված իշխանությունը Հիսուսի անունով, ապա սատանային պարտադրում ենք այն հաղթանակը, որը Հիսուսը խաչի վրա արդեն իսկ գնել է մեզ համար (Կող. 2.15, Եբր. 2.14): Տիմոթեոսի առաջին թղթում հենց այս պատերազմի մասին է խոսում Պողոսը:

Ա ՏԻՄՈԹԵՈՍ 1.18

18 Այս պատվիրանն ավանդում եմ քեզ, Տիմոթեոս որդյակ, առաջուց քեզ վրա եղած մարգարեությունների պես, որ նրանցով պատերազմես ԲԱՐԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ:

Իմ ծառայության մեջ եղել են դեպքեր, երբ թվացել է, թե դժոխքի բոլոր դևերը դուրս են եկել իմ դեմ, որպեսզի չհետևեն իմ կյանքի համար Աստծո ծրագրին: Օրինակ՝ իմ վերջին եկեղեցում հովվությունից դուրս գալուց և դաշտային ծառայության մեջ մտնելուց հետո առաջին հինգ ամիսներին թվում էր՝ ավելի շատ դևերի հետ եմ բախվում, քան նախորդ տասնհինգ տարիների ընթացքում միասին վերցրած:

Բոլոր կողմերից հանդիպում էի թշնամու ճնշմանն ու հակառակությանը: Սատանան փորձում էր դուրս հանել ինձ ծառայության այն վայրից, որն Աստված էր ինձ համար նախատեսել, սակայն ես հաղթահարեցի դա՝ աղոթքի մեջ հաստատակամորեն գործի դնելով Հիսուս Քրիստոսում ունեցած իմ իշխանությունը: Աստվածաշունչը սա կոչում է հավատքի բարի պատերազմ, քանի որ հարկ է լինում *հաստատակամորեն* և *համառությամբ* թշնամուն դեմ կանգնել (Եփես. 6.11-18):

Դուք կարող եք նույնն անել ձեր կյանքում: Օրինակ՝ եթե դեպրեսիայի կամ ճնշման ոգին ծուլություն է բերում ձեր հոգուն և մշուշում ձեր միտքը, ապա Հիսուսի անունով պետք է հրամայեք թշնամուն դադարեցնել իր գործողությունները ձեր դեմ:

Հրամայեք սատանայի զորությանը կոտրվել ձեր կյանքի *բոլոր* բնագավառներում: Ամրիր կանգնեք թշնամու ռազմավարությունների դեմ Աստծո Խոսքով և Հիսուսի զորավոր անունով:

Միևնույն ժամանակ ամրիր բռնեք ձեր հավատքի դավանությունն առ այն, որ Աստծո նպատակներն իրականանալու են ձեր կյանքում: Սկսեք ասել. «Տերը խոսել է ինձ հետ, հետևաբար Հիսուսի անունով դա *պիտի* կատարվի»:

Երբ քայլում եք Հիսուս Քրիստոսում ունեցած այդ իշխանությամբ, ոչ մի մարդ, ոչ մի թշնամի, ոչ մի դև և ոչ մի իրավիճակ չի կարողանա կանգնել ձեր և ձեր կյանքի համար

Աստծո նպատակների իրագործման միջև: Եվ երբ որոշեք զարգացնել ձեր հոգին ու մշտապես հետևել Սուրբ Հոգու առաջնորդությանը, ավելի ու ավելի մեծ քայլերով կմոտենաք հաղթանակին և կվերապրեք Աստծո ծրագրի լիությունը ձեր կյանքում:

Ես ձեզ ներկայացրել եմ այն տարբեր եղանակները, որոնցով Սուրբ Հոգին կարող է առաջնորդել ձեզ, ինչպես նաև որոշ սուրբգրային սկզբունքներ, որոնք կօգնեն ձեզ հաջողությամբ հետևելու Սուրբ Հոգու առաջնորդությանը: Սակայն հիշեք, որ հոգևոր բաներում ևս պետք է վարժվել այնպես, ինչպես բնական բաներում:

Այնպես որ մի՛ շտապեք և մի՛ հուսահատվեք, եթե մեկ օրում չաճեք ու հոգևորապես չհասունանաք նման հարցերում: Մտավորապես և ֆիզիկապես ևս մեկ օրում չեք զարգացել, ճի՞շտ է:

Մեկ շաբաթում չեք ավարտել դպրոցը: Մեկ օրում չեք հասունացել: Նույն կերպ ձեր հոգևոր զարգացման համար ևս ժամանակ կպահանջվի:

Այնպես որ շարունակեք ջանասիրաբար փնտրել Տիրոջ առաջնորդությունը և ուղղորդումը ձեր կյանքի համար: Հիշեք, որ պետք է կիրառել Հիսուս Քրիստոսի մեջ Աստծուց տրված իշխանությունը՝ կանգնեցնելու ձեր կյանքի համար Աստծո ծրագիրը խափանելու սատանայի փորձերը: Եվ որ ամենակարևորն է, շնտ ժամանակ անցկացրեք Աստծո ներկայության մեջ՝ խորհելով Խոսքի շուրջ և Հոգով աղոթելով:

Մի քանի անգամ սխալվելու պատճառով մի՛ վրդովվեք: Շարունակեք աճել հոգևորապես՝ զարգացնելով ձեր հոգին: Հրաժարվեք ձեր մարդկային մտքին հետևելուց և խնդրեք Տիրոջը, որ *Իր* մտքերը դարձնի *ձեր* մտքերը: Երբ դուք արմատացած և հաստատված լինեք Խոսքի մեջ և ժամանակ հատկացնեք ձեր հոգուն լսելուն, Աստվածաշունչը խոստանում է, որ կսովորեք առաջնորդվել Սուրբ Հոգով:



ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ ՏԱՐԲԵՐ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

Բայց երբոր Նա՛ ճշմարտության Հոգին, կգա, Նա կառաջնորդի ձեզ ամեն ճշմարտության մեջ. որովհետև Իր անձից չի խոսի, այլ ինչ որ կլսի, կխոսի և գալու բաները կպատմի ձեզ:

– Հովհաննես 16.13

Մենք խոսեցինք այն երեք առաջնային եղանակների մասին, որոնցով Սուրբ Հոգին առաջնորդում է հավատացյալներին՝ ներքին վկայությամբ, մեղմ, հանդարտ ձայնով և Սուրբ Հոգու ազդեցիկ ձայնով: Իսկ հիմա ցանկանում եմ տարբեր օրինակներ բերել այն եղանակներից, որոնցով Սուրբ Հոգին առաջնորդում է մեզ, որպեսզի հետևենք մեր կյանքերի համար Իր ծրագրին:

ԱՍՏՎԱԾ ԱՆՁԱՄԲ ԿԱՌԱՋՆՈՐԴԻ ՁԵՁ

Սակայն նախ և առաջ թույլ տվեք նշել, որ Սուրբ Հոգուց ձեր կյանքի համար ուղղորդում ստանալը ձեր անձնական պատասխանատվությունն է: Աստված անձամբ է ցանկանում առաջնորդել և ուղղորդել ձեզ ձեր կյանքում, որպեսզի հաջողությամբ վազեք այն հոգևոր ասպարեզը, որ Նա դրել է ձեր առջև:

Աստված չի պատրաստվում առաջնորդելու և ուղղորդելու ձեզ այլ մարդկանց միջոցով, չնայած որ Նա երբեմն կօգտագործի ինչ-որ մեկին՝ հաստատելու այն, ինչը դուք արդեն ունեք ձեր հոգում: Նա կառաջնորդի ձեզ *Իր Հոգով*:

Որոշ քրիստոնյաներ պատրաստակամ չեն ստանձնելու Աստծո առաջնորդությունը փնտրելու պատասխանատվությունը: Նրանք հեշտ ելք են փնտրում. չեն ուզում կախված լինել Աստծո հետ իրենց անձնական փոխհարաբերությունից, քանի որ հոգևորապես զարգանալու համար ժամանակ և ջանք են պահանջվում: Նրանց համար նախընտրելի է, որ ուրիշը փնտրի Աստծուն իրենց համար և ասի իրենց, թե ինչ է պետք անել: Նման մարդիկ բաց են թողնում Աստծո լավագույնը իրենց կյանքերի համար, քանի որ Աստված չի պատրաստվում առաջնորդելու նրանց ուրիշների միջոցով: Բացի այդ՝ Աստված կամենում է անձնական փոխհարաբերություն ունենալ Իր զավակներից յուրաքանչյուրի հետ:

Աստված չի կանչել մեզնից մեկին՝ ուրիշներին ասելու, թե նրանք ինչ պետք է անեն: Թեև մենք կարող ենք օգնել մարդկանց՝ Աստծո Խոսքով և Սուրբ Հոգով իմաստուն խորհուրդ տալով, բայց Աստված ցանկանում է, որ Իր զավակներն առաջնորդվեն Սուրբ Հոգով, Ով ապրում է իրենցից յուրաքանչյուրի մեջ:

Որքանով կփոխվեին մարդկանց կյանքերը, եթե պարզապես Սուրբ Հոգուց լսելու և Նրան ականջ դնելու պատասխանատվությունը ստանձնեին: Եթե մարդը պարզապես սովորի հետևել Սուրբ Հոգու առաջնորդությանը, շատ փորձություններից և դժվարություններից կկարողանա խուսափել:

Գործք 27-րդ գլխում տեսնում ենք աստվածաշնչյան օրինակն այն բանի, որ մարդիկ մեծ փորձության հանդիպեցին, քանի որ ականջ չդրեցին Սուրբ Հոգու նախազգուշացմանը:

Սուրբ Հոգին Պողոսին, որ այդ ժամանակ բանտարկված էր նավի վրա՝ դեպի Հռոմ ճանապարհին, իմաստուն խորհուրդ տվեց գալիք վտանգի մասին: Իրականում, գուցե Պողոսը միակ մարդն էր նավի վրա, ով ունակ էր Աստծուն լսելու: Նա նավարկության պատասխանատուներին զգուշացրեց, որ առջևում վտանգ կա:

ԳՈՐԾՔ 27.10–14, 20, 21

- 10 [Պողոսը] նրանց ասելով. «Ո՛վ մարդիկ, ՏԵՍՆՈՒՄ ԵՄ, որ այս նավարկությունը նեղությունով և շատ վնասով է լինելու, ոչ թե միայն բեռին և նավին, այլ մեր անձերին էլ»:
- 11 Բայց հարյուրապետը նավապետին և նավավարին ավելի էր ականջ դնում, քան թե Պողոսի խոսքերին:
- 12 Որովհետև այն նավահանգիստն անհարմար էր երևում ձմեռն անցկացնելու համար, շատերը խորհեցին, որ այնտեղից գնան, որ ձմեռը մնալու համար գուցե կարողանան Փյունիկե հասնել՝ կրետացիների այն նավահանգիստը, որ դեպի արևմտյան հարավի կողմը և դեպի արևմտյան հյուսիսն էր նայում:
- 13 Եվ ԵՐԲ ՀԱՐԱՎԻ ՔԱՄԻՆ ՄԵՂՄՈՐԵՆ ՓՁԵՑ, կարծում էին, թե *իրենց* նպատակին կհասնեն, և ճանապարհ ընկած՝ անցնում էին Կրետեի մոտով:
- 14 Եվ շատ ժամանակ չէր անցել, որ նրա վրա մի մրրկալից հողմ ընկավ, որ եվրակիկյուն էր կոչվում:
- 20 Եվ երբ շատ օրեր՝ ո՛չ արև և ո՛չ աստղեր չէին երևում, և փոթորիկն էլ քիչ չէր, որ մեզ վրա կար, ապա մեր ազատվելու ամբողջ հույսը կտրվեց:
- 21 Եվ որովհետև շատ օրեր սոված էին, այն ժամանակ Պողոսը նրանց մեջ կանգնած ասաց. «Ո՛վ մարդիկ, պետք էր ձեզ՝ ինձ լսեիք և Կրետեից դուրս չգայիք և այս նեղությունից և վնասից պրծնեիք»:

Ուշադրությո՜ւն դարձրեք, որ 10-րդ խոսքում Պողոսը *չի* ասում. «Սուրբ Հոգին խոսեց ինձ հետ»: Նա ասում է. «Ես *պրեսնում եմ*»: Պողոսը պետք է որ ներքին վկայություն կամ հոգևոր ընկալում ունենար այն վտանգի մասին, որ առջևում

էր, եթէ մինչև ձմեռ որոշեին շարունակել իրենց ծովային ճանապարհորդությունը:

Եթէ նավարկության պատասխանատուները լսեին Պողոսին, ապա չէին կորցնի իրենց նավը: Սակայն նրանք չլսեցին: Հանգամանքները բարենպաստ էին թվում, հարավային քամին մեղմ փչում էր, ուստի նրանք ճանապարհ ընկան:

Սակայն շուտով փոթորիկ վրա հասավ նավի և ուղևորների վրա: Այդ փոթորիկն այն վտանգն էր, որ Պողոսը զգացել էր իր հոգում մինչև ճանապարհ ընկնելը: Փոթորկի պատճառով նավի ամբողջ ապրանքը կորցրին. կորցրին նաև նավը: Նավի վրա գտնվողներն ընդհուպ իրենց կյանքերը կկորցնեին, եթէ նավավարները որոշում չկայացնեին սկանչ դնել այն խոսքերին, որ Պողոսն ասել էր մինչ նավի՝ անանցանելի կետում հայտնվելը (Գործք 27.22–26, 30–38):

Քանի որ այդ մարդիկ ի վերջո լսեցին այն, ինչ Սուրբ Հոգին ասել էր Պողոսին, Աստված խնայեց նավի վրա գտնվող բոլոր մարդկանց կյանքերը (Գործք 27.44): Սակայն որքան ավելի լավ կլինեք, եթէ նրանք ամենասկզբում լսեին, թե ինչ էր Աստված Պողոսի միջոցով ասում իրենց:

Նույնը կատարվում է մինչ օրս: Հաճախ մարդիկ սկսում են լսել Աստծուն միայն այն ժամանակ, երբ արդեն կյանքի փոթորկի մեջ են և գնալու տեղ չունեն: Նրանք իրենց այնպիսի իրավիճակի մեջ են զգում, որ կամ պիտի լսեն Աստծուն և հնազանդվեն Նրա ուղղորդմանը, կամ կխորտակվեն:

Կյանքի փոթորիկները բոլորիս են հասնում: Այդուհանդերձ, որոշ փոթորիկներից կարելի է առհասարակ խուսափել, եթէ նախ և առաջ Տիրոջ առաջնորդությանը հետևենք:

Մենք ընտրություն ունենք: Այո՛, կարող ենք սպասել, մինչև կյանքի փոթորկոտ քամիները մեզ այս ու այն կողմ նետեն, հետո միայն սկսենք լսել Սուրբ Հոգուն: Սակայն

որքան ավելի լավ կլինի, եթե ընտրենք Նրա հուշումներին ականջ դնելն այն ժամանակ, երբ հարավային քամին մեղմ փչում է, և հնարավոր է խուսափել փոթորկից:

Այնպես որ, պատասխանատվություն վերցրեք ճանաչելու Տիրոջ առաջնորդությունը ձեզ համար: Սովորեք զգալ և հետևել Սուրբ Հոգու տված ներքին վկայությանը: Դուք ձեր ներսում ունեք Օգնականի, ով կօգնի խուսափելու կյանքի անպատեհ շրջանցումներից և որոգայթներից, և երբ ձեր ամբողջ սրտով փնտրեք Տիրոջը, Նա ապահովությամբ կառաջնորդի ձեզ Աստծո ծրագրի արահետով:

ՆԵՐՔԻՆ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Թո՛ղյլ տվեք ձեզ մի քանի օրինակ բերել, թե ինչպես է Սուրբ Հոգին առաջնորդում Իր զավակներին: Կտամ նաև գործնական սկզբունքներ, որոնք կօգնեն հետևելու Սուրբ Հոգու առաջնորդությանը ձեր կյանքերում:

Հարյուրավոր դեպքեր կարող եմ պատմել իմ կյանքից ու ծառայությունից՝ ցուց տալու, թե ինչպես է Սուրբ Հոգին առաջնորդել ինձ *ներքին վկայությամբ*՝ առաջին եղանակով, որով Աստված առաջնորդում է Իր ժողովրդին:

Օրինակ՝ ներքին վկայությամբ գիտեի, որ պետք է հիմնել «Ռեմա» աստվածաշնչյան ուսումնական կենտրոնը, մինչ 1973 թվականի ճամբարային հավաքույթի ժամանակ Սուրբ Հոգու օծությամբ կբարձրաձայնեի այդ մասին: Ներքին վկայությամբ այնքան համոզված էի, որ Աստված կամենում էր՝ ծառայողական ուսուցման դպրոց հիմնել, որքան համոզված կլինեի, եթե Հիսուսը տեսիլքով հայտնվեր և ասեր ինձ այդ մասին:

Օրինակ՝ 1950 թվականին Հիսուսը հայտնվեց ինձ: Այդ տեսիլքի մեջ Նա խոսեց ինձ հետ իմ ծառայության մասին և տվեց ինձ բժշկության հատուկ օժտություն: Սակայն ես

ներքին վկայությամբ նույնքան համոզված էի, որ պետք է աստվածաշնչյան ուսումնական կենտրոն հիմնեմ, որքան Հիսուսի տված *տեսիլքով* գիտեի, որ բժշկության ծառայություն պետք է ունենամ: Ներքին վկայությամբ պարզապես գիտեի, որ ծառայողական ուսուցման կենտրոն բացելը Աստծո կամքն էր ինձ համար, չնայած որ սկզբում չէի ցանկանում անել դա:

Բրոքեն Էրրոու քաղաքում «Ռեմայի» համար տեղ ընտրելիս ևս առաջնորդվել եմ ներքին վկայությամբ: Ուսումնական կենտրոնի առաջին երկու տարիներն անցկացրել ենք Թալսայում՝ «Շերիդան ժողով» կոչվող եկեղեցու շենքում, քանի որ մեր շենքը դեռ չունեինք: Առաջին տարին մեր շրջանավարտների թիվն ընդամենը հիսունութե էր, սակայն հաճախելիությունն արագորեն աճեց, և մինչև երկրորդ տարին ստիպված էինք այնպիսի շենք գտնել, որն ավելի շատ ուսանողների կտեղավորեր:

Ուստի 1976 թվականին «Ռեմա» աստվածաշնչյան ուսումնական կենտրոնի համար սկսեցինք մշտական վայր փնտրել: Գիտեինք, որ այնպիսի շենք պետք է ընտրեինք, որ մեծանալու հնարավորություն կունենար, քանի որ ուսանողների թիվն աճում էր, իսկ մենք չէինք ցանկանում ամեն տարի հարյուրավոր ուսանողների մերժել:

Հետո ընկերներիցս մեկը, որ գործարար էր, ասաց ինձ. «Ինձ թվում է՝ հարմար տեղ եմ գտել ուսումնական կենտրոնի համար՝ Բրոքեն Էրրոուում»: Եվ ես ու կինս մեքենայով գնացինք Բրոքեն Էրրոու՝ տեսնելու այն:

Այն պահին, երբ թեքվեցինք դեպի փողոց, և ես տեսա գրասենյակային շենքը և պահեստը (այժմ արդեն՝ համապատասխանաբար Քենեթ Հեգինի ծառայության ադմինիստրատիվ շենքն ու Ռուբերի հիշատակին նվիրված լսարանը), զգացի Սուրբ Հոգու ազդանշանը իմ հոգում: Ներքին

վկայությամբ գիտեի, որ գտել ենք այն տեղը, որը պետք էր:

Կինս նույն ներքին վկայությունն ուներ: Մենք ոչ մի տպավորիչ հայտնություն չստացանք, սակայն երկուսս էլ ներքուստ պարզապես *գիտեինք*, որ Տերն ասում էր՝ «Սա է»:

Այդպիսով, մենք տարածքը գնեցինք և ծառայությունն ու ուսումնական կենտրոնը տեղափոխեցինք Բրոքսեն Էրրոու: Դա հեշտ որոշում չէր, հավատքի հսկայական քայլ էր մեզ համար: Սեփականության տարածքը մեծ մասամբ պատրաստ չէր. հասկանում էինք, որ «Ռեմա» ուսումնական կենտրոնի տարածքը կառուցելու համար շատ գումար կպահանջվեր:

Սակայն հակառակ նրա, ինչ տեսք ուներ այն իրականում, մենք հնազանդվեցինք Աստծուն: Եվ ամեն բան լավ ընթացավ: Մենք մեր գրասենյակները տեղափոխեցինք Բրոքսեն Էրրոու, քայլ առ քայլ կառուցեցինք «Ռեմայի» համալսարանական տարածքը և այդպիսով արեցինք այն, ինչը շատերն ասում էին, թե հնարավոր չէր:

Ահա թե որքան կարևոր է ականջ դնել ներքին վկայությանը: Տարիներ առաջ մի տարեց հոգեգալստական կնոջից իմացա, թե ինչպես էր 1900-ականների սկզբին հոգեգալստական եկեղեցին սկսել գործել Բրոքսեն Էրրոուում: Նա պատմեց ինձ մի երիտասարդ գյուղացի տղայի մասին, որի անունն էր Ռուփերթ Բեյլի, որ Սուրբ Հոգով մկրտվել էր Բրոքսեն Էրրոուի առաջին հոգեգալստական եկեղեցում: Այդ տղան ապրում էր մի ագարակում, որի տեղում հիմա «Ռեմա» աստվածաշնչյան ուսումնական կենտրոնն է:

Չնայած որ Ռուփերթն ընդամենը դեռահաս էր, նա իր սերնդակիցների շրջանում և գալիք սերունդներում արթնություն տեսնելու մեծ ցանկություն ուներ: Երբ Ռուփերթը վերջացնում էր իր աշխատանքը հայրիկի ագարակում, ժամեր շարունակ աղոթում էր այն խոտածածկ բլրի վրա, որ-

տեղ հետագայում կառուցվեց Ուսանողների զարգացման առաջին կենտրոնը: Նա ամեն օր երկունքի ցավերով աղոթում էր կորած մարդկանց համար:

Մեկ օր էլ աղոթքից հետո Ռուփերթը կանգնեց այդ խոտածածկ բլրի վրա և Սուրբ Հոգու օծությամբ մարգարեացավ. «Հենց այս կետից Աստծո մեծ գործը հասնելու է աշխարհին»:

Փառք Աստծուն: Ահա թե ինչու, երբ տեսա այդ տարածքը, Սուրբ Հոգին կարծես էլեկտրականություն հաղորդեց հոգուս: Այդ ներքին վկայությանը հնազանդվելը և Բրոքեն Էրրոուի տարածքը գնելը առանցքային էին դարեր առաջ Տիրոջ Խոսքի մարգարեության իրականացման համար: Այդ քայլը կարևոր էր նաև այս վերջին օրերում իմ կյանքում և ծառայության մեջ Աստծո ծրագրին հաջողությամբ հետևելու հարցում:

Հաջողությունը միշտ Սուրբ Հոգու առաջնորդությանը հետևելու արդյունք է: Մեկ անգամ Հիսուսը, տեսիլքով ինձ հայտնվելով, ասաց. «Եթե սովորես հետևել ներքին վկայությանը, Ես քեզ հարուստ [առատապես ապահովված] կդարձնեմ: Կառաջնորդեմ քեզ կյանքիդ բոլոր գործերում՝ ինչպես ֆինանսական, այնպես էլ հոգևոր»: Տերը հետաքրքրված է մեր կյանքի բոլոր բնագավառներով: Նա ցանկանում է, որ մենք բարգավաճենք և հաջողություն վայելենք՝ հետևելով մեր կյանքերի համար Իր ծրագրին:

Հիշում եմ մի մարդու, որ 1970-ականների կեսին այցելեց «Ռեմա». նա ֆինանսական մեծ հաջողություն էր ունեցել, քանի որ հետևել էր ներքին վկայությանը: Պատմեց ինձ, որ Երկրորդ համաշխարհային պատերազմից կարճ ժամանակ անց 14,000 դոլար էր ներդրել մի քիմիական ընկերությունում: Այն ժամանակ դա մեծ գումար էր:

Ահա թե ինչ ասաց նա. «Թե՛ հաշվապահս և թե՛ բորսային

գործակալս խորհուրդ տվեցին ներդրում չանել այդ ընկերությունում: Սակայն ես դրա վերաբերյալ այնպիսի դրական զգացողություն ունեի հոգումս, որ ամեն դեպքում արեցի այդ ներդրումը»:

Հոգում ունեցած «դրական զգացողությունը» ֆիզիկական զգացողություն չէր, դա հոգևոր ընկալում էր՝ Սուրբ Հոգու տված ներքին վկայությունը, որը քաջալերեց նրան՝ ներդնելու այդ գումարը:

Այդ քիմիական ընկերությունում ներդրում կատարելուց հետո առաջին տասը տարիներին այն տպավորությունն էր, որ նա իմաստուն քայլ չէր արել: Նա բացատրեց իրավիճակը. «Եկավ մի պահ, երբ կարող էի վաճառել արժեթղթերս և հետ ստանալ իմ ներդրած գումարի կեսը: Դրանից մի քանի տարի անց եթե վաճառեի արժեթղթերս, կստանայի այնքան գումար, որքան ներդրել էի: Ուստի մտածեցի, թե այդ ներդրման հարցում սխալ եմ հասկացել Աստծուն»:

Այդուհանդերձ, նա շարունակել է վստահել այն ներքին վկայությանը, որն ի սկզբանե առաջնորդել էր նրան կատարելու այդ ներդրումը: Հոգում նա ուղղորդման փոփոխություն չի զգացել, այնպես որ հանգիստ է թողել արժեթղթերը և հետևել, թե ինչ տեղի կունենա իր ներդրած գումարի հետ: Շատ տարիներ անց այդ քիմիական ընկերությունը վերջապես սկսում է հաջողության նշաններ ցույց տալ:

Այն պահին, երբ այդ մարդը խոսում էր ինձ հետ, ներդրման օրից երեսուն տարի էր անցել, և ահա թե ինչ ասաց նա. «Այդ քիմիական ընկերությունում ես դեռ ունեմ նույն այն արժեթղթերը. եթե դրանք հիմա վաճառեմ, ապա դրանք կարժենան չորս միլիոն դոլար»:

Տասնչորս հազար դոլարի դիմաց չորս միլիոն ստանալը վատ շահույթ չէ: Այո՛, առաջին տասը տարիների ընթացքում թվում էր, թե լավ ներդրում չէր, և ինչ-որ պահի այդ

մարդը նույնիսկ մտածել է, թե սխալ է հասկացել Աստծուն:

Սակայն նա Աստծուն սխալ *չէր* հասկացել: Աստծո համար երեսուն տարին երկար ժամանակ չէ: Եվ այս պարագայում երեսուն տարի պահանջվեց, որպեսզի նա քաղեր Սուրբ Հոգու առաջնորդությանը հետևելու և այդ գումարը ներդնելու ամբողջական օգուտը:

Ներքին վկայությանը հետևելը վարձք ունի՝ անկախ այն բանից, թե որքան ժամանակ կպահանջվի ձեր հնազանդության օգուտները քաղելու համար: Եթե սովորեք հետևել դրան, ապա միշտ իրավիճակից շահած դուրս կգաք:

Տերը միշտ չէ, որ վարձատրում է ամեն շաբաթ երեկոյան կամ մինչև գալիք տարվա առաջին օրը, սակայն վստահ կարող եմ ասել ձեզ, որ եթե մնաք Տիրոջ հետ, ապա Աստծո Խոսքը՝ *ներառյալ նաև Սուրբ Հոգու առաջնորդությունը*, վաղ թե ուշ կգործի, և դուք հաղթանակ կունենաք:

ՇՆԱԶԱՆԴՎԵՔ ԶԵՐ ՀՈԳՈՒ ԶԳՈՒՇԱՑՈՒՄՆԵՐԻՆ

Գուցե ասեք. «Ես փորձում եմ հետևել ներքին վկայության: Եվ ծրագրեր եմ կազմել՝ մտածելով, թե Տերն է ինձ այդ ուղղությամբ առաջնորդում, սակայն հոգումս, միևնույնն է, անհանգստություն ունեմ: Ինչ կարող եմ անել»:

Եթե ներքուստ հստակ համոզված չեք, որ Տիրոջից եք ստացել այդ ուղղորդումն ու Տիրոջ ժամանակի մեջ եք շարժվում, ապա քայլ մի՛ արեք: Դա կարող է պարզապես նշանակել, որ էլ ավելի համապարփակ աղոթք պետք է անեք Նրա ծրագրի համար, կամ Նրա ժամանակները ճիշտ չեք հասկացել:

Պարզապես հաստատ մնացեք և շարունակեք փնտրել Նրա առաջնորդությունը, մինչև լիարժեք չհամոզվեք: Սպա-

սեք, մինչև ձեր հոգուց բխի այն, որ Աստծո ծրագրի համաձայն շարժվելու ժամանակն է:

Եվ երբ սկսեք որոշակի ուղղությամբ շարժվել ու ձեր հոգում զգուշացում ստանաք, ապա կանգ առեք: Ձեր հոգում այդ զգուշացումը կամ անհանգստությունը կանգ առնելու նշան է Տիրոջից, և չնայած որ այդ պահին հնարավոր է՝ չհասկանաք դա, Նա հիմնավոր պատճառ ունի դրա համար:

Աստված գիտի ապագան: Եվ նա ձեր հոգում ձեզ կզգուշացնի, եթե տեսնի, որ շարժվում եք այն ուղղությամբ, որտեղ վնասվելու եք, կամ խոչընդոտվելու է Իր ծրագրի իրագործումը ձեր կյանքում:

Երբ Տերը ձեր հոգում ձեզ զգուշացնում է, խիստ կարևոր է, որ փնտրեք Աստծուն, մինչև կհասկանաք, թե ինչ է դա նշանակում: Եթե այդպես չվարվեք և շարունակեք նույն ուղղությամբ քայլել, ապա հաստատ կտուժեք Սուրբ Հոգու զգուշացմանը ականջ չդնելու հետևանքներից:

Օրինակ՝ տեսել եմ, թե ինչպես են հովիվները սխալներ թույլ տվել, երբ թերացել են իրենց հոգու զգուշացումներին ականջ դնելու հարցում: Փոխանակ ժամանակ հատկացնեին Աստծուն փնտրելուն և հանդարտեցնեին իրենց միտքը, հույզերն ու մարմինը, որ կարողանային լսել, թե հոգին ինչ էր ասում իրենց, նրանք ծառայության մեջ սխալ քայլեր են արել, երբեմն նույնիսկ, Աստծո կամքին հակառակ, եկեղեցիներ փոխել:

Այդ հովիվներից ոմանց համար տարիներ են պահանջվել՝ վերադառնալու այն ճանապարհին, որն Աստված էր նախագծել իրենց համար: Ոմանք շարունակել են դժվարությամբ շարժվել իրենց կյանքերում և ծառայության մեջ, քանի որ իրենց սխալ քայլի պատճառով սկսել են կասկածել Աստծուց ճիշտ լսելու իրենց կարողությանը:

Փառք Աստծուն, որ մենք *կարող ենք* լսել Աստծուց: Սա-

կայն պետք է փնտրենք Նրան այնքան, մինչև կհամոզվենք, որ Նրանից ենք լսել: Իսկ եթե բաց թողնենք դա, ապա պետք է շարունակենք վստահել Նրան՝ հավատալով, որ Նա կսովորեցնի մեզ ինչպես հաջորդ անգամ առավել ճշգրտորեն լսել Իրեն:

Կպատմեմ ձեզ մի հովվի մասին, որը ծառայության մեջ սխալ էր թույլ տվել: Երբ ես քսաներկու տարեկան էի և հովվություն էի անում Ամբողջական Ավետարանի իմ առաջին եկեղեցում, այցելեցի հարևան քաղաքի Ամբողջական Ավետարանի եկեղեցու հովվին: Երբ մեքենայով գնացի հովվական կացարան, ի զարմանս ինձ տեսա, որ նրա մեքենան կցված էր մի մեծ բեռնատարի, որի վրա բարձված էին նրա կահույքն ու ունեցվածքը:

Մտտեցա հովվին ու հարցրի. «Ի՞նչ է պատահել»:

Նա պատասխանեց. «Թողել եմ եկեղեցին»:

Այն պահին, երբ նա ասաց դա, ներքին վկայությամբ հոգումս զգացի, որ սխալ է անում: Սակայն այդ ժամանակ հազիվ քսաներկու տարեկան լինեի, իսկ այդ մարդը հորս հասակակիցն էր: Չէի կարող պարզապես բերանիցս դուրս թոցնել «Սխալ եք անում» խոսքերը, եթե Տերը չասեր, որ անեի դա:

Մտածեցի. «Արդյո՞ք չգիտի, որ սխալ է անում»: Օգնեցի, որ բեռնատարի մեջ տեղավորի վերջին ապրանքները, և երբ ամեն ինչ բեռնված էր, նա սեղմեց ձեռքս և ինձ հաջողություն մաղթեց:

Հետո մի բան ասաց, որից հասկացա, որ վստահ չէր՝ ճիշտ է վարվում, թե սխալ: Ասաց. «Հուսամ՝ սխալ թույլ չեմ տալիս»: Երբեք չեմ մոռանա նրա դեմքի արտահայտությունը և նրա ձայնը, երբ ասաց դա: Այնուհետև գլուխը տարուբերեց, կնոջ հետ նստեց մեքենան և գնաց:

Իսկ ես ճանապարհին կանգնած գրեթե լալիս էի: Ներ-

քուստ այնքան վատ էի զգում՝ նայելով, թե ինչպես է նա հեռանում՝ դուրս գալով Աստծո կամքից: Այդ հովիվը պետք է որ ներքուստ իմանար, որ սխալ էր գործում, ոչ թե այն պատճառով, որ ծառայող էր, այլ որովհետև Աստծո զավակ էր: Աստծո յուրաքանչյուր զավակ կարող է առաջնորդվել Սուրբ Հոգով:

Գնացի տուն և ասացի կնոջս. «Այսինչ եղբայրը թողել է իր եկեղեցին և մեկ այլ եկեղեցում հովվություն է ստանձնել»:

Կինս ասաց. «Չի՞ հասկանում, որ սխալ է անում»: Կինս քարոզիչ չէ, սակայն նա էլ *իր* հոգում զգաց, որ այդ հովիվն Աստծուն սխալ էր հասկացել:

Ես պատասխանեցի. «Անկասկած սխալ է վարվում, սակայն չէի կարող ինձ թույլ տալ ասել նրան այդ մասին, քանի դեռ Տերը չէր առաջնորդել, որ այդպես անեի»:

Այս ոլորտում իմաստություն է հարկավոր: Այդ հովվի խոսքից երևում էր, որ նա չէր ընդունի, նույնիսկ եթե ասեի նրան, թե ինչ էի զգում: Գիտեի, որ Աստված փորձում էր ասել նրան, որ մնար այդտեղ, բայց եթե նա չէր լսել Աստծուն, ապա հաստատ չէր լսի ինձ՝ իրենից տարիքով երկու անգամ փոքր հովվի:

Մեկ այլ ծառայող եկավ և հովվություն ստանձնեց այն եկեղեցում, որից այդ հովիվը հեռացել էր: Դրան հաջորդող ամիսներին մի շարք ցավալի դեպքեր տեղի ունեցան, և այն առաջին հովիվը, որը թողել էր եկեղեցին, վերադարձավ:

Այդ հովիվը ոչ մի բանի համար այդքան ուրախ չէր եղել, որքան իր եկեղեցի վերադառնալու համար, և երկար տարիներ մնաց այդ եկեղեցում որպես հովիվ: Իսկ նրա բացակայության ժամանակ եկեղեցին բավական տուժել էր: Այդ յոթ ամիսների ընթացքում առաջացած խնդիրների հետևանքով մնացել էր հարանվանության անդամների կեսը միայն:

Եթե այդ հովիվը հնազանդվեր Աստծուն և սկզբից ևեթ մնար այդ եկեղեցում, ապա կկարողանար խուսափել խառնաշփոթից, իսկ հարանվանությունը վնասվելու փոխարեն ամենայն հավանականությամբ հոգևորապես կբարգավաճեր և կավելանար:

Միայն հովիվները չէ, որ երբեմն թերանում են իրենց հոգու զգուշացումներին ականջ դնելու հարցում, ինչից հետո տանջվում են հետևանքներից: Վստահ եմ, որ յուրաքանչյուրս ենք սխալներ գործել, որոնցից կարող էինք խուսափել, եթե բավականաչափ զգայուն լինեինք մեր հոգուն և լսեինք Սուրբ Հոգու նախազգուշացումները:

Ուստի, եթե ձեր կյանքում որոշակի ուղղությամբ եք շարժվում, սակայն ձեր հոգում անհանգստություն ունեք, ապա մի՛ գնացեք առաջ: Կանգ առեք՝ փնտրելու Աստծուն և պարզելու, թե ինչ է Նա ասում ձեր հոգուն:

ՄԻ ՓՆՏՐԵՔ ՏՊԱՎՈՐԻՉ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ

Մյուս կողմից, եթե ներքուստ՝ ներքին վկայությամբ, *գիտեք*, թե ինչ է Աստված ցանկանում, որ անեք, ապա մի՛ սպասեք, որ Աստված ձեզ ավելի տպավորիչ կերպով կուղղորդի. հնազանդվեք ներքին վկայությանը:

Այլ կերպ ասած՝ երբ Աստված Իր Սուրբ Հոգով ձեր հոգուն վկայություն է տալիս որոշակի ուղղությամբ շարժվելու, ապա զգուշ եղեք, որ չանտեսեք ձեր ներքին վկայությունն այն պատճառով, որ ցանկանում եք ավելի տպավորիչ կամ ակնհայտ առաջնորդություն ստանալ Աստծուց, ինչպես, օրինակ՝ տեսիլքով կամ հրեշտակի այցելությամբ: Այսպիսի մոտեցմամբ հատկապես հեշտ է, երբ Աստված ձեզ առաջնորդում է այն ուղղությամբ, ուր ձեր մարմինը չի ցանկանում գնալ:

Թեև Աստված Իր զավակներին երբեմն առաջնորդում է տեսիլքներով և այլ տպավորիչ եղանակներով, մենք չէ, որ պետք է Աստծուն ասենք, թե ինչպես առաջնորդի մեզ: Մենք սուրբգրային ոչ մի իրավունք չունենք տեսիլքներով, ծայներով և հրեշտակներով ուղեկցվող առաջնորդություն խնդրելու:

Եվ սակայն մենք ունենք Աստվածաշնչում գրված խոստմունքներին հավակնելու իրավունք: Իսկ Աստվածաշունչը խոստանում է, որ Սուրբ Հոգին կառաջնորդի և կուղղորդի մեզ ամբողջ ճշմարտության մեջ (Հովհ. 16.13, Հռոմ. 8.14):

Այնպես որ պետք է Խոսքի մեջ փնտրենք և գտնենք, թե ինչպես է Աստված Իր Սուրբ Հոգով առաջնորդում և ուղղորդում մեզ: Իսկ հետո պետք է փնտրենք Նրա առաջնորդությունը՝ անկախ նրանից, թե ինչ եղանակով Նա կցանկանա առաջնորդել մեզ:

Ես թույլ եմ տվել ներքին վկայությանը կասկածելու և առավել տպավորիչ առաջնորդություն փնտրելու սխալը, երբ Աստված խոսում էր ինձ հետ Ֆարմերսվիլի եկեղեցի վերադառնալու և այն հովվելու մասին:

Ինչպես արդեն ասացի, ո՛չ ես, ո՛չ էլ Օրեթան չէինք ցանկանում վերադառնալ եկեղեցի: Մենք սիրում էինք մեր հարանվանությունը, իսկ այդ քաղաքում բացի եկեղեցու անդամներից ուրիշ ոչինչ մեզ դուր չէր գալիս:

Այն բանից հետո, երբ ես և Օրեթան համաձայնության եկանք, որ Աստված էր առաջնորդում մեզ վերադառնալ Ֆարմերսվիլ, այդ հարցը հանձնեցինք Տիրոջ ձեռքերի մեջ, որպեսզի Նա զբաղվեր դրանով:

Երկու ամիս էլ չէր անցել, երբ այդ եկեղեցու խորհրդի անդամներից մեկը զանգահարեց ինձ և ասաց. «Մեր հովիվը հենց նոր թողեց ծառայությունը. չէի՞ք ցանկանա վերադառնալ և հովվել մեր եկեղեցին»:

Ես նրան չասացի, թե ինչ էր Տերն ինձ ասել, փոխարենը պատասխանեցի. «Զգիտեմ: Զեր եկեղեցում դուք հարանվանական խորհուրդ ունեք: Մարդիկ այդ հարցով իրենց խոսքը պետք է ասեն, ու գուցե հարկ կա, որ քվեարկությամբ ընտրեն ինձ»:

«Հենց այդ պատճառով էլ զանգահարել ենք ձեզ,- ասաց նա:- Մարդիկ գալիս են խորհրդի անդամների մոտ և ասում, որ ճշտենք, թե արդյոք եղբայր Հեգինը կվերադառնա՝ հովվելու եկեղեցին»:

Ուստի ես մի քանի օրով վերադարձա Ֆարմերսվիլի եկեղեցում քարոզելու: Երբ այնտեղ էի, հարանվանությունը քվեարկեց ինձ՝ որպես հովվի վերադարձնելու օգտին:

Թեև ներքուստ գիտեի, որ ես պիտի լինեի հաջորդ հովվիվը, թույլ տվեցի, որ միտքս գնար դեպի բնական տիրույթ, և սկսեցի մտածել. «Իսկ ես արդյո՞ք ցանկանում եմ վերադառնալ այստեղ: Բացի մարդկանցից՝ այստեղ ուրիշ ոչինչ ինձ դուր չի գալիս»: Սկսեցի կասկածել ներքին վկայությանս:

Արդյունքը եղավ այն, որ երեք օր ծոմ պահելով ու կրկին ու կրկին աղոթելով՝ փորձեցի Աստծուց առավել տպավորիչ առաջնորդություն խնդրել. «Օ՛, Տեր, շարժվիր. խոսիր ինձ հետ»: Երևի ցանկանում էի, որ Աստված երկտող թողներ ինձ համար երկնքում կամ ամպերով պատկեր նկարեր: «Գոնե տեսիլք կամ մարգարեություն լիներ, որը կօգներ ինձ հաստատ իմանալու՝ որն է Աստծո կամքն այս հարցում», - մտածում էի ես:

Ծոմապահությանս և աղոթքներիս երրորդ օրն էր, երբ Տերը խոսեց ինձ հետ: Ես ծնկած աղոթում էի. «Օ՛, Տեր: Նշան տուր ինձ»: Եվ հանկարծ Նա խոսեց ինձ հետ մեղմ, հանդարտ ձայնով:

Տերն ասաց ինձ. «Վեր կաց այստեղից: Քեզ ոչ մի նշան չեմ տալու: Պարզապես ժամանակդ ես վատնում՝ ծոմ պա-

հելով և աղոթելով ինչ-որ տպավորիչ նշանի համար: Ներսուհդ արդեն գիտես ինչ անել. այնպես որ արա՛ դա»:

Ես պատասխանեցի՝ «Լավ, Տեր»: Ու այլևս ոչ մի խոսք չասացի Նրան այդ մասին, պարզապես հնազանդվեցի նրան, ինչ Նա ինձ արդեն ասել էր Ֆարմերսվիլի եկեղեցին հովվելու մասին: Եվ ինչպես հետագայում երևաց, մենք մեծապես օրհնվեցինք մեր հնազանդության համար:

Ես դաս քաղեցի այդ փորձառությունից. այլևս երբեք Աստծուց տպավորիչ առաջնորդություն չխնդրեցի: Հաջորդ տեսիլքս տեսա այդ դեպքից շատ ժամանակ անց, սակայն չէի խնդրել, որ Աստված ինձ տեսիլք տար: Ես սովորել էի բավարարվել Սուրբ Հոգու առաջնորդությամբ, ինչ եղանակով էլ Նա ցանկանար առաջնորդել ինձ: Իսկ Նա մեծ մասամբ առաջնորդում էր ինձ ներքին վկայությամբ:

ՄԵՂՍ, ՀԱՆԴԱՐՏ ՁԱՅՆԸ

Արդեն պատմեցի, որ երբ ծոմ էի պահում և աղոթում Ֆարմերսվիլի եկեղեցի վերադառնալու մասին, Տերն ինձ հետ մեղմ, հանդարտ ձայնով խոսեց: Այդ մեղմ, հանդարտ ձայնը մեր հոգու ձայնն է, որը երկրորդ ամենահաճախ հանդիպող եղանակն է, որով Տերն Իր Սուրբ Հոգով առաջնորդում է Իր ժողովրդին: Իմ հոգին լսում էր Սուրբ Հոգու ձայնը, և թե ինչպես էր Տերն առաջնորդում ինձ այդ պահին:

Թույլ տվեք մեկ այլ օրինակ բերել իմ կյանքից, երբ Տերն առաջնորդել է ինձ մեղմ, հանդարտ ձայնով: 1970 թվականին ես և կինս Նյու Յորքում էինք և հավաքույթներ էինք անցկացնում տարբեր քաղաքներում: Մի կիրակի, երբ մեր իրերը տանում էի այն հյուրանոց, որտեղ պետք է մնայինք, ֆիզիկապես վատ զգացի ինձ:

Եթե դա ուրիշ մեկի հետ պատահեր, գուցե առհասարակ ոչինչ չնշանակեր: Սակայն երեսունվեց տարի առաջ ես ուռքի

էի կանգնել մահվան մահճից ու դրանից հետո երեսունվեց տարի շարունակ ղչ հարբուխ էի ունեցել, ղչ էլ գլխացավ (հիմա արդեն հիսունհինգ տարի է անցել, և ես դեռևս չեմ ունեցել ղչ հարբուխ, ղչ էլ գլխացավ և ունենալու միտք էլ չունեմ: Ինքս ինձնով չեմ պարծենում, այլ Հիսուսով: Նա է Բժիշկը):

Նախկինում, երբ հիվանդության նախանշաններ էին փորձում հարձակվել վրաս, պարզապես անում էի այն, ինչ գրված է Մարկոս 11.24-ում, ինչպես արել էի առաջին բժշկությանս ժամանակ:

Եվ միշտ, երբ անում էի հավատքի այդ աղոթքը, կան միանգամից բժշկվում էի, կան անմիջապես ինքնազգացողությունս լավանում էր:

Ուստի այս անգամ էլ արեցի այդ աղոթքը, սակայն ինքնազգացողությունս չլավացավ:

Երբ հասա հյուրանոցային համար, պառկեցի մահճակալին, այլապես կընկնեի գետնին: Այդպես պառկած փնտրում էի Տիրոջը՝ հասկանալու, թե ինչու չգործեց հավատքիս աղոթքը:

Ասացի. «Տէր, Քեզ հետ կապ հաստատել չստացվեց, երբ աղոթեցի: Գիտեմ, որ Դու չես սխալվում, երբեք չես փոխվում: Նշանակում է, որ ես եմ ինչ-որ տեղ սխալվել: Խնդրում եմ, ասա՛ ինձ, թե որտեղ եմ սխալվել»:

Տերը պատասխանեց ինձ, սակայն ոչ թե լսելի ձայնով, այլ իմ հոգու մեղմ ու հանդարտ ձայնով (իմ հոգին լսեց Սուրբ Հոգու ձայնը): Տերն ասաց. «Ձեռքերդ դիր քեզ վրա, որ բժշկվես: Քսան տարի և չորս օր առաջ ես հայտնվեցի ու ասացի քեզ, որ քո ձեռքերում *բժշկակար* զորություն կա»:

Ես ժամանակ չվատնեցի և անմիջապես ձեռքերս դրեցի ինձ վրա: Միանգամից ջերմ ալիք զգացի, որ ձեռքիցս անցավ որովայնիս մեջ և տարածվեց ամբողջ մարմնովս: Անմիջապես սկսեցի լավ զգալ:

Այնուհետև Տերն ասաց ինձ. «Ինչ վերաբերում է բժշկույթ-

յան ծառայությանը, դու չես արել այն, ինչ պետք է անելիր: Դա քո կոչման մասն է»: Մոտ հինգ տարի ձեռք չէի դրել հիվանդների վրա: Մինչդեռ բժշկության ծառայությունը Աստծո ծրագրի մի մասն էր իմ կյանքի համար:

«Հիմա գնա Թալսա և նորից սկսիր,- ասաց Տերը:- Ասա մարդկանց այն, ինչ ես քեզ ասել եմ տեսիլքի միջոցով 1950 թվականին, ասա՛, որ քեզ բժշկության օժուրյուն եմ տվել՝ ծառայելու հիվանդներին: Եվ երբ հնազանդվես Ինձ և ձեռք դնես հիվանդների վրա, քեզ վրա ավելի մեծ օժուրյուն կիջնի և կմնա»:

Այդ պահից ի վեր ես հնազանդվեցի Տիրոջը բժշկության ծառայության հարցում, և Նրա Խոսքն իրականացավ. սկսեցի բժշկության էլ ավելի զորավոր օժությամբ գործել:

ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ԱԶԴԵՑԻԿ ՁԱՅՆԸ

Մեկ այլ եղանակ, որով Սուրբ Հոգին առաջնորդում է Իր ժողովրդին, *Սուրբ Հոգու ազդեցիկ ձայնն* է: Իմ կյանքում եղել են դեպքեր, երբ Սուրբ Հոգին իմ հոգու հետ խոսել է թվացյալ լսելի ձայնով, չնայած որ շուրջս մարդիկ չեն լսել:

Շատ անգամներ, երբ լսել եմ Սուրբ Հոգու ազդեցիկ ձայնը, հարցրել եմ շուրջս եղող մարդկանց, թե արդյոք իրենք նույնպես լսեցին այն: Ինձ համար այդ ձայնն իրական է հնչել, սակայն ամենից հաճախ պատասխանել են, որ ոչինչ չեն լսել:

Կարծում եմ, որ Գործք 8.29-ում Փիլիպոսի համար լսելի է եղել Սուրբ Հոգու ձայնը. «*Հոգին էլ Փիլիպոսին ասաց. «Մտրեցիր և հասիր այդ կառքին»*»: Լսելի լինե՞ր այդ ձայնն ուրիշների համար, թե ոչ, ըստ իս՝ այն լսելի էր Փիլիպոսի համար:

Գործք 10-րդ գլխում տեսնում ենք աստվածաշնչյան մեկ այլ օրինակ, երբ Սուրբ Հոգին խոսում է մարդու հետ:

Պետրոսը կտուրին աղոթելիս տեսիլք է տեսնում, որում Աստված ասում է նրան, որ փրկությունը Հիսուս Քրիստոսով է և հասանելի է հեթանոսների համար (Գործք 10.10–16):

ԳՈՐԾՔ 10.19, 20

19 Եվ դեռ Պետրոսը այն տեսիլքի համար միտք էր անում, ՀՈԳԻՆ ՆՐԱՆ ԱՍԱՅ. «Ահա երեք մարդիկ քեզ որոնում են:

20 Բայց վեր կաց, իջիր և գնա՛ նրանց հետ առանց խղճմանա՞նք անելու, որովհետև Ես եմ ուղարկել նրանց»:

Ամենայն հավանականությամբ Սուրբ Հոգին Պետրոսի հետ խոսեց ազդեցիկ ձայնով (խոսք 19): Եթե դուք նույնպես Պետրոսի հետ այդ կտուրին լինեիք, հավանաբար չէիք լսի Սուրբ Հոգու այդ խոսքերը: Սակայն Նրա ազդեցիկ ձայնը լսելի էր Պետրոսին: Նա հստակ լսեց, թե ինչ էր Սուրբ Հոգին ասում իրեն:

Իմ փորձից կարող եմ ասել, որ մեծ մասամբ, երբ Աստված Իր Սուրբ Հոգով լսելի խոսում է ինձ հետ, դա նշանակում է, որ ինձ բարդ նավարկություն է սպասում: Տերն ինձ հետ խոսում է Իր Սուրբ Հոգու ազդեցիկ ձայնով, որպեսզի ես հաստատ կանգնեմ, երբ փոթորիկ բարձրանա: Երբ ինձ կանգուն պահելու համար նման ուժեղ առաջնորդության կարիք չի լինում, Նա սովորաբար այդ կերպ չի խոսում ինձ հետ, պարզապես առաջնորդում է ներքին վկայությամբ:

Այդ սկզբունքի օրինակը տեսնում ենք աստվածաշնչյան այն հաստվածում, որը կարդացինք վերևում: Տեսնեք, թե ինչ տեղի ունեցավ Պետրոսի հետ այն բանից հետո, երբ Սուրբ Հոգին խոսեց նրա հետ: Երբ Պետրոսը Ավետարանը քարոզեց Կոռնելիոսին և նրա ամբողջ ընտանիքին, Աստված փառավոր կերպով փրկեց և Սուրբ Հոգով մկրտեց նրանցից յուրաքանչյուրին (Գործք 10.44–46): Սակայն դրանից հետո Պետրոսին հոգևոր առումով դժվար ժամանակներ էին սպասում:

Հեթանոսների հետ ունեցած այդ գերբնական փորձա-
նությունից հետո մյուս հրեա եղբայրները սկսեցին կասկածի
ենթարկել Պետրոսի գործողությունները: Աստվածաշունչն
ասում է, որ «երբ Պետրոսը վեր ելավ Երուսաղեմ, այն հա-
վադացյալները, որ թվապարտությունից էին, վիճում էին նրա
դեմ» (Գործք 11.2): Պետրոսը պետք է արդարացներ հեթա-
նոսներին քարոզելու իր քայլը՝ բացատրելով՝ «ՀՈԳԻՆ ԻՆՁ
ԱՍԱՅ, ՈՐ ՆՐԱՆՑ ՀԵՏ ԳՆԱՄ» (Գործք 11.12):

Ակնհայտ է, որ Պետրոսը Սուրբ Հոգու առավել տպավոր-
րիչ առաջնորդության՝ Նրա ազդեցիկ ձայնը լսելու կարիք
ունեի, ինչը նրան հաստատուն կպահեր, երբ հակառակույթ-
յան հանդիպեր հրեա հավատացյալների կողմից: Այդ ժա-
մանակ հրեա հավատացյալները ընդդիմանում էին հեթա-
նոսների՝ Նոր Ուխտի մեջ մտնելուն. նրանք չգիտեին, որ
դա Աստծո փրկագնման ծրագրի մասն էր:

Իմ կյանքում և ծառայության մեջ մի քանի անգամ Աստ-
ված խոսել է ինձ հետ Իր ազդեցիկ ձայնով, երբ ինձ դժվար
նավարկություն էր սպասում: Օրինակ՝ 1946 թվականին
մտածում էի Տեխաս նահանգի Վան քաղաքում մի փոքրիկ
եկեղեցում հովվություն ստանձնելու մասին:

Մի օր Աստծուց հարցրի, թե որն էր Իր կամքն այդ հար-
ցում: Միանգամից պարզորոշ լսեցի, թե ինչպես Սուրբ Հո-
գին խոսեց հոգուս հետ: Նրա ձայնն այնքան պարզ հնչեց,
ինչպես կինչեր, եթե խոսեր կողքիս կանգնած ինչ-որ մեկը:

Այդ ձայնն ասաց. «Դու ես Վանի եկեղեցու հաջորդ հովի-
վը: Եվ սա լինելու է վերջին եկեղեցին, որ կհովվես»:

Շուտով հասկացա, թե ինչու էր Տերն ինձ հետ լսելի ձայ-
նով խոսել: Եթե Նա նման ակնհայտ կերպով չուղղորդեր
ինձ, ապա կթողնեի այդ եկեղեցին նույնիսկ նախքան հով-
վություն սկսելը:

Քարոզիչները Վան քաղաքում գտնվող այդ եկեղեցին

կոչում էին «խնդրահարույց եկեղեցի». տարբեր խնդիրների պատճառով եկեղեցին բաժանվել էր երկու խմբի:

Ես իմ ընտանիքով գնացի այնտեղ քարոզելու, որպեսզի հարանվանությունը կարողանար քվեարկել, թե արդյոք ուզում է, որ ես լինեմ իրենց հովիվը:

Միանգամից հասկացա, որ հեշտ չէ քարոզել մի այնպիսի հարանվանության, որը երևակայական գիծ է քաշել եկեղեցու մեջտեղով, և այդ գծի հակառակ կողմերում գտնվող մարդիկ միմյանց դեմ են: Մթնոլորտն այնքան սառն ու անկենդան էր, որ կարծես քարոզածս ամեն բառը ռետինե գնդակի նման դիպչեր պատին և հետ գար ու հարվածեր դեմքիս:

Մտածում էի, թե միայն չորեքշաբթի երեկոյան պետք է քարոզեի, սակայն խորհրդի անդամներն առանց իմ իմացության որոշել էին, որ պետք է քարոզելի չորեքշաբթից կիրակի: Դա նշանակում էր, որ ամեն օր ընտանիքս պետք է տեղափոխեի մի սարկավազի տնից մյուսի տուն, այլապես սարկավազները կնախանձեին միմյանց: Իրավիճակը կարելի էր ծիծաղելի համարել, եթե այդքան տխուր չլիներ:

Կնոջս ասացի. «Եթե չիմանայի, որ Աստված այս ամենի մեջ է, ապա իրերս կհավաքեի և կհեռանայի այս քաղաքից՝ առանց որևէ մեկին որևէ բան ասելու»: Մնալուս միակ պատճառն այն էր, որ ցանկանում էի հնազանդվել Աստծուն: Ահա թե ինչու էր Աստված ինձ հետ խոսել Սուրբ Հոգու ազդեցիկ ձայնով. ես պետք է հաստատ կանգնած մնայի դժվար ժամանակներում:

Կիրակի երեկոյան եկեղեցու անդամները քվեարկեցին: Բոլոր քվեները՝ բացի երկուսից, իմ օգտին էին: Ինչ-որ մեկն ասաց. «Օ՛, սա հրաշք է. այս մարդիկ ոչ մի հարցի շուրջ համաձայնության չէն գալիս»:

Սակայն Հիսուսն ինձ ասել էր, որ ես պետք է լինեի նրանց

հաջորդ հովիվը, ուստի զարմացած չէի: Հարանվանության անդամներին այդպես էլ չասացի, որ Երկնքից ձայն էի լսել, պարզապես վեր կացա տեղիցս և հնարավորինս սիրալիր ընդունեցի հովվությունը, չնայած որ միտքս և ֆիզիկական զգայարաններս բղավում էին, որ թողնեմ ու հեռանամ՝ դեռ չսկսած:

Հովվության առաջին վեց ամիսներն այդ եկեղեցում դժվար էին անցնում: Նախկին հովիվը դեռ քաղաքում էր. նա այցելում էր հարանվանության այն կեսին, որը դեռևս ընդունում էր նրան՝ որպես հովիվի, և նրանից տասանորդ էր հավաքում: Բացի այդ՝ եկեղեցու անդամներին հանդիպելիս ասում էր. «Աստված չի կարող օրհնել այդ եկեղեցին, քանի որ ես պետք է լինեի հովիվը»:

Պատահում էր նաև, որ այդ հովիվը մեկ այլ քաղաքում էր հավաքույթ անցկացնում, և ես մի փոքր շունչ էի քաշում: Միշտ կարողանում էի գլխի ընկնել, թե նա երբ քաղաքում չէր. եկեղեցական ծառայություններն այլ էին, մթնոլորտը թեթև էր, իսկ քարոզելն՝ ավելի հեշտ:

Իսկ երբ վերադառնում էր, անմիջապես զգում էի դա, նույնիսկ եթե ոչ ոք ինձ ոչինչ չասեր այդ մասին: Կիրակի առավոտյան սկսում էի քարոզելը ու անմիջապես մտածում. «Եղբայր այսինչը վերադարձել է քաղաք»: Մթնոլորտը կրկին սառն էր, և ես կրկին զգում էի, թե ինչպես էին խոսքերս ռետինե գնդակների նման հարվածում պատերին:

Ամեն անգամ կիրակնօրյա երեկոյան ծառայությունից հետո կնոջս ասում էի. «Եթե չիմանայի, որ Աստված կամենում է՝ հովվեմ այս եկեղեցին, մի բեռնատար կվարձեի, կեսգիշերին կբեռնեի մեր բոլոր իրերն, ու առանց որևէ մեկին որևէ բան ասելու կհեռանայինք: Հաջորդ օրը նրանք հովվական կացարանը դատարկ կգտնեին և կկարծեին, թե հափշտակվել ենք»:

Այդ վեց ամիսները մեզ համար դժվար ժամանակներ էին, բայց քանի որ ես հաստատուն մնացի և սեր ցուցաբերեցի մարդկանց, այդ թվում նաև նախկին հովվի նկատմամբ, ամեն բան ավելի հեշտ ընթացավ:

Որոշել էի, որ ջանալու եմ օգնել նախկին հովվին, ինչով կարողանամ: Այդ ընթացքում նրա համար օրհնություն լինելու հնարավորություն ընձեռվեց:

Սերը միշտ հաղթում է: Այդ հովիվն ու նրա կինը հաշտվեցին հարանվանության հետ և գնացին մեկ այլ քաղաք ու հաջողությամբ մեկ այլ եկեղեցի հիմնեցին: Չնայած այն հանգամանքին, որ առաջին ամիսները Վան քաղաքի այդ եկեղեցում իմ և իմ ընտանիքի համար դժվար նավարկություն էին, հաջորդ տարիներին մենք մեծապես օրհնվեցինք Աստծուն հնազանդվելու համար:

Հաջորդ անգամ, երբ պարզորոշ լսեցի Սուրբ Հոգու ձայնը, 1950 թվականի մայիսն էր: Լսեցի, թե ինչպես մի ձայն երկնքից խոսեց ինձ հետ անգլերենով: Դա Հիսուսն էր խոսում՝ Սուրբ Հոգով (Հովի. 16.13):

Հիսուսն ասաց ինձ. «Դու չես մահանա, այլ կապրես: Կամենում եմ, որ Իմ ժողովրդին հավատքի մասին սովորեցնես: Ես քեզ հավատք եմ սովորեցրել Իմ Խոսքի միջոցով և թույլ եմ տվել, որ դու որոշակի փորձառություն ունենաս: Դու հավատք ես սովորել թե՛ Իմ Խոսքից և թե՛ փորձով: Հիմա գնա՛ և սովորեցրու Իմ ժողովրդին այն, ինչ ես քեզ սովորեցրել եմ: Գնա՛ և Իմ ժողովրդին հավատքի մասին սովորեցրու՛»:

Ես ջանացել եմ հնազանդ լինել այդ երկնային ձայնին: Դա է պատճառներից մեկը, թե ինչու եմ այդքան շատ սովորեցնում հավատքի մասին: Ես պետք է դա անեմ: Դա իմ հնազանդության մասն է Աստծո կամքին իմ կյանքի համար:

Այդ գերբնական վերապրումից հետո հնազանդվեցի Աստծուն և վերադարձա դաշտային ծառայության: Դաշ-

տային ծառայության առաջին տարիներին ես վեր ու վար էի վազում Տեխասի սար ու ձորերով՝ քարոզելով հավատքի մասին, երբ ուրիշ ոչ ոք դա չէր անում: Ինձ քննադատում էին, հալածում, չարախոսում, սակայն այդ ամենը երբևիցե նվազագույնս չվրդովեց ինձ:

Տերն ինձ հանձնարարական էր տվել Սուրբ Հոգու լսելի ձայնով, այնպես որ շարունակում էի քարոզել հավատքի մասին: Ես որոշում էի կայացրել հնազանդվել Տիրոջը և հետևել Նրա ծրագրին իմ կյանքի համար, ինչ էլ որ պատահեր:

Սրանք բազմաթիվ օրինակներից մի քանիսն են, երբ Տերը խոսել է ինձ հետ Սուրբ Հոգու ազդեցիկ ձայնով, որպեսզի պատրաստի ինձ Իր գալիք ծրագրերին: Եվ սա սուրբգրային է:

ԱՍՏՎԱԾ ՑՈՒՅՑ ԿՏԱ ՄԵՐ ԳԱԼԻՔ ԲԱՆԵՐԸ

Աստված Իր Խոսքում խոստանում է, որ Սուրբ Հոգին հավատացյալներին կհայտնի գալիք բաները. *«Բայց երբ Նա՛ ճշմարտության Հոգին, կգա, Նա կառաջնորդի ձեզ ամեն ճշմարտության մեջ... ԵՎ ԳԱԼՈՒ ԲԱՆԵՐԸ ԿՊԱՏՄԻ ՁԵՁ»* (Հովհ. 16.13):

Հավատացյալները կարող են հավակնել Հովհաննես 16.13-րդ խոսքին և ակնկալել, որ Աստված անհատապես կհայտնի նրանց Իր ծրագիրն իրենց կյանքերի համար:

Իհարկե, Տերը ցույց չի տա ձեզ գալիք *բոլոր* բաները: Նա ձեզ միանգամից ցույց չի տա Իր ամբողջական ծրագիրը ձեր կյանքի համար՝ սկզբից մինչև վերջ, քանի որ ցանկանում է, որ դուք հավատքով քայլեք և ոչ թե աչքի երևույթով (Բ Կորնթ. 5.7):

Եթե Նա ձեզ ամեն բան ցույց տար, ապա դուք կքայլեիք *աչքի երևույթով* և ոչ թե *հավատքով*: Իսկ առանց հավատքի անհնար է Աստծուն հաճեցնել (Եբր. 11.6):

Յանկացած գերբնական բանի մեջ առեղծված կա, այդ թվում նաև մեզ համար ունեցած Աստծո ծրագրի:

Նույնիսկ Պողոս առաքյալն է ասում. «Որովհետև փոքր ի շատե գիտենք և փոքր ի շատե մարգարեանում ենք» (Ա Կորնթ. 13.9): Պողոսը նաև ասում է. «Որովհետև հիմա հայելու մեջ օրինակով ենք տեսնում» (Ա Կորնթ. 13.12): Ահա թե որն է հավատքի դերակատարումն Աստծո հետ մեր ընթացքի մեջ:

Սակայն երբեմն Տերը նշույլներ կտա ապագայից: Եթե ընկալունակ լինեք Իր Հոգու նկատմամբ, Աստված կզգաստացնի ձեր հոգին՝ իմանալու գալիք բաները, որոնք պետք է իմանաք, որպեսզի նախապատրաստվեք և պատրաստ լինեք Նրա հետագա ծրագրերին ձեզ համար:

ՆՇՈՒՅԼՆԵՐ ԱՊԱԳԱՅԻՑ ԻՄԱՍՏՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԻ ՄԻՋՈՑՈՎ

Աստված կարող է հայտնել ապագայի Իր ծրագիրն իմաստության խոսքի միջոցով: Իմաստության խոսքը Սուրբ Հոգու ինը պարզաներից մեկն է՝ նշված Ա Կորնթացիս 12.8–10-ում:

Մենք կարող ենք սահմանել իմաստության խոսքը որպես գերբնական հայտնություն Աստծո Հոգուց Աստծո մտքում և սրտում եղած աստվածային ծրագրի և նպատակի մասին: Իմաստության խոսքը կարող է տարբեր եղանակներով փոխանցվել՝ երազներով, տեսիլքներով և Սուրբ Հոգու լսելի ձայնով:

Իմաստության խոսքը միշտ վերաբերում է ապագային. սա իմաստության խոսքի տարբերակիչ հատկանիշներից է: Այն կարող է տրվել բացահայտելու Աստծո գալիք ծրագրերի մի մասը, ուղղորդելու հավատացյալին կամ հաստատելու նրա աստվածային կոչումը:

Թեև իմաստության խոսքերն ավելի հաճախ և ավելի տպավորիչ ձևով տրվում են մարգարեններին, դրանք կարող են տրվել նաև այլ հավատացյալների, ինչպես Սուրբ Հոգին կամենա: Անկախ նրանից՝ նման պարզև չունեցող մարդը երբևէ կստանա իմաստության խոսք, թե ոչ, բոլոր հավատացյալներն էլ կարող են ակնկալել, որ Սուրբ Հոգին ցուցումներ կտա իրենց գալիք բաների վերաբերյալ, ինչպես գրված է Հովհաննես 16.13-ում:

Թո՛ւյլ տվեք աստվածաշնչյան մի օրինակ բերել, որում Աստված իմաստության խոսք է տվել մարդուն: Աստված Հովսեփին իմաստության խոսք տվեց և հայտնեց, թե ինչ ծրագիր ուներ նրա ապագայի համար: Երբ Հովսեփը դեռ պատանի էր, Աստված նրան ապագայից նշույլ տվեց երկու երազների միջոցով: Հովսեփը երազ տեսավ, որ մի օր դեկավարելու էր իր եղբայրներին և նույնիսկ իր ծնողներին (Ծննդ. 37.5–10):

Հովսեփի եղբայրները նախանձեցին նրան և ստրկության վաճառեցին իսմայելացիներին (Ծննդ. 37.27, 28): Չնայած որ Տերը հաջողություն տվեց Հովսեփին նույնիսկ ստրկության մեջ, նրան կեղծ մեղադրեցին և բանտը նետեցին (Ծննդ. 39.7–20):

Հովսեփը շատ տարիներ անցկացրեց բանտում: Որպես կանոն, մարդիկ կդառնանային այդքան տարի անարդարացիորեն բանտում անցկացնելով: Մեծ մասը կհանձնվեր և կմոռանար, թե ինչ էր Աստված իրենց ասել:

Երբ Աստված ինչ-որ մեկին իմաստության խոսք է տալիս, հաճախ այդ մարդը գաղափար չի ունենում, թե որքան ժամանակ կպահանջվի, որ այդ խոսքն իրականանա, և թե ինչ իրադարձություններ պետք է տեղի ունենան, որ այն կատարվի: Հնարավոր է նաև, որ խոսքն իրականանա ոչ այնպես, ինչպես ինքն էր ակնկալում, այլ լիովին այլ կերպ:

Ահա թե ինչու է կարևոր, որ հավատացյալները իմաստության խոսքի իրագործումը լիովին հանձնեն Տիրոջ ձեռքերի մեջ և պարզապես շարունակեն հավատալ նրան, ինչ Տերն իրենց ասել է:

Հովսեփը հենց այդպես էլ վարվեց: Տարիներ շարունակ նրա իրավիճակն անհույս էր թվում, սակայն նա հավատարիմ էր մնում Աստծուն: Եվ քանի որ Հովսեփը հավատարիմ մնաց Աստծուն, այն իմաստության խոսքը, որ նա ստացել էր, երբ դեռ պատանի էր, վերջապես իրականացավ:

Աստված շատ բարձրացրեց Հովսեփին և դարձրեց նրան այդ ժամանակի մեծագույն ազգի կառավարիչը (Ծննդ. 41.38–41): Ի վերջո Հովսեփը ականատեսը դարձավ Տիրոջից ստացած իր երազների իրագործման, երբ նրա եղբայրները խոնարհվեցին նրա առջև՝ որպես Եգիպտոսում իշխանությամբ երկրորդ մարդու (Ծննդ. 42.6):

Իմ կյանքից էլ կարող եմ օրինակներ բերել, թե ինչպես է Տերն ուղղորդել իմաստության խոսքի միջոցով: Երբեմն իմաստության խոսքն ինձ փոխանցվել է Սուրբ Հոգու ազդեցիկ ձայնով:

Մի քանի անգամ Աստված ինձ Իր Սուրբ Հոգու ձայնով արթնացրել է լուսաբացին և ապագայի վերաբերյալ ինչոր բան ասել, որ կարողանայի պատրաստվել նրան, ինչ սպասվում էր:

Օրինակ՝ 1956 թվականին Կալիֆոռնիայում հավաքություններ էի անցկացնում, երբ մի օր առավոտյան լույսը բացվելուն պես հանկարծ նստեցի անկողնուս մեջ, ասես ինչոր մեկը դիպել էր ինձ: Այդ ժամանակ այնքան պարզ լսեցի Սուրբ Հոգու ձայնը, կարծես Նա կանգնած լիներ ննջասենյակում: Լսեցի հետևյալ խոսքերը. «Ֆինանսական անկում է սպասվում, ոչ թե ճգնաժամ, այլ անկում. նախապատրաստվիր դրան»:

Այդ վերապրումից անցան ամիսներ, սակայն ես ինչպես հարկն է չնախապատրաստվեցի: Եվ քանի որ ականջ չէի դրել Սուրբ Հոգու նախազգուշացմանը, ֆինանսապես տուժեցի: Այդուհանդերձ, հետագայում Աստված օգնեց ինձ դուրս գալու այն ֆինանսական խնդրից, որում հայտնվել էի Իրեն չլսելու պատճառով:

Նման դեպք տեղի ունեցավ նաև 1974 թվականին, սակայն այս անգամ ես հնազանդվեցի անելու այն, ինչ Սուրբ Հոգին ինձ ասաց: «Ռեմա» աստվածաշնչյան ուսումնական կենտրոնի առաջին ուսումնական տարին էր, և մենք Թալսայի «Շերիդան ժողովի» եկեղեցացեանքում էինք:

Մի առավոտ՝ 5:45-ին, անկողնուս մեջ ուղիղ նստեցի, և Տերն ասաց ինձ. «Այս ազգությանը տնտեսական ճգնաժամ է սպասում: Պատրաստվիր դրան: Եթե անես այն, ինչ կասես քեզ, ապա կզգաս այդ ճգնաժամի ազդեցությունը, սակայն ոչ այնպես, ինչպես մյուսները»:

Ես ճշգրտորեն գրի առա այն ցուցումները, որ Տերը տվեց ինձ: Տերն ասաց. «Նախ դադարեցրեք հավելյալ աշխատանքները: Եվ հետո՝ Ես նույնիսկ չէի ասել, որ այդ աշխատանքները սկսեք: Երկրորդ՝ կրճատեք աշխատավարձերը՝ աշխատանքից հեռացնելով որոշակի թվով մարդկանց (և Նա հստակ ասաց, թե քանի մարդու պետք է հեռացնեինք): Երրորդ՝ կրճատեք ծախսերը: Ծառայությանը հատկացրեք ձեր առձեռն եկամտի իննսուն տոկոսը, իսկ տասը տոկոսը խնայեք»:

Ես միանգամից անցա Տիրոջ ցուցումները կատարելուն: Կանչեցի փեսայիս՝ Բադդիին, որ այդ ժամանակ մեր գրասենյակի կառավարիչն էր, և ասացի նրան, որ այդ կեսօրին՝ 14:00-ին, ցանկանում եմ հանդիպել բոլոր աշխատակիցների հետ:

Երբ գնացի հանդիպմանը, վերցրի մի թուղթ, վրան գրե-

ցի այն խոսքերը, որ Տերն ասել էր ինձ: Այնուհետև դիմեցի աշխատակիցներին. «Ընկերներ, հիմա պետք է ասեմ ձեզ այն, ինչ Տերն ինձ ասել է այսօր առավոտյան»: Եվ կարդացի գրածս:

«Ես վարվելու եմ ճիշտ այնպես, ինչպես Տերն է ասել: Ես երբեք չեմ ընկել խնդրի մեջ, երբ լսել եմ նրան: Մինչդեռ ամեն անգամ, երբ *չեմ լսել* Նրան, հայտնվել եմ խնդրի մեջ: Զեմ ուզում տուժել Աստծուն չհնազանդվելու պատճառով»:

Այդպիսով ես հետևեցի Տիրոջ ցուցումներին: Մենք աշխատանքից հեռացրինք այնքան մարդու, որքան Տերն էր ասել: Ինչպես նաև դադարեցրինք այն հավելյալ աշխատանքները, որ Տերն ի սկզբանե չէր էլ ասել, որ սկսեինք: Եվ քանի որ ես հնազանդվեցի Աստծուն, ամեն բան բարեհաջող ընթացավ:

Սկսեցի նաև խնայել ծառայության եկամուտների տասը տոկոսը, ինչպես Տերն էր ուղղորդել: Իսկ հետո՝ 1976-ին, հասկացանք, որ պետք է տարածք գնեինք «Ռեմայի» նոր համալսարանական տարածքի և ծառայության գլխավոր մասնաշենքի համար: Եթե հնազանդված չլինեի Աստծուն և 1974-ից սկսած խնայած չլինեի մեր եկամտի տասը տոկոսը, ապա մենք Բրոքեն Էրրոուի տարածքը գնելու հնարավորություն չէինք ունենա:

Աստված Սուրբ Հոգու ազդեցիկ ձայնով իմաստության խոսք էր տվել մեզ և նախազգուշացրել այն մասին, թե ինչ էր սպասում, իսկ մենք հնազանդվել էինք Նրա ցուցումներին: Տիրոջ տված ցուցումների շնորհիվ այն տնտեսական ճնշումը, որն ամբողջ ազգության վրա եկավ 1975-ին, մեր ծառայության վրա շատ քիչ ազդեցություն ունեցավ:

Մենք տնտեսական այդ ճգնաժամից դուրս եկանք առանց ֆինանսապես տուժելու և կարողացանք իրագործել Աստծո ծրագիրը՝ տեղափոխվելով Բրոքեն Էրրոուի մեր նոր

տարածք: Աստծուն հնազանդությունը միշտ շահավետ է:

Սուրբ Հոգին ուղղորդում է հավատացյալներին դեպի իրենց կյանքերի համար Աստծո ծրագիրը, և այդ նպատակով Նա կարող է նաև իմաստության խոսք տալ նրանց Իր աստվածային կոչման և հանձնարարականի մասին:

Օրինակ՝ մի անգամ ես լսեցի, թե ինչպես Տերը գերբնական ձևով իմաստության խոսք տվեց մի միսիոներ կնոջ՝ հաստատելով նրա կոչումը. դա եղավ լեզուներով աղոթքի և թարգմանության միջոցով: Այդ կինը յոթ տարի ծառայել էր Հնդկաստանում և հուսալքված վերադարձել էր Միացյալ Նահանգներ:

Մի օր այդ միսիոներ կինը խոսում էի միսիայի մասին աստվածաշնչյան մի փոքրիկ դպրոցում: Հանկարծ ուսանողներից մեկը կանգնեց և սկսեց լեզուներով խոսել: Բոլորը սպասում էին թարգմանության, սակայն թարգմանություն չեղավ: Այդուհանդերձ, այդ միսիոներ կինը, որ նստած էր բեմում, սկսեց լաց լինել: Ակնհայտ էր, որ լեզուներով հնչած ուղերձը խորապես հուզել էր նրան:

Ի վերջո նա վեր կացավ և մոտեցավ ամբիոնին: «Կարիք չկա այդ ուղերձը թարգմանելու, քանի որ այն ինձ համար էր,- բացականչեց այդ կինը:- Ուսանողը խոսեց հնդիկների բարբառով, որոնց ես յոթ տարի ծառայել եմ:

Մեր միսիոներների խորհուրդը դեռ չգիտի այդ մասին, սակայն ես ճամփորդում և ելույթ եմ ունենում աշխարհով մեկ, որ գումար հավաքեմ այլ միսիոներների համար, իսկ ինքս մտադրվել էի երբեք չվերադառնալ Հնդկաստան:

Սակայն Աստված հենց նոր խոսեց ինձ հետ և հաստատեց իմ կոչումը լեզուներով հնչած ուղերձի միջոցով: Տերն ասաց. «Ես կանչել եմ քեզ Հնդկաստան: Դու պետք է վերադառնաս և ծառայես այնտեղ»: Այնուհետև այդ միսիոներ կինը պատմեց ուսանողներին, թե Աստված լեզուներով

ուղերձում մասնավորապես ինչ էր ասել Հնդկաստանում իր ապագա ծառայության վերաբերյալ:

Իմաստության խոսքով Աստված գերբնական առաջնորդություն տվեց այդ միսիոներ կնոջը և հաստատեց նրա կոչումը Հնդկաստանում: Իրականում նա ևս երեսունհինգ տարի անցկացրեց այնտեղ՝ հնազանդվելով իր կյանքի համար Աստծո կամքին:

Ես մի քանի օրինակ բերեցի ձեզ համար Խոսքից, իմ կյանքից և ուրիշների կյանքերից՝ ցույց տալու մի շարք եղանակներ, որոնցով Սուրբ Հոգին առաջնորդում է մեզ և հայտնում Իր ծրագիրը մեր կյանքերի համար:

Մտապահեք, որ առաջին եղանակը, որով Տերն առաջնորդում է մեզ, ներքին վկայությունն է: Նա կարող է առաջնորդել նաև այլ՝ առավել տպավորիչ եղանակներով, սակայն մենք չպետք է ձգտենք լսելու ձայներ, տեսնելու երազներ կամ տեսիլքներ: Միակ բանը, որ պետք է անենք, Տիրոջը փնտրելն է՝ ակնկալելով, որ Սուրբ Հոգին կառաջնորդի մեզ, ինչպես Աստվածաշունչն է խոստանում:

Դուք ունեք անձնական պատասխանատվություն՝ սպասելու Տիրոջը՝ մնալով Խոսքի և աղոթքի մեջ, որպեսզի ստանաք Նրա ուղղորդումը ձեր կյանքի համար: Պարզապես վստահեք Սուրբ Հոգուն՝ հավատալով, որ Նա կուղղորդի ձեզ այն ճանապարհով, որով *հնքն* է անհրաժեշտ համարում:

Զգայուն մնացեք Նրա առաջնորդության նկատմամբ և հնազանդվեք Նրա ասածներին, որպեսզի նախապատրաստվեք գալիքին: Եթե պատրաստակամ և հնազանդ մնաք, ապա Նա ձեզ քայլ առ քայլ կտանի ձեր կյանքի համար Աստծո ծրագրերի և նպատակների լեցունության մեջ:



ԱՍՏԾՈՒՆ ՀՆԱԶԱՆԴՎԵԼԸ ՁԵՂՆԻՑ ՉԻ ԽԼՈՒՄ, ԱՅԼ ՏԱԼԻՍ Է ՁԵՂ

Տարիներ առաջ, երբ դաշտային ծառայության մեջ էի, ավտոմեքենայով էի գնում հավաքույթների: Այդպես ավելի հարմար էր, քանի որ կարողանում էի ինձ հետ վերցնել ուսումնական բոլոր գրքերս և երիզներս:

Մի անգամ ես և կինս գնում էինք Միսսուրի, երբ մայրուղու վրա տեսանք մի մեծ գովազդային վահանակ, որի վրա գրված էր. «Այն չի խլում (գումար), այլ տալիս է»: Այդ վահանակի ուղերձը վերաբերում էր գովազդներին: «Սա վերաբերում է նաև հոգևոր իրականությանը: Աստծուն հանձնվելը չի խլում մեզնից, այլ *տալիս է*», - ասացի ես կնոջս:

Որոշ քրիստոնյաներ (Աստված օրհնի նրանց) միշտ խոսում են այն մասին, թե ինչ են *իրենք* ստիպված եղել թողնել, թե ինչ գին են վճարել քրիստոնյա լինելու համար: Ինձ համար նախընտրելի է կեսգիշերին էջի զոռոց լսել թիթեղյա ամբարից, քան նման խոսակցություններ:

Աստծուն հնազանդվելն ու կյանքդ նրան նվիրելը ոչինչ չեն *խլում* քեզնից, այլ *տալիս* են: Իսկ Աստծուն չհնազանդվելը կխլեր. այն կարող էր խլել դուլարներ ու ցենտեր, կարող էր բերել հիվանդություն, տկարություն և վաղաժամ մահ: Այն կարող էր պատճառել վիշտ ու ցավ: Բայց, փանք Աստծուն, այնքան լավ է լինել Աստծո կատարյալ կամքի մեջ, լիովին հանձնվել, նվիրվել ու հնազանդվել Նրան: Աստծուն հնազանդվելն այնքան ավելի լավ է Նրան չհնազանդվելուց:

ԱՆՀՆԱԶԱՆ ԴՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՋԱՏՈՒՄ Է ԼՈՒՅՍԸ

Մարդը կարող է հնազանդ չլինել ինչ-որ առանձնահատուկ բանի, որն Աստված ասել էր նրան: Սա անհնազանդություն է: Սակայն մարդը կարող է նաև չհնազանդվել *Աստվածաշնչին*՝ Աստծո հայտնի կամքին, և սա նույնպես անհնազանդություն է, որ որոշակի գին կարժենա այդ մարդու համար:

Օրինակ՝ հիշում եմ, երբ Աստված սկսեց խոսել ինձ հետ մտահոգության մեղքի մասին: Ես մահվան մահճում էի՝ կաթվածահար, սրտի արատի և արյան անբուժելի հիվանդության պատճառով: Նախ և առաջ պետք է լուծել մտահոգության մեղքի հարցը, որպեսզի կարողանայի հավատքով բժշկություն ընդունել մարմնումս, քանի որ մտահոգությունը և անհանգստությունը խոչընդոտում են հավատքը:

Տասնհինգ տարեկան պատանի էի: Գուցե ասեք, որ երեխան չի կարող մտահոգվել: Բայց դա այդպես չէ. երեխաները *կարող են* մտահոգվել: Երեխաներն իրենց ծնողների արտացոլանքն են. այսպես ասած՝ այն վարվելակերպի արտացոլանքը, որ ծնողներից տեսնում են:

Ես մտահոգվել սկսել եմ շատ վաղ տարիքից: Մայրս և տատիկս մտահոգվելու հարցում *աշխարհի չեմպիոններ* էին, իսկ ես հավանաբար երրորդ տեղն էի զբաղեցնում նրանցից հետո:

Վերստին ծնունդ ստացել եմ մահվան մահճում և Աստծուն խոստացել եմ, որ երբեք կասկածի տակ չեմ առնի որևէ բան, որ կկարդամ Իր Խոսքում: Սակայն երբ սկսեցի կարդալ Խոսքը, մոտ վեց ամիս չէի կարողանում դուրս գալ Մատթեոս 6-րդ գլխից, քանի որ հանդիմանվում էի այնտեղ գրված խոսքերից:

ՄԱՏԹԵՈՍ 6.25, 27, 28, 31

25 Սրա համար ասում եմ ձեզ. «ՀՈԳՍ ՄԻ՛ ԱՐԵՔ ձեր կյանքի համար, թե ինչ պիտի ուտեք և ինչ պիտի խմեք, և ո՛չ ձեր մարմնի համար, թե ինչ պիտի հագնեք: Չէ՞ որ կյանքն ավելի է կերակուրից, և մարմինը՝ հագուստից:

27 Հիմա՛ ձեզնից ո՞վ կարող է ՀՈԳՍ ԱՆԵԼՈՎ իր հասակի վրա մեկ կանգուն ավելացնել:

28 Եվ հագուստի համար ԻՆՉ ԵՔ ՀՈԳՍ ԱՆՈՒՄ. մտիկ արեք դաշտի շուշաններին, թե ինչպես են մեծանում. ո՛չ ջանք են անում և ո՛չ մանում:

31 Ուրեմն ՀՈԳՍ ՄԻ՛ ԱՐԵՔ՝ ասելով, թե ինչ պիտի ուտենք կամ ինչ պիտի խմենք կամ ինչ պիտի հագնենք»:

Ես Տիրոջը խոստացել էի, որ երբևէ կասկածի տակ չեմ առնի Իր Խոսքում գրված որևէ բան: Ասել էի, որ երբ կարդամ Իր Խոսքը և հասկանամ այն, ապա խոստանում եմ կիրառել: Սակայն երբ հասա Մատթեոսի 6-րդ գլխին, հոգևոր առումով լույսն ինձ համար աղոտացավ, քանի որ չէի կիրառում այդ գլխում գրվածը:

Գուցե ասեք. «Ես երբեք Աստծուն չեմ խոստացել, որ կասկածի տակ չեմ առնի Իր Խոսքը և միշտ կկիրառեմ այն, երբ կարդամ ու հասկանամ»:

Սակայն եթե փրկված եք, ապա չպետք է կասկածեք Աստծո Խոսքի վրա: Ոմանք մտածում են, որ եթե Աստծո Խոսքին նվիրվելու և հավատարիմ լինելու որոշում չեն կայացրել, ապա հանգիստ կարող են անհնազանդ լինել: Սակայն եթե դուք Աստծո զավակ եք, Աստված, միննույնն է, հավատք է պահանջելու ձեզնից՝ անկախ այն բանից՝ նվիրվել եք Նրան հավատալուն, թե ոչ:

Մատթեոս 6.25-ում ասվում է. «Հոգս մի՛ արեք ձեր կյանքի համար»: Այն Աստվածաշնչում, որը ես կարդում էի մահվան մահճում, էջի ներքևում գրված մի փոքրիկ ծա-

նորագրություն կար. «Մի՛ անհանգստացիր վաղվա օրվա համար»: Այլ կերպ ասած՝ Հիսուսն Ինքն է ասում. «Մի՛ անհանգստացիր»:

Երբ հասկացա, թե Տերն ինչ աշխատանք էր տանում ինձ հետ, ապշած ասացի. «Տէր, եթե այդպես պետք է ապրեմ, ապա ես երբեք չեմ կարող քրիստոնյա լինել»: Մտածում էի, թե առանց անհանգստանալու և մտահոգվելու չեմ կարող ապրել, ուստի փակեցի Աստվածաշունչս:

Մինչ այդ պահը Աստծո հոսքում գրված ամեն բան ինձ համար պարզ էր՝ լույս և օրհնություն: Սակայն երբ ընտրեցի չքայլել այն հոսքի լույսի մեջ, որը Տերն ինձ ցույց էր տվել, ամեն բան դարձավ մութ, մշուշոտ և անհասկանալի:

Մտածեցի. «Կշարունակեմ կարդալ, պարզապես բաց կթողնեմ Մատթեոսի 6-րդ գլուխը»: Ուստի շարունակեցի կարդալ: Նույնիսկ հակաքրիստոսի մասին խոսքերն ուսունասիրեցի: Ինձ համար հակաքրիստոսի թեման խնդրահարույց չէր. երբ կարդում էի այդ մասին, չէի հանդիմանվում: Իսկ մտահոգվելը խնդիր էր, և իմ խղճմտանքը հարվածում էր ինձ, երբ այդ մասին կարդում էի, քանի որ այդ ոլորտում հոսքը չէի կիրառում:

Մի՛ ակնկալեք, որ Աստված ձեզ ավելի կլուսավորի, եթե չեք քայլում այն լույսի մեջ, որն արդեն ունեք: Այնպես որ մի՛ անհանգստացեք այն ամենի համար, ինչը չեք հասկանում Աստծո հոսքում. պարզապես հետևողականորեն կիրառե՛ք այն, ինչ գիտեք: Մնացած ամեն բան իր տեղը կընկնի:

Ի վերջո Տիրոջն ասացի. «Ների՛ր ինձ մտահոգվելու և անհանգստանալու համար: Գիտեմ, որ ներում ես, քանի որ Ա Հովհաննես 1.9-ում գրված է, որ եթե մեղքս խոստովանեմ Քեզ, Դու հավատարիմ ես՝ ինձ ներելու և իմ անիրավությունից սրբելու: Խոստանում եմ, Տէր, որ մինչև կյանքիս վերջը այլևս երբեք չեմ մտահոգվի»:

Աստված վկա է, որ շատ տարիներ են անցել, և ես դաժանաբար փորձվել եմ, սակայն չեմ մտահոգվել:

Աստծուն և Նրա Խոսքին հնազանդվելու շնորհիվ մենք շահում ենք: Իրականում, եթե չեք քայլում Աստծո *խոսքի* լույսի մեջ, ապա շատ դժվար կլինի քայլել ձեզ համար Աստծո առանձնահատուկ կամքի մեջ և հետևել Նրա ծրագրին ու նպատակին անձամբ ձեր կյանքի համար:

Թանկագին ընկեր, Աստված կատարյալ ծրագիր ունի ձեր կյանքի համար. այդ ծրագիրը ներառում է ձեզ համար Աստծո առանձնահատուկ կամքի, ինչպես նաև Նրա գրված սուրբ Խոսքի լույսի մեջ քայլելը:

ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆԸ ԱՍՏԾՈՒ ԾՐԱԳՐԻ ՄԱՍՆ Է ՁԵՐ ԿՅԱՆՔԻ ՀԱՄԱՐ

Օրինակ՝ Աստծո կատարյալ կամքը ձեզ համար այն է, որ ունենաք աստվածային առողջություն: Եթե նույնիսկ հիվանդանաք, ձեզ համար կա բժշկություն, սակայն Աստծո լավագույնը ձեզ համար առողջ ապրելն է:

Այն, ինչ Աստված ունի մեզ համար Նոր կտակարանում, չի զիջում նրան, ինչ Նա ուներ Իր ժողովրդի համար Հին Կտակարանում: Իրականում Աստվածաշունչն ասում է, որ Քրիստոսում մենք նոր ու ավելի լավ ուխտի մասնակից ենք, որը հիմնված է ավելի լավ խոստումների վրա (Եբր. 8.6):

Հին Կտակարանում Աստված Իսրայելին ասել էր. «Ես քո միջից հիվանդությունը կդարձնեմ» (Ելից 23.25):

ԵԼԻՑ 23.25, 26

25 Եվ ձեր Եհովա Աստծուն պաշտեք, և Նա կօրհնի քո հացը և քո ջուրը, և ԵՍ ՔՈՒ ՄԻՋԻՑ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆԸ ԿԴԱՐՁՆԵՄ:

26 Քո երկրի մեջ վիժող և ամուլ չի լինի, ՔՈՒ ՕՐԵՐԻ ԹԻՎԸ ՊԻՏԻ ԼՃՆԵՄ:

Նկատի՛ առեք, որ Տերն իսրայելացիներին չէր ասել, թե նրանք չէին մահանալու: Նա ասել էր. «Քո օրերի թիվը պիտի *լցնես*»: Դա նշանակում էր, որ նրանք ապրելու և մահանալու էին առանց հիվանդության և տկարության, քանի որ նախորդ Խոսքում Տերն ասել էր. «Քո միջից հիվանդությունը կհեռացնեն»:

Ոմանք, հետևելով իրենց բնական մտածողությանը, գուցե հարցնեն. «Եթե դա այդպես է, և իսրայելացիները կարող էին ապրել առանց հիվանդության և տկարության, ապա ինչի՞ց պիտի մահանային»:

Հին Կտակարանի հայրերը, որոնք քայլում էին ուխտի բարիքների մեջ, չէին հիվանդանում կամ տկարանում: Նրանք պարզապես սպառվում էին: Շատ անգամներ նախ և առաջ կանչում էին իրենց երեխաներին, ձեռնադրում ու օրհնում նրանց և ասում, որ իրենց գնալու ժամանակը եկել է, ինչից հետո ավանդում էին հոգին և գնում դեպի փառք:

Գուցե ասեք. «Այո՛, բայց դա Հին Կտակարանում էր: Այն պատկանում էր բացառապես Իսրայելին և չի պատկանում եկեղեցուն»: Սակայն մենք քիչ առաջ կարդացինք Եբրայեցիս 8.6-րդ խոսքում, որ Քրիստոսում մենք նոր ու ավելի լավ ուխտի մասնակից ենք, որը հիմնված է *ավելի լավ խոստումների* վրա: Որքանո՞վ ավելի լավը կլիներ Նոր Ուխտը Հին Ուխտից, եթե նրանք ունենային հիվանդությունից ու տկարությունից ազատ ապրելու արտոնությունը, իսկ մենք՝ ոչ»:

Մի անգամ ցուցանակ տեսա մի հովվի գրանսենյակում, որի եկեղեցում հավաքույթ էի անցկացնում, որում ասվում էր. «Եղել եմ հարուստ, եղել եմ նաև աղքատ: Հարուստ լինելն ավելի լավ է»: Ես բառերը փոխեցի. «Եղել եմ առողջ, եղել եմ նաև հիվանդ: Առողջ լինելն ավելի լավ է»:

Քանի որ մենք ունենք նոր և ավելի լավ ուխտ, որը հիմն-

ված է ավելի լավ խոստումների վրա, ապա այն պետք է ներառի Հին Ուխտի բարիքները և ավելին, այլապես ավելի լավը չի լինի:

ՀՆԱԶԱՆԴՈՒԹՅՈՒՆԸ ԳԻՆ ՈՒՆԻ

Ուշադրություն դարձրեք, որ բժշկության վերաբերյալ Աստծո խոստումը իսրայելացիներին նախապայման ուներ: Նախապայմանն այն էր, որ երբ նրանք նվիրվում և հնազանդվում էին Աստծուն ու Նրա Խոսքին, Աստված էլ անում էր ուխտի Իր մասը՝ հեռացնում էր հիվանդությունը նրանցից, այնպես, որ երկար կյանք վայելեին այս երկրի վրա:

Ինչպես տեսնում եք, Աստծուն հնազանդվելը չի խլում ձեզնից, այլ *տալիս է*:

Աստված ցանկանում է, որ մենք հնազանդվենք Իր Խոսքին, որն Իր հայտնի կամքն է մարդու համար: Սակայն Նա նաև ցանկանում է, որ հնազանդվենք Իր կամքին և ծրագրին անհատապես մեր կյանքերում: Խոսքս վերաբերում է Աստծո Արքայությունում ծառայության ձեր բաժինը կատարելուն: Եթե հնազանդվեք Աստծուն ձեր կյանքի բոլոր բնագավառներում, ապա դա ձեզնից չի խլի, այլ կտա ձեզ:

Մի անգամ լսեցի, թե ինչպես մի ծառայող ասաց. «Աստվածաշունչ քարոզելն ու սովորեցնելը կամ Աստվածաշնչի շուրջ քննարկումները նման են ժայռ մագլցելուն: Երբ մի կողմից եք բարձրանում, մի տեսարան է, երբ մյուս կողմից եք բարձրանում, բոլորովին այլ տեսարան է բացվում»:

Դա վստահաբար այդպես է: Օրինակ՝ քարոզիչները հաճախ խոսում են Աստծո սիրո մասին, և դա սուրբգրային է: Փանոք Աստծուն, որ Նա սեր է: Աստվածաշունչն ասում է, որ Աստված սեր է (Ա Հովհ. 4.8): Սակայն գիտե՞իք արդյոք, որ նույն Աստվածաշունչը նաև ասում է, որ Աստված մաշող կրակ է (Երկր. Օր. 4.24, Եբր. 12.29): Գիտե՞իք արդյոք, որ Աստվա-

ծաշունչն ասում է, որ դատաստանը սկսվելու է Աստծո տնից, և եթե արդարներն են հազիվ փրկվելու, ապա ինչ կլինի ամբարիշտների և մեղավորների հետ (Ա Պետր. 4.17, 18):

Շատերը չեն ցանկանում լսել դատավոր Աստծո մասին. նախընտրում են լսել այն, որ Աստված սեր է, և իրենք կարող են անել, ինչ ցանկանան՝ հայիոյել, ծխել, հարբել, շնանալ, իսկ Աստված աչք կփակի այդ ամենի վրա: Այն մարդիկ, որոնք այսպես են մտածում, նվազագույնը Աստծուն նվիրված չեն: Նրանք նվիրված են իրենց մարմիններին, աշխարհին ու սատանային:

Իհարկե, Աստված սեր է: Աստվածաշունչն ասում է. *«Որովհետև Աստված այնպես սիրեց աշխարհը, որ Իր Միածին Որդուն տվեց, որ ամեն Նրան հավատացողը չկորչի, այլ հավիտենական կյանքն ունենա»* (Հովհ. 3.16): Աստված մեզ նվիրեց Իր Որդուն, սակայն ինչ ենք մենք արել այդ նվերի հետ: Աստծուն և Նրա Խոսքը մերժելը մարդու վրա դատաստան է բերում: Մարդիկ իրենք իրենց վրա դատաստան են բերում, երբ համառորեն անհնազանդ են լինում Աստծուն և Նրա Խոսքին:

Ոմանք մտածում են, թե կարող են անել, ինչ ցանկանան, և ապրել այնպես, ինչպես ցանկանան, իսկ Աստված կշարունակի սիրել նրանց: Փառք Աստծուն, որ Նա այդպես էլ անում է, սակայն միևնույնն է, անօրինության համար կա պատիժ:

Եթե հեռացել եք Աստծուց, ապա ապաշխարե՛ք և վերադարձե՛ք Նրա մոտ. Աստված ձեզ այնքան է սիրում, որ կընդունի, կմաքրի և կուղղի ձեզ, եթե թույլ տաք: Սակայն եթե համառեք ձեր անօրինության և անհնազանդության մեջ, ստիպված կլինեք վճարել դրա համար:

Շատ անգամներ մարդկանց հետ վատ բաներ են պատահում, և նրանք հարցնում են. «Արդյոք Աստված սա

արեց»։ Ո՛չ, հաճախ մարդիկ դուռ են բացում սատանայի համար իրենց իսկ անհնազանդությամբ։

Մխալ մի՛ հասկացեք ինձ։ Միայն այն, որ դուք փորձությունների միջով եք անցնում, չի նշանակում որ անհնազանդության մեջ եք։ Սատանան կփորձի հարձակվել ձեզ վրա, նույնիսկ երբ Աստծո կատարյալ կամքի կենտրոնում եք։ Նա կփորձի տեսնել, թե որքանով եք ամուր հոգևորապես, և թե արդյոք իսկապես հավատում եք Աստծո Խոսքին, այնպես, ինչպես ասում եք։ Սակայն եթե դուք Աստծո Խոսքի վրա ամուր կանգնած մնաք, ապա կգա վարձատրության օրը, քանի որ Աստծուն հնազանդվելը, Նրան ու Նրա Խոսքին հավատարիմ լինելը չի խլում ձեզնից, այլ *տալիս է* ձեզ։

Աստծուն ծառայելը վարձք ունի։ Տիրոջը հանձնվելը վարձք ունի։ Ձեր կյանքը, ամենը, ինչ կաք, ինչ ունեք և ինչ ցանկանում եք լինել, Աստծուն նվիրելը վարձք ունի։

ԱՍՏՎԱԾ ՎԱՐՁԱՏՐՈՒՄ Է ՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅՈՒՆԸ

Ներկա պահին կարող է թվալ, թե թանկ ենք վճարում Տիրոջը հանձնվելու և թույլ տալու համար, որ Նա Իր ճանապարհը հաստատի մեր կյանքում, քանի որ մեր մասն անելն ու Աստծուն հնազանդվելը որոշակի գին ունի, սակայն, փանոք Աստծուն, վերջին հաշվով, Աստծուն հնազանդվելու վարձքը մեծ է և բարի։

Թո՛ղյլ տվեք մի պատկերավոր օրինակ բերել Աստվածաշնչից՝ ցույց տալու, որ եթե անգամ Աստծո ծրագիրն այս պահին ամենադժուրինը չէ, ի վերջո միշտ վարձք կա Աստծուն հնազանդվելու համար։ Ծննդոց 37-50-րդ գլուխներում կարդում ենք Հովսեփի պատմությունը և տեսնում այն գինը, որը նա ստիպված եղավ վճարել Աստծուն հնազանդվելու համար։

Գիտեք, թե ինչ խնդիրներ ունեւ Հոլսեփիը: Աստված նրան երազներ էր տվել և դրանց միջոցով հայտնել էր ծրագիրը նրա կյանքի համար: Հոլսեփի եղբայրները նախանձելով ցանկացել էին սպանել նրան, բայց եղբայրներից մեկը միջամտել էր, և սպանելու փոխարեն Հոլսեփին վաճառել էին ստրկության: Այնուհետև եղբայրներն իրենց հորը՝ Հակոբին, ասել էին, թե վայրի գազանը հոշոտել է իրենց եղբորը:

Հոլսեփը որպես ստրուկ տարվել էր Եգիպտոս, բազմաթիվ հալածանքներից և դժվարություններից հետո յոթ տարի անցկացրել բանտում մի հանցանքի համար, որը չէր գործել: Այնուհետև մեկնել էր փարավոնի հացթուփի և մատռվակի երազները: Մատռվակին ասել էր, որ նրա երազը նշանակում էր՝ իր պաշտոնը վերականգնելու են, իսկ հացթուփին՝ որ իրեն գլխատելու են:

Հոլսեփը խնդրել էր մատռվակին հիշել իրեն, երբ նրան վերադարձնեին իր պաշտոնին, բայց մատռվակը մոռացել էր Հոլսեփի մասին: Այդ պահին Հոլսեփն արդեն հինգ տարի էր, ինչ բանտում էր, որից հետո ևս երկու տարի փակված մնաց այնտեղ, մինչ վերջնականապես ազատ կարձակվեր:

Երբ Հոլսեփը գիտակցեց, որ մատռվակը մոռացել էր իր մասին, նա կարող էր հանձնվել ու այլևս չհավատալ այն երազին, որն Աստված իրեն տվել էր, բայց փոխարենը նա ընտրեց հավատարիմ մնալը: Շատերը Հոլսեփի փոխարեն կասեին. «Ես հնազանդվեցի Աստծուն, բարություն արեցի մատռվակին, իսկ ի՞նչ ստացա փոխարենը. *մոռացություն*: Աստծուն ծառայելու համար վարձք չկա»:

Սակայն Հոլսեփը հավատարիմ մնաց, իսկ հետո, երբ մեկնեց փարավոնի երազը, նրան բարձրացրին և դարձրին Եգիպտոսի կառավարիչը:

Հոլսեփի հնազանդությունը վարձք ունեւ, բայց համոզ-

ված եմ, որ եղել են պահեր, երբ իր կյանքի համար Աստծո կամքի մեջ քայլելու գինը չափից բարձր է թվացել:

Երբ Իսրայելում երաշտ և սով էր, Հովսեփի հայրը՝ Հակոբը, որդիներին ուղարկեց Եգիպտոս՝ հաց գնելու: Սակայն նա չուղարկեց ամենակրտսեր որդուն՝ Բենիամինին: Հովսեփն ու Բենիամինը նրա ամենակրտսեր որդիներն էին. նրանց լույս աշխարհ էր բերել Ռաքելը: Հակոբն արդեն կորցրել էր Հովսեփին և չէր ցանկանում կորցնել Բենիամինին:

Հովսեփը ճանաչեց իր եղբայրներին, երբ նրանք եկան հացահատիկ գնելու, բայց նրանք չճանաչեցին Հովսեփին: Սկզբում Հովսեփը մեղադրեց իր եղբայրներին՝ լրտեսներ լինելու համար, և նրանց հետ կոպտորեն խոսեց. նա իր հորն ու եղբորը՝ Բենիամինին, նորից տեսնելու ծրագիր էր մշակում:

ԾՆՆԴՈՑ 42.12–15, 19, 20, 24

12 Եվ նա [Հովսեփը] ասաց նրանց. «Ո՛հ, այլ եկել եք երկրի բացությունը տեսնելու»:

13 Եվ նրանք ասացին. «Մենք՝ տասներկու ծառաներդ, քանանի երկրում մեկ մարդու որդիներ ենք՝ եղբայրներ: Եվ ահա կրտսերը այսօր մեր հոր մոտ է, և մեկը չկա»:

14 Եվ Հովսեփն ասաց նրանց. «Սա է, որ ձեզ հետ խոսեցի՝ ասելով, թե դուք լրտեսներ եք»:

15 Սրանով պետք է փորձվեք. փարավոնի կյանքը վկա է, որ դուք այս տեղից չեք դուրս գա, եթե ձեր կրտսեր եղբայրը այստեղ չգա...

19 Եթե դուք ուղիղ եք, ձեր եղբայրներից մեկը ձեր բանտարկված տան մեջ արգելվի: Եվ դուք գնացեք, ձեր տան սովածության համար պաշար տարեք:

20 Եվ ձեր կրտսեր եղբորն ինձ մոտ բերեք, որ ձեր խոսքերը ճշմարտանան, և չեք մեռնի...»:

24 ...Եվ [Հովսեփը] նրանցից Շմավոնին առավ և նրանց աչքի առաջ կապեց նրան:

Եղբայրները վերադարձան տուն՝ իրենց հոր՝ Հակոբի մոտ հացահատիկի որոշակի պաշարով և պատմեցին նրան ամենը, ինչ տեղի էր ունեցել: Երբ ասացին, որ Եգիպտոսի վարչապետը ձերբակալել է Շմավոնին և պահանջում էր տեսնել Բենիամինին, որ ավելացներ հացահատիկի պաշարը, Հակոբը վիստվեց. «*Ինձ անորդի թողեցիք. Հովսեփը չկա, Շմավոնը չկա, Բենիամինն էլ եք առնում. ՄՐԱՆՑ ԱՄԵՆԸ ԻՆՁ ՎՐԱ ԵԿԱՎ*» (Ծննդ. 42.36):

Հակոբը կարծում էր, թե հանգամանքներն իր դեմ էին, մինչդեռ Աստված դրանք հոգուտ նրան էր ծառայեցնում: Հակոբը պետք է Բենիամինին կորցնելու վտանգն ընդուներ, որպեսզի իր ընտանիքը դիմակայեր երաշտին. թվում էր, թե նա հսկայական գին պետք է վճարեր: Սակայն Հակոբը զիջեց, և Աստված ամեն բան բարուն գործակից արեց նրա համար, և Բենիամինին Եգիպտոս ուղարկելու նրա որոշումը վարձք ունեցավ:

Աստծուն և Նրա Խոսքին հնազանդվելը և ձեր կյանքում Նրա առաջնորդությանը հնազանդվելը միշտ վարձք են ունենում: Իսկ անհնազանդությունն ինչ-որ բան խլում է:

ԶՊԵՏՔ Է ՀՆԱԶԱՆ ԴՈՒԹՅՈՒՆ ՍՈՎՈՐԵԼ ԴԺՎԱՐ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ

Ես գիտեմ մի կրթված հարանվանական քարոզչի պատմություն, որը մեծ հաջողություն և հռչակ էր վայելում որպես ճանապարհորդող քարոզիչ մինչ Առաջին համաշխարհային պատերազմը: Նա հրատարակել էր մի քանի գիրք և որպես խոսնակ՝ պահանջված էր ամբողջ աշխարհում: Ապրում էր հարավային Կալիֆոռնիայում գտնվող մի մեծ առանձնատանը և մի քանի հազար դոլար արժողության գրադարան ուներ: Վարում էր ամենալավ ավտոմեքենաները և բանկերում ուներ մեծ խնայողական հաշիվներ:

Մի օր այդ ծառայողը հայտնվել էր Կալիֆոռնիայում անցկացվող խարիզմատիկ աղոթքի հավաքույթներից մեկին, որտեղ էլ ծանոթացել էր Սուրբ Հոգով մկրտությանը վերաբերող ճշմարտությանն ու ասել. «Ես հասկացա, որ Աստված կամենում է՝ լցվեմ Սուրբ Հոգով և որպես դրա ապացույցը ընդունեմ այլ լեզուներով խոսելու պարզևր:

Մի երեկո՝ այդ աղոթքի հավաքույթներից մեկի ժամանակ, սպասում էի Տիրոջը, երբ Սուրբ Հոգին իջավ ինձ վրա, և ես սկսեցի թոթովել ու խոսել այլ լեզուներով:

Հետո սկսեցի խորհել այն մասին, ինչ տեղի էր ունենում: Մտածեցի, թե ինչ կարծիք ունեւր իմ հարանվանությունը խարիզմատների կամ լեզուներով խոսողների մասին. նրանք կարծում էին, թե լեզուներով խոսողներն աղանդավոր են:

Մտածեցի, թե ինչպես դա կանդրադառնար իմ դիրքի վրա եկեղեցում, իմ եկամուտի վրա: Մինչ ես զբաղված էի այդ մտքերով, օծությունը թռչնի նման հեռացավ ինձնից: Ես գիտեի, որ Աստված կամենում էր, որ լցվեի Սուրբ Հոգով, սակայն ասացի. «Դրա համար չափազանց մեծ գին կպահանջվի ինձնից, ես կկորցնեմ հեղինակությունս, և ինձ այլևս չեն ընդունի հարանվանությունում:

Երբ օծությունը հեռացավ ինձնից, արագ դուրս եկա ժողովասրահից, այնպես, որ ոչ ոք չտեսներ»:

Հաջորդ հավաքույթի ժամանակ՝ մինչ ամիսը կբոլորեր, այդ ծառայողը խիստ հիվանդացավ և դրան հաջորդող երկու տարիների ընթացքում իր ամբողջ ունեցվածքը ծախսեց բժիշկների և հիվանդանոցների վրա՝ փորձելով առողջանալ:

Նրա վիճակն ավելի ու ավելի էր վատանում, բայց բժիշկները չէին գտնում պատճառը: Ի վերջո նա հայտնվեց բարեգործական հիվանդանոցում, որտեղ մահանում էր, քանի

որ արդեն չէր կարողանում մարել հիվանդանոցի ծախսերը: Նա կորցրել էր իր ամբողջ հարստությունը և մնացել էր բարեգործության հույսին:

Գուցե հարցնեք. «Կարծում եք՝ Աստված հիվանդություն բերեց նրա վրա»: Ո՛չ և հազար անգամ ո՛չ: Աստված չարեց դա, սակայն երբ մարդն անհնազանդ է լինում Աստծուն և Նրա Խոսքին, հայտնվում է սատանայի տարածքում, որտեղ վերջինս կարող է հարձակումներ գործել:

Այդ ծառայողը խնդրեց եղբորը գնացքով տեղափոխել իրեն տուն, որ կարողանա վերջին օրերն անցկացնել Տեխասում՝ իր մոր ագարակում: Եղբայրը ստիպված էր պարտքով գումար վերցնել ուրիշից գնացքի տոմսի համար, որ ուղարկի իր եղբորը Տեխաս՝ մահանալու:

Բժիշկներն ասում էին, որ նա կմահանար անգամ մինչև Տեխաս հասնելը, սակայն չմահացավ: Գնացքի կայարանում սպասում էր շտապօգնության մեքենան, որ փոխարդեր նրան իր մոր ագարակ:

Նա այնքան ուրախ էր՝ տեսնելու մորը, որն արդեն ութսունն անց էր: Մոր փոխարեն մեկ ուրիշն էր հողը հերկում, իսկ առօրյա գործերում նրան օգնում էր մի տասնիննամյա տղա, որն ապրում էր ագարակում: Այդ տղան դարձավ այդ ծառայողի բուժեղբայրը, քանի որ նա այնքան էր թուլացել, որ չէր կարողանում անկողնու մեջ մի կողմից մյուս կողմը շրջվել:

Մի օր այդ տասնիննամյա տղան ասաց ծառայողին. «Վերապատվելի՛, ինչո՞ւ թույլ չեք տալիս, որ Տերը բժշկի ձեզ»:

«Ի՞նչ նկատի ունես՝ ասելով «բժշկի» ինձ», - հարցրեց ծառայողը:

«Աստվածաշունչն ասում է, որ «Եթե ձեզնից մեկը հիվանդ է, թող եկեղեցու երեցներին կանչի, որ նրա վրա աղոթք

անեն, նրան յուղով օծեն Տիրոջ անունով, և հավապքով աղոթքը կփրկի այն հիվանդին, և Տերը վեր կկացնի նրան, և եթե մեղք գործած լինի, կթողվի նրան» (Հակ. 5.14, 15):

Այս աշխարհահոռչակ ծառայողը, որը համալսարան ու ճեմարան էր ավարտել, հարցրեց. «Աստվածաշնչում իսկապէս նման բան կա գրված: Տո՛ր ինձ իմ Աստվածաշունչը և գտի՛ր այդ խոսքն ինձ համար»:

«Ես կարդալ չգիտեմ», - պատասխանում է տղան:

«Այդ դեպքում որտեղի՞ց գիտես, որ Աստվածաշնչում նման բան կա գրված»:

«Ես լսել եմ, թե ինչպես է այդ մասին քարոզում իմ հովիվը»:

«Քո հովիվը քարոզել է այդ խոսքի հիման վրա՛: Իսկ նա օծում և աղոթում է մարդկանց համար, որ բժշկվեն»:

«Այո՛»:

«Այդ դեպքում տա՛ր ինձ նրա մոտ», - ասում է ծառայողը:

Մի քանի մարդ մահճակալ են պատրաստում այդ ծառայողի համար, դնում նրան մի հին T-մոդելի ֆորդի ետնամասում ու տանում բացօթյա հավաքույթի, որտեղ քարոզում էր այդ տղայի հովիվը (դրսում չորս փայտ կար դրված, որոնց վրա թփերով ծածկված լարեր էին անցկացված՝ արևից պաշտպանվելու համար. ահա այդտեղ էր անցկացվում հավաքույթը):

Ծառայողը պատմում է. «Ես լսեցի այդ հովիվի քարոզը, որից հետո նա մոտեցավ մեքենային, յուղով օծեց և աղոթեց ինձ համար: Երբ աղոթքն ավարտեց, ես ասացի. «Վերջապէս: Փա՛նք Աստծուն, ես բժշկված եմ»:

Արդեն կեսգիշեր էր, երբ նրանք տուն հասան հավաքույթից հետո: Ծառայողին բարձրացրին տուն, և նա ասաց մորը. «Մայրիկ, ինձ համար թխվածքաբլիթներ պատրաստիր

այն համեղ սոուսով և խոզապուխտով. ուտել եմ ուզում»:

Մայրը պատասխանեց. «Որդի՛ն, վերջին երկու տարիների ընթացքում ոչ մի պինդ կերակուր չես կերել: Չես կարող այդքան ծանր բան ուտել»:

«Ո՛հ, կարող եմ: Աստված բժշկել է ինձ»:

«Իսկ ինչպե՞ս ես քեզ զգում», - հարցրեց մայրը:

«Աստվածաշունչն ասում է, որ լավ եմ: Համաձայն Խոսքի՝ բժշկված եմ»:

Այդ պահից ի վեր այդ ծառայողը լիովին բժշկվեց: Նրա ուժերը վերականգնվեցին, և նա սկսեց իր բժշկության մասին հոդվածներ գրել տարբեր թերթերի համար: Հետո նրան սկսեցին հրավիրել հավաքույթներ անցկացնելու:

Մի անգամ, մինչ նա կգնար մի համաքաղաքային հավաքույթի քարոզելու, այն տասնիննամյա տղան, որն օգնում էր նրան, ասաց. «Վերապատվելի՛, մինչև կգնաք, պետք է թույլ տաք, որ Աստված մկրտի ձեզ Սուրբ Հոգով»:

Հիշելով, թե ինչ էր տեղի ունեցել երկու տարի առաջ, երբ փախել էր Աստծուց և չէր ցանկացել գին վճարել, նա ասաց տղային. «Այո՛, ճիշտ ես: Չեմ գնա որևէ տեղ ծառայելու, մինչև Աստված չմկրտի ինձ Սուրբ Հոգով»: Եվ, փա՛նք Աստծուն, նա մկրտվեց Սուրբ Հոգով և խոսեց օտար լեզուներով:

Նա դարձավ Ամբողջական Ավետարանի՝ միջազգայնորեն հայտնի քարոզիչ: Երբ ենթարկվեց Աստծուն և Նրա Խոսքին, Աստված վերականգնեց նրա կորցրածը: Ինքս չեմ լսել նրա քարոզները, սակայն կարդացել եմ նրա գրածները, և դրանք սքանչելի են:

Մարդիկ, որոնք ճանաչում էին նրան, պատմել են ինձ, որ երբ եկավ Տիրոջ մոտ գնալու նրա ժամանակը, նա պարզապես նստեց ու սկսեց երգել «Swing Low, Sweet Chariot» երգն ու գնաց տուն: Փա՛նք Աստծուն:

Աստծո ճանապարհը միշտ ամենալավն է: Դա օրինության, պաշտպանության և հաղթանակի ճանապարհ է նույնիսկ կյանքի ամենամեծ դժվարություններում ու փորձություններում: Աստծուն և Նրա Խոսքին հնազանդվելը չի խլում ձեզնից, այլ *տալիս է* ձեզ: Աստծո Խոսքին և ձեր կյանքի համար Նրա ծրագրին հետևելով՝ դուք մեծ շահաբաժին կունենաք:

ԱՍՏՈՒ ԽՈՍՔՆ ԱՍՏՈՒ ԿԱՄՔՆ Է

Ինչպես արդեն ասել եմ, որոշ քրիստոնյաներ այնքան են տարվում Աստծուց առանձնահատուկ առաջնորդություն ստանալու գաղափարով, որ մոռանում են, որ պետք է լինեն *խոսքը* կատարողներ: Օրինակ՝ Աստվածաշունչը շատ բան է ասում ներման մասին, սակայն, չգիտես ինչու, շատ հավատացյալներ չեն ներում այնպես, ինչպես Աստվածաշունչն է սովորեցնում:

Ներման թեման երկակի կիրառություն ունի: Այլ կերպ ասած՝ պետք է ներեք ուրիշներին, երբ նրանք ձեր հանդեպ սխալ են վարվում, բայց պետք է նաև ներեք ինքներդ ձեզ, երբ ձեր կյանքի որևէ բնագավառում սխալ եք թույլ տալիս: Եթե այսպես վարվել չսովորեք, ապա Աստծո հետ քայլելու և Նրա համար ապրելու հարցում «կաղ ու հաշմանդամ» կլինեք ձեր ամբողջ կյանքի ընթացքում:

Առաջին Հովհաննես 1.9-ում ասվում է. «*Ապա թե մեր մեղքերը խոստովանենք, Նա հավատարիմ է և արդար, որ մեր մեղքերը թողնի մեզ և սրբի մեզ ամեն անհրավությունից*»: Եթե ապաշխարել եք և խոստովանել ձեր մեղքն Աստծուն, ապա, ինչպես Աստվածաշունչն է ասում, Նա հավատարիմ է և արդար, որ ների և մաքրի ձեզ ամեն անհրավությունից: Եվ Աստված չի հիշի, որ երբևէ ինչ-որ սխալ բան եք արել (Ես. 43.25):

ԵՐՐԱՅԵՑԻՍ 8.12

12 Որովհետև նրանց անօրինությունները ներող կլինեմ, և ՆՐԱՆՑ ՄԵՂՔԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԱՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՅԼԵՎՍ ՉԵՄ ՀԻՇԻ:

Եթե Աստված չի հիշում ձեր մեղքերը, ապա ինչո՞ւ դուք պետք է հիշեք դրանք: Անպատեհ կլինի Աստծուն ձեր մեղքերի մասին հիշեցնելը, երբ Նա մոռացել է դրանք:

ԵՍԱՅԻԱ 43.25, 26

25 Ես ես եմ, որ ջնջում եմ քո հանցանքներն Իմ պատճառով և քո մեղքերը չեմ հիշում:

26 ՀԻՇԵՑՐՈՒ ԻՆՁ, միասին դատվենք. դու պատմի՛ր, որ արդարանաս:

Ուշադրություն դարձրեք 26-րդ խոսքին՝ «*Հիշեցրու ինձ*»: Այլ կերպ ասած՝ հիշեցրու Աստծուն այն, ինչ Նա ասել է Իր Խոսքում: Վստահաբար պետք է հիշեցնել Աստծուն, քանի որ Նա է ասում, որ այդպես անենք: Սակայն պետք է հիշեցնեք նաև *ինքներդ ձեզ*: Եթե ինքներդ ձեզ չհիշեցնեք Աստծո Խոսքը մեղքերի ներման մասին, ապա կարող եք ընկնել սատանայի մեղադրանքների թակարդը, որոնցով նա կփորձի հիշեցնել ձեզ անցյալը և պահել ձախողման ու պարտության կապանքի մեջ:

ՄՈՌԱՅԵՔ ԱՆՑՅԱԼԸ. ԱՍՏՎԱԾ ՑԱՆԿԱՆՈՒՄ Է, ՈՐ ՀԱԶՈՂՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆԱՔ

Այն բանից հետո, երբ կխոստովանեք ձեր մեղքն Աստծուն և ներում կստանաք, սատանան անպայման կբերի ձեզ ձեր անցյալից պատկերներ: Պետք է պարզապես հիշել, որ դա ընդամենը պատկեր է, քանի որ ձեր մեղքն այլևս գոյություն չունի այն բանից հետո, երբ դուք խոստովանել եք դա Աստծուն: Աստվածաշունչն ասում է. «*Ես ես եմ, որ*

ՋՆՋՈՒՄ ԵՄ քո հանցանքներն ԻՄ ՊԱՏՃԱՌՈՎ և քո մեղքերը չեմ հիշում» (Ես. 43.25):

Ուշադրություն դարձրեք «Իմ պատճառով» արտահայտությանը: Աստված չի ասել, որ *ձեր պատճառով* կջնջի ձեր հանցանքները և չի հիշի ձեր անօրինությունները: Միայն մի՛ հասկացեք ինձ, *դուք* է, որ օգուտ եք քաղելու Աստծո ներումից, սակայն Նա ասել է . «Ջնջում եմ քո հանցանքները և քո մեղքերը չեմ հիշում *Իմ պատճառով*»: Նա չի հիշի ձեր մեղքերը Իր պատճառով, որպեսզի կարողանա օրհնել, օգնել և ցույց տալ ձեզ Իր մեծ սերն ու ողորմությունը:

ՓԻԼԻՊԵՑԻՍ 3.13, 14

13 Եղբայրներ, ես իմ անձը չեմ համարում, որ հասած լինեմ, բայց մեկ բան կա, ԵՏԵՎԻ ԲԱՆԵՐԸ ՄՈՌԱՆԱԼՈՎ՝ դեպի առաջի լինողներն եմ նկրտում:

14 Հետևում եմ դեպի նպատակը՝ Աստծո վերին կոչումի մրցանակին Քրիստոս Հիսուսում:

Պողոս առաքյալն այս խոսքերը գրել է Փիլիպիայի եկեղեցուն: Նա խոսում է իր մասին, սակայն սա վերաբերում է յուրաքանչյուր հավատացյալի:

Աստծո հետ ձեր ընթացքի, ծառայության կամ Աստծո տված ցանկացած կոչման մեջ առավելագույն ներուժին հասնելու համար հավատացյալը պետք է մոռանա իր անցյալը, հատկապես անցյալի սխալները:

Ուշադրություն դարձրեք նաև մեկ այլ բանի, որ Պողոսն ինքն իր մասին ասում է Տիմոթեոսին գրելիս:

Ա ՏԻՄՈԹԵՈՍ 1.12-16

12 Եվ շնորհակալ եմ ինձ մեր Տեր Հիսուս Քրիստոսում գորացնողից, որ ինձ հավատարիմ համարեց և սպասավորության մեջ դրեց,

13 որ առաջուց հայիոյիչ և հալածող և թշնամանող էի, բայց

ողորմություն գտա, որովհետև չգիտենալով էի գործում անհավատությունով:

14 Բայց էլ ավելի շատ եղավ մեր Տիրոջ շնորհքը հավատքով և սիրով, որ Քրիստոս Հիսուսում է:

15 Ճշմարիտ է այս խոսքը և ամեն ընդունելության արժանի, որ Քրիստոս Հիսուսն աշխարհ եկավ մեղավորներին փրկելու, որոնց առաջինը ես եմ:

16 Սակայն նրա համար ողորմություն գտա, որ Հիսուս Քրիստոսն առաջ ինձանում ցույց տա ամբողջ երկայնամտությունը՝ օրինակ լինելու նրանց, որ պիտի հավատան Նրան հավիտենական կյանքի համար:

Իսկ հիմա եկեք կարդանք, թե ինչ է Ղուկասը գրում Պողոսի կամ Տարսուսի Սողոսի մասին Գործ առաքելոց գրքում:

ԳՈՐԾՔ 7.57

57 Եվ քաղաքից դուրս հանելով նրան [Ստեփաննոսին] քարկոծում էին, և վկաներն իրենց հանդերձները դնում էին մի երիտասարդի ոտքերի մոտ, որ Սողոս էր կոչվում:

ԳՈՐԾՔ 7.59

59 Եվ Սողոսը կամակից էր նրա սպանվելուն:

ԳՈՐԾՔ 9.1, 2

1 Բայց Սողոսը, դեռ սպառնալիք և մահ շնչելով Տիրոջ աշակերտների վրա, քահանայապետի մոտ եկավ:

2 Եվ նրանից թղթեր խնդրեց Դամասկոս՝ ժողովարանների վրա, որ եթե մեկին գտնի այն ճանապարհին հետևող՝ մարդիկ կամ կանայք, նրանց կապած բերի Երուսաղեմ:

Փառք Աստծուն, որ Աստծո ողորմությունը հասավ Պողոսին, և Պողոսը վերստին ծնվեց ու նոր արարած դարձավ Քրիստոսում: Բ Կորնթացիս 5.17-ում ասվում է. *«Ուրեմն եթե մեկը Քրիստոսում է, նոր ստեղծված է. ՀՆԵՐՆ ԱՆՅԱՆ, ահա ամեն բան նոր եղավ»:*

Հենց դրա մասին է Պողոսը խոսում Փիլիպեցիս 3.13-ում.

«ԵՏԵՎԻ ԲԱՆԵՐԸ ՄՈՌԱՆԱԼՈՎ՝ դեպի առաջի լինողներն եմ նկրտում»: Վերստին ծննդի շնորհիվ Պողոսն այլևս անցյալ չուներ: Աստծո աչքում Պողոսն արդեն կատարելապես արդար էր՝ այնպես, կարծես իր կյանքում մեղքը երբևիցե տեղ չէր ունեցել»:

Սակայն Պողոսն ինքը ևս պետք է սովորեր մոռանալ: Ի վերջո սարսափելի էր այն կործանարար գործը, որ նա արել էր եկեղեցու նկատմամբ մինչև փրկվելը: Սուրբ Գրքից գիտենք, որ նա կամակից էր Ստեփանոսի մահվանը և սպառնացել էր Հիսուս Քրիստոսի մյուս աշակերտներին ևս:

Եթե Պողոսը չսովորեր մոռանալ, գուցե երբեք էլ ի կատար չածեր Աստծո կոչումը և չաներ այն ծառայությունը, որում Աստված կանչել էր նրան: Մենք ևս պետք է սովորենք մոռանալ, այլապես չենք կարողանա հաջողությամբ հետևել մեր կյանքերի համար Աստծո ծրագրին:

ՆԵՐՇՔ ԻՆՔՆԵՐԴ ՁԵՋ

Ինքներդ ձեզ ներելու դժկամությունը նույնքան սխալ է, որքան ուրիշներին ներելու դժկամությունը: Ուրիշների և ինքներդ ձեր անցյալ սխալները ներելու և մոռանալու հարցում թերանալը կարող է խոչընդոտել, որ Աստծուց ստանաք, հոգևորապես աճեք և լինեք այն անձնավորությունը, ինչպիսին Աստված է կամենում, որ լինեք:

Մի անգամ տարիներ առաջ Տեխասում անցկացվող մի հավաքույթից հետո, երբ դուրս էի գալիս շենքից, մի կին մոտեցավ ինձ և ասաց. «Եղբայր Հեգին, ուզում եմ՝ աղոթեք ինձ համար»:

«Ինչի՞ համար», - հարցրի ես:

«Պարտադիր է, որ ասեմ», - պատասխանեց նա:

«Իհարկե՞. չեմ աղոթի, եթե չասեք, քանի որ չեմ կարողա-

նա Ձեզ հետ հավատքով միաբանվել, եթե չգիտեմ, թե ինչի համար եմ հավատում»:

«Այդ դեպքում կասեմ,- ասաց նա,- բայց չծիծաղեք վրաս»:

«Ո՛հ, Ձեզ վրա չեմ ծիծաղի, բայց Ձեզ հետ գուցե ծիծաղեմ»:

«Ես մոտ ութ տարի առաջ վերստին ծնվել և լցվել եմ Սուրբ Հոգով: Ամուսինս դեռ փրկված չէ: Մինչ փրկությունս տաքարյուն էի, բռնկվող, հանկարծակի կարող էի զայրույթի պոռթկումներ ունենալ:

Որոշ ժամանակ առաջ ամուսինս, որ պարկեշտ ու լավ մարդ է, տուն մտավ՝ հարբած ձևանալով: Ես բարկացա նրա վրա, կորցրի ինքնատիրապետումս և սկսեցի բղավել, ինչից հետո նա բացականչեց, որ հարբած չէ, պարզապես կատակ է անում, մտածել է, թե ծիծաղելի կլինի, եթե տուն գա և հարբած ձևանա:

Դա ինձ էլ ավելի բարկացրեց, գոռացի, բղավեցի, իսկ հետո գնացի մեր ննջասենյակ և շրխկոցով փակեցի դուռը»,- պատմեց այդ կինը:

«Երբ մի փոքր հանգստացա, այնպես էի ամաչում ասածս բառերի համար: Ծնկի իջա և գրեթե ամբողջ գիշեր աղոթեցի՝ խնդրելով, որ Աստված ների ինձ:

Հաջորդ առավոտյան նախաճաշի սեղանի շուրջը ամուսնուս ասացի. «Սիրելիս, խնդրում եմ ների՞ր ինձ: Ես գրեթե ամբողջ գիշեր աղոթել եմ և գիտեմ, որ Աստված Իր Խոսքում ասում է, որ կների ինձ, բայց քեզնից ևս ուզում եմ ներողություն խնդրել»:

Ամուսինս ասաց. «Եթե կա մեկը, ով պետք է ներողություն խնդրի, դա ես եմ: Ես պետք է *քեզ* խնդրեմ, որ ներես *ինձ*, այդ ամենն իմ ձեռնարկածն ու իմ մեղավորությունն էր և ոչ թե քոնը»:

Մենք որոշեցինք կիսել տեղի ունեցածի պատասխանատվությունը և ներել միմյանց»,- ասաց այդ կինը:

Ես պատասխանեցի. «Սակայն դուք ինձ ոչինչ չխնդրեցիք, պարզապես պատմեցիք տեղի ունեցածի մասին: Ինչի համար եք ուզում, որ աղոթեմ»:

«Ցանկանում եմ՝ աղոթեք, որ Աստված թույլ տա ինձ զգալ, որ ներել է ինձ»:

Ես չդիմացա ու սկսեցի ծիծաղել. «Քույրիկ, գիտե՞ք, թե հենց նոր ինձ ինչ ասացիք: Ասացիք, որ ավելի մեծ վստահություն ու հավատք ունեք ձեր չփրկված ամուսնու հանդեպ, քան Աստծո: Դուք խնդրել եք, որ ձեր ամուսինը ների ձեզ, և նա ներել է: Այդքանը ձեզ համար բավական էր: Սակայն չեք հենվում Աստծո Խոսքի վրա: Աստված ասում է. *«Ապա թե մեր մեղքերը խոստովանենք, Նա հավատարիմ է և արդար, որ մեր մեղքերը թողնի մեզ և սրբի մեզ ամեն անիրավությունից»* (Ա Հովհ. 1.9):

Երբ Ձեր ամուսինն ասաց, որ ներում է Ձեզ, Դուք ծնկի չեկաք և չասացիք Տիրոջը. «Թո՛ղյլ տուր ինձ զգալ, որ ամուսինս ներել է ինձ»: Ո՛չ, պարզապես ընդունեցիք Ձեր ամուսնու ներումը: Պարզվում է, որ Դուք ավելի մեծ վստահություն ունեք Ձեր չփրկված ամուսնու հանդեպ, քան Աստծո Խոսքի»:

«Հիմա հասկանում եմ,- ասաց նա:- Սխալ էր Ձեզ խնդրելը, որ աղոթեիք, որպեսզի Աստված թույլ տար ինձ զգալ, որ ներել է ինձ: Պարզապես մոռացե՞ք, որ խնդրել եմ Ձեզ աղոթել»:

Երբ նա շրջվեց, որ հեռանա, ես կանչեցի նրան. «Վերադարձե՞ք այստեղ. գիտե՞ք, թե որն է ձեր խնդիրը»:

«Իսկ Դուք գիտե՞ք»,- հարցրեց նա:

«Իհարկե՞, գիտեմ»:

«Այդ դեպքում ասացե՞ք»:

Ես ասացի. «Դուք պատրաստակամ չեք ներելու ինքներդ ձեզ՝ ինքնատիրապետումը կորցնելու համար: Աստված Ձեզ ներել է, Ձեր ամուսինը Ձեզ ներել է, բայց Դուք ինքներդ Ձեզ չեք ներել: Ներե՞ք Ձեզ ինքնատիրապետումը կորցնե-

լու համար և դադարե՞ք ինքներդ ձեզ մեղադրելուց: Կարճ ժամանակ անց Ձեզ լավ կզգաք և այլևս ստիպված չեք լինի աղոթել, որ Աստված ձեզ ինչ-որ զգացողություն տա»:

Մոտ երկու-երեք օր անց այդ կինը նորից եկավ հավաքույթներին մասնակցելու, և կարիք էլ չկար, որ հարցնեի, թե արդյոք ներել էր ինքն իրեն: Նրա դեմքը շողում էր: Այնպիսի տպավորություն էր, ասես մթության մեջ նեոնային լույս վառվեր: Նա անընդհատ ժպտում էր, քանի որ սովորել էր *ինքն իրեն ներել*»:

Շատ քրիստոնյաներ պատրաստակամ չեն իրենք իրենց ներելու անցյալ սխալների համար՝ Աստծուն ու Նրա կամքին անհնազանդ գտնվելու համար: Որոշ քրիստոնյաներ նույնիսկ փորձում են իրենք իրենց պատժել՝ թողնելով այն երազանքը, որն Աստված էր դրել իրենց սրտում: Ես հաճախ ասում եմ՝ կարևոր չէ, թե ինչ սխալ ես գործել անցյալում, կարևոր է, թե դրանից *հետո* ինչ ես արել Աստծո հետ միասին:

Հիշե՛ք, թե ինչ էր ասում Պողոս առաքյալը. «*Հեղևում եմ դեպի նպատակը՝ Աստծո վերին կոչումի մրցանակին Քրիստոս Հիսուսում*»: Սակայն դուք չեք կարող հետևել դեպի նպատակը, եթե չանեք առաջին քայլը. «*Ետևի բաները ՄՈՌԱՆԱԼՈՎ*» (Փիլիպ. 3.13)

Նշանակություն չունի, թե անցյալում Աստծուն ինչպիսի անհնազանդություն եք ցուցաբերել, Աստված ցանկանում է, որ այսօր հնազանդ լինեք Իր Խոսքին և ձեր կյանքի համար Իր ծրագրին: Երբ հանձնվեք Աստծո՝ գրի առնված սուրբ Խոսքին և Նրա ծրագրին ու նպատակին ձեր կյանքի համար, ապա շահաբաժին կունենաք: Ի վերջո Աստծուն հնազանդվելը ձեզնից ոչինչ չի խլի, փոխարենը միշտ կտա ձեզ:



ՍԻՐՈ ՃԱՆԱՊԱՐՀԸ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՃԱՆԱՊԱՐՀՆ Է

Սերը երբեք չի ձախողվում:

– Ա Կորնթացիս 13.8 (NIV)

Յանկանհում եք հաջողությամբ հետևել ձեր կյանքի համար Աստծո ծրագրին և կատարել Աստծո կամքը երկրի վրա: Եթե ցանկանում եք գնալ մի ճանապարհով, որը վստահաբար կտանի ձեզ դեպի հաջողություն և հաղթանակ, ապա քայլեք սիրո՝ Աստծո սիրո ճանապարհով:

Սիրո մասին խոսելիս Պողոս առաքյալն ասել է. *«Եվ ես էլ ավելի գերազանց ճանապարհ ցույց փամ ձեզ»* (Ա Կորնթ. 12.31): Սերն է լավագույն ճանապարհը՝ նույն այդ ավելի գերազանց ճանապարհը, քանի որ Աստված սեր է, իսկ սերը երբեք չի ձախողվում:

Սերը մարդու սրտից է գալիս: Այն մարդու վերստեղծված հոգու պտուղն է: Հետևաբար այն կարող է աճել: Ինչպե՞ս կարող է մարդն աճել ու զարգանալ Աստծո սիրո մեջ:

Աստվածաշունչն ասում է. *«Աստծո սերը փռված է մեր սրտերի մեջ Սուրբ Հոգու ձեռով, որ փրվեց մեզ»* (Հռոմ. 5.5): Եթե վերստին ծնված ենք, ապա Աստծո սերն արդեն մեր սրտերում է, սակայն մենք սիրո մեջ աճում ենք՝ այն խոստովանելով և դրա համաձայն գործելով:

Մի անգամ մեր երկրի արևմտյան հատվածում ես և կինս հավաքույթ էինք անցկացնում, որի ընթացքում հանդիպե-

ցինք մի երիտասարդ զույգի, նրանց նախկինում արդեն հանդիպել էի ծառայողական համաժողովներից մեկի ժամանակ: Թե՛ անուսինը և թե՛ կինը ձեռնադրված ծառայողներ էին:

Իմ քարոզից հետո այդ զույգը հրավիրեց մեզ իրենց հետ ճաշելու: Ռեստորանում երիտասարդ ծառայողի կինն ասաց ինձ. «Եղբայր Հեգին, Դուք ինձ շփոթեցրիք»:

«Ո՛հ,- պատասխանեցի ես,- ես ձեզ չեմ շփոթեցրել: Դուք արդեն իսկ շփոթված էիք մինչև իմ գալը: Աստծո Խոսքի լույսը պարզապես երևան հանեց դա: Սակայն ի՞նչ է պատահել»:

«Այսօր Ձեր ուղերձում Դուք մեջբերեցիք Ա Հովհաննես 3.15-րդ խոսքը.

«Ամեն ով որ իր եղբորն ատում է, մարդասպան է, և գիտեք, որ ամեն մարդասպան հավիտենական կյանք չունի հասարակված իրենում»,- ասաց նա:

«Այո, ճիշտ է. ասել եմ նման բան: Ընդունում եմ մեղքս»,- պատասխանեցի ես:

Շատ անգամներ, երբ ծառայում ես, Սուրբ Հոգին ասել է տալիս բաներ, որոնք չէիր պլանավորել: Դրանք գալիս են հոգուցդ՝ Սուրբ Հոգու ներշնչմամբ: Օրինակ՝ երբ հարանվանության առջև մեջբերեցի Ա Հովհաննես 3.15-րդ խոսքերը, ասացի. «Աստվածաշնչում գրված է՝ «ով եղբորն ատում է, մարդասպան է», սակայն այս խոսքը վերաբերում է նաև սկեսուրներին ատելուն»:

«Ես ատում եմ իմ սկեսուրին»,- շարունակեց նա:

Ես գիտեի, որ այդ կինն իրականում չէր ատում իր սկեսուրին: Նա թույլ էր տվել, որ իր մարդկային տրամաբանությունն ու բնությունը ղեկավարեին իրեն՝ Աստծո սիրուն տեղ տալու փոխարեն: Մարդկային բնությամբ առաջնորդվելը միշտ խնդիրների մեջ է գցում:

Ես ասացի նրան. «Եթե ատում ես սկեսուրիդ, ապա մարդասպան ես, և քեզանում հաստատված չէ հավիտենական կյանքը: Եթե Աստծո կյանքը քո մեջ լիներ, ապա Աստծո բնությունը ևս քո մեջ կլիներ, իսկ Աստծո բնությունը սերն է: Այնպես որ քո մեջ կլիներ Աստծո սերը»:

«Ինչ պետք է անեմ», - հարցրեց նա հուսահատված:

Ասացի. «Քույրիկ, նայե՛ք աչքերիս մեջ և ասացե՛ք՝ «Ես ատում եմ իմ սկեսուրին», ու տեսե՛ք, թե ինչ տեղի կունենա հոգումդ՝ սրտումդ»:

Եվ նա ասաց. «Ես ատում եմ իմ սկեսուրին»:

«Երբ ասացիք այդ խոսքերը, ինչ տեղի ունեցավ Ձեր հոգում»:

«Ինչ-որ բան կարծես ճանկոեր ինձ», - ասաց նա:

«Իհարկե,- պատասխանեցի ես:- Դա Աստծո սերն է, որ փորձում է զսպել Ձեզ: Այն փորձում է գրավել Ձեր ուշադրությունը, սակայն զիջելու փոխարեն Դուք թույլ եք տալիս, որ Ձեր միտքն առաջ անցնի, և մարդկային բնությունը դեկավարի Ձեզ»:

«Իսկ ինչ կարող եմ անել», - ասաց այդ կինն՝ արդեն իսկապես հուսալքված:

«Պահե՛ք Ձեզ այնպես, ասես սիրում եք Ձեր սկեսուրին, որովհետև իրականում սիրում եք»:

Մեր կյանքի մեծ մասը մարդկային բնությամբ առաջնորդվելով՝ շատ հաճախ մոռանում ենք, որ հոգևոր էակներ ենք: Մենք ֆիզիկական էակներ չենք և ոչ էլ շնչավոր: Մենք հոգի ենք, ով *ունի* շունչ և ապրում է մարմնի *մեջ*:

Եթե ինքներդ ձեզ ընկալեք որպես հոգևոր էակ, դա կօգնի ձեզ ավելի գիտակից կերպով մոտենալու հոգևոր բաներին, և Աստծուն վերաբերող բաներն ավելի իրական կդառնան ձեզ համար, որովհետև իրականում դուք հո-

գի եք (Ա Թես. 5.23): Իրականում, օգտակար կլինի նաև բարձրաձայն ասելը. «Ես հոգի եմ, ունեմ շունչ և ապրում եմ մարմնի մեջ»:

Աստվածաշունչն ասում է. «Աստծո սերը փռված է մեր սրտերի մեջ Սուրբ Հոգու ձեռով, որ տրվեց մեզ» (Հռոմ. 5.5): Աստծո սերը սփռված է մեր սրտի կամ հոգու մեջ, այն սփռված չէ մեր շնչի կամ մարմնի մեջ:

ՍԻՐՈ ՃԱՆԱՊԱՐՀԸ ԵՎ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆԸ

Իմ անցկացրած վերջին ծառայությունից հետո այդ կինն ինձ և կնոջս հրավիրեց իրենց տուն՝ հյուրասիրության: Հրավիրել էր նաև իր սկեսուրին:

Այդ երեկո, երբ նրանց տանն էինք, նա ինձ մի կողմ տարավ և ասաց. «Դուք ճիշտ էիք. ես չեմ ասում իմ սկեսուրին: Ամուսնուս ընտանիքի անդամները հրաշալի մարդիկ են. քրիստոնյա են և սիրում են Աստծուն: Հասկացա, որ Աստծո սերը միշտ իմ մեջ էր, ես պարզապես թույլ չէի տալիս, որ այն ղեկավարեր ինձ»:

Այդ երիտասարդ զույգը երեք երեխա ուներ: Ամենակրտսերը երեք-չորս տարեկան աղջնակ էր:

Կյանքի առաջին երկու տարիներին կատարյալ առողջ էր, սակայն հետո էպիլեպտիկ նոպաներ էր ունենում: Ծնողները երեխային տարել էին աշխարհի առաջատար մասնագետների մոտ: Եվ ոլորտում ամենալավ բժիշկներից մեկը աղջնակին հետազոտելուց հետո ծնողներին ասել էր, որ դա երեսունութ տարվա իր բժշկական պրակտիկայում հանդիպած ամենաբարդ դեպքն է:

Աղջնակը պետք է դեղորայք ընդուներ, սակայն անգամ դեղորայքը չէր դադարեցնում նոպաները, պարզապես մեղմացնում էր դրանց ուժգնությունը: Ծնողները ջանում էին բժշկությունն ստանալ իրենց դստեր համար:

Մի երեկո պատրաստվում էինք եկեղեցի գնալու, երբ այդ կինը զանգահարեց և խնդրեց գնալ իրենց տուն և աղոթել աղջնակի համար, որի հերթական նոպան էր սկսվում այդ պահին:

Մենք սովորաբար չենք այցելում բոլորին, ովքեր նման խնդրանքով դիմում են, քանի որ եթե այցելում ես մեկին, ապա պետք է այցելես բոլորին. այդպես բացի մարդկանց համար աղոթելուց ուրիշ որևէ բանի համար ժամանակ չէինք ունենա: Սակայն երբ Աստված է ասում, որ գնանք, հնազանդվում ենք Նրան ու գնում: Այդ երեկո Տերն ասաց մեզ, որ եկեղեցի գնալու ճանապարհին կանգ առնենք և այցելենք այդ ընտանիքին:

Երբ մեքենայով գնում էինք նրանց տուն, Տերը խոսեց ինձ հետ այնպես, կարծես ավտոմեքենայի ետնամասում նստած ինչ-որ մեկի ձայնը լսեի: Դա լսելի ձայն չէր, քանի որ կինս չլսեց այն:

Տերն ասաց ինձ. «Չաղոթես երեխայի համար, չօժեն նրան յուզով և ձեռք չդնես նրա վրա:

Երբ տեղ հասնեք, նրա մորը հաղորդիր հետևյալ խոսքերը. «Հին Ուխտում ես Իմ ժողովրդին ասել էի, որ եթե Իմ կանոններով շարժվեին և Իմ պատվիրանները պահեին, ապա ես նրանցից կհեռացնեի հիվանդությունը և կլրացնեի նրանց օրերի թիվը»»:

Նոր Կտակարանում պատվիրանը հնչում է Հիսուսի շուրթերից Հովհաննես 13.34-ում հետևյալ խոսքերով. «Նոր պատվիրան եմ տալիս ձեզ, որ իրար սիրեք. ինչպես ես ձեզ սիրեցի, որ դուք էլ իրար սիրեք»:

Տերը շարունակեց. «Հետո ասա՛ նրան, որ երբ նա քայլի Իմ սիրո պատվիրանի համաձայն, ես կհեռացնեմ հիվանդությունը նրա միջից և կլրացնեմ նրա օրերի թիվը: Ասա՛,

որ նա սատանային ասի. «Սատանա՛, ես քայլում եմ սիրո մեջ: Ձեռքերդ քաշի՛ր իմ երեխայից»»:

Երբ տեղ հասանք, ես արեցի այն, ինչ Տերը հրամայել էր: Հազիվ էի վերջացրել խոսքս, երբ մայրը շրջվեց դեպի երեխան ու ասաց. «Սատանա՛, ես քայլում եմ սիրո մեջ: Ձեռքերդ քաշի՛ր իմ երեխայից»»:

Ես և կինս վկա ենք, թե ինչպես վայրկենապես դադարեց երեխայի նոպան: Այն դադարեց այդ նույն պահին՝ ճիշտ այն վայրկյանին, երբ մայրն արտաբերեց այդ խոսքերը:

Հինգ տարի անց, երբ աղջնակը ութ տարեկան էր, նա շարունակում էր վայելել իր առողջությունը: Գեղեցիկ էր, ուրախ և կյանքով լի. այն օրվանից նոպաներ չէր ունեցել: Մայրն ասաց, որ հինգ տարվա մեջ երկու անգամ չնչին նախանշաններ են եղել միայն: Ես հարցրի, թե ինչ են արել այդ ժամանակ:

«Ասացի. «Օ՛, ո՛չ, չհամարձակվե՛ն, սատանա. ես սիրո մեջ եմ քայլում»», - պատասխանեց նա:

Գուցե ինչ-որ մեկն ասի. «Այո՛, դա գործեց նրա պարագայում, սակայն ես սիրո մեջ չեմ քայլում»: Նա ևս չէր քայլում, սակայն ապաշխարեց և վերադարձավ սիրո ճանապարհին:

Եթե դուրս եք եկել սիրո ճանապարհից, ապա որքան հնարավոր է շուտ վերադարձե՛ք այնտեղ: Սիրուց դուրս ամեն քայլ մեղք է: Սիրուց դուրս ամեն քայլ սխալ ուղղությամբ է տանում: Սիրով վարվելու հարցում թերանալը կխանգարի ձեզ հետևելու Աստծո ծրագրին ձեր կյանքի համար:

Ես բժշկվել եմ ավելի քան հիսունհինգ տարի առաջ Տեխաս նահանգի Մքթիննի քաղաքում, երբ մկրտական պատանի էի ու կարդում էի տատիկիս մեթոդիստական Աստվածաշունչը: Ես ոտքի եմ կանգնել մահվան մահճից՝ բժշկվելով առողջության երկու լուրջ խնդրից: Մարմինս

գրեթե ամբողջությամբ կաթվածահար էր, քանի որ ունեի սրտի արատ և արյան անբուժելի հիվանդություն:

Դոկտոր Ռոբասոնը՝ իմ դեպքը հետազոտող հինգերորդ բժիշկը, ասել էր. «Որդի՛ս, անկեղծ կլինեմ քեզ հետ: Եթե նույնիսկ սրտի արատ չունենայիր և կաթվածահար եղած չլինեիր, միայն արյան հիվանդությունը քեզ համար մահացու կլիներ»:

Բժշկությունս ստանալուց հետո բոլոր այս տարիների ընթացքում շարունակել եմ ուսումնասիրել Աստծո Խոսքը հավատքի և բժշկության մասին: Եվ, իհարկե՛, չես կարող ուսումնասիրել հավատքի և բժշկության թեման՝ առանց սիրո թեման ուսումնասիրելու, քանի որ Աստվածաշունչն ասում է, որ հավատքը գործում է սիրով: Վարժեցրել եմ ինձ նրանում, որ որևէ մեկի նկատմամբ թշնամանքի կամ չարակամության նշույլ անգամ չթողնեմ սրտումս:

Ես կարող եմ հինգ-յոթ տարի շարունակ որևէ ֆիզիկական անհարմարություն չզգալ, նույնիսկ այն աստիճան, որ մոռանամ, որ մարմին ունեմ: Հիվանդության հարձակումներ եղել են միայն այն ժամանակ, երբ ես անխոհեմ եմ եղել, մարմնիս մասին հոգ չեմ տարել և սիրո մեջ չեմ քայլել:

Մարմինը, միևնույնն է, մահկանացու է, և պետք է հոգ տանել նրա մասին: Եթե հոգ չտանեք, ապա տեղ կտաք հիվանդությանը: Օրինակ՝ եղել են դեպքեր, երբ կինս ասել է. «Սիրելի՛ս, վերցրո՛ւ բաճկոնդ: Դու միշտ շոգում ես քարոզելիս, իսկ ցրտին դուրս գալը, երբ մարմինդ տաքացած է, լավ չէ»:

Միշտ չէ, որ լսել եմ նրան, և հենց այդպես էլ արել եմ՝ եռանդուն քարոզից հետո դուրս եմ եկել ցուրտ եղանակին, ինչի հետևանքով կոկորդի ցավ եմ ունեցել: Դրանից հետո պետք է ապաշխարելի հիմարությանս համար, որ բժշկվեի: Սակայն ավելի քան հիսունհինգ տարի է՝ առողջության որևէ լուրջ խնդիր չեմ ունեցել՝ բացի այն դեպքերից, երբ չեմ լսել Աստծուն և դուրս եմ եկել սիրո ճանապարհից:

ՍԻՐՈ՛Վ ՎԱՐՎԵՔ ԱՍՏԾՈՒ ՀԱՆԴԵՊ

Իհարկե, հասկանում եք, որ սիրո ճանապարհից դուրս գալու մեկից ավելի եղանակներ կան: Մենք ոչ միայն իրար հանդեպ պետք է սիրով վարվենք, այլև Աստծուն պետք է սիրենք: Դա նշանակում է, որ Նրան պետք է առաջին տեղում դնենք:

Անհնազանդ լինելու դեպքում Աստծո հանդեպ սիրով չեք վարվում: Աստվածաշունչն ասում է. «Սիրիր քո Տեր Աստծուն քո բոլոր սրտով, քո բոլոր անձով և քո բոլոր մարմնով» (Մատթ. 22.37): Եղել են դեպքեր, երբ ես դուրս եմ եկել սիրո ճանապարհից՝ անհնազանդ լինելով իմ կյանքի համար Աստծո ծրագրին: Եթե Աստծո հանդեպ սիրով չեք վարվում և հնազանդ չեք Նրան, ապա չեք հետևում Աստծո ծրագրին ձեր կյանքի համար:

Սակայն ամեն անգամ, երբ անհնազանդ էի լինում, որքան հնարավոր է արագ հետ էի վազում դեպի սերը: Այն պահին, երբ վերադառնում էի սիրո մեջ, վայրկենապես լավ էի զգում:

Սակայն ես էլ, ինչպես և դուք, պետք է ապաշխարեի, եթե անհնազանդ էի եղել Աստծուն և Նրա Խոսքին ու դուրս եկել սիրո ճանապարհից: Մարդը գիտի, թե երբ է անհնազանդության մեջ: Եվ եթե դուք անհնազանդության մեջ եք, ապա մի՛ հապաղեք ապաշխարելու: Արագ ապաշխարեք և վերադարձե՛ք սիրուն: Սիրո ճանապարհը ամենալավ ճանապարհն է, քանի որ սիրո ճանապարհն Աստծո ճանապարհն է:

Գիտեմ, որ հնարավոր է ապրել աստվածային առողջությամբ: Ես ավելի քան հիսունհինգ տարի ապրել եմ աստվածային առողջությամբ. դա Աստծո կամքն է Իր զավակների համար:

«Իսկ ինչպե՞ս եք անում դա», - գուցե հարցնեք: Ես քայլում եմ սիրո մեջ: Սա ասելով՝ չեմ պարծենում ինքս ինձնով, այլ

պարծենում եմ Հիսուսով: Պարծենում եմ Խոսքով: Եվ ցանկանում եմ, որ դուք էլ ունենաք աստվածային առողջություն, եթե դեռ չունեք: Աստված աչառ չէ. Նա իմ հանդեպ առավել բարեհաճ տրամադրված չէ, քան ձեր հանդեպ: Աստված բարեհաճ է ցանկացած մեկի հանդեպ, ով նվիրված է Իր Խոսքին:

Հիսուսն ասաց. *«Եթե Ինձ սիրում եք, Իմ պատվիրանները պահեք»* (Հովհ. 14.15): Եթե նվիրված եք Աստծո Խոսքին հավատալուն և այն կատարելուն, ապա սիրով կվարվեք Աստծո և մարդկանց նկատմամբ: Այդպիսով կկատարեք Օրենքը:

ՀՈՍՄԵԱՑԻՍ 13.8

8 Ոչ մեկին ոչինչ պարտական չմնաք՝ բացի իրար սիրելուց, որովհետև ընկերոջը սիրողը օրենքը կատարել է:

Շատերն այս խոսքը կտրում են համատեքստից և փորձում հաղորդել դրան այն իմաստը, թե իբր չի կարելի վարկով որևէ բան ձեռք բերել: Սակայն դա այն չէ, ինչ այս խոսքում ասվում է: Երբ ինչ-որ բան վարկով վերցնում եք, ապա պարտք չեք մինչև վճարման օրը, իսկ երբ վճարում եք, նորից ոչինչ պարտք չեք: Պարտք եք մնում այն ժամանակ, երբ չեք անում ձեր վճարումները:

Եթե ուշադիր ուսումնասիրեք այս խոսքը, ապա կհասկանաք, որ այն իրականում նշանակում է, որ դուք ուրիշներին սեր եք պարտք, և այդ պարտքը երբեք չի մարվելու. պետք է շարունակ սիրեք մարդկանց:

ՍԵՐԸ ԿԱՏԱՐՈՒՄ Է ՕՐԵՆՔԸ

Ուշադրությո՜ւն դարձրեք խոսքի վերջին հատվածին. *«...որովհետև ընկերոջը սիրողը օրենքը կատարել է»*: Այլ կերպ ասած՝ եթե քայլում եք սիրո մեջ, ապա քայլում եք ձեր

կյանքի համար Աստծո կամքի մեջ, և ձեզ համար հեշտ կլինի հետևել այն ծրագրին և նպատակին, որ Նա ունի ձեզ համար:

Մտածե՛ք սրա մասին. եթե Հին Ուխտում Աստծո ժողովուրդը կատարեր Օրենքը, ապա հիվանդությունը կհեռացվեր նրանցից, և կլրացվեր նրանց օրերի թիվը երկրի վրա: Իսկ Նոր Ուխտում Օրենքը կատարողը նա է, ով սիրով է վարվում:

Եվ եթե Նոր Ուխտում ես կարողանամ կատարել Օրենքը, ապա պետք է ստանամ նույն արդյունքը, ինչ Հին Ուխտում՝ բժշկություն և աստվածային առողջություն: Եթե նույն արդյունքը չստանամ, կստացվի, որ Աստված անարդար է:

ՀՈՈՄԵԱՑԻՍ 13.9, 10

9 Որովհետև այն մի՛ շնացիրը, մի՛ սպանիրը, մի՛ գողացիրը, սուտ մի՛ վկայիրը և մի՛ ցանկացիրը և ուրիշ ինչ պատվիրան էլ որ կա, այս խոսքում է բովանդակվում՝ քո ընկերոջը սիրի՛ր քո անձի պես:

10 ՍԵՐՆ ԻՐ ԸՆԿԵՐՈՋԸ ՉԱՐ ՉԻ ԱՆԻ. ՈՒՐԵՄՆ ՕՐԵՆՔԻ ԼՐՈՒՄԸ ՍԵՐՆ Է:

Հին Ուխտում կային Տասը պատվիրանները: Նոր Ուխտում կա մեկ պատվիրան: Մի անգամ մեկը հարցրեց ինձ. «Նկատի ունե՞ք, որ կարող ենք չպահել Տասը պատվիրանները»: Իհարկե դա նկատի չունեմ: Եթե սիրով եք վարվում, ապա չեք խախտի այդ պատվիրաններից *ոչ մեկը*: Հենց դա է Պողոսն ասում Հռոմեացիս 13-րդ գլխում:

Եթե սիրով եք վարվում ձեր ընկերոջ հանդեպ, ապա չեք սպանի նրան: Եթե սիրում եք նրան, ապա նրա մասին սուտ բան չեք ասի: Իրականում, Աստվածաշնչում գրված է, որ «սերը ամեն հանցանքները կծածկի» (Առ. 10.12): Երբ տեսնում եք, որ ինչ-որ մեկը սխալ բան է անում, չպետք է գնաք և ուրիշներին պատմեք այդ մասին, որպեսզի այդ մարդուն

ամոթահար չանեք: Ո՛չ, այլ պետք է աղոթեք նրա համար և օգնեք նրան, քանի որ սերը ծածկում է մեղքերի շատությունը:

Եթե սիրով վարվեք, ապա չեք խախտի պատվիրաններից ոչ մեկը, որոնք տրված էին մեղքը սանձելու համար: Այնպես որ սիրելը միակ պատվիրանն է, որի մասին պետք է մտածեք: Սերը Օրենքի լրումն է:

Ահա թե ինչու ասացի, որ երբ սխալվում ու դուրս եմ գալիս սիրո ճանապարհից, ապա որքան հնարավոր է արագ հետ եմ վազում դեպի սերը, որովհետև եթե սիրով վարվեմ, ապա Օրենքը կատարած կլինեմ: Իսկ Աստված հետևյալն է ասել նրանց, ովքեր կատարում են Օրենքը. «Հիվանդությունը կդարձնեմ ձեր միջից և կլրացնեմ ձեր օրերի թիվը»:

Այնպես որ սիրով վարվելը այն հարցն է, որին ես միշտ կրկնակի զգույշ եմ մոտեցել: Ինչպես արդեն ասել եմ, երբեք թույլ չեմ տվել, որ սրտումս տեղ գտնի նվազագույն թշնամանք, չարակամություն կամ ինչ-որ սխալ զգացմունք որևէ մեկի նկատմամբ: Թույլ չեմ տալիս, որ որևէ մեկի նկատմամբ որևէ բացասական զգացմունք թույլ անգամ կպչի ինձ: Ես ցանկանում եմ հետևել Աստծո կատարյալ ծրագրին իմ կյանքի համար և վերապրել Նրա լավագույն օրհնությունները: Իսկ դա անել չեմ կարողանա, եթե սիրո մեջ չքայլեմ:

Մի անգամ մի ավետարանիչ իմ եկեղեցում հավաքույթ էր անցկացնում, և առանց կասկածի նշույլի կարող եմ ասել, որ իմ հանդեպ սխալ վարվեց: Չեմ ասի, թե ինչ արեց, որովհետև դա կառուցողական չի լինի:

Եվ սատանան հետևյալ միտքը բերեց. «Եթե քո փոխաբեն լինեի, այլևս նվիրատվություն չէի տա նրան»:

Երբ ամեն երեկո հավաքույթներ էինք ունենում, երեք-չաբթի, ուրբաթ և կիրակի երեկոների նվիրատվություններ

րը տալիս էինք հյուր ավետարանչին կամ քարոզչին: Մյուս օրերի նվիրատվություններով հոգում էինք հավաքույթի մյուս ծախսերը:

Երբ սատանան նման միտք բերեց (գիտեմ, որ դա սատանան էր, քանի որ դրանում չկար սեր, ուստի հաստատ Աստված չէր հեղինակը), ես ասացի. «Պարո՛ն սատանա, միայն նրա համար, որ դու նման միտք բերեցիր, ես նրան եմ տալու բոլոր երեկոների նվիրատվությունները»:

Աստվածաշունչն ասում է. *«ՍԻՐԵՔ ձեր թշնամիներին, ՕՐՀՆԵՔ ձեզ անիծողներին, ԲԱՐԻ ԱՐԵՔ ձեզ ապողներին և ԱՂՈՐԹՔ ԱՐԵՔ ձեզ չարչարողների և հալածողների համար»* (Մատթ. 5.44): Մեկ այլ խոսքում գրված է, որ մենք պետք է չարին բարիով հատուցենք (Ա Թես. 5.15):

Այնպես որ ես ամեն երեկո այդ ավետարանչի համար նվիրատվություն էի հավաքում, չնայած որ նա իմ հանդեպ սխալ էր վարվել: Իսկ սատանային ասացի. «Եթե մի խոսք էլ ասես նրա մասին, ամեն երեկո երկու նվիրատվություն կհավաքեմ նրա համար»: Եվ սատանան այլևս ոչ մի խոսք չասաց: Նա չի ցանկանում, որ *որևէ* քարոզիչ մեկ երեկոյի ընթացքում երկու նվիրատվություն ստանա: *Մեկ* նվիրատվությունն էլ բավական է, որ նա կատաղի:

Այն ժամանակ իմ եկեղեցին ավելի փոքր էր, քան մյուս եկեղեցիները, որտեղ այդ ավետարանիչը քարոզում էր: Ես նրան հարցրի, թե միջինում որքան նվիրատվություն է ստանում մեկ հավաքույթում քարոզելիս, և տվեցի նրան դրա եռակին, որի մեկ երրորդն իմ գրպանից դրեցի: Ահա սա է սիրով վարվելը, և սա այն է, ինչ Աստվածաշունչն ասում է, որ անենք:

Ցանկանո՞ւմ եք լինել առողջ և օրհնված, ինչպես նաև հետևել Աստծո ծրագրին ձեր կյանքի համար: Այդ դեպքում արե՞ք այն, ինչ խոսքն է ասում, և սիրով վարվե՞ք:

ԳԱՂԱՏԱՑԻՍ 5.14

14 Որովհետև բոլոր օրենքն այս մեկ խոսքում է կատարվում՝ քո ընկերոջը քո անձի պես սիրիր:

Եթե զգուշությամբ չուսումնասիրեք աստվածաշնչյան որևէ թեմա, ապա մեջտեղով քայլելու փոխարեն կարող եք հայտնվել ճանապարհի մերթ մի, մերթ մյուս եզրին: Օրինակ՝ մի եզրին գտնվող մարդիկ ասում են. «Մենք պարզապես սիրով ենք վարվում», և ոչ մի բանի շուրջ հստակ դիրքորոշում չեն պահպանում:

Սակայն շատ հաճախ եթե հստակ դիրքորոշում չպահպանեք, չեք կարողանա օգնել մարդկանց: Երբեմն անհրաժեշտ է ճշմարտությունը սիրով ասել մարդկանց: Այդ դեպքում կկարողանաք սովորեցնել և օգնել նրանց, հատկապես երբ ծառայող եք:

Երբեմն պետք է այնքան սիրեք մարդկանց, որ պատրաստ լինեք ճշմարտությունն ասելու նրանց՝ աստվածաշնչյան ճշմարտությունը: Ինչպես տեսնում եք, սերը միշտ չէ, որ լուռ ու հանդուրժողական է մեղքի նկատմամբ:

Իհարկե՞, Աստված սեր է: Սակայն ինչպես ասել եմ, Աստված նաև դատավոր է: Արդյո՞ք սա նշանակում է, որ Նա սիրո Աստված չէ: Ո՛չ, Նա միշտ սեր է, և Նա միշտ ճիշտ է վարվում:

Ա ԿՈՐՆԹԱՑԻՍ 5.1-5

1 Առհասարակ լսվում է ձեր մեջ պոռնկություն և այնպիսի պոռնկություն, որ հեթանոսների մեջ էլ չկա, այնպես որ մեկն իր հոր կինն ունենա:

2 Եվ դուք հպարտացած եք և ավելի սուգ չե՞ք մտնում, որ ձեր միջից վեր առնվի նա, որ այն բանը գործեց:

3 Որովհետև ես, թեև մարմնով բացակա եմ, բայց հոգով ներկա, արդեն վճռել եմ ներկա լինողի պես՝ նրան, որ այնպիսի բան գործեց,

4 մեր Տեր Հիսուս Քրիստոսի անունով ձեր և իմ հոգու մեկտեղ ժողովվելու ժամանակ մեր Տեր Հիսուս Քրիստոսի զորության հետ

5 այնպիսիին մատնել սատանային՝ մարմինը կորչելու համար, որ հոգին ապրի մեր Տեր Հիսուսի օրում:

Մարմնի կործանման համար սատանային մատնվելը Աստծո լավագույնը չէր այդ մարդու համար, սակայն Աստծո լավագույնը չէր նաև այն, որ նա մեղքի մեջ ապրեր: Եթե ինքն իրեն չդատեր և մեղքից չհրաժարվեր, իսկ Սերն այդ հարցում ոչինչ չաներ, ապա նրա վախճանը դժոխքը կլիներ:

Այնպես որ այդ մարդուն սատանային հանձնելը՝ մարմնի կործանման համար, Աստծո ողորմության դրսևորումն էր, որպեսզի նա դատեր մեղքն իր կյանքում և ապաշխարեր: Նա, ով Աստծուն ճանաչել է, սակայն հեռացել է Նրանից, սովորաբար վերադառնում է, երբ մարմինը սկսում է ցավել:

Դա Աստծո լավագույնը չէ, սակայն հաստատ ավելի լավ է, քան դժոխք գնալը: Եվ Պողոսը Սուրբ Հոգու սիրով և ողորմությամբ այդ մարդուն հանձնում է սատանային, որպեսզի վերջինս փրկվի դժոխքից: Դա սեր էր, ոչ թե ատելություն:

ՀՆԱԶԱՆԴՈՒԹՅՈՒՆԸ ՍԻՐՈՒ ՃԱՆԱՊԱՐՀ Է

Պատկերացրե՛ք, որ ունեք փոքրիկ չորսամյա որդի ու տեսնում եք, թե ինչպես է նա լուցկիներով խաղում: Նկատողություն եք անում ու ասում. «Տղան, մի՛ արա: Կարող է հրդեհ բռնկվել, ինչի հետևանքով կվառվի տունը, կմահանաք դու և մյուսները»:

Ի՞նչ կլիներ, եթե ձեր որդին ուշադրություն չդարձներ ձեր

խոսքերին և երկու կամ երեք օր անց նորից նույնն աներ: Այս անգամ արդեն կատժեիք ու կասեիք. «Ասացի, չէ՛, որ նման բան չանես: Այլևս չկրկնվի»:

Մի քանի օր հետո նորից տեսնում եք, որ արդեն կրակ է վառել: Այդ անգամ արդեն մի լավ դաս կտաք: Հիմա արդեն նա դաս կքաղի և այլևս չի խաղա լուցկիներով:

Արդյո՞ք դուք նման կերպ վարվեցիք, որովհետև չեք սիրում ձեր որդուն: Ո՛չ, արեցիք, որովհետև սիրում եք նրան և նրա համար բարին եք կամենում: Արեցիք դա, որ պաշտպանեք նրան:

Երբեմն հովիվները նույնը պետք է անեն իրենց հարանվանության անդամների հետ: Հովվի կողմից սիրո դրսևորում է այն, որ նա անհրաժեշտության դեպքում խրատում է անդամներին, որպեսզի վերջիններս կարողանան իրենց կյանքերում Աստծո կամքի մեջ քայլել:

Մեկ անգամ մի եկեղեցում հովվություն ստանձնեցի: Այդ եկեղեցում ընդհանրապես կարգուկանոն չկար: Եկեղեցու պատանիները փրկված չէին, և դա զարմանալի չէր, քանի որ ծնողները թույլ էին տալիս, որ երեխաներն անեին, ինչ ցանկանում էին: Նրանք կարող էին նստել դահլիճում և բարձրաձայն խոսել այն ժամանակ, երբ ես քարոզում էի: Ես երեք-չորս ամիս շարունակ մեղմ էի խոսում նրանց հետ, քանի որ նոր էի եկեղեցում և չէի ցանկանում մեծ իրարանցում ստեղծել:

Անընդհատ խոսում էի այն մասին, թե ինչպիսի վարք է պետք դրսևորել Աստծո տան մեջ: Այնուհետև, երբ արդեն հինգ ամիս էր, ինչ այնտեղ էի, մի անգամ քարոզիս ընթացքում պատանիները սկսեցին բարձրաձայն խոսել, այնպես որ բոլորը շրջվել էին դեպի դահլիճի ետնամասը, որտեղ նրանք էին նստած:

Ես դադարեցրի խոսքս քարոզի մեջտեղում և ասացի.

«Ինչ-որ մեկը խոսում է»: Անդամներից ոմանք գլխով համաձայնության նշան արեցին:

«Լսե՛ք,- ասացի ես՝ փակելով Աստվածաշունչս,- ուշադիր լսե՛ք, թե ինչ կասեմ ձեզ»: Չէի ցանկանում ամաչեցնել նրանց, սակայն նրանք պետք է հասկանային դա և բարձրաձայն չխոսեին եկեղեցական ծառայության ընթացքում:

«Արդեն չորս ամիս է, ինչ խոսում եմ ձեզ հետ եկեղեցական ծառայությունների ընթացքում բարձրաձայն չխոսելու մասին: Հիմա, ծնողներ, նայե՛ք ձեր ժամացույցներին և հիշե՛ք, թե ժամը քանիսն է, որովհետև այս պահից ի վեր եթե ձեր երեխաներից որևէ մեկը բարձր խոսի կամ անպատշաճ վարք դրսևորի ու խանգարի հավաքույթը, ապա ես նրանց ձերբակալել կտամ հանրային երկրպագությունը խաթարելու համար, և նրանք բանտում կհայտնվեն»:

Գուցե հարցնեք. «Արդյոք դա սե՛ր է»: Միանշանակ սեր է: Եթե շարունակեք թույլ տալ, որ երեխաներն իրենց վատ պահեն, ապա նրանք ի վերջո դժոխքում կհայտնվեն:

«Նրանք կձերբակալվեն, և դուք, ծնողներ, ստիպված կլինեք տուգանք վճարել», - շարունակեցի ես: Այդ օրերին մենք ունեինք մարզային ագարակ, որտեղ կարելի էր աշխատել տուգանք վճարելու փոխարեն. Մեծ ճգնաժամի օրերն էին:

«Իսկ եթե չվճարեք, ապա նրանք ստիպված կլինեն աշխատել մարզային ագարակում», - ասացի ես:

Նախկինում այդ պատանիներին արդեն սպառնացել էին պատժել իրենց վատ վարքի համար, սակայն ոչ մի գործնական քայլ չէր արվել այդ ուղղությամբ, որովհետև եկեղեցու ավագներից ոմանք ասել էին, թե պետք էր սիրով վարվել: Իսկ երեխաները շարունակում էին իրենց վատ պահել:

Ես դադարեցրի քարոզը և սկսեցի մեկ առ մեկ զրուցել պատանիների ծնողների հետ: Եկեղեցու երկու սարկավագների հետ միասին, որոնք ինձ միացել էին որպես վկաներ,

մոտեցա նրանցից մեկին և ասացի. «Եղբայր Հ., ուզում եմ անձամբ զրուցել Ձեզ հետ: Դուք լսեցիք, թե ինչ ասացի ամբիոնից, սակայն ցանկանում էի երես առ երես խոսել: Ես ձերբակալել կտամ Ձեր դուստրերին, և նրանք կբանտարկվեն, եթե շարունակեն խանգարել երկրպագությունը»:

Այդ մարդը երեսն ամոթահար իջեցրեց, իսկ հետո արցունքն աչքերին ասաց ինձ. «Եղբայր Հեգին, Դուք ճիշտ եք: Սա Աստծո տունն է: Ես փորձել եմ զրուցել նրանց հետ, որ լավ պահեն իրենց, սակայն ինձ չի հաջողվում»:

Ես գիտեի, թե որն էր նրա խնդիրը: Նա փորձում էր նախատել իր երկու դուստրերին, իսկ նրանց մայրը տան ետնամասի պատուհանից նրանց դուրս էր թողնում և թույլ տալիս ամբողջ գիշերը դրսում անցկացնել: Երբ ընտանիքում տարածայնություն և անհամաձայնություն կա, ապա կլինեն նաև խնդիրներ:

Նա ասաց. «Ես ձեզ հետ եմ, եղբայր Հեգին: Արե՞ք այն, ինչ պետք է անեք. ձերբակալել տվեք նրանց: Նրանք ստիպված կլինեն աշխատել մարզային ագարակում»:

Հետո ես մոտեցա մեկ այլ ծնողի՝ մի թանկագին տիկնոջ, որի ամուսինը փրկված չէր և երբեք եկեղեցի չէր հաճախել: Ասացի նրան. «Ես պատրաստվում եմ Մ.-ին ձերբակալել տալ, քանի որ նա ամենավատ վարք ունեցողներից և հավաքությունների ժամանակ բարձրաձայն խոսողներից է»:

Տիկինը պատասխանեց. «Եղբայր Հեգին, ես փորձում եմ աչքս աղջկաս վրա պահել. ամեն անգամ, երբ հետ եմ նայում, տեսնում եմ, որ նա իրեն լավ է պահում»: «Այո՛, - ասացի ես, - սակայն ես բեմից տեսնում եմ: Նա նայում է ձեզ և այն վայրկյանին, երբ տեսնում է, որ Ձեր գլուխը շրջում եք, ուղղվում է և իրեն կարգին է պահում»:

«Ամեն անգամ, երբ ես շրջվել եմ նրա կողմը...», - այդ կինը շարունակում էր վիճաբանել:

«Դուք կարծում եք, թե խաբում եմ ձեզ: Հարցրե՛ք նրա շուրջը նստող մարդկանցից: Լավ կլինի, որ ձեզ հետ առջևի նստարանին նստեցնեք նրան: Իրականում լավ կլինի, եթե Ձեր բոլոր երեխաներին Ձեր կողքին նստեցնեք: Մյուսներն էլ իրենց լավ չեն պահում, սակայն նրա վարքն ամենավատն է: Եթե նորից նույնը կրկնվի, ես նրան ձերբակալել կտամ: Գիտեմ, որ Դուք չեք կարող տուգանքը վճարել, այնպես որ նա ստիպված կլինի աշխատել մարզային ագարակում»:

Գուցե հարցնեք. «Դա սե՛ր է»: Միանշանակ սեր է, քանի որ սերը խրատում և մարզում է երեխաներին: Եթե երեխաները չսովորեն լինել հնազանդ, ապա ինչպե՞ս են հնազանդվելու Աստծուն և Նրա Խոսքին, երբ մեծանան: Ինչպե՞ս պետք է կարողանան հաջողությամբ հետևել Աստծո ծրագրին իրենց կյանքերի համար, եթե չեն հնազանդվում իրենց ծնողներին կամ իրենց հովվին:

Թանկագին տիկինը պատասխանեց. «Այո, եղբայր Հեգին, սակայն եթե երեխաներն ինձ հետ միասին առջևում նստեն, ես չեմ կարողանա վայելել ծառայությունը»:

«Ինչո՞ւ», - հարցրի ես:

«Որովհետև անընդհատ խոսում են և պտտվում են այս ու այն կողմ»:

Մի փոքր առաջ նա ասում էր, որ իր երեխաները եկեղեցում չեն խոսում:

Այս կինը Սուրբ Հոգով պարում էր եկեղեցում. նա օրհնություն էր եկեղեցու համար, սակայն ես ասացի նրան. «Դուք ավելի մեծ օրհնություն կլինեք եկեղեցու համար, եթե այդքան պարելու փոխարեն ավելի շատ հետևեք Ձեր երեխաներին»:

Եկեղեցական հավաքույթի ավարտից հետո, երբ ես և կինս արդեն անկողին էինք մտել, Օրեթան արթնացավ ինչոր մեկի լացի ձայնից: Նա վեր կացավ անկողնուց, նայեց

պատուհանից և տեսավ, որ այդ թանկագին տիկինը եկեղեցու առջևի աստիճաններին նստած հեկեկում էր. գիշերը ժամը երկուսն էր:

«Գնամ, տեսնեմ, թե ինչ է եղել», - ասաց կինս:

«Ո՛հ, ասացի: Եթե գնաս, ամեն բան կփչացնես: Նա փորձում է մեր մեջ խղճահարություն արթնացնել: Կարծում է, թե կչեղարկենք այն, ինչ ասել ենք: Նա ինքն իրեն է խղճում, քանի որ ասել եմ, որ ավելի մեծ օրհնություն կլինի եկեղեցու համար, եթե իր երեխաներին իր մոտ նստեցնի և հետևի, որ իրենց լավ պահեն», - ասացի ես:

Մեկ այլ ընտանիքի հետ էլ զրուցեցի: Ամուսինը երբեք եկեղեցու սրահ չէր մտել: Միշտ դրսում էր կանգնում: Կինը փրկված էր՝ լցված Սուրբ Հոգով, և իր երկու դուստրերի հետ գալիս էր եկեղեցի:

Ես եկեղեցու երկու սարկավազների հետ դուրս եկա խոսելու նրա ամուսնու հետ: Մտտեցա և ասացի. «Պարոն Հ., ուզում եմ խոսել ձեզ հետ: Ես պատրաստվում եմ Ձեր պատանիներին ձերբակալել տալու հանրային երկրպագությունը խաթարելու համար, եթե չշտկվեն և չսկսեն իրենց լավ պահել»:

Պարոն Հ.-ն ասաց. «Միայն մի բան կասեմ: Դուք և այս սարկավազները միշտ չէ, որ այս եկեղեցու տարածքում եք»: Նա ինձ սպառնում էր. ես առաջ գնացի՝ մոտենալով նրան իմ ամբողջ 138 ֆունտ քաշով՝ ճակատ ճակատի, և ասացի. «Ես էլ Ձեզ միայն մի բան կասեմ: Ես չեմ վախենում ոչ մեկից և չեմ ամաչում ոչ մի բանի համար»:

Երբ արեցի դա, նա իջեցրեց գլուխն ու սկսեց այլ տոնով խոսել. «Ճիշտ եք: Ճիշտ եք: Սակայն միայն իմ երեխաները չէ, որ իրենց վատ են պահում»:

«Ո՛հ, միայն նրանք չեն, սակայն նրանք ամենավատ պահողներից են: Ժամանակն է, որ բոլորն իրենց կարգի հրավիրեն»:

Պատկերացնում եք, որ վեց շաբաթվա ընթացքում բոլոր այդ պատանիները փրկվեցին և լցվեցին Սուրբ Հոգով:

Իսկ ինչ տեղի ունեցավ: Սերը դիպավ նրանց: Մենք կարող էինք թույլ տալ, որ նրանք շարունակեին իրենց վարքը, ինչի հետևանքով հավանաբար նրանցից ոչ մեկը չէր փրկվի: Սակայն մենք հասցրինք նրանց դեպի խորանը, որտեղ նրանք սկսեցին փնտրել Աստծուն, քանի որ լռեցին և լսեցին Աստծո խոսքը:

Ուստի սիրելի չի նշանակում հարկ եղած դեպքում չպաշտպանել ձեր դիրքորոշումը. երբեմն անհրաժեշտ է դրանում ամուր կանգնել:

Լսել եմ, թե ինչպես են մարդիկ հետևյալն ասում երեխաների մասին. «Մենք պետք է շահենք նրանց, հետևաբար պետք է սիրով վարվենք նրանց հետ և թույլ տանք, որ անեն, ինչ կամենում են»:

Ո՛չ: Դա այնքանով է սիրելի, որքանով թողնելը, որ այն փոքրիկ տղան լուցկիներով խաղ աներ: Այդպես նա կարող էր այրել ինքն իրեն՝ ընդհուպ մինչև մահ: Սերը կկանգնեցներ նրան և դեպի ճիշտ ճանապարհը կուղղորդեր:

ԵՓԵՍԱՑԻՍ 6.1–3

- 1 Որդիներ, հնազանդ եղեք ձեր ծնողներին Տերով, որ այն է արժանը:
- 2 Պատվիր քո հորը և մորը, սա է առաջին պատվիրանը խոստմունքով,
- 3 որ քեզ լավ լինի, և երկար ապրես երկրի վրա:

Երբեք ստիպված չեմ եղել խիստ պատժել երեխաներիս: Իսկ երբ պատժել եմ, նախ և առաջ Աստվածաշնչից կարդացել եմ Եփեսացիս 6.1–3-րդ խոսքերը: Ես մարզել եմ նրանց հնազանդության մեջ, որ կարողանան հաջողությամբ հետևել Աստծո ծրագրին ու նպատակներին և

իրագործել Նրա տված կոչումն իրենց կյանքերում:

Հարցնում էի նրանց. «Ցանկանո՞ւմ եք լավ կյանք ունենալ: Այն օրերը, որոնք հիվանդության մեջ են անցնում, լավը չեն: Ցանկանո՞ւմ եք երկար ապրել այս երկրի վրա»:

«Այո», - պատասխանում էին նրանք:

«Ահա այդ պատճառով ես պետք է պատժեմ ձեզ: Չեմ անում դա, որովհետև այդպես եմ ուզում, այլ որովհետև ձեզ համար ամենալավն եմ ցանկանում»:

Հիշում եմ, երբ Քենը մոտ վեց տարեկան էր, մի առավոտ ասացի նրան. «Որդի՛ս, խնդրում եմ, որ նախաճաշից հետո դատարկես աղբամանը»:

Այդ երեկո, այն բանից հետո, երբ բոլորս միասին աղոթել ու կարդացել էինք Խոսքը, և ես գրասենյակումս ուսումնասիրություն էի անում, Քենը եկավ ինձ մոտ և ասաց, որ ուզում է խոսել ինձ հետ: Հետո նա սկսեց լաց լինել: «Հայրիկ, գտիր այն խոսքը Աստվածաշնչից, որտեղ գրված է երկար ապրելու, հիվանդ չլինելու և ծնողներին հնազանդվելու մասին», - ասաց նա:

Ես բացեցի և կարդացի այդ խոսքը նրա համար: Նա էլ ավելի ուժգին լաց եղավ և ասաց. «Այս առավոտ ես չդատարկեցի աղբամանը, ինչպես դու էիր ասել: Ների՛ր ինձ»:

Ես կարծում էի, թե նա էր դատարկել, մինչդեռ իրականում մայրն էր արել դա: Պարզապես տեսել էի, որ դատարկ է, և ենթադրել էի, որ Քենն է դատարկել:

Քենն ասաց. «Դու ասել էիր ինձ, որ դատարկեմ այն, սակայն ես դա չեմ արել: Խնդրում եմ, որ ներես ինձ»: Նույնիսկ ասաց. «Պատժիր ինձ»:

Ասացի. «Ո՛չ, ես քեզ պատժելու միտք չունեմ: Չեմ ասել, որ կպատժեմ, եթե չդատարկես: Պարզապես խնդրեցի, որ դատարկես, այնպես որ չեմ պատժելու:

Ես քեզ ներում եմ, սակայն արի՛ ծնկի իջնենք և խնդրենք, որ Տերն էլ ների»։ Այդպես էլ արեցինք, և Աստված ներեց նրան։

ԱՍՏՎԱԾ ՑԱՆԿԱՆՈՒՄ Է, ՈՐ ԻՐ ԼԱՎԱԳՈՒՅՆՆ ՈՒՆԵՆԱՔ

Աստված Իր սրտում մեր լավագույն շահն է հետապնդում։ Եվ երբեմն, երբ դուք համառում եք ձեր սխալի մեջ, և ինքներդ ձեզ չեք դատում, Նա ստիպված է լինում պաշտպանել Իր դիրքորոշումը։ Նա գիտի, որ չեք կարողանա հետևել Իր առաջնորդությանը, եթե համառեք ձեր մեղքի և սխալի մեջ։ Սակայն Աստվածաշունչն ասում է. «Որովհետև եթե մեր անձերը դատեինք, չէինք դատապարտվի» (Ա Կորնթ. 11.31)։

Հիշում եմ՝ «Բժշկության ծայնի» ժամանակներում կար մի ծառայող՝ մոտ երեսունհինգ տարեկան, որն այն ժամանակ ամենամեծ վրանն ուներ և քարոզում էր ամենամեծ թվով մարդկանց։ Աստված ասաց ինձ. «Գնա՛ և ասա՛ նրան, որ եթե ինքն իրեն չդատի, երկար չի ապրի։ Եվ առաջին բանը, որում պետք է իրեն դատի, իր սիրո ընթացքն է իր ծառայակից ընկերների հետ»։

Այդ միջադեպից մոտ երեք տարի անց նա մահացավ, քանի որ ինքն իրեն չէր դատում։ Արդյոք սա նշանակում է, որ աստվածային բժշկությունը մեր օրերի համար չէ։ Ո՛չ, աստվածային բժշկությունն այսօր այնքան իրական է, որքան երբևէ եղել է։ Երբ Հին Ուխտում ինչ-որ իսրայելացի վաղաժամ մահանում էր մեղքի պատճառով, արդյոք դա չեղարկում էր Աստծո սահմանած բժշկության ուխտը նրանց հետ։ Ո՛չ։

Նոր Ուխտում ևս այն, որ ինչ-որ մեկը վաղաժամ մահանում է, չի նշանակում, որ բժշկությունն այսօր մեզ չի վերաբերում։ Բժշկությունը բոլորի համար է, քանի որ սերն է

բոլորի համար: Աստված ցանկանում է, որ Իր ժողովուրդը լինի առողջ և երկար ապրի այս երկրի վրա: Աստված սեր է, և Նա աչառ չէ: Նա ցանկանում է, որ բոլորս քայլենք սիրո մեջ, որպեսզի կարողանանք ապրել Իր կատարյալ ծրագրի համեմատ, Նոր Ուխտի օրհնությունների մեջ:

Այդ երիտասարդ ծառայողն ինքն իրեն չէր դատում, ուստի Աստված էր ստիպված անել դա: Աստված մատնեց նրան սատանային՝ մարմնի կործանման համար, որպեսզի նրա հոգին փրկվեր Տեր Հիսուսի օրը:

Դա Աստծո լավագույնը չէր նրա համար, սակայն միանշանակ շատ ավելի լավ էր, քան դժոխք գնալը:

Մարդկանց պետք է սովորեցնել, որ սերը լավագույն ճանապարհն է, և վարձք կա Աստծուն սիրելու և մեր կյանքերում Նրա Խոսքին և Նրա ծրագրին հնազանդվելու համար:

Իսկ ի՞նչ է նշանակում ինքդ քեզ դատել: Օրինակ՝ եթե սխալվել եք, ասացե՛ք Տիրոջը. «Այդ իրավիճակում սիրով չեմ վարվել: Խնդրում եմ, ների՛ր ինձ, Աստված»: Եվ եթե կարիք կա, ապա ներողություն խնդրե՛ք նաև այն մարդուց, որի դեմ մեղք եք գործել, և վերադարձե՛ք սիրո ճանապարհին:

Սակայն եթե շարունակեք համառել ձեր սխալի մեջ և ինքներդ ձեզ չդատեք, վաղ թե ուշ Աստված ձեզ կդատի:

Եթե սիրով եք վարվում, ապա կարող եք քայլել ձեր կյանքի համար Աստծո կատարյալ ծրագրի համաձայն: Եթե սիրով չեք վարվում, ապա մի՛ հապաղեք, ապաշխարե՛ք և վերադարձե՛ք սիրո ընթացքին: Սկսե՛ք սիրով վարվել և հնազանդվել Աստծուն *ամեն օր*: Վարձքը մեծ կլինի, քանի որ սերը լավագույն ճանապարհն է:

Ձեր կյանքի համար Աստծո ծրագրին հետևելը դժվար չէ: Աստված ավելի շատ է ցանկանում, որ դուք հաջողեք, քան ինքներդ եք ցանկանում: Այնպես որ ձեր ամբողջ սրտով

Կենտրոնացե՛ք Աստծո հոսքին հնազանդվելու և ձեր կյանքի համար Նրա առաջնորդությանը հետևելու վրա: Եթե դուք Աստծուն տաք ձեր լավագույնը՝ սիրով և հնազանդությամբ վարվելով Նրա և Նրա հոսքի նկատմամբ, ապա կարող եք Աստծո լավագույնին հավակնել և այս կյանքում ապրել Աստծո օրհնությունների մեջ:

Աստված ցանկանում է, որ ամեն հավատացյալ վազի իր առջև դրված հոգևոր ասպարեզը և ուրախությամբ ավարտի իր ընթացքն այս կյանքում: Դուք կարող եք հաջողությամբ հետևել Աստծո ծրագրին և նպատակին ձեր կյանքի համար:

Ինչո՞ւ սովորել «Ռեմա» Աստվածաշնչյան դպրոցում

Դուք կստանաք.



- Վերապատրաստում Սուրբ Հոգով լցված, առաջատար աստվածաշնչյան դպրոցներից մեկում
- Ուսուցում՝ հիմնված Աստծո Խոսքի հանդեպ ամուր հավատքի վրա
- Աճ հոգևոր ընթացքի մեջ՝ համակցված արդյունավետ ծառայության գործնական դասընթացների հետ
- Մասնագիտացում ձեր ընտրած ոլորտում՝ երիտասարդական կամ մանկական ծառայություն, ավետարանչություն, հովվական ծառայություն, միսիա, Աստվածաշնչի ուսումնասիրություն կամ օժանդակ ծառայություններ
- Կամընտրական խտացված ծրագիր երրորդ կամ չորրորդ տարիների համար. երկրպագության դպրոց, հովվական ծառայության դպրոց, համաշխարհային միսիայի դպրոց, աստվածաշնչյան ուսումնասիրությունների դպրոց և ընդհանուր ընդլայնված ուսումնասիրություններ
- Համաշխարհային ծառայության հնարավորություններ՝ դպրոցում ուսումնառելու տարիներին
- Եկեղեցիների և ծառայությունների ցանց ամբողջ աշխարհում, որոնց «Ռեման» է տրամադրում ամբողջական դրույքով աշխատակիցներ և օժանդակ ծառայողներ

**Մանրամասներին և հայտադիմումին ծանոթանալու համար
զանգահարե՛ք այսօր կամ անցե՛ք առցանց հղումով.**

1-888-28-FAITH (1-888-283-2484)

www.rbtc.org



«Ռեմա» Աստվածաշնչյան ուսուցման կենտրոնն ընդունում է ցանկացած ռասա, մաշկի գույն և ազգային պատկանելություն ունեցող ուսանողների:

Ինչո՞ւ արժե մտածել

«Ռեմա»

Աստվածաշնչյան ուսուցման կենտրոն ընդունվելու մասին

Ահա մի քանի հիմնավոր պատճառ.

- Ուսուցում աշխարհի առաջատար Հոգով լցված Աստվածաշնչյան դպրոցներից մեկում
- Ուսմունք, որի հիմքն Աստծո Խոսքի հանդեպ հաստատուն հավատքն է
- Աճ ձեր հոգևոր ընթացքի մեջ և արդյունավետ ծառայության գործնական ուսուցում
- Ընտրովի երրորդ և չորրորդ տարվա ինտենսիվ ծրագրեր. Երկրպագության դպրոց, Հովվական ծառայության դպրոց, Համաաշխարհային միսիոներության դպրոց, Աստվածաշնչի ուսումնասիրության դպրոց և Ընդհանուր երկարացված ուսուցում

Ավելին իմանալու համար այցելե՛ք մեր կայքը.

www.rhema.eu
www.rbtc.org



«Ռեմա» Աստվածաշնչյան ուսուցման կենտրոնն ընդունում է ցանկացած ռասա, մաշկի գույն և ազգային պատկանելություն ունեցող ուսանողների:

ՎԱՋԵՔ ԶԵՐ ԱՌՋԵՎ ԴՐՎԱԾ ԱՍՊԱՐԵԶԸ

Արդյո՞ք դուք վազում եք այն հոգևոր ասպարեզը, որն Աստված դրել է ձեր առջև: Եթե փորձում եք վազել մեկ ուրիշի ասպարեզը կամ ձեր իսկ ընտրածը, ապա նշանակետից վրիպում եք: Դուք բարձր կոչում ունեք՝ վազելու այն ասպարեզը և ավարտելու այն ընթացքը, որն Աստված նախագծել է հատուկ ձեզ համար:

«Հետևե՛ք ձեր կյանքի համար Աստծո ծրագրին» գրքում Ք. Է. Հեգինը նշում է. «Վերջին օրերը մոտ են: Ամեն բան շուտով վերջանալու է: Մեր առջև վճռական տարիներ են, քանի որ մեծ աշխատանք պիտի արվի, և հոգիների մեծ հունձք պիտի լինի...»:

«Երբևէ այսքան կարևոր չի եղել յուրաքանչյուրիս զգայունությունը Սուրբ Հոգու առաջնորդությանը և մեր կյանքերի համար Աստծո ծրագրին հետևելը: Եկել է մեզ կարգի բերելու ժամանակը, ընկերներ: Եկել է Աստծուն ծառայելու հարցում լրջանալու ժամանակը և լինելու այն, ինչ Նա կամենում է, որ լինենք»:

Դուք պետք է որոշեք, թե արդյոք երբևէ կիրագործեք աստվածային այն նպատակը, որը Նա նախասահմանել է ձեր կյանքի համար մինչև ժամանակների սկիզբը: Այնպե՛ս արեք, որ լինեք ձեր կյանքի համար Աստծո նախատեսած ընթացքի մեջ:

Ներառված են հետևյալ վերնագրերը.

- Վազե՛ք ձեր առջև դրված ասպարեզը
- Պահպանե՛ք Հոգով լցված կյանքը
- Նվիրում Աստծո ծրագրին
- Սովորե՛ք հետևել Սուրբ Հոգու առաջնորդությանը
- Սուրբ Հոգու առաջնորդության տարբեր եղանակները
- Աստծուն հնազանդվելը ձեզնից չի խլում, այլ տալիս է ձեզ
- Սիրո ճանապարհը լավագույն ճանապարհն է



Քենեթ Է. Հեգինը գրեթե յոթանասուն տարի ծառայության մեջ է եղել այն բանից հետո, երբ տասնյոթ տարեկանում Աստված հրաշքով բժշկել է նրան սրտի արատից և արյան անբուժելի հիվանդությունից: 2003 թվականին վերապատվելի Հեգինը գնացել է Տիրոջ մոտ, սակայն նրա հիմնած ծառայությունը շարունակում է օրհնություն լինել բազում մարդկանց համար ամբողջ երկրագնդի վրա:

Քենեթ Հեգինի ծառայությունը ներառում է «Հավատքի խոսքը» անվճար ամսագիրը, «Ռեմա» աստվածաշնչյան դպրոցը, «Ռեմա» շրջանավարտների ընկերակցությունը, «Ռեմա» միջազգային ծառայողական ընկերակցությունը, «Ռեմա» առցանց աստվածաշնչյան դպրոցը և «Ռեմա» բանտերի ծառայությունը: Վերապատվելի Հեգինի որդին և վերջինիս կինը՝ Քենեթ Վ. և Լիննեթ Հեգինները, վարում են «Ռեմա փառաբանություն» ամենշաբաթյա հեռուստահաղորդումը, «Այսօրվա Ռեման» ամենշաբաթյա ռադիոհաղորդաշարը և «Կենդանի հավատքի արշավներն» ամբողջ աշխարհում: